



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

July - 1892

I

479



295

K-295

ALCOHOL ...
MAY 19 1954

ALCOHOL ...
MAY 19 1954

ALCOHOL ...
MAY 19 1954

ALCOHOL ...
MAY 19 1954

840
47-96
L. 386
ur

24.

ԽՈՐՀՐԴԱՅԻՈՐ ԿԼԶԻ

ՕՂԱՊԱՐ ՆԱԽԱԲԵԿՆԵՐ

ՀԵՐՆԱՆՆԵՐ

ԳԻՒՆ ԳԼԵՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՍԱՄԱՐԿԱՆՆԵՐ

ՀԵՏՈՐ ԱԹԵՂԻՆ



02-0701

ՉԻՒՐՆԵՐԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԷՏԷՆՆԵՐ

1876

479-682

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԿՂԶԻ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՕԴԱՊԱՐ ՆԱԽԱԲԵԿՆԵՐ

ՔԼՈՒԽ Ա.

1865ի սարականը — Օքլին ձեջ աղաղակներ — Թաֆաթի իջ ձեջ դարձած
 օրագրերի իջ — Պարտառուած պարտաբը — Միայն թո՛ղ կ'որենուտի —
 Հինգ աղեղներ — Նաւակին ձեջ անցածը — Հորիջունին ձեջ եղբ իջ —
 Տրամային վախճանը.

«Միթէ վեր կ'ենլներ :

— Ո՛չ, ընդ հակառակն, վար կ'իջներ :

— Պարոն Արուստ, աւելի դէշ վիճակի մէջ ենք : Աւար կ'ընկ-
նինք :

— Աստուծոյ սիրոյն, կոպի՞ճ վար նետէ :

— Աւասիկ վերջին ծրարն ալ պարպեցի :

— Օղապարիկը վեր կ'ենլնէ :

— Ո՛չ :

— Կարծես թէ ալեաց ծփանք կ'լսեմ :

— Նաւակին տակն է ծովը :



344-2013

— Մեզմէ հինգ հարիւր ոտք հեռու չպիտի լինի ծովը» :
Այն ատեն զօրեղ ձայն մ'օղը պատուեց, և այս խօսքերը հնչեցին .

«Ինչ ծանրութիւն որ ունիք վար նետեցէք . . . բոլորն ալ, և Աստուծոյ ապաստան եղիք» :

Ատոնք էին օղին մէջ հնչող խօսքերը, Խաղաղական ովկիանոսին ահադին անապատին վրայ, Երեկոյեան ժամը չորսին, 1865 մարտ ամսուն 23ին :

Անտարակոյս ոչ ոք մոռցած է հիսիսային արեւելեան սոսկալի հոյն որ նոյն տարուան զիշերահաւատարին մէջ տեղը ծաղեցաւ, և նոյն միջոցին օգաչափն եօթն հարիւր տասն հազարամեղր վար իջաւ :

Ուրական (մրկայոյղ հով) մ'էր այն՝ անընդհատ, որ մարտի 18էն մինչև 26 տեւեց : Անհաշուելի աւերումներ պատճառեց Ամերիկա, Եւրոպա, Ասիա՝ հազար ութ հարիւր մըն լայն դժի մը վրայ՝ որ հասարակածին վրայ շեղակի կ'նկարուէր, հիօսիսէ երսուն հինգերորդ զուգահեռականէն մինչև հարստային քառասներորդ զուգահեռականը : Քաղաքներ կործանեցան, անտառներ արմատախիլ եղան, ջրվէժներու պէս սուբացող լեռնաձև ջրերէն ծովեզերեայ տեղեր քանդ ու աւեր եղան, հարիւրաւոր նաւեր ծովափունքն ընկան, երկիրներ հարթ ու հաւասար դարձան թաթառներէն որ ամէն ինչ կ'փշրէին իրենց ճամբուն վրայ, բխրաւոր մարդիկ ցամաքի վրայ խորտակեցան կամ ծովու մէջ ընկան մեռան . ահա ասոնք եղան ահաւոր ուրականին կատաղութեան նշաններն իր դադարմանէ ետքը : Իր պատճառած աղէտքն զիր ՚ի վեր էին այն ահարկու հովերէն որ Համլանան, Աուատլուպ աւերեցին, մին 1810 հոկտեմբերի 23ին և միւսն 1825 յուլիս 26ին :

Արդ՝ այն միջոցին իսկ որ այսքան աւերումը կ'պատահէին երկրի և ծովու վրայ, ոչ ընդհատ եղեր մը մրկայոյղ օղին մէջ կ'պատահէր :

Իրաւի, օգապարիկ մ'որ գնդակի մը պէն թաթառ մ'առեր

տարեր և օղային սիւնակին բոլորապառոյտ շարժման մէջ բռնուէր էր, անջրպետէն կ'սուբար իննըսուն մըն արագութեամբ*, որպէս թէ օղային հալարէն բռնուած լինէր :

Այս օգապարիկին ստորին մասին ներքև նաւակ մը կ'երերար, որ հինգ ուղևոր կ'պարունակէր : Այս ուղևորներն հաղիւ ուրեմն կ'տեսնուէին այն մանրամաղ ջրով խառն թանձր շողիներուն մէջ, որ մինչև Ովկիանու երեսը կ'տարածուէին :

Ուստի կ'գար այս օգապարիկն որ ահաւոր փոթորիկն խաղալիկ գարձեր էր : Աշխարհիս ո՞ր կողմէն նետուէր էր : Անտարակոյս ուրական ելած միջոցին ճամբայ ընկած չէր : Արդ՝ ուրականն արդէն հինգ օրէ ՚ի վեր կ'սեւէր և իր առաջին նշաններն մարտի 18էն յայտնուէր էին : Հետեւապէս պէտք էր ըսել թէ այդ օգապարիկն շատ հեռուէն կ'գար, վասն զի քսան չորս ժամու մէջ երկու հազար մըն տեղ առած պիտի լինէր անշուշտ :

Այս իբրա է որ ուղևորներն իրենց բրած ճամբան չափելու համար ամենեկին միջոց մ'ունեցած պիտի չլինէին, վասն զի ո՞ր և է նշանակեալէ զուրկ էին : Մանաւանդ այս հետաքրքրական իրողութիւնը պատահած պիտի լինէր, այսինքն զայրադին փոթորիկէն մղուելով անոր անդոյս էին : Տեղ կ'փոխէին իրաւ, Էւրովի կ'դառնային առանց այս շրջանն զգալու հորիզոնական ուղղութեամբ : Անկարող էին աչօք թափանցել թանձր մեղն որ նաւակին ներքև կ'կուտուէր : Իրենց բոլորախիլ լոկ մատախուղ կար : Անպերն այնքան դիմահար էին որ չպիտի կարենային բանել թէ զիշեր թէ ոչ ցերեկ էր : Լուսոյ նշոյլ մը, մարգարնակ երկիրներէ շուկ մը, Ովկիանու մունչուն մ'իրենց ականջին չպիտար հասած լինէր այս մութ անհունութեան մէջ, որչափ ատեն որ երկնից բարձրագոյն դաւանները կ'գտնուէին : Դրբոր սիսան արագ արագ վար իջնել, այն ատեն միայն հասկընան թէ արեւոյ վրայ ինչ մեծ վտանգներու ենթարկուած են :

* Այսինքն 46 մեղր մկ անրերրորդի կամ 166 հազարամեղր մկ մասու մէջ :

Սակայն օգապարիկն՝ իր ծանր բաներն, ինչպէս համբար, զէնք, պաշար վար նետելով՝ մթնոլորտին վերնադոյն կողմերն ելեր էր, այս է չորս հազար հինգ հարիւր ոտք բարձր: Երբոր ուղեորներն հասկըցան որ ծովն նաւակին ներքեւն էր, վտանգն նուազ ահարկու գտնելով վերը քան թէ վարը, առանց վարանելու նաւակէն վար նետեր էին ամենէն պիտանի առարկաները, և կ'ջանային իրենց զործիքին հողի տուող հեղուկէն մաս մ'անս գամ չկորուսել, քանի որ անով անդունդին վերեր կ'մնային:

Նոյն դիշերն ուղեորներն այնպիսի անհանդիստ վիճակ մ'ունեցան որ մահաբեր կրնար դառնալ նուազ զօրեղ հողիներու համար: Ապա արեւն ելաւ, և արեւուն հետ՝ ուրականն դագրելու երես ցցուց: Մարտի 24ին առաւօտեան ժամէն կ'երևէր որ հովը պիտի հանդարտի: Արշալոյսին՝ ամպերն՝ որ աւելի ամփոփ էին, երկնից բարձունքն ելեր էին: Քանի մը ժամէն թաթառը լայնելով՝ պատուեցաւ: Հոն՝ ուրականի վիճակէն՝ փոխուեցաւ՝ և քամի դարձաւ, այսինքն մթնոլորտի խաւերուն տեղափոխութեան արագութիւնն կ'իտովին նուազեցաւ. սակայն դարձնալ տարերաց վրդովումն բաւական բուռն էր:

Ժամը տասն մէկին միջոցները՝ օդին ստորին մասն զգալի կերպով մաքրուեր էր: Մթնոլորտն՝ մեծ օդերեղծներու անցումէն ետե՛ երևան կ'հանէր այն տամուկ յստակութիւնն որ կ'երևի և մինչև անգամ կ'չօշափի: Չէր կարծուեր որ ուրականն դէպ 'ի արևմուտ քշուած լինէր, այլ բոլորովին մեղմեր էր: Արեւի է որ ելէկտրական սահանքի պէս ծաւալեր էր, թաթառին պատասուամէն ետե՛ ինչպէս որ Հնդկացին ովկիանու թաթառներուն կը պատահի:

Բայց՝ նոյն պահուն՝ զիւրին էր ստուգել որ օգապարիկը ծանր ծանր վար կ'իջնէր, անընդհատ շարժմամբ, օդին ստորին խաւերուն մէջ, նոյնպէս կ'երևէր որ փոքր առ փոքր կ'ալարպուէր, էր ծածկոյթը կ'երկննար ձկանելով և պնդային ձեւ ձուակերպ կը դառնար:

Քէսօրին մօտ՝ օրագարիկը ծովուն վրայ կ'սաւառնէր միայն

երկու հազար մեզր բարձրէն: Յիսուն հազար խորանարդ ոտք* պարունակ ունէր, և իր պարունակին շնորհիւ՝ կարող եղեր էր անշուշտ օդին մէջ մնալու, թէ խիստ բարձրերը հասնելով, թէ հորիզոնական ուղղութեամբ տեղափոխելով:

Նոյն միջոցին՝ ուղեորները վար նետեցին նաւակը ծանրացընող վերջին առարկաները, այս է իրենց պահած դոյզն ուտելիքը, ամէն բան, մինչև անգամ իրենց դրպանն ունեցած քանի մը մանր դործիներ, և ասոնցմէ մին ցանցին չուաններով կապուած շրջանակին վրայ ելնելով՝ գուն դործեց օգապարիկին ստորին մասն նաւակին հետ ամրապէս կապելու:

Ակն յայտնի էր որ ուղեորները չէին կարող բարձր գօտիներու վրայ օգապարիկը պահել, և կապն հետզհետէ կ'քիչնար: Ուստի՝ ի սպառ պիտի կորուէին:

Իրաւի, ոչ ցամաք էր և ոչ կղզի՝ իրենց ստորոտը տարածուածը: Անջրպետն հողի կոյտ մը, ամուր մակերեղծ մը չէր ներկայեր որպէս զի իրենց երկաթը կարենայ կուռան մը գանել:

Ահագին ծովն էր, որու ալիքը դեռ ևս կ'բախէր աննման բռնութեամբ: Անտեսանելի սահմաններով Ովկիանն էր, մինչև անգամ անոնց համար որ բարձունքէն անոր վրայ կ'տիրէին և որոց նայուածքը նոյն միջոցին քառսուն մղոն շառաւիղի մը վրայ կ'տարածուէր: Հոսանուտ դաշտ մ'էր, զոր ուրականն անխնայ կ'բախէր, կ'մտրակէր, և որ իրենց բաշարձակ կոհակներու արշաւ մը պիտի երևէր, որու վրայ սպիտակ կատարներով ընդարձակ ցանց մը ձգած լինէին: Ո՛չ երկիր կ'երևէր հեռուն և ոչ նաւ մը:

Ուստի պէտք էր ամէն ճիգ թափել որպէս զի՝ օգապարիկն էջն արդիւնելով՝ այեաց մէջ չխորասուզի: Անտարակոյտ այս ստիպողական դործն՝ ի կատար հանելու կ'ջանային նաւորդներն: Բայց իրենց ճգունքն ընդունայն էր. օգապարիկը շարունակ վար կ'իջնէր, միանգամայն տեղ փոխելով ծայրադոյն արագութեամբ՝ հովին ուղղութեան համեմատ, այսինքն՝ հլսխային-արևելեան կողմէն դէպ 'ի հարաւային-արևմուտ:

* Հուրը 1700 խորանարդ մեզր:

Սոսկալի վիճակ մ'էր արդարեւ այս գծքազդ ուղեւորներուն վիճակը: Անտարակոյս օդապարիկը չէին կարող վարել: Իրենց բռնւոր ճիգն անօդուս էր: Օդապարիկն ծածկոյթն հետզհետէ կը տափակնար: Հեղուկը կ'հոսէր և հնար չկար զայն արդիւնել: Էջն կ'սաստկանար, և կէսօրէն ժամ մ'ետք՝ օդապարիկն նաւակն Ովկիանոսէն վեր վեց հարիւր ոտք բարձրութեամբ հախուեր էր:

Եւ իրօք՝ անկարելի էր կազին հոսումն արդիւնել, որ օդաչու գործիքին մէկ պատառածէն գուրս կ'եղնէր:

Ուղեւորներն օդին մէջ դեռ ևս քանի մը ժամ կ'ախուերու յաջողէր էին նաւակին մէջ դանուած առարկաներն վար նետելով: Բայց անխուսելի աղէտն պիտի հասնէր անշուշտ, և եթէ մտեթը կոխելէն առաջ երկիր մ'երեւան չկար, ուղեւոր, նաւակ և օդապարիկ անկասկէ մէջ զլլտովին աներեւոյթ պիտի լինէին:

Գործողութիւն մը կար միայն կատարելու, և այն ալ ըրին: Տարակոյս չկայ որ օդապարիկն ուղեւորներն անվեհեր և մահէն չվախցող մարդիկ էին: Իրենց բերնէն տրտունջ մը լսելի չէր զաւ: Մինչև յետին վայրկեան մաքառելու և այս անկումն յապաղելու մտօք ամէն հնար 'ի գործ դնելու մտադիր էին: Նաւակն պրտուէ տեսակ մը սնտուկ էր, ծխալու անյարմար, և կարելի չէր ծովուն երեսը պահել զայն՝ եթէ ընկնէր: Ժամն երկուքին հազիւ թէ չորս հարիւր ոտք վեր էր ծովէն:

Նոյն պահուն՝ առնական ձայն մը — մարդու մը ձայնն որոտիրտն անհաղորդ էր երկիւղի — լսելի եղաւ: Այս ձայնին նոյնպէս զորաւոր ձայներ պատասխան տուին:

- «Ամէն բան ծովը նետեցիք»:
- Ոչ, դեռ տանն հազար ոսկի ֆրանք կայ»:
- Իսկոյն ծանր պարկ մը ծոփն ընկաւ:
- «Միթէ օդապարիկը վեր կ'եղնէ»:
- Քիչ մը բայց շատ չանցնելով վերստին վար պիտի ընկնի»:
- Ուրիշ բան մը կայ նետելու:
- Ոչ ինչ:
- Ինչպէս... հազար նաւակը»:

— Ցանցին վաթթուինք և նաւակը վար նետենք»:

Արդարեւ՝ օդապարիկը թեթևեղնելու միակ և վերջին միջոցն այս էր: Նաւակը շրջանակին կապող չուաններն կարեցին, և օդապարիկն իր անկումէն ետե՛ երկու հազար ոտք բարձրացաւ: Հինգ ուղեւորներն՝ շրջանակէն վեր, ցանցէն կախուեր էին, և վերստին ուղեւորներն փակեր էին՝ անդունդը նայելով:

Արդէն յայտնի է թէ օդապարիկներն որչափ զիւրաշարժ են: Բաւական է ամենէն թեթև առարկան վար նետել՝ ուղղահայեաց շարժում մը պատճառելու համար: Այս դունդն՝ որ օդին մէջ կ'ծփայ, մաթեմատիկական ճշգրտութիւն ունեցող կշիռ մը պէս կը շարժի: Ուստի՝ ընթերցողը կրնայ զիւրաւ ըմբռնել որ երբ համաժամարար մեծ բեռէ մը կ'թեթևայ՝ իսկոյն կ'շարժի: Նոյնը պատահեցաւ այս պարագայիս մէջ:

Բայց վերջին դօտինելու մէջ պահ մը տատանելէն ետե՛ օդապարիկն սկսաւ վար իջնել: Կազը պատառածէն կ'խուսէր, և այս սրտառածը կարկառել կարելի չէր:

Ուղեւորներն ինչ որ կարելի էր ընել, ըրեր էին: Այնուհետև մարդկային միջոց մը չէր կարող դանոնք աղատել, կ'մնար միայն Աստուծոյ ապաւինիլ:

Ժամը չորսին՝ օդապարիկը ծովուն երեսէն հինգ հարիւր ոտք միայն վեր էր:

- Հնչական հաչում մը լսելի եղաւ: Շուն մը կ'ուղեկցէր ուղեւորներուն և՛ իր տիրոջ մօտ՝ ցանցին հիւսուածին պլլուեր էր:
- «Թօփ բան մը տեսաւ», գոչեց ուղեւորներէն մին:
- Ապա, անմիջապէս՝ զօրեղ ձայն մը լսելի եղաւ:
- «Երկիր, երկիր»:

Օդապարիկն՝ որ հովէն գէպ 'ի հարաւային արեւմտ կը քշուէր, արշալուստէն 'ի վեր, ահազին ճամբայ մը կարեց, որ հարիւրաւոր մղնի կ'հասնէր, և իրօք՝ բաւական բարձր երկիր մ'երեւան ելեր էր նոյն ուղղութեան մէջ:

Բայց այս երկիրն դեռ երսուն մղոն հեռու կ'գտնուէր: Ժամն մ'աւելի պէտք էր անդ հասնելու համար, և այն պայմանաւ որ

օդապարիկը չընդլե: Ժամ մը: Բայց մինչև այն ատեն օդապարիկն իր մնացած կազը բոլորովին չ'սլախ պարպեր:

Ահա այս էր ահա թե ինչպիսիք: Աղևորներն այս հաստատուն կէտն որոշ կ'տեսնէին, որու անվրէպ համնիլ պէտք էր: Չվտէին թէ ի՞նչ է, կղզի թէ մեծ երկիր. վասն զի հազիւ գիտէին թէ ուրականը զերենք աշխարհիս ո՞ր կողմը մղեր էր: Բայց այդ երկիրն, թէ մարդաբնակ թէ անբնակ լինէր, թէ հիւրընկալ և թէ վայրենի, պէտք էր հասնիլ:

Արդ՝ ժամը չորսին՝ բացայայտ էր որ օդապարիկն այլ ևս չպիտի կարենար սաւառնիլ: Ծովուն երեսը կ'քերէր: Արդէն ահա զին ալեաց կատարը քանի քանի անգամ ցանցին ստորտը թըջեր էր, աւելի ևս ծանրացրելով՝ և օդաչուն հազիւ կիսովին վեր կ'ենէր, թուշունի մը պէս՝ որու թևին վրայ կապար կայ:

Այս ժամ անցնելէն ետև՝ երկիրը մղոն մը հեռու կ'երևէր. բայց օդապարիկը վատոյժ, թոյլ, ձղտած և խոշոր ծալքերով ճմրդուած, միայն վերին մասին մէջ կազ կ'պարունակէր: Աղևորներն՝ ցանցին սլլուած՝ օդապարիկն համար չափէն աւելի ծանր էին, և քիչ մ'եաքը՝ կիսովին ծովուն մէջ սուզելով՝ զայրադին ալեաց ենթակայ եղան: Այն ատեն օդապարիկը փօր տուաւ և հոփն անոր մէջ մղուելով՝ իբրև նաւ մը զանի առաջ քշեց: Թերևս այս կերպով ծովեզը պիտի հասնէր:

Արդ՝ ծովեզըն երկու հարիւր քառսուն գրկաչափ հեռու էր՝ երբ սոսկալի աղաղակներ՝ չորս հաս կոկորդէ միասին ենելով՝ հնչեցին: Օդապարիկն՝ որ կարծես թէ այլ ևս վեր ելնելու նշան մը չէր ցուցներ, անակնկալ ստաւ՝ մ'ըրեր էր՝ ահա զին կոհակէ մը զարնուելով: Հազար հինգ հարիւր ոտք բարձրութեան ելաւ, որպէս թէ յանկարծ իր բեռէն մաս մ'ևս նետեր էր, և նոյն բարձրութեան մէջ՝ հովի պաղլտ մը գտաւ, որ՝ փոխանակ շիտակ ծովեզըը տանելու՝ օդապարիկն գրեթէ գողահեռական ուղղութիւն մը տուաւ: Վերջապէս՝ երկու վայրիկան անցնելով՝ շեղակի ցամաքին մօտենալու սկսաւ, և վերջապէս ծովափին աւազին վրայ՝ կոհակներէն հեռու՝ կ'ընկնէր:

Աղևորներն՝ իրարու օղնելով՝ ցանցէն ազատելու յաջողեցան: Իսկ օդապարիկն՝ իր բեռը թողլուն՝ հովահար վեր ելաւ, և վերաւոր թուշունի մը պէս որ պահ մը շունչ կ'առնու, անջրպետին մէջ աներևոյթ եղաւ:

Օդապարիկն նաւակը հինգ ուղևոր կ'պարունակէր, ասկից զատ շուն մը. իսկ օդապարիկը ծովափին վրայ չորս հոգի միայն կ'նետէր:

Անշուշտ ցանցը զարնող ալիքն աւեր տարեր էր պակսող ուղևորն, և այս է պատճառն որ օդապարիկը թեթևալով՝ վերջին անգամ մ'ևս սլլցեր, և քանի մը վայրկեան ետք, ցամաքը հասեր էր:

Հազիւ թէ չորս նաւարեկներն — կարելի է այս անունը տալ անոնց — ցամաքն ոտք կոխեր էին, որ ամենքն՝ տարակայան վերայ մտածելով՝ կ'զոչէին.

«Թերևս լողալով ծովափն մօտենալու կ'ճզնի, ազատենք զանի, ազատենք»:

ԳՂՈՒՆ Բ.

Աօրիկեան պարերազէն Յիլ Գլադադալ — Կիւրա Սօֆի Վաֆադալ — Գեդէն Սէլէր — Նապ Խաֆէլիլ — Բենարճ Նաւասարին — Մորաթի Հարպեր — Անպիտանելի առաջարկութեան մը — Երեկոյեան ժամը դասն էին Գամարդութեան մը — Փոփոքի տղան չու:

Այն ծովափին վրայ՝ ուրականին նետած մարդիկն ոչ արուեստիւ օդաչու էին, ոչ օդային արշաւանաց սիրահար: Այլ պարզապէս պատերազմի դերիներ էին, որ՝ կարող գուրս պարագայից մէջ յանդգներ էին խոյս տալ: Հարիւր անգամ 'ի կորուստ պի-

տի մասնուէին, հարիւր անգամ՝ իրենց օգտապարիկն անդունդը պիտի գահավիժէր, բայց երկին տարօրէն ճակատագրի մը համար կ'վերապահէր զերենք, և մարտի 20ին Ռիչմոնտէն փախուստ տալէն ետև՝ Իւլիս Արէնդ զօրապետին զօրաց կողմէն պաշարուեր էին, և Ալիքիսիոյ այս մայրաքաղաքէն ետևն հազար մղոն հեռու կ'գտնուէին, քաղաք մ'որ անջատիչներու ամուր բերդն էր՝ հարուստնոց և հիւսիսայնոց պատերազմին ժամանակը: Իրենց օգտային նաւարկութիւնը հինգ օր տևեր էր:

Այժմ պատմինք թէ ինչ հետաքրքրաշարժ պարագայից մէջ այս զերիներուն փախուստը տեղի ունեցեր էր, — փախուստ մ'որու վախճանն արդէն ծանօթ աղէտքը պիտի լինէր:

Նոյն տարին իսկ՝ 1865 փետրվար ամսուն մէջ այն միջոցին որ Ռիչմոնտն արիւնջ համար Արէնդ զօրապետը յետին փորձ մ'ըրաւ՝ ընդունայն, իր սպաներէն շատերն թշնամոյն ձեռքն ընկան և քաղաքին մէջ արդիւնեցան: Նշանաւոր կալանաւորներէն մին դաշնակից աւազաստային կ'վերարերէր, և անունն էր Ալիւրոս Սմիթ:

Ալիւրոս Սմիթ՝ Մասաչուսէթի բնիկ՝ չափազէտ (ingenieur) մ'էր, առաջին կարգի զիտուն մը: Պատերազմի ժամանակ՝ Միացեալ-Նահանգաց կառավարութիւնն անոր յանձներ էր երկաթուղւոյն տեսչութիւնն, որ ռազմական մեծ կարևորութիւն ունեցաւ: Հիւսիսային ճշմարիտ ամերիկացի մ'էր, նիհար, ոսկրուտ, վտիտ, շուրջ քառսուն հինգ տարեկան, արդէն իր ցանցաւ մագերուն և մօրուքին մէջ ճերմակներ ընկեր էին, և միայն խիտ ընջացք մը կ'պահէր: Իր գլուխն հիւսիսային զեղեցիկ գլուխներուն կ'նմանէր, որ կարծես թէ հոգայէ վրայ կոխուելու համար շինուած են, հրավառ աչեր, լուրջ բերան, իսկ զէմքն պատերազմիկ դպրոցի զիտունի մը զէմքն էր: Այն չափազէտներէն մին էր, որ նախ մուրճ և քարհատ գործածել ուզեցին, այն զօրավարներուն պէս որ նախ սոսկ զինուորութեամբ սկսան իրենց ապարէզը: Ուստի՝ մտքի հնարադիտութեան հետ՝ Ալիւրոս Սմիթ ձեռքի ծայրագոյն ճարտարութիւն ունէր: Իր ջիւղերն ձկտութեան

զարմանալի նշաններ ունէին: Իրօք գործի մարդ և միանգամայն հանճարեղ՝ առանց ճիգ ընելու կ'գործէր՝ կենսական լիուլի ուժով, և ամէն ձախող բաղդի գիմադրաւելու համար բուռն տակունութիւն ունէր: Շատ ուսեալ, շատ գործնական մարդ էր և վեհ ընաւորութեան տէր. վասն զի որ և է պարագայից մէջ ինքզինքին տէր մնալով հանդերձ, լիուլի կ'կատարէր այս երեք պայմաններն որ բոլորն 'ի միասին մարդկային արիւթիւնը կ'կազմեն, այս է մտքի և մարմնոց գործունէութիւն, բաղձանաց ուժգնութիւն, կամաց զօրութիւն: Եւ իր նշանաբանը կրնար լինիլ ժէզարու Աուրիէլմոս Օրանժինն. «Զեռնարկելու համար յուսալու պէտք չունիմ և յաջողելու համար յարատեւելու»:

Գարձեալ Ալիւրոս Սմիթ անձնաւորեալ քաջութիւնն էր: Այս ամերիկեան պատերազմին մէջ ամէն ճակատամարտի մասնակից եղեր էր: Արէնդ զօրապետին հրամանատարութեան ներքև Իլլինուոյի կամաւոր զինուոր գրուելէն ետև՝ Պաղուգահի, Պելմոնդի, Քիդսպրիկ-Լէնտընի, Արէնթի պաշարման, 'ի Բօրդ-Ֆիլդսըն, 'ի Շատանսկա, 'ի Վայլտընս, Բօգօմաքի վրայ, ամէն տեղ կուտեր էր արիաբար, իբրև զինուոր արժանի այն զօրապետին որ կ'պատասխանէր. «Երբէք չեմ համրեր իմ մեռելներս»: Եւ հարիւր անգամ՝ Ալիւրոս Սմիթ անոնց կարդէն պիտի լինէր զոր Արէնդ զօրապետը չէր համրեր. բայց այս կոխներուն մէջ ուր անվեհեր կ'խիզախէր՝ բազդն իրեն կ'նպաստէր միշտ, մինչև այն միջոցին որ վերաւորուելով՝ Ռիչմոնտի ճակատամարտին մէջ գերի բռնուեցաւ:

Նոյն օրն՝ Ալիւրոսին հետ ուրիշ նշանաւոր անձ մը հարաւայնոց ձեռքը կ'ընկնէր: Այս անձն նոյն ինք Գեդէոն Սթիլէզն էր, 'Կիւ-Եօր-Հէրլէրին թղթակիցը, որ հիւսիսային բանակներուն մէջ պատերազմի այլազան պարագաները նկարագրելու պաշտօնն ունէր:

Գեդէոն Սթիլէզ անկլիացի կամ ամերիկացի նշանաւոր տարեգիրներու դասէն էր, այսինքն Սղանլէյներու ու այլոց, որ քնաւ գծուարութեան մ'առջև չեն ընկրկիր ճշգրիտ տեղեկութիւն

մը ստանալու և կարելի եղածին չափ շուտով իրենց լրագրին հաղորդելու համար: Միացեալ-Նահանգաց լրագիրներն, ինչպէս Նիւ-Եօրթ-Հէրլըյ, ճշմարիտ իշխանութիւններ կ'կազմեն և իրենց լրարեքներն այնպիսի պատգամաւորներ են որ մեծ յարգութիւն: Գեղէոն Սբիլէդ այս պատգամաւորաց մէջ առաջին կարգը կ'ընեն:

Մեծ արժանիքի տէր մարդ էր, ազգու, ամէն բանի մէջ կազմ ու պատրաստ, դաղափարներով լեցուն, բոլոր աշխարհ արդէն շրջան ըրած, զինուոր ու արուեստագէտ, խորհրդոց մէջ վառվռուն, դործի մէջ անվրդով, առ ոչ ինչ կ'ըրէր նեղութիւն, յոգնութիւն, վտանգ, երբոր պէտք լինէր ամէն բան իմանալ, նախ իրեն համար, և ապա իր լրագրին համար, հետաքրքրութեան, տեղեկութեան, անլուր, անհնար իրերու ճշմարիտ գիցադուն մը, անվեհեր զխտոզներէն մին էր որ գնդակներու ներքև կ'ըրեն, ու մերերու ներքև կ'արաբներէն, և որոց համար ամէն վտանգ բարեպատեհ պարագաներ են:

Այս մարդն ալ շատ ճակատամարտներու մէջ մտած է, դորաց առաջին կարգը բռնելով, մէկ ձեռքը բռնելով, միւր տու մար մ'ունենալով, և գնդակներն իր զրիչը չէին սարսեր: Հեռադրական թելերն անընդհատ լուրերով չէր յողնեցրներ, այն թղթակիցներուն պէս որ թէև բան մը չունին ըսելու, բայց կը խօսին, այլ իր գրած տեղեկութիւնները՝ հակիրճ, յստակ, պայծառ էին և կարեոր կիտի մը վրայ լոյս կ'սփռէին: Գարձեալ զուարթութենէ զուրկ չէր: Նոյն ինքն է որ Սե-Գետին կուռէն ետք՝ հեռադրական դիւանին գունակին առջև իր տեղն անվրէպ պահելու գիտելով, որպէս զին ճակատամարտին արդիւնքն իր լրագրին ամենն առաջ խմբընէ, երկու ժամ շարունակ շին Ատա-կարանին առաջին դուխներն հեռադրեց: Այս բանս երկու հազար տոլարի նստաւ Նիւ-Եօրթ-Հէրլըյ. բայց Նիւ-Եօրթ-Հէրլըյ ամենն առաջ տեղեկութիւն ստացաւ:

Գեղէոն Սբիլէդ բարձր հասակ ունէր. շատ շատ քառսուն տարու էր. զեղձան կիսամօրուս մ'որ կարմրի կ'զարնէր՝ իր

դէմքը կ'ընդրէր: Իր նայուածքը հանդարտ էր, վառվռուն և արագաշարժ: Այնպիսի մարդու մ'աչք ունէր որ հորիզոնի մը բոլոր մանր կէտերն շուտ մը նկատելու սովոր է: Ամուր կազմուածք ունէր, և ամէն կլիմաներու վարժ էր պողովատիկ ձողի մը պէս որ պաղ ջրով մտած է:

Տասն տարիէ՝ ի վեր՝ Գեղէոն Սբիլէդ՝ Նիւ-Եօրթ-Հէրլըյի նախամեծար թղթակիցն էր, և իր տարեգրութեամբ ու դժադիրներով այս թերթը կ'ձոխացրնէր, վասն զի զբնին չափ լաւ կը շարժէր և մատիար: Երբոր գերի ընկաւ, ճակատամարտին նկարագիրն և ուրուադիծն ընելու վրայ էր: Իր տետրին մէջ գրուած վերջին բառերն ասոնք եղան. «Հարաւային մը նշան կ'աւնէ ինձ հրացանով և . . .»: Եւ Գեղէոն Սբիլէդ անվնաս անցուց վտանգն. վասն զի՝ իր անփոփոխելի սովորութեան համամաստ՝ առանց թեթև վէտ մ'ընդունելու ազատեցաւ:

Աիրոս Սմիթ և Գեղէոն Սբիլէդ, որ զերար չէին ճանչեր, այլ միայն անունով, միասին Ռիչմոնտ փոխադրեցան: Չափադէտին վէրքը շուտ մը բոյժ գտաւ, և հիւանդութենէ նոր ելած ատենն էր որ թղթակիցն հետ ծանօթացաւ: Այս երկու մարդիկ իրարմէ ախորժեցան և իրարու արժէքը հասկըցան: Այնուհետեւ՝ իրենց մտերմական կենսակցութիւնն նպատակ մը միայն ունեցաւ, այս է, խոյս տալ, Արէնդի բանակին միանալ և գահակալական միութեան համար անոր գրողակին ներքև պատերազմիլ:

Հետեւապէս այս երկու ամերիկացիք ամէն պարագայէ օդուս քաղել որոշեր էին. և թէև քաղքին մէջ աղաւ ձգուած էին, Ռիչմոնտ այնպէս խստիւ պահպանուած էր՝ որ փախուստ մը գրեթէ անկարելի կ'համարուէր:

Նոյն միջոցին Աիրոս Սմիթն եկաւ գտաւ իր մէկ սպասաւորն, որ հոգուով մարմնով իր ախորժ անձնուէր էր: Այս քաջ մարդը խափշիկ մ'էր. չափադէտին հողերուն մէջ ծնած էր, գերի հօրէ և մօրմէ, բայց երկար ատենէ ՚ի վեր՝ Աիրոս Սմիթ որ սրտով ու մաքրով զերավաճառութեան թշնամի էր, զանոնք աղատագրեր էր: Այս գերին զինքն մահու չափ կ'սիրէր: Երսուն տարու աղայ

Մարտի 19էն մինչև 20 այսպէս անցաւ . բայց առտու մը՝ ուրականն աւելի ուժգնութիւն կ'ստանար : Չուն անկարելի էր :

Նոյն օրն՝ երբ Կիւրոս Սմիթ չափադէտը Ռիչմոնտի մէկ փողոցը կ'ստորտէր , մարդ մ'որ իրեն անձանօթ էր , քովը մօտեցաւ : Այս մարդը Բէնքրօֆ անուն նաւաստի մ'էր , երսուն հինգ քառսուն տարու , պնդակազմ , արևակէզ , վառվռուն աչօք , զոր անդադար կ'քթթէր , և բարեզէմ : Այս Բէնքրօֆ հիւսիսային ամերիկացի մ'էր . երկրադնդիս ամէն ծովերը պարտեր էր , և երկրտանի անփետուր կենդանւոյ մ'ինչ կարգէ դուրս արկածներ որ կարելի է պատահիլ այս մարդուն պատահեր էր :

Աւելորդ է ըսել որ նա ձեռներէջ բնութեան տէր և ամէն բանի գիմադրաւ մարդ մը լինելով՝ իրեն համար զարմանալի բան մը չկար : Նոյն տարւոյն սկիզբն՝ Բէնքրօֆ Ռիչմոնտ գացեր էր գործի համար՝ տասն հինգ տարու պատանիի մը հետ , որ բնիկ Նիւ-Ժերսէյի՝ Հարպէրդ Պրաուն կ'կոչուէր : Իր հարիւրապետին որդին էր , որք մնացեր էր և զանի իր զակին պէս կ'սիրէր :

Բէնքրօֆ պաշարման գործողութենէ առաջ քաղքէն չկրցեր էր ելնել , ուստի պաշարուած մնաց զժբաղդօրէն , և ինքն ևս միայն խորհուրդ մ'ունէր , այս է ամէն հնար 'ի գործ գնել խոյս տալու համար : Չափադէտ Կիւրոս Սմիթն կ'ձանչէր նա համբաւէն : Գիտէր նա թէ ինչ անհամբերութեամբ այս անվեհեր մարդն իր սանձը կ'կրծէր : Ուստի այն օրն՝ համարձակ անոր մօտ գնաց և առանց նախաբանի անոր ըսաւ .

«Պարոն Սմիթ , Ռիչմոնտէն չտաղտկայա՞ր» :

Չափադէտն ակնապիշ նայեցաւ իրեն խօսող մարդուն , որ ցած ձայնով մը յարեց .

«Պարոն Սմիթ , կ'ուզե՞ն խոյս տալ :

— Ե՛րբ . . . » , պատասխանեց չափադէտն աշխուժիւ , և կարելի է հաստատել որ այս պատասխանը բերնէն փախաւ , վասն զի գեռ քննած չէր անձանօթն որ իրեն այսպէս կ'խօսէր :

Բայց Սմիթ՝ սուր աչքով մը նաւաստիին անկեղծ կերպարանը գիտելէն ետև՝ ամէն կասկած փարատեց և հասկըցաւ որ առջևը զսնուողը պատուաւոր մարդ մ'էր :

«Ո՞վ էս դուն» , հարցուց անոր սուղ ձայնով մը : Բէնքրօֆ ինքզինքը ձանչցուց :

«Լաւ , պատասխանեց Կիւրոս Սմիթ : Եւ ի՞նչ միջոց կ'ստանալիս ինձ խոյս տալու համար :

— Միջոցը սա զանդաղ օդապարիկն է որ անգործ ձգուեր է վարը , և կարծես թէ յատկապէս մեզի կ'սպասէ . . . » :

Նաւաստին պէտք չունեցեր էր իր խօսքն աւարտելու : Չափադէտը քանի մը խօսքով ամէն բան հասկըցեր էր : Բէնքրօֆի թևէն բռնեց և իր տունը տարաւ :

Այն տեղ՝ նաւաստին իր խորհուրդը , որ իրօք շատ պարզ էր , մեկնեց : Այս խորհուրդն 'ի գործ գնելու համար միայն իրենց կեանքը վտանդի պիտի ենթարկէին : Թէև ուրականն բռնաշունչ կ'տնէր , բայց , Կիւրոս Սմիթին պէս ճարպիկ ու յանդուգն չափադէտ մը կարող պիտի լինէր օդապարիկ մը վարել : Եթէ ինք Բէնքրօֆ օդապարիկ մը կառավարել զիտնար , մեկնելու համար չպիտի վարանէր — հարկաւ Հարպէրդին հետ : Շատ փոթորիկներ տեսեր էր արդէն , և սովորած էր բանի տեղ չդնել այս մըրիկը :

Կիւրոս Սմիթ՝ նաւաստիին ըսածներն՝ առանց ձայն մը հանելու՝ մտիկ ըրեր էր , բայց իր ակնարկը կ'փայլէր : Առիթը պատրաստ էր : Այդ առիթն անտես առնող մարդ չէր : Այդ խորհուրդը շատ վտանգաւոր , հետեւապէս գործադրելի էր : Թէև օդապարիկն վրայ կ'հսկէին , բայց կարելի էր զիջերայն անոր մօտենալ , նաւակին մէջ տահել և ապա զայն բռնող կապերը կտրել : Իրաւի , թերևս սպաննուելու վտանգ կար , բայց՝ կարելի էր նաև յաջողիլ , և եթէ այս փոթորիկը չլինէր . . . : Բայց եթէ այս փոթորիկը չպատահէր , օդապարիկն արդէն մեկնած պիտի լինէր , և փափաքելի առիթն այս պահուս չպիտի ներկայանար :

«Ես մինակ չեմ . . . ըսաւ Կիւրոս Սմիթ խօսքն աւարտելով :

— Ուրեմն քանի՞ հոգի պիտի առնես քու հետդ , հարցուց նաւաստին :

— Երկու հոգի . իմ Սըրիլէդ բարեկամս և նապ սպասաւորս :

— Այսպէս երեք հոգի էք, պատասխանեց Բէնքրօֆ, և՛ Հարպէրդն ու զին հաշուելով՝ հինգ հոգի պիտի լինինք: Արդ՝ օգապարիկն վեց հոգի պիտի տանէր . . . :

— Այդ բաւական է. պիտի մեկնինք», ըսաւ Կիւրոս Սմիթ: Թղթակիցն ալ հաշուին մէջն էր. բայց թղթակիցն ընկրկող մարդ չէր, և երբ այս խորհուրդն անոր հաղորդեցին՝ լիովին ընդունեց: Զարմացաւ միայն որ այսպիսի պարզ խորհուրդ մը արդէն միտքը չէր ընկեր: Իսկ 'Նասպ' իբ մեծաւորին կ'հետեւէր ուր որ զինքը տանելու կամէր:

«Ուրեմն այս իրիւուն կ'տեսնուինք, ըսաւ Բէնքրօֆ: Այն կողմերն՝ իբրև հետաքրքիր մարդիկ՝ հինգ ընկերներ կ'թափառուինք:

— Այս իրիւուն, այո՛, ժամը տասին, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և տար Աստուած որ այս փոթորիկն մեր չուէն առաջ հանգարտէր»:

Բէնքրօֆ չափազեւթին հրամեշտ տուաւ ու իր օթեանը դարձաւ, ուր կ'մնար նորասի Հարպէրդ Պրատն: Այս արիասիրտ պատանին նաւաստիին խորհուրդը գիտէր և բաւական անձկութեամբ կ'սպասէր իմանալ թէ չափադիտին հետ ընելիք բանակցութիւնն ինչ արդիւնք պիտի ունենար:

Ինչպէս որ կ'երևի, հինգ անվեհեր մարդիկ էին որ այսպէս մերկայոյց օդով, լիարուն ուրականի մ'ատեն վեր պիտի սրանային:

Ոչ, ուրականը չհանդարտեցաւ, և ոչ Յովնաթան Ֆօքսըլըր, ոչ իր ընկերներն չէին մտածեր իսկ այն գիւրարեկ նաւակով դիմագրուել փոթորիկը: Սոսկալի եղաւ այն օրն: Չափազեւթը երկիւղ մ'ունէր միայն. կ'վախնար որ հողին կցուած և հողին ներքե բռնուած օդապարիկն ճղակոտոր չլինի: Շատ ժամեր՝ գրեթէ ամայի հրապարակը պտըտեցաւ, օդապարիկն վրայ հսկելով:

'Նոյնպէս կ'ըջէր ու կ'գիտէր Բէնքրօֆ՝ ձեռքը դրպանը դրած, և ՚ի հարկին յօրանջելով, այնպիսի մարդու մը պէս վարուելով որպէս թէ ժամանակը սպաննելու միջոց մը կ'փնտռէ, տակայն ինքն ևս կ'վախնար որ օդապարիկը չպատի կամ կապերը քակուելով օդին մէջ չթռի:

Իրիւուն հասաւ. գիշերը սաստիկ մթութիւն մը կոխեց: Թանձր մշուշներ ամպերու պէս հողին երեսէն կ'անցնէին: Զինախառն անձրև մը կ'վազէր: Օդը ցուրտ էր: Ռիչմօնտի վրայ տեսակ մը մեղ կ'տիրէր: Այնպէս կ'երևէր որ բուռն փոթորիկը՝ պաշարելոց և պաշարողաց մէջ զինադուլ մը կ'ընէր և թէ թնդանթը կ'ուզէր լուել ուրականին ահեղագոչ որոտումներուն առջև:

Քաղքին փողոցներն ամայի էին: Այս սոսկալի օդով՝ հարկ չէին դատեր անդամ պահպանել հրապարակն՝ որու միջև օգապարիկը կ'տատանէր: Անտարակոյս՝ ամէն բան նպատատուր կ'երևէր գերիններուն չուին համար, բայց այս ուղևորութիւնը, զարգին հովերուն մէջ. . . :

«Անպիտան փոթորիկ, կ'ըսէր Բէնքրօֆ՝ բռնցի սնդեւով գլխուն վրայ փեղոյրն զօր հովը պիտի տանէր: Վա՛շ, ինչ որ է, մեր խորհուրդն ՚ի կատար պիտի հանենք»:

Ժամն ինն ու կէսին՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերներն այլ և այլ կողմերէն հրապարակը կ'դային, և որովհետև կազի լամպարներն հովէն մարեր էին, չորս գին խոր մթութիւն մը կ'տիրէր: Զէր տեսնուեր իսկ ահադին օդապարիկն, որ գրեթէ գլխովին հողին վրայ ընկեր էր: Ոչ միայն օդապարիկն ցանցին չուաններն կօպիճի պարկերով բռնուեր էին, այլ և նաւակն հաստ պարանով մը կապուած էր, որ սալարիկն վրայ միտած օղակէ մը կ'անցնէր և որու երկրորդ մասն վերստին նաւակին կցուած էր:

Հինգ գերիններն նաւակին մօտ իրարու հանդիպեցան: Ոչ ոք տեսեր էր զերեքը, և այնքան մեծ էր խաւարն, որ զերար իսկ չէին կարող տեսնել:

Առանց բառ մ'ըսելու, Կիւրոս Սմիթ, Գէդէոն Սրիլէդ, 'Նասպ և Հարպէրդ նաւակը մտան, մինչդեռ Բէնքրօֆ՝ չափադիտին հրամանին վրայ, հետդճեւէ կօպիճի պարկերը կ'քակէր: Այս գործն քանի մը վայրկեան տևեց և նաւաստին իր ընկերներուն միացաւ:

Օդապարիկը պարանին կրկինով բռնուած էր, և կ'մնար միայն Կիւրոս Սմիթին՝ մեկնելու հրամանը տալ:

'Նոյն միջոցին՝ շուն մ'ոստում մ'ընելով նաւակին վրայ ելաւ:

Թօփն էր, չափադիտին շունը, որ շղթան կտարելով՝ իր տիրոջ ետևէն դացեր էր: Ախրոս Սմիթ՝ վախնալով որ չափէն աւելի ծանրութիւն մը չլինի, կ'ուզէր խեղճ կենդանին ճամբել:

«Բա՛, անձ մ'ալ աւելցաւ», ըսաւ Բէնքրօֆ, նաւակէն երկու պարկ կոպիճ վար նետելով՝ որպէս զի թեթևայ:

Յետոյ՝ պարանին կապը քակեց, և օդապարիկն՝ շեղակի ուղղութիւն մը բռնելով՝ աներևոյթ եղաւ, իր նաւակը զարնելով՝ երկու ծխանի, զոր՝ կատաղօրէն սլանալու ատեն՝ վար սապալեց:

Այն ատեն ուրականն անհնարին բռնութեամբ կ'զայրանար: Չափադէտն՝ բնաւ չմտածեց օդապարիկը վար իջեցընել զիշերայն, և երբոր ցերեկ եղաւ, միգապատ ցամաքն անտեսանելի դարձեր էր: Հինգ օր վերջը միայն՝ մէզը պատուելով՝ տեսնուեցաւ անհուն ծովն սոյն օդապարիկին ներքեւ, զոր հոմն զարհուրելի արագութեամբ կ'մղէր:

Արդէն ընթերցողը դիտէ թէ ինչպէս, մարտի 20ին ճամբայ ելնող այս հինգ անձերէն չորսը ամայի ծովափի մը վրայ նետուերէին մարտի 24ին՝ իրենց հայրենիքէն վեց հազար մղոնէն աւելի հեռու*:

Եւ այս պակտող անձն, այն որու օդնութեան կ'վազէին օդապարիկին միւս ապրող ուղեւորներն, իրենց բնական զխաւորն էր, Ախրոս Սմիթ չափադէտն էր:

* Ապրիլի 5ին՝ Ռիչմոնտ կրէնդի ձեռքը կ'ընկէր, անխափշներու օպտամբութիւնն ընկճուեր էր: Լի զօրապետն արևմտեան կողմը կ'ըջուեր և ամբիկեան միութեան գատը յաղթական կ'կանգնէր:



ՓՆՈՒՆ Ք.

Երեկոյեան ժամը հինգ — Պակտող ուղևորը — Նապի յուսահատութիւնը — Հիւսիսային իսպառիկութիւններ — Աղբէակ — Անյիւտի տեսարանը — Արտօթեան մշուշը — Նապի լայն — Գրանցիկն անցող հոսանքն:

Բուռն ալիք մը գալով՝ ցանցը պատուեր և չափադէտն աւերատարեր էր: Իր շունն ալ անհետ եղեր էր: Հաւատարիմ՝ կենդանին կամովին ծովը նետուեր էր իր տիրոջ օդնու համար:

«Ընդ առաջ», գոչեց թղթակիցը: Եւ չորսն ՚ի միտսին, Գեղէնն Սբիլէդ, Հարպէրդ, Բէնքրօֆ և Նապ, խոնջ ու խոնջէնք մոռնալով՝ իրենց խուզարկութիւնն սկսան:

Խեղճ՝ Նապ կատղութենէ և յուսահատութենէ կ'լար, քանի կ'մտածէր որ աշխարհիս մէջ թմնէն աւելի սիրած անձը կարուսեր էր:

Հազիւ երկու վայրկեան անցեր էր այն ժամանակէն որ Ախրոս Սմիթ աներևոյթ եղեր էր մինչև այն միջոցն որ իր ընկերները ցամաքը նետուեր էին: Ուստի ասոնք կրնային յուսալ զանի ազատելու յարմար ժամանակին հասնելով:

«Փնտուենք, փնտուենք, գոչեց Նապ: — Այո՛, Նապ, գոչեց Գեղէնն Սբիլէդ, և անշուշտ զանի պիտի գաննէք:

- Կենդանի:
- Կենդանի:
- Լողալ գիտէ՞, հարցոյց Բէնքրօֆ:
- Այո՛, պատասխանեց Նապ: Եւ ստիպան, Թօփ իր ընկերէն:

Նաւաստին ծովուն մնչելը լսելով, գլուխը ցնցեց :

Ծովափին հիւսիսակողմն էր, և նաւաբեկներուն ցամաքն իջած տեղէն կէս մղոն հեռու էր՝ որ չափադէտն անհետ եղեր էր : Հետեւապէս եթէ ծովեզրին մտադոյն կէտը հասնելու կարող եղեր էր, շատ շատ այս կէտը կէս մղոն հեռու պիտի գտնուէր :

Այն միջոցին զբեթէ ժամը վեցն էր : Մշուշը նոր ելեր և զիշերը սաստիկ մթաղներ էր : Նաւաբեկներն՝ դէպ ՚ի հիւսիս քալելով՝ բռներ էին սոյն երկրին արևելեան եզրն, որու վրայ զիպուածը զերենք նետեր էր — անծանօթ երկիր, որու աշխարհագրական դիրքն անգամ չէին կարող երևակայել : Աւազուտ, քարերով խառն հող մը կ'կոխէին, որ ամէն բոյսէ զուրկ կ'երեւէր : Այս հողն՝ որ շատ անհարթ, շատ դերբուկ էր, տեղ տեղ խոռոչներով ծածկուած էր, այնպէս որ անոր վրայ քալելը շատ դժուարին կ'դառնար : Ամէն վայրկեան՝ այս ծակերէն՝ ծանրաթուիչ խոշոր թուշուներ դուրս կ'երնէին, ամէն կողմէն խոյս կը տային, թէև մութէն կարելի չէր տեսնել : Արիշ՝ աւելի սրաթուիչ թուշուներ՝ երամովին կ'երնէին և ամպերու պէս կ'անցնէին :

Նաւաբեկներն՝ ատեն ատեն կանկ կ'առնէին, մեծաձայն կ'կոչէին, և ապա ականջ կ'դնէին որ նային թէ արդեօք Ավիհանուսին կողմէն սլաւասխան մը կ'ընդունին : Արդարև՝ կ'մտածէին որ եթէ չափադէտ Վիւրոսին ցամաքն ելած տեղոյն մօտ գտնուէին, Թօփ շան հաչումները, մինչև իրենց պիտի հասնէին, եթէ երբէք Վիւրոս Սմիթ կենդանութեան նշան մը տալու անկարող գտնուէր : Բայց կոհակներուն որոտման և ծփանքին շառաչիւնին հետ աղաղակ մը չէր լսուեր բնա :

Այն ատեն փոքրիկ խումբն իր ընթացքը կ'շարունակէր դէպ յառաջ, և ծովեզրին ամէն խորտ ու փորտ տեղուանքը կ'հետազօտէր :

Այսպէս քսան վայրկեան քալելէն ետև՝ չորս նաւաբեկները յանկարծ կանկ աւին կոհակներու ալէծուփ դծի մ'առջև : Անկից անդին հաստատ հող չկար : Սուր ծայրի մը վրայ կ'գտնուէին, որու դէմ ծովը կատաղօրէն կ'փշրուէր :

«Հրուանդան մ'է այս, ըսաւ նաւատին : Պէտք է ետ դառնալ աջ կողմը զարնելով և այսպէս ազատ երկիրը պիտի գտնենք : — Հապա թէ որ անդ է, պատասխանեց Նապ, Ավիհանուսը ցոյց տալով, որու ահագին կոհակներն ՚ի մթան կ'սպիտականային : — Լաւ ուրեմն, կոչենք զանի» :

Եւ ամենքն իրենց ձայնը միացրնելով՝ ահեղ կոչում մ'ըրին . բայց ոչ ոք պատասխանեց : Սպասեցին որ քիչ մը ծովն ու հովը դադրին : Վերստին ձայն տուին . . . դարձեալ պատասխան մը չառին :

Այն ատեն՝ նաւաբեկներն՝ հրուանդանին ներհակ կողմը բռնելով՝ դարձեալ աւազուտ ու կոպճուտ կողմը հասան : Սակայն Բէնքրօֆ դիտեց որ ծովափն աւելի հաստատուն էր, հողը կ'բարձրանար, և ենթադրեց թէ՝ բաւական երկար դարակով մը պիտի միանար բարձր ծովեզրի մը, որու թանձր կոյտն սառերին մէջ խառն ու շփոթ կ'նկարուէր :

Ծովափին այս կողմը թուշուներն այնքան բազմաթիւ չէին : Ծովն ալ նուազ ալէկոծ, նուազ երերուն կ'երևէր և զարմանալի էր նաև որ ալեաց շարժումն զգալի կերպով կ'նուագէր : Հազիւ ուրեմն կ'լսուէր ծփանքը : Անտարակոյս՝ հրուանդանին այս կողմը կիսաբոլոր խորշ մը կ'ձևացընէր, որու սուր ծայրն բայց ծովուն ալեաց տասանուամէն կ'պահպանէր :

Բայց եթէ այս գիծը բռնէին, դէպ ՚ի հարաւ պիտի գիւնէին, և այն ատեն ներհակ կողմը պիտի երթային այն ծովափին մասին, ուր հաւանօրէն Վիւրոս Սմիթ ցամաքն ելած պիտի լինէր : Մէկ ու կէս մղոն շրջան մ'ընելէն ետև՝ ծովեզրի վրայ չէր երևեր տակաւին կոր գիծ մ'որմէ կարելի լինէր դէպ ՚ի հիւսիս վերադառնալ : Սակայն այս հրուանդանն՝ սրու ծայրէն շրջան ըրեր էին, անտարակոյս երկայն ցամաքի մը կցուած պիտի լինէր : Նաւաբեկ մարդիկ՝ թէև վաստակաբեկ, կ'քալէին միշտ անվհատ, ամէն վայրկեան՝ առաջին ձամբան տանող կտրուկ անկիւնը գտնելու յուսով :

Աւստի քանի մեծ եզաւ իրենց վհատութիւնն, երբ շուրջ էր . . .

կու մղոն շրջէլէն ետև՝ վերստին բաւական բարձր և սահուն ժայռերէ յօրինուած հրուանդանի մը վրայ՝ ծովն իրենց առջևն ելնելով՝ կայ առին :

« Կղզեակի մը վրայ ենք , ըսաւ Բէնքրօֆ , և սոյն կղզեակին մէկ ծայրէն միւս ծայրը կտրեցինք » :

Նաւաստիին դիտողութիւնը ճիշտ էր : Նաւաբեկները՝ չէ թէ հաստատ հողէ , և ոչ իսկ կղզիի մը վրայ ընկած էին , այլ կղզեակի մը վրայ , որ հազիւ երկու մղոն երկայնութիւն ունէր , և որու լայնութիւնն՝ անշուշտ՝ շատ մեծ չէր :

Արդեօք այս խոսքան , քարուտ , անբոյս կղզեակը , ծովային թռչուններու այս ամայի ապաւէնը , աւելի նշանաւոր արշակաբարձի մը մասն էր : Կարելի չէր հաստատել :

Օդապարկին ուղեորներն՝ երբ իրենց նաւակէն՝ միդապատ օդով երկիրն ընդհարեցին , չիրցեր էին անոր մեծութիւնը հասկընալ : Սակայն Բէնքրօֆ՝ ստուերը ծակելու վարժ նաւաստիի աչօքը՝ նոյն պահուն՝ կ'կարծէր թէ արևմտեան կողմն շփոթ կոյտեր կային , բարձր ծովեզրի մը յայտարար նշաններ :

Բայց այս մթութեան պատճառաւ՝ նոյն միջոցին անկարելի էր որոշել թէ կղզեակն՝ պարզ թէ ոչ խառն գրութեան մաս մ'էր : Նոյնպէս անհնար էր դուրս ելնել անտի , վասն զի ծովը զայն կ'ըջապատէր : Ուստի պէտք էր հետևեալ օրուան թողուլ չափազէտը փնտռելու գործը , քանի որ ուր դանուիլը չէր յայտնած , աւանդ , աղաղակ մը հանելով :

« Կիւրոսի լուծիւնը բան մը չ'այտնէր , ըսաւ թղթակիցը : Թերևս նուազած , վերադարձած է , և այս ժամուս պատասխան տալու անկարող . բայց պէտք չէ յուսահատիլ » :

Այն ատեն՝ թղթակիցն առաջարկեց որ կղզեակին մէկ կողմը կրակ վառեն որ իբրև նշան կրնար ծառայել չափադիտին : Սակայն ընդունայն փնտռեցին փայտ կամ չոր մացառ : Ռրիշ բան չկար անդ , այլ միայն աւաղ ու քար :

Ընթերցողը կրնայ երևակայել թէ ո՛րչափ դառն եղաւ Նասպի և իր ընկերներուն վիշաղ , որոնք եռանդազին կապուեր էին այս

անվեհեր Կիւրոս Սմիթին : Այն յայտնի էր որ նոյն միջոցին անոր օգնելու բոլորովն անկարող էին : Պէտք էր սպասել որ օրը ծաղի : Կամ չափազէտը մինակն աղատելու կարող եղեր էր , և արդէն ծովեզրին մէկ կողմը պատսպարան մը գտած պիտի լինէր , կամ ընդ միշտ կորած , մեռած էր :

Ասոնք երկար ու տաժանելի ժամեր կ'երեւէին . ցուրտը սաստիկ էր : Նաւաբեկներն անդթաբար տատապեցան , բայց հազիւ զղային տառապանքը : Եւ ոչ իսկ պահ մը հանդատանալու մտածեցին : Ինքզինքնին կորուսեր էին իրենց գլխաւորին համար , յուսալով և միշտ յուսալ կամելով՝ այս խոսքան կղզեակին վրայ կ'երթնէին , շարունակ հիւսիսային ծայրը գտնալով , այն վայրն որ ամենէն մօտը պիտի լինէր ձախորդութիւնը պատահած տեղոյն : Ականջ կ'դնէին , կ'պոռային , յետին աղաղակ մը լսելու ճիգ կը թափէին , և իրենց ձայնն անշուշտ հեռուները պիտի հասնէր , վասն զի նոյն միջոցին բաւական հանդարտութիւն կ'տիրէր մթնոլորտին մէջ , և ծովուն աղմուկները ծփանքին հետ խաղաղելու սկսեր էին :

« Նասպի մէկ աղաղակը մինչև անդամ՝ պահ մը՝ արձագանք տալու պէս եղաւ : Հարսէրդ այս բանիս վրայ Բէնքրօֆի ուշադրութիւնը հրախրեց , յարելով » :

« Այս բանս ասպցոյց մ'է որ արևմտեան կողմը բաւական մօտաւոր ծովեզր մը կ'գտնուի » :

Նաւաստին հաստատական նշան մ'ըբաւ : Այլ սակայն իր աչքը չէին կրնար խաբել զինքը : Եթէ երկիր մը տեսեր էր հեռուն՝ թէև աննշան , պատճառն այն էր որ իրօք երկիր մը կար անդ :

Բայց այս հեռաւոր արձագանքն « Նասպին աղաղակներէն յառաջ եկած մէկ հատիկ պատասխանն եղաւ , և կղզեակին արևելեան մասին վրայ տիրած անհուն տարածութիւնը լուռ ու անձայն մնաց » :

Սակայն քիչ քիչ երկինքը կ'պարզուէր : Կէս գիշերին մօտ՝ քանի մ'աստղեր փայլեցան , և եթէ չափազէտն այն տեղ լինէր , իր ընկերներուն մօտ , պիտի կարենար դիտել որ այդ աստղերը հիւսիսային կիսադիւղին աստղերը չէին :

Արգարև՝ բեկուային աստղն այլ ևս չէր երևեր այս նոր հորիզոնին վրայ, զէնիթի հստակտեղով թիւններն նոր աշխարհին հիւսիսակողմը տեսնելու սովորած համաստեղները չէին, և Հարաւայնի խաչն այն աստն աշխարհի հարաւային բեկուին վրայ կ'ընդշողար :

Գիշերն անցաւ : Առաւօտեան ժամը հինգին՝ մարտի 23ին՝ երկնից բարձունքը թեթև մը կարմրեցան : Գեռ ևս հորիզոնը նսեմ կ'մտար՝ բայց արևուն առաջին նշոյլներով, ծովէն դիմահար մէջ մ'ելաւ, այնպէս որ աչքի շառաւիղը քսան քայլէն աւելի հեռու չէր կրնար տարածուիլ : Աշուշը խոշոր խոշոր կծիկներու պէս ծանրօրէն կ'շարժէր :

Այս ձախող ժամանակ մ'էր : Նաւաբեկներն իրենց չորս դին բան մը չէին կարող նշմարել : Մինչդեռ Նապի և թղթակցին նայուածքն Ռվիլիանու վրայ կ'ուղղուէին՝ նաւատին և Հարպէրդ արևմտեան ծովեզրը կ'վնասուէին : Բայց հողի ծայր մ'անդամ չէր տեսնուեր :

«Փոյթ չէ, ըսաւ Բէնքրօֆ, եթէ ծովեզրը չեմ տեսնէր՝ դեմ կ'ղզամ. . . անդ է. . . անդ . . . այնքան ստոյգ եմ որքան ստոյգ եմ որ այլ ևս Ռիչմենս չէնք դատուիք» :

Բայց մշուշը քիչ ատենէն պիտի փարատէր անշուշտ : Գեղեցիկ օդի մը մուսլն էր այն : Լաւ արև մը վերին խաւերը կ'տարցընէր, և այս տարութիւնը մինչև կղզեակին երեսը կ'մաղուէր :

Արգարև՝ ժամը վեց ու կէսին միջոյնները՝ արևուն ելքէն երեք քառորդ ժամու չափ առաջ, մէզն աւելի թափանցիկ կ'դառնար : Վերի մասը կ'թանձրանար, բայց վարէն կ'ցրուէր : Քիչ ատենէն բոլոր կղզեակն երեցաւ՝ որպէս թէ ամպէ մը կ'իջնէր. սպա՛ ծովն երեցաւ բոլորչի երես մը ցոյց տալով՝ անհուն դէպ 'ի արևելեան կողմն, բայց սահման ունենալով արևմտեան կողմէ բարձր և առապար :

Այո՛, անդ էր երկիրն : Անգ՝ փրկութիւնը՝ դեմ առ ժամանակեայ կերպով ապահովեալ : Աղղեկին և ծովեզրին միջևն՝ որ կէս մղոնի լայն ջրանցքով մը կ'զատուէին, խիստ արագասահ յորձանք մը խոխոչալով կ'հօտէր :

Սակայն՝ նաւաբեկներէն մին՝ լոկ իր սրտին գրգման հետևելով շուտ մը յորձանքը նետուեցաւ՝ առանց իր ընկերներուն խորհուրդ հարցընելու, առանց բաւ մ'անդամ ըսելու :

Այսպէս ծովը նետուողը Նապն էր : Անշափս կ'շտապէր դիմացի ծովափն ելնել և դէպ 'ի հիսսիս դիմել : Ոչ որ կարող էր զանի արդիւնել : Բէնքրօֆ կոչեց զանի այլ 'ի զուր : Թղթակց Սրիլէդ Նապին հետևելու կ'պատրաստուէր :

Այն ատեն Բէնքրօֆ անոր մօտ դնալով .

«Ս'ուղէն այս ջրանցքէն անցնիլ, հարցոյց նա :

— Այո՛, պատասխանեց Գեդէոն Սրիլէդ :

— Լաւ ուրեմն, խօսքիս միտ դիր ու սպասէ, ըսաւ նաւատին : Եթէ այդ ջրանցքը մտնենք՝ թերևս յորձանքն առնու մեզ բաց ծովը տանի, որ անհնարին բռնութեամբ կ'յուզուի : Արդ՝ եթէ չեմ սխալիւր, տեղատուական (jasant) յորձանք մ'է : Տէս, առաջին վրայ ջուրը կ'նուաղի : Ուստի քիչ մ'ևս համբերենք, և երբ ծովը ցածնայ, շատ հաւանական է որ հունաւոր անցք մը գտնենք . . . :

— Իրաւունք ունիս, պատասխանեց Գեդէոն : Արեւիկ եղածին չափ իրարմէ չբաժնուինք . . . » :

Նոյն պահուն՝ Նապ ուժգին կ'մարտէր յորձանքին դէմ : Շեղակի ուղղութիւն մը բռնելով՝ կ'անցնէր : Սաստիկ արագութեամբ կ'ըջէր՝ բայց քիչ քիչ ալ ծովափին կ'մօտենար : Աղղեակը ցամաքէն զատող այս կէս մղոն տեղը՝ կէս ժամն աւելի ատեն գործածեց անցնելու համար, և ծովեզրն ելաւ քանի մը բիւր քայլ հեռի այն վայրէն որ մեկնած տեղույն դիմացը կ'ընկնէր :

Նապ հատաքարի բարձր պատի մը ստորոտն ուր կոխեց և ինքզինքն ուժգին ցնցեց. «սպա՛ շուտ շուտ վաղելով՝ քիչ ատենէն ժայռերու ծայրին ետեւն աներևոյթ եղաւ, ժայռեր որ դէպ 'ի ծով կ'ձգուէին, զբեթէ կղզեկին հիւսիսային ծայրին բարձրութեամբը :

Նապի ընկերներն իր յանդուգն փորձը մեծ անձկութեամբ դիտէր էին, և երբ աչքէ հեռացաւ՝ նայեցան այն հողին վրայ որովհետև ապաւէն մը պիտի խնդրէին, միանգամայն առաջին վրայ ցա-

նուած քանի մը խեցիներ ուտելով : Փանաքի ճաշ մ'էր այս , բայց վերջապէս՝ ճաշ մ'էր :

Դիմացի ծովափն ընդարձակ խորշ մը կ'յօրինէր , հիւսիսա- կողմն սուր հրուանդանով մը կ'վերջանար , բոլորովին անբոյս և վայրագ տեսքով : Այս հրուանդանն բաւական քմածին ձևով մը կ'զար ծովափին կ'կցուէր և հատաքարի բարձր ժայռերու հետ կամարակապ կ'ամրանար : Ընդ հակառակն հիւսիսակողմը՝ խորշը լայնելով՝ աւելի կլոր եզր մը կ'յօրինէր , որ հարաւային-արեւ- մուտէն հիւսիսային-արեւելք կ'վազէր և սրածայր զլխի մը կը յանդէր :

Այս երկու ծայրագոյն կէտերու մէջ՝ որոց վրայ խորշին կա- մարը կ'յենուր , հեռաւորութիւնը կրնար ութ մղոն լինիլ : Ծով- ափէն կէս մղոն հեռի՝ կղզեակը ծովու մէջ նեղ շերտի մը պէս կ'երևէր , և ահազին վիշապաձկան մը կ'նմանէր՝ որ խիստ մեծ- ցած կմախքը կ'ներկայացընէր : Իր ամենէն լայն կողմն քառորդ մղոնէն անդին չէր անցնէր :

Աղբիւրի գիմացը՝ ծովափնեայ մասը՝ առաջին երեսին վրայ կը բազկանար՝ աւազուա եզրէ մը սեռիկ ժայռերով ցանուած , որ , նոյն միջոցին՝ տեղատուութեան սլաածառաւ՝ փոքր առ փոքր ե- րևան կ'երևէին : Երկրորդ երեսին վրայ՝ տեսակ մը քարակոփ ուղ- ղորդ միջնորմ մը կ'անջատուէր , զոր զէթ երեք հարիւր օտք բարձր ծուռումուր ողնայար մը կ'պսակէր : Այսպէս երեք մղոն երկայնութեան վրայ կողմնակի կ'նկարուէր , և աջ կողմն յան- կարծ կ'վերջանար կարուած ճակատով մը զոր կարծես թէ մար- դու ձեռք տաշուէր էր : Ընդ հակառակն՝ ձախ կողմը՝ հրուան- դանին վերէն՝ այս տեսակ մը տձև քարանձաւն , հատուածակող- ման կտորներէ թօթափելով և իրարու վրայ դիզուած ժայռերէ ու հողակոյտներէ ձևանալով՝ երկնցած դարատափով մը կ'խո- նարհէր , որ փոքր առ փոքր հիւսիսային ծայրին ժայռերուն հետ կ'խառնուէր :

Ծովեզրին վերին սարահարթին վրայ՝ բնաւ ծառ չկար : Շի- տակ սեղան մ'էր՝ Բարեյուսոյ զլուխն՝ Բէբ-Գառնի վրայ նայող

սարահարթին պէս , սակայն աւելի անձուկ համեմատութեամբ : Գէթ , այսպէս կ'երևէր՝ երբոր մարդ կղզեակէն նայէր : Սակայն աջ կողմն անպակաս էր դալարին՝ կարուած ճակատին ետեւը : Գիւրին էր նշմարել մեծ ծառերու խառն ու շիթ իջտը , որու խիտ պուրակներն տեսութեան սահմանէն անդին կ'տարածուէին : Այս դալարին հաճելի էր աչաց , որ արդէն անպաւտճուտ պա- տին ծայրասուր դժնդակ դժերէն սաստիկ կ'տխրին :

Վերջապէս՝ յետին երեսին վրայ՝ և սարահարթին վերէն՝ հիւ- սիս-արևմտեան ուղղութեամբ և զէթ եօթն մղոն հեռաւորու- թեամբ՝ սպիտակ կատար մը կ'շողար , արևային ճառագայթներէն զարնուելով : Չիւնսպատ գլխարկ մ'էր՝ որ հեռաւոր լեռի մը զլուխը կ'ծածկէր :

Ուստի կարելի չէր որոշակի ըսել թէ արդեօք այս երկիրը կղզի մը կ'ձևացընէր թէ ոչ ընդարձակ աշխարհ մ'էր : Բայց աջ կողմն իրարու վրայ դիզուած այս շարժեալ ժայռերը տեսնելով՝ երկրա- բան մը չափտի վարանէր ըսելու որ հրաբխային ծաղում մ'ու- նէին , վասն զի անվրէպ Պլուտոնական գործողութեան մ'արդիւնքն էին :

Գէդէոն Սբիլէդ , Բէնքրօֆ և Հարպէրդ ուշի ուշով կ'դի- տէին այս երկիրը , որու վրայ թերևս շատ տարիներ պիտի ապ- րէին , որու վրայ մինչև անգամ պիտի մեռնէին , եթէ նաւերուն ճամբուն վրայ չգտնուէր :

« Լաւ ուրեմն , հարցոյց Հարպէրդ , ի՞նչ կ'ըսես , Բէնքրօֆ :
— Լաւ ուրեմն , պատասխանեց նաւաստին , թէ՛ լաւ և թէ՛ վատ կողմը կայ , ինչպէս ամէն բանի մէջ : Նայինք վերջը : Բայց առաստիկ տեղատուութիւնը հետզհետէ զգալի կ'լինի : Երեք ժա- մէն՝ փորձ պիտի փորձենք այս անցքէն անցնելու , և երբ միան- դամ անդ հասնինք , պիտի ջանանք մեր ձեռքէն եկածն ընել և Պ. Սմիթը գտնել » :

Բէնքրօֆի գուշակութիւններն ստոյգ ելան : Երեք ժամ ետք՝ երբ ձովն իջաւ , աւազներուն մեծապոյն մասը , որ ջրանցքին փո- սը կ'յօրինէր , բացուէր էր : Աղբիւրն և եղբքին մէջ անոց մի-

այն նեղ ջրմուկ մը կ'մտար որմէ անշուշտ դիւրին պիտի լինէր անցնիլը :

Իրաւի՝ ժամը տասին մօտ՝ Գեղէոն Սքիլէդ և իր երկու ընկերներն իրենց զգեստները հանեցին , ծրարելով իրենց գլխուն վրայ դրին , և յառաջ անցան ջրմուկին մէջ , որու խորութիւնը հինգ ոտքէն վեր չէր ելներ :

Հարպէրդ՝ որու համար ջուրը շատ բարձր պիտի լինէր , ձկի պէս կ'լողար , և շատ ազէկ յաջողեցաւ : Կրեքնին ալ անարգել հասան դիմացի ծովափը : Անդ՝ արևը շուտ մը զերենք չորցընելով հազուեցան իրենց զգեստներն՝ զոր անթաց պահեր էին , և խորհարդ ընելու նստան :

ԳԼՈՒԽ Գ.

Քարափոր սակաւներ — Գեղաին իր բերինն կողմ — « Կարհաւներ » — Խաւարիւթեանց շարունակութիւնը — Կանաչ ծառերու անտառը — Այլ բեւեաց պաշարը — Տեղաբնութեան կ'սպասէն — Ծովեզրին վերէն — Անտառներու շարքը — Գեղ 'ի ծովէն վերաբարձը :

Նախ՝ թղթակիցը նաւաստիին ըսաւ որ նոյն տեղը սպասէ , ուր պիտի դար զինք դանկելու , և պահ մը չկորուսելով՝ դետեղըն 'ի վեր ելաւ , քանի մը ժամ առաջ՝ խափշիկ Նապին բռնած ձամբրան բռնելով : Յետոյ՝ խափշն աներևոյթ եղաւ դետեղրին մէկ անկեան ետեւ՝ այնքան մեծ էր փափաքն շափաղխտին վրայ տեղեկութիւն ստանալու :

Հարպէրդ անոր ուղեկից լինիլ ուզեր էր : « Կեցիր , տղաս , ըսեր էր անոր նաւաստին : Պէտք է որ բնակարան մը պատրաստենք , և նայինք թէ արդեօք տեսլու համար

խեղինքերէ զատ աւելի սննդարար ուտելիք մը չէնք կարող գրասնել : Ի դարձին՝ մեր բարեկամները կերակուր պիտի ուղեն : Հարկ է որ ամէն որ իրեն ընկածն ընէ :

— Պատրաստ եմ , Բէնքրօֆ , պատասխանեց Հարպէրդ :

— Լաւ , վրայ բերաւ նաւաստին , ամէն բան կարգի պիտի մտնէ : Պէտք է որ կանոնով յառաջ երթանք : Յոգնած ենք , կ'մնինք , անօթի ենք : Ուրեմն կարեւորն է գտնել պատասպարան , կրակ և սնունդ : Անտառը փայտ կայ , բոյներն՝ հաւկիթներ , կը մնայ մեղ տուն մը փնտռել :

— Լաւ ուրեմն , պատասխանեց Հարպէրդ , այս ժայռերուն մէջ քարայր մը պիտի փնտռեմ , և վերջապէս պիտի յաջողմ՝ ծակ մը գտնել որպէս զի անոր մէջ պատասպարուինք :

— Ճիշդ այդպէս , պատասխանեց Բէնքրօֆ : Հիմակ ձամբայ ելնենք , տղաս :

Եւ ահա երկուքն ալ ահազին պատին ստորոտը քաշելու կ'ըսկան , այն աւաղուտ ծովափին վրայ որ տեղատուութեամբ լայնարձակ բացուեր էր : Բայց հիւսիսակողմն ելնելու տեղ՝ զէպ 'ի հարաւ դիմացին : Բէնքրօֆ՝ իրենց ծովեզրն ելած տեղէն վար քանի մը հարիւր քայլ հեռու՝ դիտեր էր որ ծովափն նեղ անցք մը կ'ներկայէր , որ՝ իր կարծեօք՝ զետակի կամ առտակի մը բերանը պիտի լինէր :

Արդ՝ մէկ կողմէ՝ կարևոր էր բնակելի առուակի մը մօտ բնակիլ , և միւս կողմէ՝ անկարելի չէր որ յորձանքն յայտկոյս քշած լինէր Վիրոս Սփիթը :

Բնչպէս արդէն ըսինք , պատն երեք հարիւր ոտքի մօտ բարձրութիւն ունէր , բայց քարակոյտն ամէն կողմէ լի էր , և մինչև անգամ ստորոտն՝ որ հազիւ ծովէն կ'թրջուէր , ժամանակաւոր բնակարան մը լինելու համար բնաւ ծերպ մը չունէր : Ուղղորդ պատ մ'էր , խիստ կարծր հատաքարէ շինուած , և կոհակէն բնաւ փշրուած չէր : Կատարին կողմն անհամար ջրային թռչուններ կ'թռէին , և մասնաւորապէս մաշկոտն թռչուններու կարգէն , որ երկար , ճնշեալ և սուր կտուց ունին — շատ ճշոր

հաւեր, որ մարդու ներկայութենէ քիչ կ'երկնչէին, և անտա-
րակոյտ առաջին անգամն էր որ մարդ անոնց մնուածինը կ'վրդո-
վէր :

Այս մաշկոտն թուշուններու մէջ՝ Բէնքրօֆ շատ մը ծովու ու-
րորներ տեսաւ, որ հատաքարին խորտուբորտ անդերը կ'բռնէին,
Եթէ միայն հրացան մը պարպուէր այս բազմերամ թուշուններու
վրայ՝ շատեր վար պիտի գլորէին, բայց հրացան քաշելու հա-
մար, պէտք է հրացան, և ոչ Բէնքրօֆ ունէր և ոչ Հարպէրդ :
Այս ալ կար որ այս ուրորները գրեթէ չէին ուտուեր և նոյն իսկ
իրենց հակիթները դարձելի համ մ'ունին :

Սակայն՝ Հարպէրդ՝ որ քիչ մը ձախ կողմը դարկեր էր, քա-
նի մը լուռուտ ժայռեր նշմարեց, որ անտարակոյտ քանի մը ժա-
մէն մակնթացութեամբ պիտի ծածկուէին : Այս ժայռերուն վրայ՝
լերկ լուերու մէջ տեղ՝ երկպատեան խեցեմորթներ կ'վխտային,
որ սովալլուկ մարդոց արհամարհելի կերակուր մը չէին կրնար
լինիլ : Աստի Հարպէրդ՝ կանչեց Բէնքրօֆը՝ որ փութաց անոր
մօտ գնալու :

«Է՛հ, ասոնք ուլականջներ են (moule), զոչեց նաւաստին :
Ահա ասոնք կրնան հակիթներու տեղը բռնել, որմէ զուրկ ենք :

— Ասոնք ուլականջներ չեն բնաւ, պատասխանեց նորատի
Հարպէրդ, որ ժայռերուն կպուած թուլտարներն (mollusque) ու-
շագիւր կ'քննէր, Կրօֆընէր են (lithodome) :

- Երդեօք կ'ուտուին, հարցուց Բէնքրօֆ :
- Անտարակոյտ :
- Ուրեմն քարափորներ ուտենք » :

Նաւաստին կարող էր Հարպէրդի վստահիլ : Այս պատանին
բնական պատմութեան մէջ շատ վարժ էր և այս դիտութեան
համար մեծ եռանդ ունեցեր էր : Իր հայրն այս ճամբուն մէջ գրեթե
էր Պօթօնի ամենէն լաւ ուսուցիչներու դասախօսութեանց հե-
տեւելու յորդորելով, և նոյն ուսուցիչներն այս ուշիմ և ժիր տղան
շատ կ'սիրէին : Աստի իր բնագիտի բնազդուններն վերջէն մեծ
օգուտ ունեցան, և այս առաջին քայլին մէջ՝ Հարպէրդ չսխալեցաւ :

Այս քարափորներն երկար խեցիներ էին՝ ողկուղաձև միացած
և ժայռերուն կպած : Այն պեղիչ թուլտարներու տեսակէն էին
որ խիստ կարծր քարերու մէջ ծակեր կ'փորեն, և իրենց խեցին
երկու ծայրէն կ'կլորէին, ձև մ'որ սովորական ուլականջի վրայ
չտեսնուիր :

Բէնքրօֆ և Հարպէրդ այս քարափորներէն՝ որ նոյն միջոցին՝
արևուն բացուեր էին, շատ մը կերան՝ ինչպէս որ ոստրէ կ'ու-
տեն, անոնց համը շատ համեմուտ գտան, և ասոր համար հոգ
չբրին ոչ պղպեղ և ոչ որ և է համեմ չունենալուն :

Այսպէս նոյն միջոցին իրենց անթութիւնն անցաւ, այլ ոչ
ծարաւն, որ աւելցաւ երբոր այս բնապէս համեմալ թուլտար-
ները կերան : Աստի հարկ էր անուշ ջուր գանել, և հաւանա-
կան չէր երևեր որ այսպիսի անհարթ հողն մը վրայ ջուր պակ-
սէր : Բէնքրօֆ և Հարպէրդ շատ մը քարափորներ իբրև պաշար
առնելու և իրենց զրպաններն ու թաշկինակները լեցընելու զո-
թիւնն ընէին ետև՝ դէպ 'ի վեր ցամաքն ելան :

Երկու հարիւր քայլ աւելի հեռու երթալով՝ Բէնքրօֆի նա-
խազգացած այն փոսը կ'հասնէին, որմէ զեղուն առուակ մը պի-
տի հոսէր : Կարծես հրաբխային բուռն ձգամբ մը պատը դատուեր
էր : Փոքրիկ խորը մը խարխախէն աղեղնաձև բացուեր էր, որու
խորն բաւական սուր անկիւն մը կ'յօրինէր :

Այն տեղ ջրին ընթացքը հարիւր ոտը լայնութիւն ունէր, և
մէն մի կողմէն՝ իր երկու թումբերն հաղիւ քսան ոտը լայն էին :
Առուակը դրեթէ ուղղակի կ'մտնէր կրօնի (հատաքար) երկու
պատերուն մէջ որ դետակին վերնակողմը ցածնալու կ'նշուէին,
ապա դետակն յանկարծ կ'դառնար և կէս մղոն հեռու անտառի
մը տակ անհետ կ'լինէր :

«Աստ ջրուր, անդ, անտաւ, ըսաւ Բէնքրօֆ : Ի՞նչ կ'ըսես,
Հարպէրդ, միայն սուներ կ'պակսի մեզի » :

Առուակին ջուրը վճիտ էր : Նաւաստին դիտեց որ այն տե-
ղատուութեան պահուն՝ այսինքն երբ ծովը ցած էր և կոհակն
մինչև երբ չէր հասներ, ջուրն անուշ է : Այս կարեոր կէտը

ստուգելէն ետե՛լ Հարպէրդ՝ պատսպարանի համար խոռոչ մը
փնտռեց, բայց անօդուտ տեղը: Պատն ամէն կողմէն ողորկ էր,
հարթ և ուղղորդ:

Սակայն՝ ճիշտ առուակին բերանն, և ծովուն ալիքներէն զերծ՝
փլածնեբը՝ չէ թէ քարանձաւ մը, այլ ահագին ժայռերու կոյտ
մը յօրինէր էին, ինչպէս որ կ'տեսնուին ստէպ հասաքարի եր-
կիրներու մէջ, և որ կարկասներ կ'ըսուին:

Բէնքրօֆ և Հարպէրդ ժայռերուն մէջ բաւական խորը՝ աւա-
զըտ նեղ անցքերը մտան, ուր լոյսը պակաս չէր, վասն զի այս
հատաքարներուն ձգած պարսպ տեղերէն կ'ըմբիսնէր, որոց մէկ
քանին միայն հրաշալի զուգակշռութեան մը պատճառաւ կանդուն
կ'մնային: Բայց լոյսին հետ հոն ալ ներս կ'մտնէր — նրբուղե-
ներու ճշմարիտ քամի մը — և հովին հետ դրսի կծու ցուրտը:

Սակայն նաւաստին մտածեց որ այս նեղ անցքերէն մէկ քա-
նին գոցելով, քարէ և աւազէ խառնուրդով մը քանի մը բաց-
ուածք խցելով՝ կարելի է այս կարկասները բնակելի ընել: Ի-
րենց երկրաչափական յատակադիժն այս ձեւն &, այսինքն ծուռ
ճի ձեւն ունէր: Արդ այս նշանին վերին հանդոյցը՝ որմէ հարաւի
և արեւմտի հոն օւժպին կ'մտնէր, բաժնելով՝ անաւարակոյս ստո-
րին մասէն օդուտ քաղելու հնարը պիտի գտնէին:

«Այս մեր բանին պիտի դայ, ըսաւ Բէնքրօֆ, և եթէ երբէք
զ. Սմիթը գտնենք այս բաւիղը պիտի կարգի զնէ:

— Զինք պիտի տեսնենք, Բէնքրօֆ, զոչեց Հարպէրդ, և երբ
վերադառնայ՝ պէտք է որ այս տեղ բաւական հանդիտութեան
բնակարան մը գտնէ: Եւ իրօք հանդիտութեան բնակարան մը պիտի լինի ե-
թէ ձախ կողմի նրբուղիին մէջ վառարան մը հաստատենք և ծակ
մը բանանք մուխը դուրս տալու համար:

— Արնանք այդ ընել, աղաս, պատասխանեց նաւաստին, և այս
կարկասները — Բէնքրօֆ այսպէս անուանեց սոյն ժամանակաւոր
բնակարանը — մեր գործին պիտի դայ: Բայց նախ երթանք այրե-
լիք ձարներ: Կարծեմ թէ բացուածքը գոցելու համար, որմէ հոն
փողի պէս կ'մտնէ, փայտը կրնայ օգտակար լինիլ մեզի»:

Հարպէրդ և Բէնքրօֆ կարկասներէն դուրս ելան, և՛ անկիւ-
նէն դառնալով՝ սկսան առուակին ձախ եզրէն վեր ելնել: Ասոր
հոսանքը բաւական արագասահ էր և քանի մը չոր փայտեր կ'բե-
րէր: Ծովը բարձրանալուն — և արդէն նոյն միջոցին բարձրա-
նալու վրայ էր — պիտի կարենար շատ հեռուն քշել հոսանքը:
Ուստի՝ նաւաստին մտածեց որ՝ այս տեղատուութեան և մակնիթա-
յութեան օդուտ քաղելով՝ պիտի կարենային ծանր աւարկաներ
փոխադրել:

Քառօրդ մը քալելէն ետե՛լ նաւաստին և ուշիմ պատանին հա-
սան այն անկիւնը՝ զոր առուակը կ'յօրինէր դէպ 'ի ձախ մղուե-
լով: Այս կիտէն սկսեալ՝ առուակը շքեղ ծառերու անտառէ մը
կ'հոսէր: Թէև եղանակը ցուրտ՝ այս ծառերը դաբարակա էին,
վասն զի կոնաքեր բուսոց ընտանիքին կ'վերարբեւէին որ երկրագըն-
տիս ամէն կողմերն՝ հիւսիսային կլիմաներէն մինչև արեւարձային
աշխարհները՝ կ'տարածուին:

Ղորատի բնադէտը մասնաւորապէս ուշագոյս տունկը ճանչեց, որ
հիմալայեան դօտին մէջ առատ հիւթ մ'է, և խորթելի ու հա-
մեմաւոր հոս մը կ'սփռէր: Այս աղբոր ծառերուն մէջ շոճի բուն-
ջեր կ'բուսնէին որու գիմահար արեւանոյն լայնօրէն կ'բացուէր:
Բարձր խոտերու միջև, Բէնքրօֆ զղաց որ իր ոտքը չոր ոստեր
կ'ձգէր, որ արուեստական փամփուշաներու պէս կ'ձարձատէին:

«Լաւ, աղաս, ըսաւ նա Հարպէրդին, եթէ ես այս ծառերուն
անունը չգիտեմ, դոնէ այրեւա փայտի կարող կրնամ գտնել. և
առ ժամն, այս փայտը մեզի համար ամենէն պիտանին է:

— Ուրեմն մեր պաշարը կապենք», պատասխանեց Հարպէրդ,
որ շուտ մը գործի սկսաւ:

Պաշարը շուտով ժողովեցին: Հարկ չկար անդամ ծառերու
ճիւղերը կտրել, վասն զի իրենց ոսից ներքև անբաւ չոր փայտե-
րու կոյտեր կ'գտնուէին: Բայց եթէ փայտն անպակաս էր, փո-
խադրելու միջոցները դժուարին էին: Այս փայտը չոր էր, շատ
շուտով պիտի վառէր: Ուստի հարկ էր անբաւ փայտ տանիլ
կարկասներն և երկու մարդու կրելիք բերը պիտի չբաւէր:

Հարպէրդ այս դիտողութիւնն ըրաւ իր ընկերին :

«Է՛յ, տղաս, պատասխանեց նաւաստին, այս փայտը փոխադրելու միջոց մը պիտի գտնուի անշուշտ : Միշտ ամէն բան ընելու հնարը կայ : Թէ որ սայլակ մը կամ նաւակ մ'ունենայինք՝ դործը շուտով կ'լմննար :

— Բայց դետակն ունինք, ըսաւ Հարպէրդ :

— Իրաւ է, պատասխանեց Բէնքրօֆ : Գետակն ինքնաբայլ ճամբայ մը պիտի լինի մեզի համար, և անշուշտ բան մը գիտէր լաստ հնարողը :

— Միայն այս կայ, դիտեց Հարպէրդ, որ այս պահուս ջրային ճամբան մերինին ներհակ ուղղութեամբ կ'քալէ, քանի որ ծովը կ'բարձրանայ :

— Բաւական է միայն քիչ մը սպասել, պատասխանեց նաւաստին, և մեր փայտն գէպ 'ի Վարկառները փոխադրելու դործն ինք պիտի կատարէ : Ուրեմն մեր լաստը պատրաստենք » :

Նաւաստին՝ որու ետեւէն կ'երթար Հարպէրդ, զիմեց գէպ 'ի անկիւնն որ անտառին եզրով և դետակով կ'ձևանար : Ամէն մէկն՝ իր ոյժը տարածին չափ՝ խուրձի պէս կապուած փայտի բեռ մը կ'կրէր : Գետակին թմբին վրայ ալ շատ մը չոր ձիւղեր կ'ղրտնուէին, այն խոտերուն միջևն՝ ուր հաւանօրէն՝ մարդու մը ոտք երբէք կոխած չպիտի լինէր : Անմիջապէս Բէնքրօֆ սկսաւ իր լաստը շինել :

Գետեզրին մէկ ծայրն հոսանքը կտրելով պտոյտ մ'առաջ կ'բերէր : Այս պտոյտին մէջ նաւաստին և պատանին՝ չոր բաղդի ոտերով իրարու կապուած բաւական խոշոր փայտի կտորներ գրին : Այսպէս տեսակ մը լաստ շինելով՝ իրենց հաւաքած բոլոր փայտն հետզհետէ անոր վրայ դիզեցին, գոնէ քսան մարդու բեռ կրնար լինիլ :

Մէկ ժամու մէջ այս դործը լմնցաւ, և լաստը թմբին կապուելով՝ պարտաւորեցաւ տեղատուութեան սպասել :

Քանի մը ժամ ունէին անցընելու, և Բէնքրօֆ ու Հարպէրդ՝ որոշեցին միակամ վերին լեռնաղաշտն ելնել, որպէս զի երկիրը

քննեն աւելի մեծ շրջանի մը վրայ : Ճիշտ՝ գետակին յօրինած անկիւնէն երկու հարիւր քայլ ետեւն՝ պատին ստորտը ժայռեր փլած լինելով՝ անտառին ծայրը դարուվար կ'իջնէր թեթև կերպով մը : Բնական սանդղի մը կ'նմանէր :

Ուստի Հարպէրդ և նաւաստին սկսան վեր ելնել : Իրենց սրբնդաց զօրութեան շնորհիւ՝ քիչ ատենէն կատարը հասան և գետակին բերանն յօրինած անկեան վրայ նստան :

Երբոր հասան՝ առաջին ահարկ մը նետեցին Ուլկիանոսին վրայ՝ որմէ անցեր էին այնչափ ահուելի պարագայի մէջ : Ծովափին բոլոր հիւսիսակողմն այլայլութեամբ դիտեցին, այն վայրն ուր փորձանքը պատահեր էր, և Վիւրոս Սմիթ անհետ եղեր էր :

Երկուքն ալ իրենց աչքը չորս գին տանելով նայեցան թէ արդեօք իրենց օգապարկին մէկ բեկորն՝ որու մարդ մը փաթթուելու կարող լինէր, գեռ ևս ջրին երեսը չէր ծփար : Բայց բան մը չտեսան : Ծովը միայն ջրերու լայնատարր անսպաս մ'էր, նոյնպէս էր նաև ծովափը : Միայն կարելի էր որ երկուքնին ալ այնպէս հեռու կ'գտնուէին որ անտես մնային :

« Բան մը կ'ըսէ ինձ, գոչեց Հարպէրդ, որ Պ, Վիւրոսի պէս անվեհեր մարդ մը համբակի մը պէս ծովին տակը չէ գացած : Անշուշտ ծովեզբին մէկ կողմը հասած պիտի լինի : Այնպէս չէ՛, Բէնքրօֆ » :

Նաւաստին զլուխը ցնցեց տրտմադին : Նա չէր յուսար բնաւ Վիւրոս Սմիթը վերստին տեսնելու, բայց Հարպէրդին յոյսը հիմնովին կտրել չուզելով,

« Անշուշտ, անշուշտ, ըսաւ նա, մեր չափազէտն այնպիսի մարդ մ'է որ իր գլխին ճարը կրնայ տեսնել մինչդեռ ուրիշները կ'ընկճին . . . » :

Սակայն ծովեզրին կ'նայէր Բէնքրօֆ մեծ ուշադրութեամբ : Իր աչաց ներքև կ'ընդլայնէր աւազուտ ափունքն՝ որու սահմանն է՝ գետի բերանին աջ զիւն, վիմուտներու շարք մը : Այս ջրամոյն ժայռերն՝ ծովափնեայ ծփանքին մէջ պատկած երկակնեցաղ կենդանեաց կ'նմանէին :

Ժայռերու այս ակմբէն անդին՝ արևուն նշոյլներէն ծովը կ'ընդար : Հարաւստիօզմը՝ սուր ծայր մը հորիզոնը կ'փակէր , և մարդ չէր կրնար հասկընալ թէ արդեօք ցամաքն այս ուղղութեամբ կ'երկնար , թէ ոչ հարաւային արևելեան ու արևմտեան կողմը կ'դառնար : Ծովածոցին հիւսիսային ծայրը՝ եզերքին ուրուագիծն՝ աւելի կ'ըսր գծի մը հետևելով՝ հեռուն կ'տարածուէր : Այն տեղ ծովափը ցած , տափակ , անվէմ էր , աւազի մեծ կոյտեր չունէր և տեղատուութենէ բաց կ'մնար :

Այն ատեն Բէնքրօֆ և Հարպէրդ դէպ 'ի արևմտա գարձան : Ամենէն առաջ ձիւնահատար լեռը տեսան , որ վեց կամ եօթն մղոն հեռու կ'կանգնէր : Իր վերին գարակներէն մինչև երկու մղոն դէպ 'ի ծովափը , ահադին ծառաշատ անտառներ կ'տարածուէին , որոց մէջ տեղ տեղ դալարաւէտ վայրեր կային , վասն զի մշտապէս կանաչ ծառեր անպակաս էին : Գարձեալ , այս անտառին եզրէն մինչև ծովափը , դալարադեղ սարահարթ տեղ մը կ'երևէր , որու վրայ՝ դէս ու դէն ծառեր բուսեր էին անկանոն կերպով : Չախ կողմն , քանի մը բայտաներու մէջէն՝ առուակին ջուրերուն շողիւնը մերթ ընդ մերթ կ'տեսնուէր , և կ'երևէր թէ իր բաւական ոլորտա ընթացքով լեռին մոյթերուն կ'դառնար , որոց մէջ պիտի լինէր իր ակունքը :

Այն կէտէն՝ ուր լաստը թողեր էր նաւաստին՝ առուակը կրանիդէ երկու բարձր պատերու մէջէն կ'սկսէր հոսիլ . բայց եթէ ձախ կողմն որմերն շիտակ ու սեպաձև էին , աջ կողմն մրակտուր ապառամներն անջատ ժայռեր կ'դառնային , ժայռերը դայլախաղչներ , դայլախաղչերը կոպիճներ՝ մինչև հրուանդանին ծայրը :

«Արդեօք կղզիք մը վրայ ենք , մրմուաց նաւաստին :

— Ի՞նչ որ է , կ'երևի թէ այս կղզին բաւական ընդարձակ է , պատասխանեց պատանին :

— Կղզի մը , որչափ ընդարձակ լինի , միշտ կղզի է » , ըսաւ Բէնքրօֆ :

Բայց այս կարևոր ինդիքը չէր կրնար դեռ ևս պարզօրիլ : Պէտք է ուրիշ ժամանակի թողուլ անոր լուծումը : Իսկ նոյն իսկ ցա-

մաքին դալով՝ թէ կղզի լինէր և թէ աշխարհ , արդաւանդ , իր այլ և այլ տեսքովն ակործելի , իր արտագրութեանց մասին այլազան կ'երևէր :

«Այս բարեբաղդութիւն մ'է , գիտել տուաւ Բէնքրօֆ , և մեր այս ձախորդութեան մէջ՝ պէտք է շնորհապարտ լինիլ Նախախնամութեան :

— Ուրեմն փառք տանք Աստուծոյ » , պատասխանեց Հարպէրդ , որու բարեպաշտ սիրտն առլի էր երախտադիտութեամբ առ Արարիչն աշխարհի :

Բէնքրօֆ և Հարպէրդ ընդ երկար քննեցին այս երկիրն որու վրայ նետեր էր զիրենք բազում . բայց դժուարին էր երևակայել , այս հարևանցի քննութենէ ետև՝ թէ ի՞նչ վերապահած էր իրենց ապագան : Յետոյ՝ վերադարձան՝ կրանիդէ լեռնադաշտին հարաւային կատարին գիծը բռնելով , այն կատարն կոյտ կոյտ և ծամածուռ ժայռերով կ'նկարագրուէր , որ խիստ այլանդակ ձևեր կ'առնուին :

Այն տեղ՝ հարիւրաւոր թռչուններ կ'ապրէին , որ ժայռին ծակերուն մէջ իրենց բոյնը շիներ էին : Հարպէրդ՝ ժայռերուն վրայ ցատկելոյն՝ այս թռչուններն երամովին թռան դացին :

«Ա՛հ , պոռաց նա , ասոնք ո՛չ ծովու և ոչ ցամաքի որորներ են :

— Ի՞նչ են ուրեմն այս թռչունները , հարցուց Բէնքրօֆ : Կարծես թէ աղաւնիներ են :

— Արդարեւ՝ վայրի աղաւնիներ են , կամ ժայռի աղաւնիներ , պատասխանեց Հարպէրդ . վասն զի իրենց թևին վրայ երկու սև շերտ , սպիտակ յետոյք , և կապոյտ-մոխրի փետուր ունին : Արդ՝ թէ որ վայրի աղաւնի կ'ուտուի՝ պէտք է որ ձուերը պատուական լինին , և եթէ միայն իրենց բոյներուն մէջ այս ձուերէն թողուցած են . . . :

— Ժամանակ չպիտի տանք այդ ձուերուն որ ծնին , եթէ ոչ ձուազեղի ձևով , պատասխանեց Բէնքրօֆ զուարթադին :

— Բայց ի՞նչ բանի մէջ պիտի ելինս ձուազեղդ , հարցուց Հարպէրդ . փեղլոյրիդ մէջ :

— Ճշմարիտը, պատասխանեց նաւաստին, ես այդպիսի կախարդութիւն մը չեմ կրնար ընել: Հաւկիթներն եփելով գոհ կ'լինինք, տղաս, և իմ վրաս կ'առնում ամենէն կարծր հաւկիթները լափելու հոգը»:

Բէնքրօֆ և պատանին ուշի ուշով քննեցին կրանիդին խորտաբորտ սեղանները, և իրօք՝ քանի մը խողովեցրու մէջ հաւկիթներ գտան: Բաւական ժողովեցին և նաւաստին իր թաշկինակին մէջ դրաւ, և որովհետև մալինթայութեան ժամը կ'մօտենար՝ Հարպէրդ և Բէնքրօֆ սկսան դէսլ 'ի առուակն իջնել:

Երբոր առուակին արմուկն հասան՝ կէսօր ժամ մ'անցեր էր: Արդէն հոսանքը կ'դառնար: Ուստի պէտք էր մալինթայութենէ օգուտ քաղել՝ որպէս զի փայտերուն լաստը դետակին բերանը տանէին: Բէնքրօֆ միտք չունէր թողուլ որ լաստն՝ ինքն իրեն երթայ հոսանքին, և ինքն ալ զայն վարելու համար մտադիր չէր վրան հեծնել: Բայց նաւաստի մը միշտ ճարտիկ է երբոր պէտք լինի պարան ու չուան շինելու, և Բէնքրօֆ չոր բաղեղներու միջոցաւ շուտ մը զրկաչափ երկար չուան մը հիւսեց: Այս բուսային պարանը լաստին ետևէն կապեց նաւաստին և ձեռօքը բռնեց, մինչդեռ Հարպէրդ՝ երկար գերանով մը լաստը հրելով՝ հոսանքին մէջ կ'պահէր:

Այս միջոցն շատ լաւ յաջողեցաւ: Փայտի ահագին բեռն՝ զոր նաւաստին կ'ընէր՝ ծովափին վրայ քալելով՝ ջրին հոսանքին հետ կ'իջնէր: Եզերքը շատ սեպաձև (accore) էր, վախ չկար որ լաստը նստի, և երկու ժամ չանցած՝ առուակին բերանը կ'հասնէր՝ Կարկառներէն քանի մը քայլ հեռու:



ԳԼՈՒԽ Ե.

«Կարկառներան» որդեատնիանը — Կրակն կարևոր խնդիրը — Ատախն ձերոս որոհը — Ծովափին վրայ խողովակներ — Թղթակցին և Նապէ վերադարձը — Ատախն մը փայն — Բանկոյ վառարանը — Ատախն ընթրէիլը — Յամաթի վրայ առաջին գիշերը:

Երբոր լաստին փայտը դուրս հանեց՝ Բէնքրօֆի առաջին հողն եղաւ Կարկառները բնակելի ընել, այն նրբուղիները դոցելով՝ որոց ծակերէն հովը կ'փչէր: Աւազ, քարեր, իրարու պլլուած ոտներ, թրջած հող ամբապէս խցեցին & ին անցքերը՝ որ հարաւային հովերուն բաց էին, և վերին բերանը զատեցին: Միայն խողովակ մը թողուցին նեղ ու ոլորուտ, որ կողմնակի կը բացուէր որպէս զի մուխը դուրս հանէն և վառարանը վառեն: Այսպէս Կարկառներն երեք չորս սենեկի բաժնուեցան, եթէ կարելի է այս անունը տալ մութ որջերու, որմէ վայրի պողան մը հաղիւ գոհ պիտի լինէր: Բայց գետինը չոր էր, և կարելի էր ոտքի վրայ կենալ, գէթ զլիսաւոր սենեկին մէջ՝ որ կեդրոնը կը գտնուէր: Գետինը բարակ աւազ սփռուած էր՝ և ամէն բան նկատելով՝ մինչև որ աւելի լաւ բնակարան մը գտնէին, այս իրենց պիտի ծառայէր:

Հարպէրդ ու Բէնքրօֆ աշխատելու ատեն կ'իտասկեցին:

«Թերեւս, կ'ըսէր Հարպէրդ, մեր ընկերներն լաւագոյն բնակութիւն գտան քան թէ մերինը:

— Կարելի է, կ'պատասխանէր նաւաստին. բայց քանի որ կատակած կայ, մի հրաժարիք դործելէ: Լաւ ևս է որ մարդ աւելի լաւ լար մ'ունենայ իր աղեղին համար քան թէ բնաւ:

— Ա՛հ, կ'կրկնէր Հարպէրդ, թող Գ. Սմիթը բերեն, թող զանի գտնեն, և մեզի կ'մնայ միայն Աստուծոյ շնորհակալ լինիլ:

— Այո՛ , կ'մըմնջէր Բէնքրօֆ : Այդ Սմիթը մարդ էր , և ճշմարիտ մարդ մը :

— Այդպէս . . . ըսաւ Հարպէրդ : Միթէ յոյս չունին զանի վերստին տեսնելու :

— Աստուած չընէ որ յոյս կտրեմ՝ , սպասասխանեց նաւաստին :

Սեպհականութեան դործը շուտով լմնցաւ , և Բէնքրօֆ շատ գօՏ լինիլը յայտնեց :

« Հիմակ , ըսաւ նա , մեր բարեկամները կրնան վերադառնալ : Բաւական հանգիստ ապաստանարան մը պիտի գտնեն » :

Հիմակ պէտք էր վաւարանը հաստատել և ճաշը պատրաստել : Ճշմարիտը , պարզ ու գիւրին գործ մ'էր : Չախ կողմի առաջին սրահին խորը տափակ լայն քարեր գրին՝ արդէն պահուած նեղ անցքին բերանը : Ինչ տաքութիւն որ մուխը գուրս չպիտի հանէր՝ բաւական պիտի լինէր անշուշտ ներսի գին բարեխառն օդ մը պահելու :

Խուցի մը մէջ փայտի պաշարը գրին , և նաւաստին վաւարանին քարերուն վրայ քանի մը կոտոր կոճեղ սեղաւորեց՝ մանր փայտերով խառն :

Նաւաստին այս աշխատութեամբ կ'պարապէր՝ երբ Հարպէրդ հարցուց թէ արդեօք վառիկ (allumette) ունէր :

« Անշուշտ , սպասասխանեց Բէնքրօֆ , և պէտք է նաև յարել , բարեբաղդ եմ որ ունիմ , վասն զի առանց վառիկի կամ արեթի՝ շատ նեղութիւն պիտի կրէինք » :

— Կրնայինք միշտ կրակ վառել վայրենիներուն պէս , պատասխանեց Հարպէրդ , երկու չոր փայտ իրարու դէմ շփելով :

— Լաւ ուրեմն , փորձէ նայիմ , տղաս , և պիտի տեսնես թէ ուրիշ արդիւնք չպիտի ունենայ այդ փորձն այլ միայն թէ երբ կոտորելու :

— Սակայն Խաղաղական կղզիներուն մէջ՝ շատ պարզ ու շատ գործնական միջոց մ'է այդ :

— Հակառակը չեմ ըսեր , պատասխանեց Բէնքրօֆ , բայց պէտք

է հատալ որ կրակ վառելու կերպը գիտեն , կամ մասնաւոր փայտ մը կ'գործածեն . վասն զի՝ արդէն քանի քանի անգամ այս կերպով կրակ վառել ուզեցի , և բնաւ չյաջողեցայ : Ուստի կը խոստովանիմ որ վառիկները վերադաս կ'համարիմ : Ո՛ր են իմ վառիկներս » :

Բէնքրօֆ իր բաձկոնակին մէջ փնտռեց տուփը զոր միշտ վրան կ'կրէր , վասն զի մոլեղին ծխով մ'էր : Իր տաբատին դրոպանները խառնեց , և բոլորովին ապշած մնաց այն տուփը չգտնելով :

« Քանի՛ տխմար եմ , և աւելի քան տխմար , ըսաւ Բէնքրօֆ Հարպէրդին երեսը նայելով : Ա՛րեւի թէ տուփը դրոպանէս ընկեր է , և անշուշտ կորուսած պիտի լինիմ : Բայց դու , Հարպէրդ , արդեօք բան մը չունին , հրահան կամ ուրիշ բան մը որպէս զի անով կրակ վառելու կարող լինէինք » :

— Ո՛չ , Բէնքրօֆ » :

Նաւաստին դուրս ելաւ , ճակատը շփելով աշխուժի . իր ետեւէն դնաց պատանին :

Աւազին վրայ , ժայռերուն մէջ , առուակին թմբին մօտ՝ երկու քնին ալ ուշադրութեամբ փնտռեցին , բայց պարապ տեղը : Տուփը պղնձէ էր և անշուշտ իրենց աչքին պիտի զարնէր :

« Բէնքրօֆ , հարցուց Հարպէրդ , արդեօք այդ տուփն օդապարկին նաւակէն դուրս չնետեցիր » :

— Այդպիսի բան մը չըրի երբէք , պատասխանեց նաւաստին : Բայց քանի որ այնպէս սաստիկ ցնցումներ կրեցինք , անշուշտ այն փոքրիկ առարկան վրայէս ընկած պիտի լինի : Իմ ծխափայտս անգամ ընկեր է : Թշուառական տուփ , արդեօք ո՛ր մնաց :

— Լաւ , ծովը կ'բաշուի , ըսաւ Հարպէրդ , մեր ցամաքն ելած տեղը վաղենք » :

Հաւանական չէր որ այն տուփը գտնէին . ալէկոծութեան ժամանակ կոհակները զայն կոպիւճներու մէջ թաւալած պիտի լինէին , բայց պէտք էր ՚ի նկատի առնուլ այս պարագան : Հարպէրդ ու Բէնքրօֆ շուտ մը վաղեցին այն տեղն ուր առջի օր ցամաքն ելեր էին , Կարկառներէն շուրջ երկու հարիւր քայլ հեռու :

Անդ՝ կոպիճներու միջև, ժայռերու խոռոչներու մէջ՝ Հարպէրդ ու Բէնքրօֆ սկսան մանրակրկիտ կրկտել: Անօգուտ վաստակ: Եթէ տուփն այն անդ ընկած էր՝ այլքները տարած պիտի լինէին: Քանի ծովը քաշուէր՝ նաւաստին ժայռերուն բոլոր ծերպերը կը կրկտէր՝ առանց բան մը գտնելու: Այս պարագայիս մէջ՝ մեծ էր տփին կորուստը, իսկ նոյն պահուն՝ անդամանելի:

Բէնքրօֆ իր սրտնեղութիւնը չձածկեց: Իր ճակատը սաստիկ խորշոմեր էր: Բերնէն խօսք մ'անդամ չէր հաներ: Հարպէրդ ուղեց զանի մփթարել զիտել տալով որ՝ հաւանօրէն՝ վառիկները ծովուն ջրէն թրջած պիտի լինէին և զանոնք գործածելու հնարը չպիտի գտնուէր:

«Բայց ո՛չ, տղաս, պատասխանեց նաւաստին: Պղնձէ տփի մը մէջ էին որ լաւ գոյուած էր: Եւ հիմակ՝ ի՞նչ ընենք:

— Անտարակոյտ կրակ ճարելու միջոցը պիտի գտնենք, ըսաւ Հարպէրդ: Պ. Սմիթ կամ Պ. Սքիլէդ մեզի պէս անձարակ չպիտի մնան:

— Այո՛, պատասխանեց Բէնքրօֆ. բայց՝ արի տես որ հիմակ կրակ չունինք, և մեր ընկերներն ՚ի դարձին ողորմելի կերակուր մը պիտի գտնեն:

— Բայց, ըսաւ Հարպէրդ աշխուժիւ, կարելի չէ որ արեթ կամ վառիկ չունենան:

— Ես կ'տարակուսիմ, պատասխանեց նաւաստին զլուխը ցնցելով: Նախ Նապ և Պ. Սմիթ չեն ծխեր, և կ'վախնամ որ Պ. Սքիլէդ իր տուժարը պահելու աւելի հոգ տարած է քան թէ վառիկի տուփը՝:

Հարպէրդ պատասխան չտուաւ: Ի հարկէ ցաւալի բան մ'էր տփին կորուստը: Սակայն՝ պատանին կ'յուսար որ ինչ և է կերպով կրակ պիտի ճարուէր: Բէնքրօֆ՝ որ աւելի փորձառու էր, և թէև ո՛չ քիչ ոչ շատ բանով շփոթուլ մարդ մ'էր, այսպէս չէր խորհեր: Սակայն՝ միայն միջոց մը կար. պէտք էր Նապի և թղթակցին վերադարձին սպասել: Բայց պէտք էր հրաժարել եփած կարծր հաւկիթ պարաստելէ, ինչպէս որ անոնց պատ-

րաստել կ'ուղէին, և հում միս ուտելն՝ ոչ իրեն և ոչ անոնց ախորժելի բան մը չէր երևեր:

Կարկառներուն կողմը դառնալէն առաջ՝ Նաւաստին ու Հարպէրդ՝ մտածելով որ թերևս կրակ գտնելն անհնար լինէր, ուրիշ շատ մը քարափորներ հաւաքեցին, և լուիկ մնջիկ իրենց բնակարանին ճամբան բռնեցին:

Բէնքրօֆ՝ աչքը գետինը տնկած՝ շարունակ իր անդամները տուփը կ'փնտռէր: Մինչև անդամ՝ գետակին ձախ ափէն վեր ելաւ մինչև այն անկիւնն ուր լաստը կապեր էին, Ղերին սաբահար թը վերադարձաւ, ամէն կողմը շրջան ըրաւ, անտառին եզրը՝ բարձր խոտերուն մէջ փնտռեց, — բայց ամէն բան անօգուտ եղաւ:

Երեկոյեան ժամը հինգ էր՝ երբ Հարպէրդ և ինք Կարկառները մտան: Աւերորդ է բսել որ ներքին անցքերուն բոլոր ծակ ու ծուկը փնտռեցին, և վերջապէս հարկ եղաւ բոլորովին մէկ զի թողուլ փնտռուքը:

Ժամը վեցին մօտ՝ այն միջոցին որ արևն արևմտեան բարձր լեռներուն ետևէն աներեղթ կ'լինէր, Հարպէրդ՝ որ ծովափին վրայ կ'երթևեկէր, նշմարեց որ Նապ և Գեդէոն Սքիլէդ կ'վերադառնան:

Մինակ կ'վերադառնային . . . : Պատանին զգաց որ սիրտը կը ճնլուի: Նաւաստին նախազգացումները ճիշտ ելեր էին: Չափազեալ կերպով Սմիթը չկրցեր էին գտնել:

Թղթակիցը՝ վերադառնալով ժայռի մը վրայ նստաւ, առանց խօսք մ'ըսելու: Սաստիկ յոգնած և անօթութենէ կիսամեռ, ոյժ չունէր բաւ մ'արտասանելու:

Իսկ Նապ իր կարմրցած աչերով՝ ցոյց կ'տար թէ որչափ լացիւ էր, և իր նոր արտասուքն զոր չկրցաւ բռնել՝ բացորոշ յայտնեցին որ բոլորովին յոյսը կտրեր էր:

Թղթակիցը սրտմեց թէ ինչ խուզարկութիւններ ըրեր էին Սմիթը գտնելու համար: Նապ և ինք ծովափը պտրտեր էին ութ մղոնէն աւելի տարածութեան մէջ, և հետեւապէս՝ օդապարկին

առաջին անգամ ընկած վայրէն շատ հեռու, անկում մ'որմէ ետք պատահեր էր չափազիտին և Թօփ շան անհետ լինիլը :

Ծովափն ամայի էր : Ոչ հետք, ոչ նշան մը կար : Նոր շարժած դայլախաղ մը, աւաղին վրայ նշմարանք մը, ծովեզրին այն մասին վրայ մարդու քայլափոխի նշան մը չէր երևեր : Այն յայտնի էր որ ցամաքին այն կողմն բնակիչ մը չպիտի լինէր : Ծովն եզերքին պէս ամայի էր, և այն տեղն էր, ծովափէն քանի մը հարիւր ոտք հեռու, որ չափազէտն իր դերեզմանը դտեր էր :

Նոյն պահուն՝ Նասպ ոտք ելաւ, և ձայնով մ'որ կ'յայտնէր թէ յուսոյ զգացումն որչափ զօրաւոր էր իր մտքին մէջ .

«Ո՛չ, սրուաց նա, ո՛չ, մեռած չէ : Ո՛չ, չկրնար մեռնիլ : Նա մեռնի՛, հաւատալի՛ է : Ես, ուրիշ որ և է մէկը լինէր, կարելի էր, բայց նա՛, երբէք : Ամէն վտանգէ ազատող մարդ մ'է . . . » :

Յետոյ՝ ոյժէ ընկնելով .

«Ա՛յ, չեմ կարող զիմանալ» , մրմուսաց նա :

Հարպէրդ անոր մօտ վազեց :

«Նասպ, ըսաւ պատանին, պիտի գտնենք Սմիթը : Աստուած մեզն պիտի դարձրնէ զանի : Բայց առ այժմ անօթի ես : Կեր, քիչ մը բան կեր, կ'աղաչեմ քեզ» :

Եւ այս ըսելով՝ խեղճ խափշիկին քանի մ'ափ խեցի կ'ընծայէր, վտիտ և անբաւական սնունդ :

Նասպ շատ ժամէ 'ի վեր բան մը կերած չէր, բայց ամէն սնունդ մերժեց : Իր մեծաւորէն զրկուելուն՝ Նասպ չէր կարող կամ ան չէր կամեր ապրիլ :

Իսկ Գեդէոն Սբիլէդ՝ այս թուլատարները կերաւ, ապա՝ ժայռի մը ստորոտն աւազին վրայ պառկեցաւ : Վաստակարեկ, այլ հանդարտ էր :

Այն ատեն Հարպէրդ անոր մօտեցաւ և ձեռքը բռնելով .

«Պարոն, ըսաւ, ապաստանարան մը գտանք ուր աւելի հանգիստ կրնաս լինիլ : Ահա դիշերը կ'մօտենայ : Եկո՛ւր, հանդի՛ր, վաղը, կ'նայինք . . . » :

Թղթակիցն ոտք ելաւ, և՛ պատանոցն առաջնորդութեամբ՝ Կարևրեկները զիմաց :

Նոյն պահուն՝ Բէնքրօֆ անոր մօտ դնաց, և խիստ բնական կերպով հարցուց անոր թէ արդեօք իր վրայ՝ դիպուածով՝ վառիկ մը չըզանու իր :

Թղթակիցը կայ առաւ, իր զրպանները խտանեց, բան մը չդտաւ և ըսաւ .

«Ունէի վառիկ, բայց պարտաւորեցայ բալտին ալ նետել . . . » :

Այն ատեն նաւաստին Նասպը կոչեց, նոյն հարցումն ըրաւ անոր, և մի և նոյն պատասխանն ընդունեց :

«Անէ՛ճք», գոչեց նաւաստին, որ չկրցաւ այս բառը բռնել : Տեղեկագիրն լսեց այս խօսքը, և Բէնքրօֆի մօտենալով .

«Եւ վառիկ մ'անգամ չկայ, ըսաւ :

— Եւ ոչ հաս մը, հետեւապէս կրակ ալ չկայ :

— Ա՛հ, գոչեց Նասպ, եթէ իմ մեծաւորս աստ լինէր, անշուշտ ձեզն կրակ պիտի ճարէր» :

Չորս նաւարեկներն անշարժ մնալով իրարու երեսնայեցան մտօտանջ :

Ամենէն առաջ Հարպէրդ լուր թիւնն ընդհատեց, ըսելով .

«Պարոն Սբիլէդ, դու ծխող ես, վրազ միշտ վառիկ ունին : Կարելի է որ զրպաններդ լաւ չնայեցար : Նորէն փնտռէ : վառիկ մը միայն մեզն բաւական պիտի լինէր» :

Տեղեկագիրն վերստին խտանեց իր տարատին, բաձկոնակին, թիկնոցին զրպանները, և 'ի վերջէ՛՝ 'ի մեծ ուրախութիւն և միանգամայն զարմացումն Բէնքրօֆի, իր բաձկոնակին աստուտին մէջ մտած պղտիկ փայտի կտոր մը զգաց : Իր մօտանրոյն այս փայտի փոքրիկ կտորն կերպասին մէջէն բռներ էր, բայց չէք կարող քաշել զայն : Որովհետեւ վառիկ մը, հաս մը միայն պիտի լինէր այս, հարկ էր հանել առանց ծծուժն աւրելու :

«Թոյլ կ'տանս որ ես հանեմ» , ըսաւ անոր պատանին :

Եւ Հարպէրդ՝ ճարպիկութեամբ, առանց կտարելու, յաջողեցաւ քաշել հանելու այս փոքրիկ փայտի կտորն, այս ողորմելի և

անդին շուրջ որ այս դժբաղդ մարդոց համար՝ խիստ մեծ կարևորութիւն ունէր : Անվթար մնացեր էր :

«Առախիկ մը, դոչեց Բէնքրօֆ : Ա՛րա, կարծես թէ վառիկի ամբողջ սնաուկ մը դտանք» :

Աստի վառիկն առաւ, և իր ընկերներուն հետ՝ դարկառները մտաւ :

Փայտի այս փոքրիկ կտորն՝ զոր մարդաշէն քաղաքներու մէջ այնքան անտարբերութեամբ կ'վառնեն, և որու արժէքն աննշան է, պէտք էր այն սեղ յետին ծայր զգուշութեամբ գործածել : Նաւաստին ստուպեց որ վառիկը շատ չոր էր, ապա ըսաւ .

«Հիմակ թուղթ պէտք է :

— Ահա քեզի թուղթ», պատասխանեց Գեղեոն Սքիլէդ, որ՝ պահ մը վարանելէն ետեւ՝ իր տուժարէն թերթ մը պատռեց :

Բէնքրօֆ թղթակցին տուած թղթի կտորն առաւ և վառարանին առջև ծոնի չոքեց : Յետոյ՝ քանի մ'ափ խոտ, սեբև և չոր մամուռներ դրին փայտերուն տակ այնպէս որ օդը դիւրաւ բանի և շուտ մը բռնիկ չոր փայտը :

Այն ատեն՝ Բէնքրօֆ՝ շեփորիկի ձեռով թուղթը ծալեց, ինչպէս որ սաստիկ հովին՝ ծխափայտ քաշողները կ'ծալեն, և ապա մամուռներուն մէջ մխեց : Յետոյ՝ փոքր ինչ անհարթ կոպիճ մ'առաւ, լաւ մը սրբեց, մինչդեռ սիրաբը կ'արօփէր, և՛ իր շունչը բռնելով՝ թեթև մը վրան քսեց վառիկը :

Առաջին շփումն արդիւնք մը չունեցաւ : Բէնքրօֆ բաւական ուժգին չէր քսած՝ ծծումբը ցատատելու վախնալով :

«Ո՛չ, չափաի կրնամ վառել, ըսաւ նա, ձեռքս կ'գողայ . . . Վառիկը կրակ պիտի չառնէ . . . չէմ կարող . . . չէմ կարող» :

Եւ ուրք ելնելով՝ իր սեղը Հարպիդին տուաւ :

Իրաւի, իր կենացը մէջ պատանին այսքան չէր յուզուած : Սիրան ուժգին կ'զարնէր : Երբ Պրոմէթէ երկնից հուրը դողնալու կ'երթար՝ այսքան յուզուած չափաի լինէր : Սակայն՝ չվարանեցաւ, և վառիկը շուտ մը կոպիճին քսեց : Թեթև շնչին մը շտուեցաւ և հասցուտակ պղտիկ բոց մը ցայտեց բարի մտի մը

հանելով : Հարպիդը՝ վառիկը մեղմիկ դարձուց՝ բոցն արծարծելու համար, ապա՝ թղթէ շեփորիկին մէջ սահեցուց : Թուղթը քանի մը վայրկեանէն կրակ առաւ և մամուռները շուտ մը բռնկեցան : Քիչ մ'ետքը՝ փայտն սկսաւ ձարձատել, և զուարթ բոց մը՝ զոր նաւաստին կ'արծարծէր ուժգին փչելով, մութին մէջ հետեցնեալ կ'տարածուէր :

«Իրաւի, դոչեց Բէնքրօֆ ուրք ելնելով, կենացս մէջ այսչափ չեմ այլայլած» :

Ստայր է որ վառարանին տափակ քարերուն վրայ կրակը շատ աղւոր կ'վառէր : Նեղ խողովակէն մութը դիւրաւ կ'եղնէր, ծխանը կ'քաշէր, և ակորձելի ջերմութիւն մը քիչ ատենէն ամէն կողմ տարածուեցաւ :

Իսկ կրակն՝ պէտք էր հօդ ասնիկ որ չմարի և մոխրի ներքև միշտ անթեղ պահուի : Բայց այս դիւրին էր ընել քիչ մը խնամք տանելով՝ քանի որ փայտը պակաս չէր և պատեհ առթիւ պաշարը նորոգելու հնարը կար :

Բէնքրօֆ նախ վառարանէն օդուտ քաղելու մտածեց քարափորի սնակէն աւելի սննդարար ընթրիք մը պատրաստելով : Հարպիդը քսան չորս հաս հակիթ բերաւ : Սքիլէդ՝ անկիւն մը նստած՝ առանց բան մ'ըսելու այս պատրաստութիւնները կ'դիտէր :

Երեք մտածմունք իր խելքը դրաւեր էր : Ախրոս դեռ կենդանի է, եթէ կենդանի է, ո՛ր կրնայ լինիլ : Եթէ անկուսէն ետք ողջ մնաց, ինչպէս մեկնելու է որ իր կենդանութիւնն երևան հանելու հնար մը չգտաւ :

Իսկ Նայ՝ ծովափին վրայ կ'ընթացէր : Այնուհետև լոկ անողի մարմին մ'էր :

Բէնքրօֆ՝ որ յիստուն երկու տեսակ հակիթեղէն եփել դիտէր, նոյն պահուն իր ձարպիկութիւնը չէր կարող ցոյց տալ : Առ հարկի՝ բաւական սեպեց հակիթները տար մոխրին ներքև ծածկել և քիչ մը կրակով սրնոցընել :

Քանի մը վայրկեանէն հակիթներն եփեցան, և նաւաստին Սքիլէդը հրաւիրեց որ կերակուրին մասնակից դանտի : Այս անձա-

նօթ երկրին վրայ՝ նաւաբեկներուն ճաշն այսպէս եղաւ : Այս սինդա-
ցած հաւկիթները պատուական էին , և որովհետեւ մարդուս մընն-
դեան համար հաւկիթն ամէն անհրաժեշտ տարրները կ'պարունա-
կէ , այս խեղճ մարդիկ շատ դոհ եղան և քիչ շատ ոյժ աւին :

Ա՛խ , թէ որ ստոնցմէ մին տարակայ չգտնուէր սեղանէն : Ե-
թէ Ռիչմօնտէն խոյս տուող հինգ գերիներն այն տեղ՝ այս գէղա-
դէղ ժայռերուն ներքե , այս շողշողուն ու սրայծառ կրակին առ-
ջև , այս չոր աւաղին վրայ գտնուէին , թերևս միայն իրենց փա-
ռաբանութիւններն առ Աստուած պիտի ուղղէին : Բայց ամենէն
հնարագէտը , նոյնպէս ամենէն գիտունը , այն որ իրենց անհա-
կառակելի պեան էր , Կիրոս Սմիթ , բա՛րէ , կորուած էր , և
իր մարմինն և ոչ անդամ գերեզմանի արժանի՝ եղեր էր :

Այսպէս անցաւ մարտ 25ի օրը : Գիշերը հասեր էր : Գրտէն
կ'լսուէր հովին շունչն և միօրինակ ծփանքն որ եղերը կ'զարներ :
Կոպիճներն՝ որ ալեաց ուժով վեր վար կ'քշուէին , խլացուցիչ
շառաչիւնով մը կ'թափալէին :

Սրիլէդ տեղեկագիրն (reporter, թղթակից) մտն Քարափոս մը
քաշուէր էր , օրուան գիպուածներն համառօտ գրի առնէն և տե-
սայինքն , այս նոր երկրին առաջին երևումն , չափադիտին անհե-
տանալը , ծովափին վրայ եղած խուզարկութիւնը , վատիկներուն
դիպուածը և այլն , և սաստիկ յոյնած լինելուն՝ կարող եղաւ
քնանալ և քիչ մը հանգիստ գտնել :

Քիչ մ'ետք՝ նոյնպէս Հարպէրդի քունը տարաւ : Իսկ նաւաս-
տին կէս քուն կէս արթուն՝ գիշերը վառարանին մօտ անցուց , ո-
րու մէջ փայտ նետելու զանց չբարա :

Նաւաբեկներէն մին միայն Կարկառներուն մէջ հանգիստ չփրն-
տուց : Այս էր անմութար , յուսահատ Նապը , որ՝ բոլոր այն
գիշերն՝ առանց միտ գնելու իր ընկերներուն յորդորանաց՝ որ զինք
հանգստանալու կ'հրաւիրէին , ծովեզրին վրայ թափառական դար-
ձաւ իր տէրը կոչելով :

ՓԼՈՒԽ Զ.

Նաւաբեկներուն կանոց ցտայալը — Ոչ ինչ — Այրած ճերմակեղէն —
Արշաւ Բ'անդաւան Ձեղ — Կանաչ Զաւերու նիւրաբէրը — Փախարական
Յակմար* — — Եղջերային կենդանեաց հետքը — Կորուհուներ** —
Տէրբանէր*** — Տարօրինակ որորորոսիւնն մը կարելով .

Ըստ երևոյթին անրնակ եղերքի մը վրայ նետուած այս օդա-
չու նաւաբեկներուն ունեցած առարկայից ցանկը շատ շուտ կրնայ
շինուիլ :

Բան մը չտեսնին՝ այլ միայն ձախորդութեան միջոցին իրենց
վրայի դղեստները : Սակայն պետք է յիշել թղթատար մը և
ժամացոյց մը զոր Սրիլէդ պահեր էր անշուշտ անզգուշութեամբ ,
բայց զէնք մը , գործի մը , և ոչ իսկ զրպանի դանակ մը չունե-
ին : Օդապարկին ուղևորներն ամէն բան դուրս նետեր էին զայն
թեթևելու համար :

Գանիէլ Ֆօէի կամ Վիսի երևակայական զիյցադուները , ինչ-
պէս նաև Սէլքիբրներն ու Ռէյնալները , որ ՚ի ծուան Ֆէրնանտէզ
կամ Օքլէնտի արշիպելագոսը նաւաբեկեր էին , երբէք այսչափ
կատարեալ չբաւորութեան մէջ չգտնուեցան : Կամ իրենց խրած
նաւէն առատ սրաշար ու գործիք կ'հանէին , ինչպէս ցորենն ,
տուար , ուտելիք , կամ գեանեզրը քիչ շատ բեկորներ կ'ենէին

* Jacamar. Կարմիր թռչնոց տեսակէն է որ միջատներ ուտելով կ'անանի և
հարաւային Ամերիկայի մէջ կ'գտնուի : Բաց տեղ և ընկերութեամբ կ'ապրի .
իր երգն անուշ , տկար շշիւն մ'է :

** Coucou. Անտուային թռչունն , փափուկ ու կակուղ փետուրներ ունի
խիստ փայլուն գոյնով որ մետաղի պէս կ'ըզոզան :

*** Tetras. Ազազաղի տեսակ հաւեր , որոց ուղուները թաղանդով և ոտքե-
րը փետուրներով ծածկուած են :

Այս թռչնոց անուններն՝ նոյնը պահեցինք և հայերէնի մէջ :

որով կենաց անմիջական պիտոյքը հողալու կարող կ'լինէին. բնութեան առջև յանկարծ զինամաքի չէին մնար բոլորովին: Բայց մեր նաւաբեկները բնաւ պործի մը, անօթ մ'անդամ չունէին: Ոչնչէ՛ ամէն բան ճարեւու պարտաւոր էին:

Գոնէ եթէ Վիւրոս Սմիթ իրենց հետ լինէր, եթէ չափազանիս իր գործնական զիտութիւնը, իր հնարադէտ միտքն այս վեճակը դարձանելու պործածէր, կարելի է որ բոլորովին յուսակտուր չէին մնար: Աւա՛ղ, պէտք չէր յուսալ Վիւրոս Սմիթը վերստին տեսնելու: Նաւաբեկները միայն իրենց կարողութենէ և այն Նախախնամութենէ որ երեսի վրայ չթողուր իր վրայ անկեղծօրէն վստահողները, ամէն բան սպասելու պարտաւոր էին:

Բայց նախ համրկ էր որոշել թէ ծովեզրին այն կողմը հաստատուիլ պէտք էր, առանց հասկերնալու թէ որ աշխարհին կ'վերաբերէր, թէ մարդարնակ էր, թէ ոչ այս հողն ամայի կ'զլիւր մը արհեստն էր:

Այս կարեւոր խնդիրը պէտք էր լուծել քիչ ժամանակի մէջ: Այս որոշումէն միւս գործողութիւնները յառաջ պիտի դային: Սակայն՝ Բէնքրօֆի խորհրդին նայելով՝ արժան դատուեցաւ քանի մը օր ևս սպասել խաղաղիւթիւն մը սկսելէն առաջ: Արդարե՛ պէտք էր ուտելիք պատրաստել և տեղի կազդուրիչ կերակուր մը հայթայթել քան թէ մի միայն հակիթներ և լժուլտարներ: Խուզարկուներն՝ երկայն յողնութեանց տանելու ստիպուած լինելով՝ առանց պատսպարանի մ'որ իրենց գլուխը դնեն, պարտաւոր էին ամէն բանէ առաջ իրենց ոյժը կազդուրել:

Կարկառները ժամանակաւոր բաւական պատուարան մ'էին: Կրակը կ'վառէր և անշեջ պահելը զիւրին էր: Առ այժմ խնցեմնութե՛ ու հակիթ անսպակաս էին ժայռերու և առողին վրայ: Անշուշտ հնար մը պիտի գտնէին լեռին կատարը թուշող հարիւրաւոր աղանձներէն մէկ քանին սպաննել թէ փայտով թէ քարով: Կարելի է այս մտաակայ անտառին ծառերն ալ ուտելի պտուղներ կրնային տալ: Աւերջապէս անուշ ջուրն ալ մտ էր:

Ուստի որոշեցին որ քանի մ'օր ևս կարկառները մնան, որ

պէս զի գննելու պատրաստուին թէ՛ ծովեզրին թէ՛ երկրին ներքե կողմերը:

Այս խորհուրդը յատկապէս Նապին շատ հաճելի կ'դար: Թէ իր գաղափարներուն և թէ նախազդեցութեան մէջ յամառ լինելով՝ ծովափին այն կտորէն, ուր փորձանքը պատահեր էր, բնաւ հեռանալ չէր ուզեր: Չէր հատար, չէր կամեր հատալ Վիւրոս Սմիթին կորստեան: Ո՛չ, կարելի չէր երևեր իրեն որ այնպիսի մարդ մը դուհի կերպով մը վախճանէր, կոհակ մը զննն առնելով ծովամայն թաղէր՝ ծովեզրէն քանի մը հարիւր քայլ հեռու: Ո՛րչափ ատեն որ ծովն Սմիթին մարմինն արհեստն էր, որչափ ատեն որ ինք Նապի իր աչքը չտեսնէր, իր ձեռքը չշոշափէր տիրոջ գիակը՝ անոր մահուան չպիտի հատարար: Եւ այս պաշտօնաւոր ևս քան զիս իր յամառ սրտին մէջ արմատ բռնեց:

Թերևս պատրանք էր, այլ յարգելի պատրանք, զոր նախատին չէր ուզեր փարատել: Իրեն համար այլ ևս յոյս չկար, և չափազանիս իրապէս ծովակուլ եղեր էր. բայց կարելի չէր վիճիլ այս մտին Նապի հետ: Կ'նմանէր շան որ իր տիրոջ քնիած տեղէն չէ կաբող հեռանալ, և այնքան բուռն էր իր վիշտն որ՝ հաւանորէն՝ չպիտի ապրէր անոր մահուանէ ետև:

Այն առաւօտ՝ մարտ 26ին, այդտե՛ Նապի հիւսիսային կողմը զիմելով հասեր էր այն վայրն ուր ծովն անշուշտ լժուառ Սմիթին դերեզմանն եղեր էր:

Այն օրուան ճաշիկը միայն աղանձի հակիթ ու քարափոր եղաւ: Հարպէրդ ալ գտեր էր, այս ազն՝ որ շատ յարմար հասաւ, ժայռերու խուռչը կ'գտնուէր շօղիանալով:

Ճաշն աւարակէն ետև՝ Բէնքրօֆ հարցուց Սքիլեզին թէ արդեօք իրեն ուղեկցիլ կ'ուզէ՞ դէպ ՚ի անտառը, ուր՝ Հարպէրդ և ինք որսի ելնելու փորձ պիտի ընէին: Բայց՝ լաւ մը խորհելէն ետև՝ հարկ տեսան որ մէկն այն տեղ մնայ որպէս զի կրակն արծարծէ, և անոր համար որ թերևս Նապի օգնութեան պէտք ունենար, թէև անհասանական կ'երևէր: Հետևապէս թղթակիցը մնաց:

«Ռբսի ելնենք, Հարպերդ, ըսաւ նաւաստին: Մեր ճամբուն վրայ շատ պաշար պիտի գտնենք, և անտառէն մեր հրացանները պիտի կտրենք»:

Բայց՝ մեկնելու միջոցին՝ Հարպերդ դիտել առաւ թէ՛ ըստ ուրում արեթ չկար, թերևս խոհեմութիւնը կ'պահանջէր որ անոր տեղ ուրիշ նիւթ մ'առնուն:

«Ի՞նչ նիւթ, հարցուց Բէնքրօֆ:

— Այրած լաթ, պատասխանեց պատանին: Ի հարկին՝ կրնայ արեթի տեղ ծառայել»:

Նաւաստին շատ բանաւոր դատւ այս խորհուրդը: Միայն այս անպատեհութիւնն ունէր որ թաշկինակի կտոր մը զոհեցու հարկ պիտի լինէր: Սակայն կ'աժէր որ այս զոհն ընէին, և Բէնքրօֆի մեծ քառակուսի դժերով թաշկինակն՝ ըստ մասին՝ կէս այրած քուրջի կերպարանքն առաւ: Այս զիրարատ նիւթը՝ կեղրոնական խցին մէջ հովէ և խոնաւութենէ ազատ՝ դրին ժայռի մը պզտիկ ծակը:

Այն միջոցին առաւօտեան ժամն ինն էր: Օգը կ'սպառնար և քամին հարաւային արեւելեան կողմէ կ'փչէր:

Հարպերդ ու Բէնքրօֆ Կարկառներուն անկիւնը դարձան, աւնարկ մը նետելով միին վրայ որ ասպառածին մէկ կիտին վրայ կ'զաւարէր. ապա գետակին ձախ դիէն վեր ելան:

Երբ անտառը հասան՝ Բէնքրօֆ առաջին ծառէն երկու հաստ ճիւղեր կտրեց և բիւր դարձուց. ապա Հարպերդ անոնց ծայրը օրեց ժայռի մը վրայ: Ա՛խ, գանակ մ'առնեալու համար ինչ որ ուզէին պիտի տար: Յետոյ՝ երկու որսորդները գետակին քորափը բռնելով՝ բարձր խոտերուն կողմը յառաջ գացին:

Այն արմուկէն որ իր ընթացքը դէպ ՚ի հարաւային-արևմուտք կ'ուղղէր՝ գետակը քիչ քիչ կ'նեղնար, և իր ափունքը խիստ խոր ու անձուկ փոս մը կ'յօրինէին՝ ծառերու կրկնակ կամարովը ծածկուած:

Բէնքրօֆ չմոլորելու համար՝ միտքը դրաւ ջրին ընթացքը բռնել որ դարձեալ իր ելած տեղը պիտի տանէր զինք: Բայց

քարափը բաւական խոչ ու խաթ ունէր. այս կողմը ծառեր՝ որոց ճապուկ ոստերն մինչև առուակին մէջ կ'ծնէին, անդ բայ՝ զեղներ կամ փուշեր՝ զոր պէտք էր բիրով խորակել:

Հարպերդ՝ ստեպ կ'սահէր բեկոտած կոճիւրու մէջէն փոքրիկ կատուի մը գիւրաշարժութեամբ և սլուրակին մէջ աներկայթ կը լինէր: Բայց Բէնքրօֆ շուտ մը զանի կ'կոչէր աղաչելով որ շատ չհեռանայ:

Սակայն՝ նաւաստին ուշադիր կ'դիտէր այս տեղերուն զիրքն ու բնութիւնը: Այն ձախ գետակին վրայ՝ հողը սափակ էր և անշղայօրէն դէպ ՚ի ներս կ'ընթանար: Երբեմն տամուկ, այն ատեն մորուտ կերպարան մը կ'առնուր: Անդ կ'նշմարուէր մանր մունր առններու ուռկան մ'որ, ստորերկրեայ ճեղքէ մը (faille) անշուշտ գետակը կ'հոսէր: Երբեմն ալ՝ պուրակին մէջ վտակ մը կ'վազէր, որմէ անցնիլը գիւրին էր:

Գիմացի ափն աւելի գերբուկ կ'երևէր, և հովիան՝ որու ջրուղին (thalweg) կ'ընէր գետակն՝ աւելի որոշ կ'զմադրուէր: Բլուրն որ՝ դար ՚ի վար շարուած ծառերով ծածկուած էր՝ վարագոյր մը կ'ձևայրնէր որ աչքը կ'սքօղէր: Այս աջ գետակին վրայ՝ դժուար պիտի լինէր քալելը, վասն զի դարվարներն (déclivité) յանկարծուստ կ'իջնէին և ջրահակ ծառերուն մի միայն արմատներուն զօրութեամբն այնպէս անկործան կ'մնային:

Աւելորդ է յարել որ սոյն անտառը, նոյնպէս գետակն՝ որմէ արդէն անցան, կոյս էր ամէն մարդկային հետքէ: Միայն Բէնքրօֆ չորքուտանի կենդանեաց նորակոխ հետքը նշմարեց, որոց տեսակը չէր կարող զանազանել:

Շատ հաւանական էր — և այս եղաւ նաև Հարպերդի կարծիքը — որ այս հետքն եղջերային ահային կենդանիներ թողոր էին որոց հետ մարտելու պիտի ստիպուէին անշուշտ մեր ուղեորներն. բայց տեղ մը չէր տեսնուէր ծառի մը կոճիւղի վրայ սապարի մը նշանը, ոչ մարած կրակի մը մոխիրը, ոչ քայլի մը դրոշմը. այս ալ ուրախութեան առիթ մ'էր թերևս, վասն զի բոլոր Խաղաղականի մէջ զանուող այս հողին վրայ մարդու ներկայութիւնն աւելի երկիւզալի էր քան թէ փափաքելի:

Հարպէրդ ու Բէնքրօֆ՝ ուր ուրեմն խօսակցելով՝ վասն զի մեծ էին ճամբուն գծուարութիւնները, շատ ծանր կ'յառաջանային, և ժամ մը քալելէն ետև՝ հազիւ մղան մ'առեր էին: Մինչ ցարդ որսն արդիւնաւոր չէր եղած: Սակայն քանի մը թուշուններ ոստերուն տակ կ'երդէին ու կ'թռչաւին, և շատ վայրենի կ'երեւէին, որպէս թէ բնագոյումով մ'արդէն իրաւայի երկիւղ մը կ'ըզգային: Արիշ այլ և այլ հաւերու մէջ՝ Հարպէրդ՝ անտառին մէկ ճախճախուտ վայրն, սուր և երկար կտուցով թռչուն մը նշմարեց, որ բնագնորէն ծովու ճայի կ'նմանէր: Սակայն այս թռչունէն կ'տարբերէր իր բաւական կարծր փետուրներով՝ որ մետաղային փայլ մ'ունէին:

«Յակամար մը պիտի լինի այս», ըսաւ Հարպէրդ՝ զարնելու չափ թռչունին մատնալու ջանալով:

— Պատե՛հ առիթ մ'է՛ յակամար ճաշակելու, պատասխանեց նաւաստին, եթէ այս թռչունը խորտիկ լինելու արամաղիւր դըտնուէր»:

Նոյն պահուն պատանին ճարպիկութեամբ և ուժիկն քար մը արձակեց որ գնաց թռչունին թևին արմատը զարկաւ. բայց այս հարուածը բաւական չեղաւ, վասն զի յակամարը փախաւ արագոսն և մէկ վայրկենի մէջ անհետ եղաւ:

«Ի՛նչ անձարակ եմ, պոռաց Հարպէրդ:

— Է՛, չէ՛, տղաս, պատասխանեց նաւաստին: Լաւ նշան առիւր և ուրիշ մէկը պիտի վերպէր: Օ՛ն, մի՛ սրբողիւր. ուրիշ օր մը զայն պիտի բռնենք»:

Որսորդներն իրենց զննութիւնը կ'շարունակէին: Քանի կ'յառաջանային՝ ծառերն՝ իրարմէ աւելի հեռանալով՝ փոռաւոր սեւք մը կ'աւանդէին, բայց ոչ մին ուտելի պտուղ մը չունէր:

Բէնքրօֆ ընդունայն կ'փնտռէր այն մեծաղին արմաւենիներէն մէկ քանին, որ առանին այլ և այլ քաներու համար կ'գործածուին, ծառ մը որ գտնուած է հիւսիսային կիսագնդին միջև քառասներորդ զուգահեռականն և հարաւային կիսագնդին միայն երսուն հինգերորդ զուգահեռականը: Բայց այս անտառին ծառերը

միայն կոնաբեր* էին (conifère), ինչպէս դեռուսներ, զոր արդէն ճանչեց Հարպէրդ, ասկաներ որ կ'նմանին Ամերիկայի հիւսիսային արեւմտեան եզերքը բուսող ծառերուն, և սքանչելի նոճիներ, սրոց բարձրութիւնը հարիւր յիսուն ոտքի կ'հասնէր:

Նոյն պահուն՝ թռչուններու երամ մ'որ մանր և սիրուն փետրով, երկար ու երփնադոյն պոչով էին, ճիւղերուն մէջ ցրուեցան՝ և իրենց թոյլ ու նուրբ փետրիկները թափելով՝ զետինը ծածկեցին:

Հարպէրդ այս փետուրներէն մէկ քանին հաւաքեց և զանոնք քննելէն ետև.

«Ստոնք կոտրուածներ են, ըսաւ նա:

— Աւելի լաւ ունէի խայտահաւ մը կամ հաւամրդի արագազ մը, պատասխանեց Բէնքրօֆ. բայց վերջապէս եթէ կ'ուտուին . . . :

— Շատ լաւ կ'ուտուին, և մանաւանդ իրենց միսը շատ փափուկ է, վրայ բերաւ Հարպէրդ: Այլ սակայն, եթէ չեմ սխալիր, զիւրին է անոնց մօտիլ և բրով սպաննել»:

Նաւաստին և պատանին խտտերուն մէջ սահելով՝ ծառի մը ստորոտը հասան՝ որու ստորին ոստերը փոքր թռչուններով ծածկուած էին: Այս կուրուկունները կ'սպասէին որ միջասներ անցնին ուտելու համար: Իրենց փետրաւոր թաթիկներով ուժիկն կ'սեղմէին միջին ոստերն որոց վրայ թառեր էին:

Այն ատեն որսորդները կանգնեցան և իրենց բիրը մանդաղի պէս գործ ածելով՝ կուրուկուններու ամբողջ շարք մը զարկին վար թափեցին, որոնք թռչելու անհոգ էին և ապշօրէն կ'ընդունէին: Արդէն հարիւրի չափ հողին վրայ տարածուել էին երբ միւսներն խոյս տալու ուշաբրեցան:

«Քաջ է, ըսաւ Բէնքրօֆ, աւասիկ մեզի պէս որսորդներու ձեռքին տակ եղող երէն: Չեռքով աղաւմ կարելի է բռնել»:

Նաւաստին այս կուրուկունները զիւրակոր փայտէ մ'անցուց՝ արտոյանեցու պէս, և խուզարկութիւնը շարունակեց: Գիւրին էր

* Կոնաձև պտուղներ և տերեւներ բերող մշտադաւար ծառեր: Ծ. Թ.

գիտել որ ջրին ընթացքը թեթև մը կ'ըլորնար, հարակողմն ա-
կիշ մը շինելու կերպով. բայց այս պտոյտը հաւանօրէն չէր եր-
կննար, վասն զի գետակին ակունքն անշուշտ լեռին մէջն էր և
կեղրոնական կոնին կոյտերուն վրայ իջած ձիւնի հալումէն կ'ա-
ռատանար :

Ինչպէս որ ընթերցողը գիտէ, այս արշաւանքին նպատակն էր
Աարկառներու բնակներուն կարելի եղածին չափ շատ երէ հայ-
թայթել : Չենք կրնար ըսել որ մինչև յարգ այս նպատակին հա-
քեր էին. ուստի նաւաստին իր խուզարկութիւնները կ'շարունա-
կէր գործունէութեամբ, և կ'հայհոյէր երբոր կենդանի մը, զոր
ճանչելու ժամանակ անգամ չէր ունեցած, բարձր խոտերուն մէջ
խոյս կ'տար : Էթէ գոնէ Թօփ շունն իր հետն ունենար, բայց
Թօփ իր տիրոջ հետ աներևոյթ եղեր և հաւանօրէն անոր հետ
կորսուեր էր :

Դէսօրէն ետև՝ ժամն երեքին մօտ՝ Թուշուններու նոր երամակը
տեսնուեցան քանի մը ծառերու մէջն, որոց հոտաւէտ հոճանե-
րը կ'կոտցէին : Յանկարծ՝ անտառին մէջ շեփօրի ճշմարիտ շօնոգ
մը հնչեց : Այս տարօրէն և հնչական շօնոգներն՝ Միացեալ-Նա-
հանգաց մէջ ~~տեղաւոր~~ կոչուած աքաղաղի ցեղի վերաբերող Թուշուն-
ները կ'հանէին : Քիչ մ'ետք՝ քանի մը զոյղ տեսնուեցան շէկ ու
գորշ գոյն փետրով և գորշ սոլով : Հարպէրդ արունները ճանչեց
իրենց երկու սրածայր թևակներէն, որ իրենց վզէն վեր ելած
վարազաթևերով ձևացած էին :

Բէնքրօֆ անհրաժեշտ համարեց այս Թուշուններէն մին բռնել,
որ հաւու չափ խոշոր էր, և որու միսը վառելին միտէն համով
է. բայց դժուարին էր սոյս որսը, վասն զի չէր թողուր որ իրեն
մօտենան : Շատ մ'ապարդին փորձեր ընելէն ետև՝ որ միայն ~~տե-~~
~~ղաւորները~~ վարհուրեցուցին, նաւաստին ըսաւ Հարպէրդի.

«Ճշմարիտը՝ քանի որ այս Թուշունները չենք կարող բռնել
թռելու պտեն, գոնէ պէտք է ջանալ կարթով որսալու :

— Ծածանի մը պէս՝ պատասխանեց սրատանին ծանօրէն :
Բէնքրօֆ՝ խոտերուն մէջ վեց հատ տեսարասի բոյներ գտեր

էր, որոց ամէն մէկն երկու երեք ձու կ'պարունակէր : Չգուշա-
ցաւ այս բոյներուն դպչելու, ուր անշուշտ պիտի գտանային ա-
նոնց տէրերը : Ահա այս բոյներուն բոլորտիքն իր կարթերը շա-
րելու մտածեց — չէ թէ որոյայլններ, այլ խայծով ճշմարիտ
լարեր : Հարպէրդ բոյներէն քիչ մը հեռու տարաւ, և նոյն տեղն
իր զարմանալի վարմերը պատրաստեց այն հոգով զոր պիտի տա-
նէր Իսահակ Ալալտընի* աշակերտ մը :

Հարպէրդ այս աշխատանքը կ'գիտէր շատ զիրբմբունելի հետա-
քրքրութեամբ մը, թէև յաջողութեան վրայ կ'տարակուսէր :
Նուրբ բաղնիկներով լարերը շինեց, իրարու հետ զօդելով տանն
հինգ քսան ոտք երկայնութեամբ : Ակիշաձև խիստ զօրաւոր փու-
շեր, որ թզուկ աքասխայի թփերէ կ'եղնեն, կարթի ձևով բա-
ղնիկ լարերուն ծայրը կապեց : Իսկ խայծի տեղ՝ խոշոր կարմիր
որդեր գրաւ, որ հոգին վրայ կ'ստղային :

Այս ընելով՝ Բէնքրօֆ խոտերուն մէջ մտաւ ճարպիկութեամբ
չերեկելով և դնայ այս խայծաւոր կարթերը տեսարասի բոյներուն
մօտ դնելու. ապա գործաւ լարին միւս ծայրը բռնեց և Հար-
պէրդին հետ խոշոր ծառի մ'ետեր պահուեցաւ : Պէտք է կրկնել
որ Հարպէրդ շատ յոյս չունէր հնարաղէտ Բէնքրօֆի յաջողու-
թեան վրայ :

Ամբողջ կէս ժամ անցաւ, բայց՝ ինչպէս որ նաւաստին գուշա-
կեր էր, մի շատ անտրասներ զոյղ զոյղ իրենց բոյները վերա-
դարձան : Այս անտրասները կ'ոտոտտէին, հողը կ'կոտցէին և բնա-
ջէին տեսներ որսորդներուն ներկայութիւնը, որոնք սակայն հոգ
տարեր էին Թուշուններէն հեռու կենալու :

Իրաւի, պատանին՝ նոյն պահուն՝ յետին ծայր հետաքրքրու-
թեամբ շարժած էր : Իր շունչը կ'բռնէր, և Բէնքրօֆ, աչքերն
ու բերանը բաց, շրթունքն երկնցած որպէս թէ անտրասի կտոր
մը պիտի ճաշակէր, հազիւ ուրեմն կ'շնչէր :

Սակայն Թուշունները կարթերուն մէջ կ'ըջէին՝ առանց անոնց

* Կարթով ձկնորսութիւն ընելու վրայ գրուած գրքի մը երեկելի հեղինակը :

Տող տանելու : Այն ատեն Բէնքրօֆ մեղմիկ ցնցեց լարն որով խայծերը շարժեցան , որպէս թէ որդերը գեռ ողջ լինէին :

Արդարեւ նոյն միջոցին նաւաստին շատ աւելի զօրաւոր այլայլութիւն մը կ'զգար քան թէ ձկնորսի մ'այլայլութիւնը , քանի որ սա ջրին մէջէն որսին դալը չտեսներ :

Ցնցումները թռչուններուն ուշը դրդուցին , այնպէս որ սկսան կատուցով զարնել կարծերը : Երեք հաս տեսրաս՝ որ անշուշտ շատ որկրամու էին , թէ կարծը և թէ խայծը՝ մէկ տեղ կ'լեցին : Յանկարծ՝ Բէնքրօֆ՝ ուժգին ցնցումով մ'իր գործին մտեց և երբ թռչուններն սկսան իրենց թևերը զարնել հասկըցաւ որ բռնուած են :

«Ահեցէ՛» , դուչեց նա երէին վրայ վազելով , և շուտ մ'անոր տիրացաւ :

Հարպէրդ ծափ զարկեր էր : Առաջին անդամն էր որ կարծ թով թռչուն բռնել կը տեսնէր . բայց նաւաստին , իբրև համաս մարդ , յայտնեց թէ այս իր առաջին փորձը չէր , և թէ ինք այս գիւտն ընելու արժանիքը չունէր :

«Եւ սակայն , յարեց նա , այս մեր գանուած վիճակին մէջ ուրիշ շատ գիւտերու յուսալ պէտք է» :

Տեսրասներուն թաթիկներէն կապեցին , և Բէնքրօֆ՝ որ կ'ուրախանար ունայնաձեռն չդառնալուն՝ տեսնելով որ օրը կ'տարածամէր , արժան դատեց իր բնակարանը գառնալու :

Գետակին ընթացքը ցոյց կ'տար հետևելիք ճամբան . պէտք էր միայն ջրուզին բռնելով վար իջնել , և ժամը վեցին մօտ , Հարպէրդ ու Բէնքրօֆ այս արշաւէն յոյնած գաղթած կարկառները կ'մտնէին :



ԳՂՈՒԵ Է.

Նստդ դեռ չբարձրաւ — Սքիւէրի Խորհրդածութիւնները — Ընթերիւր — Գեշ զեշեր յը կ'դարձուի — Փոխարին անուել է — Գեշերայն կ'ձգնին — Հովին ու անյրէին դէ՞ պայտար — Առաջին իջնանէն ուր յոն հետու .

Սքիւէր՝ անշարժ ու թևերը կապած՝ նոյն միջոցին ծովափին վրայ էր . ծովը կ'նայէր , որու հորիզոնն արևելեան կողմը սև խոշոր ամպի մը հետ կ'խառնուէր որ շուտ շուտ գէպ 'ի զէնիթ կ'բարձրանար : Հոյն արդէն ուժգին էր և արևուն իջնելովը կը սաստիկանար : Անշուք տեսք մ'ունէր բոլոր երկին , և յայտնապէս կ'տեսնուէին մրրկի մ'առաջին երևոյթները :

Հարպէրդ կարկառը մտաւ , և Բէնքրօֆ թղթակցին կողմը դիմեց : Սքիւէր խորին մտմտութի մէջ լինելուն՝ անոր պալը չտեսաւ :

«Գեշ գեշեր մը պիտի ունենանք , Պարոն Սքիւէր , ըսաւ նաւաստին : Անձրև և հով որ մրրկաբերներուն (pétrel*) ուրախութիւն կ'պատճառէ» :

Այն ատեն Սքիւէր գառնալով Բէնքրօֆը տեսաւ , և իր առաջին խօսքն այս եղաւ .

«Քու կարծեօք ծովեզրէն սրչափ հեռու էր օդապարիկն երբ կոհակ մը դալով մեր ընկերն առաւ տարաւ» :

Նաւաստին այս հարցման չէր սպասեր : Պահ մը մտածեց և պատասխանեց .

- «Շատ շատ երկու պարանալաֆ (encablure) հեռու :
- Բայց ի՞նչ է պարանալաֆը , հարցուց Գեգէոն Սքիւէր :
- Հարիւր քսան դրկաչափ կամ վեց հարիւր ոտք :
- Այսպէս , ըսաւ Սքիւէր , առ առաւելն ծովեզրէն հաղար

* Ծովու թռչուններ որ մանաւանդ փոթորիկներէն կ'անխորժին .

երկու հարիւր ոտք հեռու կորսուած պիտի լինի Կիւրոս Սմիթը :

— Գրեթէ , պատասխանեց Բէնքրօֆ :

— Եւ իր շունն ալ :

— Եւ իր շունն ալ :

— Զիս զարմացնողն , յարեց թղթակիցը , Ենթադրելով որ մեր ընկերը մեռած է , այս է որ Թօփն ալ մեռած լինի , և թէ ոչ շան և ոչ տիրոջը մարմինն ծովափը նետուած չլինին :

— Այդ զարմանալի չէ , այնպիսի ալէկոծ ծովու մը վրայ , պատասխանեց նաւաստին : Սակայն , կարելի է որ յորձանքը ծովէ եզրին հեռուոր մէկ կողմը զանոնք տարած լինի :

— Այսպէս , քու հաստատ կարծիքդ է որ մեր ընկերը ծովա- կող եղած է , հարցուց նորէն թղթակիցը :

— Այդ է իմ կարծիքս :

— Իսկ իմ կարծիքս , ըսաւ Գեդէոն Սթիլէյ , թողլով քու փորձառութեանդ պարտադրածս , Բէնքրօֆ , այս է որ Կիւրոսի և Թօփի կրկին կորստեան իրողութիւնը , կենդանի թէ մեռած , անբացատրելի և անհասկանալի բան մը կ'ընծայէ :

— Պարոն Սթիլէյ , ես ալ քեզի պէս կ'ուզէի խորհիլ , պա- տասխանեց Բէնքրօֆ : Գժբաղդօրէն ես իմ համոզումս չեմ կրնար փոխել » :

Այս բնելով նաւաստին Կարկաներուն կողմը դարձաւ : Աշտոր կրակ մը վառարանին մէջ կ'ըրրօքէր : Հարպէրդ անոր մէջ նոր նետեր էր զրկաչափ մը չոր խոտ , և բոցը քարափոսին մտնելով մերն պայծառ լոյս մը կ'սփռէր :

Բէնքրօֆ իսկոյն ճաշը պատրաստելու հոյ տարաւ : Իրեն յար- մար երեցաւ թեթեւ ուտելիքին հետ քանի մը կտոր հաստատ կե- րակուր խառնել , վասն զի ամենքն իրենց ոյժը զարմանելու պէտք ունէին : Կուրուկոներուն քօղքը միւս օրուան պահեցին , բայց երկու տետրաս փետեցին , և քիչ մ'ետք շամփուրէն անցընելով այս թռչունները բոցանշոյլ կրակին առջև խորովեցին :

Կրեկոյեան ժամն եօթին՝ Նապ գնու ետ չէր դարձած : Այս երկար բացակայութիւնն 'ի հարկէ Բէնքրօֆի մտատանջութիւն

պիտի պատճառէր խափշիկին նկատմամբ : Վախն այն է որ՝ կամ այս անձանօթ երկրին վրայ անոր արկած մը պատահեր էր , կամ թշուառ մարդը յուսահատութենէ ինքզինք չբացուցեր էր : Բայց Հարպէրդ բողբոլիւն տարբեր հեռանք հանեց այս տարակայու- թենէ : Ինք կ'մտածէր որ եթէ Նապ չէր դառնար , պատճառն այս էր որ նոր պարագայ մը պատահեր էր , որով ստիպուած պիտի լինէր իր խուզարկութիւնները շարունակելու :

Արդ՝ ինչ որ նոր էր միայն Կիւրոս Սմիթին նպաստաւոր պիտի դառնար : Ինչո՞ւ համար Նապ Կարկառը չպիտի դար եթէ յոյս մը զինք չընէր : Թերևս նշան մը , քայլի հետք մը , բեկոր մը դտեր էր իր նպատակին հասնելու համար : Թերևս նայն միջոցին ստոյգ շափղ մը կ'ընթանար . թերևս իր տիրոջը մօտն էր . . . :

Այսպէս կ'ընդհարտէր սրտանին . և այսպէս խօսեցաւ : Իր ընկերները թող տունն որ ուղածը խօսի : Թղթակիցը միայն իր ձեռքով անոր հաւան կ'ցուցնէր ինքզինք . բայց՝ Բէնքրօֆի գա- լով այս հաւանական էր միայն որ Նապ առջի օրէն աւելի հե- ուուն քէր էր իր խուզարկութիւնները կողմին վրայ և ասոր հա- մար ուշացեր էր :

Սակայն Հարպէրդ՝ շատ յուզուած լինելով՝ անորոշ նախադա- ցումներով՝ քանի քանի անգամ Նապին ետևէն երթալու գիտա- ւորութիւն յայտնեց , բայց Բէնքրօֆ անոր հասկըցուց որ անօ- ւորութիւն յայտնեց , բայց Բէնքրօֆ անոր հասկըցուց որ անօ- դուս աշխատութիւն մը պիտի լինէր այդ , թէ՛ այն մթութեան մէջ և ուրբմելի օդով՝ չպիտի կարենար Նապին հետքը գտնել , և թէ աւելի լաւ էր սպասել : Եթէ Նապ հետևեալ օրը չե- րեւէր , Բէնքրօֆ չպիտի վարանէր Հարպէրդի հետ ելնել Նապը փնտռելու համար :

Գեդէոն Սթիլէյ նաւաստին համամիտ եղաւ այս կիտին վրայ թէ պէտք չէր բաժնուիլ , և Հարպէրդ իր գիտաւորութենէ ետ կենալու ստիպուեցաւ . բայց իր աչքերէն երկու խոշոր արտաութ թափեցան :

Թղթակիցը չկրցաւ ինքզինքը զսփել և այս վեհանքն պատա- նին համբուրեց :

Գեշ օգը բոլորովին երևան եկաւ : Հարաւային-արեւելեան կողմէն ահաւոր հով մը կ'անցնէր ծովեզերքն աննման ուժգնութեամբ : Ծոփն որ նոյն միջոցին կ'ցածնար , առաջին ժայռերուն ստորտը կ'մանչէր եղբրէն հեռու : Անձրեն ուրականին սաստկութենէ մաղուելով հոսանուտ մշուշի պէս վեր կ'ելնէր : Կարծես թէ ծովեզերին վրայ ընդ քարշ ածող շողիներու ցնցոտիք էին , և այս ծովեզերին կոպիճներն ուժգին կ'դռնչէին՝ պարպուող դայալախազներու սայլերու պէս :

Աւազն՝ հովէն վեր ելնելով տարափին կ'միանար և իր կոծանքն անտանելի կ'դարձընէր . օղին մէջ որքան հանքային փոշի , նոյնքան ջրային փոշի կար : Գետակին բերնին և պատին մէկ կտորին մէջ՝ ջուրն ալէձուփ կ'եռար և այս մալարեմէն ելած օղի խանրն՝ ուրիշ ելք մը չլսանելով բայց միայն նեղ հովիտն որու խորը կ'զտնուէր վտակը , անդիմադրելի զօրութեամբ անոր մէջ կ'սուրար : Հետեւապէս վառաբանին մուխը՝ խողովակէն վար մղուելով ստէպ կ'իջնէր քարափոսները լեցընելով և զանոնք անբնական զարձրնելով :

Այս պատճառաւ , երբոր տետրասներն եփեցան , Բէնքրօֆ թողուց որ կրակն իջնէ , և միայն մոխրին տակ հրասները թաղեց : Ժամն ութ էր և Նապ դեռ չէր երեցած , բայց հիմակ կարելի էր ենթադրել որ այն սոսկալի օգն արգելք եղած էր իրին վերագառնալու , և անշուշտ խոռոչի մը մէջ ապաւէն փնտռած էր , որպէս զն փոթորկին վախճանին կամ դէթ լուսնալու սպասէ : Իսկ անոր ետեւէն երթալու , կամ զանի՝ այս դժուարութեանց մէջ էնէլ փնտռելու խորհուրդը բոլորովին անդործադրելի կ'երևէր :

Երէի միան ընթրիլին միակ կերակուրն եղաւ : Այս միսը յօժարակամ կերան , որ պատուական էր : Բէնքրօֆ և Հարպէրդ՝ որոց ախորժակը բացուեր էր՝ երկայն արշաւանքէն՝ լափեցին կերակուրը : Յետոյ՝ ամէն մէկն իր առջի դիշեր հանդած անկիւնը քաշուցաւ , և Հարպէրդ շուտ մը քնացաւ նաւաստիին մօտ՝ որ վառարանին երկայնքը պատկեր էր :

Գուրսը՝ դիշերն յառաջելով՝ փոթորիկն ևս քան զևս կ'զայրանար : Մրրիկ մ'էր այն որ կրնար նմանիլ այն մրրիկն որ գերիները Ռիչմօնտէն առնելով մինչև Խաղաղականին այդ հողը նետեր էր . փոթորիկներ որ ստէպ կ'պատահին այս դիշերահասարի ժամանակները , անբաւ աղէտք կ'պատճառեն , մանաւանդ ահաւելեն այս լայնատարր դաշտին մէջ , որ իրենց կատաղութեան դէմ արգելք մը չյարուցանէր :

Ուստի դիւրին է հասկընալ որ արևելեան կողմն ընկած կղզի մը , այսինքն ուղղակի ուրականին հարուածներուն ենթարկուած և սանձարձակ մտրակուած երկիր մը , այնպիսի ուժգնութեամբ հարուածի որու վրայ որ և է նկարագրել չէ կարող զաղափար մը տալ :

Բարեբաղդօրէն՝ Կարկառները յօրինող դեզադէզ ժայռերը հաստատուն էին : Հատաբարէ ահագին կտորներ էին , թէև մէկ քանին բաւական զուգակշիռ չլինելով , կարծես թէ իրենց հիմէն կ'սարսէին : Բէնքրօֆ այս բանս կ'զգար , և իր ձեռաց ներքև , զոր որմերուն յենած էր , արագ արագ շարժումներ կ'անցնէին :

Բայց վերջապէս ինքն իրեն կ'կրկնէր , և իբրևամբ , թէ վախնալու բան մը չկար և թէ իր անպատրաստի ապաստանը չպիտի փլէր : Սակայն՝ կ'լսէր քարերուն շշուճն , որոնք լեռնադաշտակին կատարէն բողբոլով և հովէն մղուելով՝ ծովափին վրայ կ'զրորէին : Մէկ քանին մինչև անգամ Կարկառներուն վերին մասին վրայ կ'զրորէին , կամ հատուկոտոր կ'թափէին երբոր ուղղաքիճ վար կ'ընկնէին :

Նաւաստին երկու անգամ ոտք ելաւ և սողալով քարափոսին բերանն եկաւ՝ որպէս զն դուրսը նայի . բայց այս թեթև վիշտաները բնաւ վտանգալի չէին , և դարձեալ իր տեղը նստաւ վառարանին առջև , որու հրասները մոխրին ներքև կ'չառաչէին :

Հարպէրդ՝ ուրականին կատաղութիւնները , փոթորկին շաշուճնը , մրրիկն որոտումը չնայելով՝ խորունկ կ'ընանար : Գեշ քիչ Բէնքրօֆի քունն իսկ կոխեց , նա որ իր նաւային կեանքով ամէն տեսակ բուռն ալէկոծութեանց սովոր էր :

Գեղէնն Սբիւէդ միայն մնաստան ջու թենէ արթուն նստեր էր և ինքզինք կ'անդադրէր Նապի չընկերանալուն համար: Տեսանք արգէն որ Սբիւէդ բոլորովին յոյսը կտրած չէր: Հարպէրդը յուզող նախազգացումները զինքն ալ կ'շարժէին անդադար: Իր միտքը Նապին վրայ կեդրոնացած էր: Ինչո՞ւ համար Նապ չէր վերադարձած: Իր աւագէ անկողինն վրայ կ'դառնար, տարերայ այս կռուին հազիւ ուրեմն ուշադիր լինելով: Երբեմն՝ յողմութենէ ծանրացած աչքը, պահ մը կ'զոյգուէին, բայց արագ մտածմունք մը գրեթէ իսկոյն զանոնք կ'բանային:

Սակայն՝ գիշերը կ'յառաջէր, և կարելի է առաւօտեան ժամն երկուքն էր, երբ Բէնքրօֆ որ նոյն միջոցին խորունկ կ'քնանար՝ ուժգին ցնցուեցաւ:

«Ի՞նչ է այս», զոչեց նա, արթննալով և ծովային մարդոց յատուկ եղող արագութեամբ իր մտածմունքը նորէն սկսելով:

Թղթակիցն անոր վրայ ծոեր էր, և կ'ըսէր.

«Մտիկ ըրէ, Բէնքրօֆ, մտիկ ըրէ»:

Նաւաստին ականջ գրաւ և բռնաշունչ հովէն զատ աղմուկ մը չտեսց:

«Հոմէ է, ըստ նա:

— Ո՛չ, պատասխանեց Գեղէնն Սբիւէդ, նորէն ականջ դնելով, կարծեցի լսել . . . :

— Ի՞նչ:

— Շան մը հաջուճները:

— Շո՛ւն մը, գոչեց Բէնքրօֆ, որ վեր ցատկեց ելաւ:

— Այո՛ . . . հաջուճներ . . . :

— Կարելի բան չէ, պատասխանեց նաւաստին: Եւ՛ սակայն, ինչպէս փոխորկին մանչիւններով . . . :

— Ահա՛ . . . ականջ դիր . . . », ըսաւ Թղթակիցը:

Բէնքրօֆ աւելի ուշադիր մտիկ ըրաւ, և արդարեւ՝ անգործութեան մը ատեն՝ այնպէս կարծեց թէ հեռաւոր հաջուճներ ականջին զարկին:

«Էաւ ուրեմն . . . ըսաւ Թղթակիցը, նաւաստինն ձեռքը սեղմելով:

— Այո՛ . . . այո՛ . . . պատասխանեց Բէնքրօֆ:

— Թօ՛փն է, Թօ՛փն է . . . », պուպը Հարպէրդ, որ նոր արթնցեր էր, և երեքնին ալ կարկառին բերանը վաղեցին:

Գուրս ելնելու համար շատ նեղութիւն քաշեցին. հովը զերենք ներս կ'ըջէր, բայց վերջապէս յաջողեցան ելնելու, և ծայրուերուն կռթնելով միայն կարող եղան կանգուն կենալ: Նայեցան չորս դին, չէին կարող խօսիլ:

Նաւարը չորս դին պատեր էր լիովին: Ծովը, երկին, երկիրը միօրինակ աղջամղջին մթութեան մէջ կ'շփոթէին, կարծես թէ մթնոլորտին մէջ լուսոյ նշոյլ մ'անդամ չէր կաթեր:

Քանի մը վայրկեան, թղթակիցն և իր երկու բնկերներն այսպէս մնացին, որպէս թէ հովէն ճնշուեր, անձրեւէն թրջուեր, աւագէն կուրցեր էին: Ապա՛ երբ պահ մը մըրիկը դողար առաւ, նորէն լսեցին այս հաջուճներն և հասկըցան որ բաւական հեռուէն կ'հասնէին:

Այսպէս հաջորդ Թօփ միայն կրնար լինիլ, բայց մինակ էր թէ ոչ իր հետն բնկեր ունէր: Աւելի հասանական է որ մինակ լինէր, վասն զի՛ ենթադրելով որ Նապ հետը գտնուէր, անպատճառ Նապ դէպ ՚ի կարկառները սլտի փութով գար:

Նաւաստին սեղմեց թղթակիցին ձեռքը, վասն զի չէր կրնար ձայնը լսելի ընել, և այնպիսի կերպով մ'որ կ'նշանակէր. «սպասէ՛» ասպա քարափոսը մտաւ:

Պահ մ'ետք՝ վստած փայտով մը գուրս կ'ելնէր, մութին մէջ կ'կարկառէր և սուր շփուններ կ'արձակէր:

Այս նշանին վրայ, որու կարծես թէ կ'սպասուէր, հաջումներն աւելի մտան պատասխան առին, և քիչ մ'ետք՝ քարափոսին մէջ շուն մը վաղեց: Բէնքրօֆ, Հարպէրդ և Գեղէնն Սբիւէդ անոր ետեւէն ներս մտան:

Ածուխներուն վրայ գրկաչափ մը փայտ նետեցին: Քարափոսն վառվռուն բոցով մը լուսաւորեցաւ:

«Թօ՛փն է», գոչեց Հարպէրդ:

Արդարեւ՝ Թօփն էր, անկլօ-նօրման փառաւոր շուն մը, որ այս

երկու զուգուած սեռէն ստացեր էր օտից արագութիւնն ու հոտա-
ուութեան նրբութիւնը, որ վազուն շան երկու նշանաւոր յատկու-
թիւններն են :

Այս էր Կիւրոս Սմիթ չափազիտին շունը :

Բայց մինակ էր : Աչ իր տէրն և ոչ Նապ իրեն չէին ընկե-
րանար :

Սակայն ինչպէս իր բնադրումովն մինչև Կարկառը գալու կա-
րող եղեր էր, թէև չէր գիտեր : Այս բանս անբացատրելի կ'ը-
րևէր, մանաւանդ այս մութ գիշերով և այն փոթորկին ատեն :
Բայց աւելի անբացատրելի կէտ մը կար. Թօփ ոչ յողնած, ոչ
խոնջ էր, և ոչ տղմով կամ աւաղով աղտոտած էր, . . . :

Հարպէրդ իր քովը քաշեր էր Թօփն ու ձեռքը դուրսը կ'սեղ-
մէր : Ըունը թոյլ կ'աւար որ սեղմէ, և իր վիզը պատանայն ձե-
ռաց մէջ կ'շփէր :

«Քանի որ շունը գտնուեցաւ, տէրն ալ պիտի գտնուի, ըսաւ
թղթակիցը :

— Ստուած լսէ ձայնդ, պատասխանեց Հարպէրդ : Մեկնինք,
Թօփ մեզն պիտի առաջնորդէ ք :

Բէնքրօֆ առարկութիւն մը չըբաւ : Քաջ կ'զղար որ Թօփին
գալուստն իր ենթադրութիւնները կրնար սուտ հանել :

«Ճամբայ ելնենք», ըսաւ նա :

Բէնքրօֆ վառարանին ածուխներն ուշի ուշով ծածկեց : Մոխ-
րին տակ քանի մը փայտի կտոր դրաւ՝ այնպէս որ 'ի դարձին կրակ
գտնէ, ապա շունն առջևը ձգելով, որ կարծես թէ թեթև մը
հաջելով կ'հրաւիրէր որ իր ետևէն երթայ, մինչդեռ թղթա-
կիցն ու պատանին իրեն կ'հետևէին, դուրս նետուեցաւ, ընթրիքին
մնացորդն իրեն հետն առնելով :

Այն միջոցին փոթորիկն իր բոլոր սաստիկութեան և կարելի է
ուժգնութեան դերադոյն անտիճանին մէջն էր : Լուսինն՝ որ այն
ատեն նոր էր, և հետևապէս՝ արևուն հետ զուգընթաց՝ ամպե-
րուն մէջէն թեթև նշոյլ մ'անդամ չէր արձակէր : Ազդագիծ
շաւիղ մը բռնել դժուարին կ'դառնար, լաւագոյն միջոցն էր Թօ-

փին բնադրումին համեմատ շարժիլ, և այսպէս ըրին : Թղթակիցն
և պատանին շան ետևէն կ'քալէին, և նաւաստին ընթացքը կ'փա-
կէր : Կարելի չէր իրարու հետ խօսք մը փոխանակել : Անձրեն
առատ չէր վաղեր, վասն զի ուրականին շնչովը կ'մաղուէր, բայց
ուրականը սոսկալի էր :

Սակայն՝ պարադայ մը բարեբաղդօրէն օգնեց նաւաստիին և իր
երկու ընկերներուն : Արդարև՝ հոմը հարաւ-արևելեան կողմէ կը
փչէր և հետևապէս ուղևորներուն կռնակէն կ'դարնէր կ'քշէր : Ա-
ւազն՝ զոր ուժգին կ'շարժէր հոմը և անտանելի պիտի դառնար,
ետևէն կ'ընդունէին, և եթէ բնաւ իրենց գլուխը չգարձընէին,
անհանդիստ չպիտի լինէին այնչափ որ իրենց ընթացքին մէջ նե-
ղուին :

Ի վերջէ՝ ստէպ իրենց կամքէն աւելի շուտ կ'քալէին և իրենց
քայլերն արագ արագ կ'առնէին որպէս զի վար չընկնին, բայց
անհուն յոյս մ'իրենց ոյժը կ'կրկնապատկէր, և այս անգամ ծով-
եզըն 'ի վեր չէին ելնէր մի միայն բաղդախնդրութեամբ : Չէին
տարակուսեր որ Նապ իր մեծաւորը գտած և հաւատարիմ շունն
իրենց զրկած չլինէր : Բայց Կիւրոս Սմիթ կենդանի էր, թէ ոչ
Նապ իր ընկերները կ'կոչէր միայն դժբաղդ Սմիթին գիակին վեր-
ջին պարտաւորութիւնները մատուցանելու համար :

Աղևորները բարձր ցամաքէն խոհեմութեամբ հեռանալով ա-
նոր կտրուած մասէն անցեր էին, երբ կանկ առին որպէս զի քիչ
մը հանդստանան : Ժայռին շրջանը զիրենք հովին դէմ կ'պատսպա-
րէր, և այսպէս քառորդ մը քալելէն կամ լաւ ևս է ըսել ար-
շաւէնէն ետև՝ շունչ կ'առնէին :

Նոյն միջոցին կտրող էին իրարու ձայն լսել, խօսակցիլ, և
պատանին Կիւրոս Սմիթին անունն արտասանելուն՝ Թօփ թեթև մը
հետզհետէ հաջեց, որպէս թէ ըսել կ'ուզէր որ իր տէրն աղա-
տած է :

«Ազատեցաւ, այնպէս չէ, կ'կրկնէր Հարպէրդ, ազատեցա՞ւ,
Թօփ» :

Եւ շունը պատասխանելու կերպով կ'հաջէր :

Նորէն ճամբայ ելան : Առաւօտեան գրեթէ ժամն երկուք ու կէս էր : Ծեփն սկսեք էր բարձրանալ , և հովէն մղուելով այս մակընթացութիւնն՝ որ յօրակցութեան մակընթացութիւն (SYZY-
gic*) մ'էր , շատ սաստիկ լինելու կ'սպառնար : Մեծ ալիքն ժայ-
ռերուն ստորոտը կ'դուային , և այնպէս ուժղին կ'բախէին որ՝
հաւանորէն՝ կղզեկին վրայէն պիտի անցնէին , որ նոյն պահան բո-
լորովին անտեսանելի էր : Այս երկար թումբն այլ ևս չէր պահ-
պաներ եղեբքն՝ որ ծովուն ալեաց բախումներուն ուղղակի ենթա-
կայ եղած էր :

Այն ինչ նաւաստին և իր ընկերներն դարակին ետեէն ելան՝
որ հովը յետին ծայր ուժգնութեամբ նորէն իրենց վարկաւ : Գլխի-
կոր , իրենց կոնակը մրրկին տալով՝ շատ շուտ կ'բալէին , Թօփին
հետեւելով՝ որ իր բռնելք ճամբան առանց վարանման կ'շարու-
նակէր : Գէպ 'ի հիւսիս կ'ելնէին , ալեաց անվերջանալի կատար
մ'ունենալով աջ կողմէն , որ խլացուցիչ շառաչելով կ'ծառ-
ւէին ու կ'փշրուէին (deserter) . իսկ ձախ կողմէն մութ երկիր մը
ունենալով՝ որու տեսքն ըմբռնել անկարելի էր , բայց քաջ կ'ըզ-
դային որ համեմատաբար տափակ պիտի լինէր , վասն զի՝ ուրա-
կանն այժմ իրենց զլխուն վերեւէն կ'անցնէր առանց դիմացէն վար-
նելու , և այս արդիւնքը կ'ունենար երբոր հասարարէ պատին
կ'զարնէր :

Առաւօտեան ժամը չորսին՝ կարող էին հաշուել որ հինգ մղո-
նի չափ տեղ քալեր էին : Ամպերը թեթեւ մը վեր ելեր էին և
հողին վրայ չէին դանդաղեր : Հոփն՝ ընդհատ տամուկ , խիստ
կծու , աւելի չոր և ցուրտ յորձանքի պէս կ'տարածուէր : Բէն-
քրօփ , Հարպերդ և Գեդէոն Սբիլէդ անշուշտ չարաչար կ'նեղ-
ուէին իրենց հագուստներն ըստ բաւականին հասաստուն չլինե-
լով , բայց իրենց բերնէն արտունջ մ'անդամ չէր ելներ : Երենց
միտքը գրեթէ թօփին հետեւելու ուր որ մտացի կենդանին ա-
ռաջնորդէր :

* Մոլորակի մը , մանաւանդ լուսնին՝ արեւուն հետ յօրակցութիւնը կամ հա-
կադրութիւնը :

Ժամը հինգին մօտ՝ սկսաւ լուսնալ : Նախ գէնիթն , ուր շողի-
ները նուազ թանձր էին , քանի մը մոխրադոյն գոյներ ամպերուն
ծայրերը բեկբեկեցին . և ապա՝ դիմահար կոյտի մը ներքեւ՝ աւելի
լուսաւոր դիմ մը ծովուն հորիզոնը բացորոշ նկարեց : Շէկ նշոյլ-
ներ թեթեւ մը գունաւորեցին կոհակներուն կատարը , և փրփուրն
սպիտակ դարձաւ : Նոյն միջոցին՝ ձախ կողմը՝ ծովեզրին ծախ-
ածու մասերը խառն ու շփոթ կ'ներկուէին՝ բայց դեռ սնի վրայ
մոխրի գոյնն էր :

Առաւօտեան ժամը վեցին՝ լուսնալ : Ամպերը՝ համեմատաբար
բարձր դօտիի մը վրայ՝ ծայրալիբ արադութեամբ կ'ընթանային :
Նաւաստին և իր ընկերներն Կարկաէն գրեթէ վեց մղոն հեռի
էին : Ամենքը խիստ տափակ աւազուտ ափուքէ մը կ'անցնէին .
այս ափունքը ծովուն կողմէ ժայռերով կ'եզրէր , որոց սարերը մի-
այն ջրէն դուրս կ'ելնէին այն ատեն , վասն զի ծովուն խիստ բար-
ձրացած միջոցն էր : Աջ կողմէն՝ երկիրն՝ ուր տեղ տեղ աւազա-
կոյտներ կային՝ եկբանով ցցուած , աւազուտ վերնադաւառի մը
բաւական վայրագ երեւոյթն ունէր : Ծովեզրը բազմակտուր չէր ,
և ուրիշ պատնէշ չունէր Ովկիանոսին դէմ այլ միայն բլրակնե-
րու բաւական անկանոն շղթայ մը : Գէս ու գէն , մէկ երկու հաս-
ձառեր՝ դէպ 'ի արեւմուտ հակած՝ կ'ձուլրկէին՝ իրենց ճիւղերը
նոյն ուղղութեամբ տարածելով : Իսկ խիստ հեռուն՝ ետեւի կող-
մը՝ հարաւ-արեւմտեան դին՝ վերջին անտառին եզրը կ'ըլլորնար :

Նոյն պահուն՝ Թօփ յայտնապէս կ'յուրջընէր որ շատ յուրաւ-
էր : Ընդ առաջ կ'վազէր , նաւաստին կ'դառնար , և կարծես թէ
աւելի շուտ քալելու կ'գրդէր : Նոյն միջոցին՝ շունը ափունքը
թողեր և իր զարմանալի բնազդումէն մղուելով՝ առանց վարանում
մը յայտնելու , աւազակոյտներուն մէջ մտեր էր :

Ամենքն անոր ետեւէն գացին : Երկիրը բորբոլովին ամայի կ'ե-
րկէր : Ընչաւոր արարած մ'անդամ՝ անոր կենդանութիւն չէր
տար :

Աւազակոյտներուն ստորոտն՝ որ շատ լայն էր , բլրակներէ և
մինչև անդամ քրնածին ցրուած բլուրներէ կ'բաղկանար : Այն-

պէս կ'երևէր որ աւաղէ փոքրիկ Զուխցերի մ'էր, և հրաշալի բնազգում մը պէտք էր միայն չմոլորելու համար:

Աւաղուտ ափունքը թողլէն հինգ վայրկեան ետք, թղթակիցն և իր ընկերները բարձր աւաղակոյտի մը յետակողմը փորուած խողով մը հասան: Թօփ նոյն տեղը կանկ առաւ և պայծառ հաջում մ'արձակեց: Սքիլէդ, Հարսէրդ և Բէնքրօֆ այդ քարայրին մէջ մասն:

Նապ այն տեղն էր, ծունր դրեր էր խոտերու խշտեկի մը վերայ տարածուած մարմնոյ մ'առջև . . . :

Այս մարմինը Կիւրոս Սմիթ չափազիտին մարմինն էր:



ԳԼՈՒԽ Ը.

Կիւրոս Սմիթ կենդանի է — Նապի պարտի-լիանը — Որտի նշաններ — Անլուծանելի խնդիրք — Կիւրոս Սմիթն առաջին խօսիչը — Նշաններու ճշգրտութիւնը — Աւերադարձ Կարկասները — Բէնքրօֆ շքեղանք:

Նապ չթնտայ: Նաւաստին բառ մը միայն նետեց անոր.

«Կենդանի՞», գոչեց նա:

Նապ պատասխան չտուաւ: Սքիլէդ ու Բէնքրօֆ գունատեցան: Հարսէրդ ձեռներն իրարու միացուց և անշարժ մնաց: Բայց ակներև էր որ խեղճ խափշիկը, վշտով համակուած՝ ոչ իր ընկերները տեսեր և ոչ նաւաստիին թօսքը լսեր էր:

Թղթակիցն այս անշարժ մարմնոյն մօտ ծունկ չըքեց, և իր ականջը Կիւրոսի կուրծքին վրայ դրաւ, անոր հանդերձը կէս մը բանալով: Վայրկեան մը — դար մը — անցաւ, և բոլոր սրտի բախում մը լսելու կ'ջանար:

Նապ քիչ մը գլուխը վերուցեց էր և առանց տեսնելու կը

նայէր: Երբէք յուսահատութիւնն այսչափ այլայլած չէր մարդու մը դէմքը: Նապ անձանայելի էր, խոնջէնքէն մաշեր, վշտաբեկ էր: Իր մեծաւորը մեռած կարծէր:

Գեղեկոն Սքիլէդ՝ երկար և մտադիր դիտողութենէ ետք՝ ոտք ելաւ:

«Կենդանի՞ է», ըսաւ նա:

Բէնքրօֆ՝ ըստ կարգի՝ Կիւրոս Սմիթին մօտ ծունր դրաւ, իր ականջն ալ քանի մը զարկ լսեց, և իր շրթունքն՝ չափազիտին շրթերէն ելած շունչ մ'առաւ:

Հարսէրդ՝ թղթակիցին մէկ խօսքին վրայ՝ դուրս վաղեց ջուր բերելու համար: Անկից հարիւր քայլ հեռու վճիտ վտակ մը դատաւ, որ անշուշտ առջև օրուան անձրևներէն շատ մեծցած էր, և որ աւաղին մէջէն կ'կաթէր: Բայց այս ջուրը տանելու համար՝ սոյն աւաղակոյտներուն մէջ խեցի մ'անգամ չկար: Պատանին ստիպուեցաւ իր թաշկինակը վտակին մէջ թրջելով զո՛հ լինիլ, և քարայրը դարձաւ վազն 'ի վազ:

Բարեբաղդօրէն՝ այս թրջած թաշկինակը Սքիլէդի բաւեց, որ միայն չափազիտին շրթունքը թանալ կ'ուզէր: Այս զով ջրին մասունքն զրեթէ անմիջական արդիւնք մը բերին: Կիւրոս Սմիթին կուրծքէն հառաչ մ'ելաւ, և այնպէս երևցաւ որ քանի մը բառ անգամ արտասանելու ճիգ կ'ընէր:

«Պիտի աղատենք զանի», ըսաւ թղթակիցը:

Նապ այս խօսքին վրայ յոյս աւեր էր: Իր տէրը հանուեցուց, որպէս զի նային թէ մարմնոյն վրայ վէրք մը կայ: Ոչ ճմլած և ոչ խի կեղեքածք կար դիտուն, իրանին և անդամներուն վրայ, և այս զարմանալի բան մ'էր, վասն զի Կիւրոս Սմիթին մարմինն անշուշտ ժայռերուն մէջ գլորած պիտի լինէր. ձեռքն անգամ անփնտաս մնացիր էր, և դժուարին էր բացատրել թէ ինչպէս չափազեան խոչ ու խուրթի գծէն անցնելու համար անտարակոյս ըրած ճգանքը հետքն անգամ չունէր:

Բայց այս պարադոքսին բացատրութիւնը վերջէն պիտի գայ: Երբոր Կիւրոս Սմիթ խօսիլ կարենայ, անցած դարձածը պիտի ը-

սէ : Առ այժմ՝ կարևոր խնդիրն էր անոր կենդանութիւն տալ, և հաւանական էր որ մարմինը շփելով այս արդիւնքը ստանային : Այս գործողութիւնն ըրին նաւաստիին հաստ շապիկով (vareuse) : Այսպէս չափազէտն ուժովն շփուելով իր թևերը թեթև մը շարժեց, և աւելի կանոնաւոր կերպով սկսաւ շունչ առնուլ տալ : Ուժաթափ մեռնելու վրայ էր, և իրաւի : Եթէ թղթակիցն ու իր ընկերները ժամանակին չհասնէին, Կիւրոս Սմիթ կենազրաւ պիտի լինէր :

«Ուրեմն կարծեցիր թէ մեծաւորդ մեռեր է, հարցուց նաւաստին Նապին :

— Այո՛, մեռած, պատասխանեց Նապ. և եթէ Թօփ ձեղչդանէր, եթէ չհասնէիք, իմ տէրս պիտի թաղէի և ես ալ անոր մօտ պիտի մեռնէի» :

Գիւրին է դիտել թէ Կիւրոս Սմիթի կեանքն ինչ բանէ կախուեր էր :

Այն ատեն Նապ պատմեց ինչ որ պատահեր էր : Առջի օրն այդուն՝ Կարկառէն հեռանալէն ետև՝ ծովեզրէն վեր՝ հրախօհիսհային ուղղութիւնը բռներ և իր արդէն այցելած փերուս կողմը հասեր էր :

Ինչպէս որ կ'իտտովանէր Նապ՝ բոլորովին յուսակտուր՝ ծովափին վրայ, ժայռերու միջև, աւազին վրայ, ամենէն թեթև նշանները փնտուեր էր որպէս զի կարենայ յառաջանալ : Մանաւանդ որոններ էր նա աւազափին (grève) այն կողմն զոր ծովը չէր ծածկեր, վասն զի՝ անոր վարի դին մակընթացութենէ և տեղատուութենէ ամէն նշան աւրուած պիտի լինէր :

Այնուհետև Նապ՝ իր տէրը կենդանի դտնելու չէր յուսար : Միայն անոր դիակը գտնելու կ'աշխատէր, դիակ մը զոր իր ձեռքը թաղել կ'ուզէր :

Նապ երկար ատեն փնտուեր էր : Իր բոլոր ճշունքն անարդիւն մնացին : Չէր երևեր որ մարդկային էակ մ'այս ամայի փերուս վրայ կոխած լինէր : Խեցիներն՝ ծովէն հեռու մնացած խեցիներն — որ միլիոնաւոր էին թուով՝ մակընթացութեան դադարէն անդին

— անվթար կ'երևէին : Եւ ոչ խեցի մը կար ճգմուած : Երկուքէն երեք հարիւր էարթ* ծաւալն մը մէջ՝ չկար ոչ հին և ոչ նոր հետք մ'որով երևի թէ մարդ ցամաքն ելած լինի :

Ուստի Նապ որոշեր էր քանի մը մղոն ևս ծովեզրէն վեր ելնել : Կարելի էր որ յորձանքն աւելի հեռու տարած լինէին մարմին մը : Երբոր տափակ եզրէ մը քիչ մը հեռու դիակ մը կը ծփայ՝ հաղիւ կ'պատահի որ վաղ կամ անադան կոհակը զայն դուրսը չմղէ : Նապ դիտէր այս բանս, և իր տէրը վերջին անգամ մ'ևս տեսնելու կ'փափաքէր :

«Ծովափին վրայ երկու մղոն ևս յառաջ քշեցի՝ ցած ժայռերուն գծէն անցայ, բարձր աւազափը պարտեցայ, և բոլորովին բան մը գտնելու անյոյս էի, երբ երէկ՝ երեկոյեան ժամը հինգին՝ աւազին վրայ ոտքի նշաններ նշմարեցի :

- Ոտքի նշաններ, զոչեց Բէնքրօֆ :
- Այո՛, պատասխանեց Նապ :
- Եւ միթէ այս նշանները ժայռերէն կ'սկսէին, հարցուց թղթակիցը :

— Ո՛չ, պատասխանեց Նապ, միայն ծովուն դադարած տեղէն (relais), վասն զի այս ջրադադարներուն և ժայռերուն մէջ տեղ գտնուածներն աւրուած պիտի լինէին :

- Շարունակէ, Նապ, ըսաւ Գեդէոն Սքիլէդ :
- Երբ այս նշանները տեսայ, գրեթէ խեղդ դարձայ : Շատ նշմարել էին անոնք, և դէպ ՚ի աւազակոյտները կ'ուղղուէին : Քառորդ մղոնի չափ անոնց հետեւեցայ, վազելով քայց կ'նայէի որ չաւրեմ : Հինդ վայրկեան ետք՝ երբոր մութը կ'կոխէր, շան մը հաջումները լսեցի : Թօփն էր այն, և Թօփ զիս այս տեղ, իմ տիրոջս քօվը բերաւ» :

Նապ իր պատմութիւնն աւարտեց ըսելով թէ ո՛րչափ մեծ եղեր էր իր վիշտն այս անկենդան մարմինը գտնելով : Փորձ փորձեր էր անոր վրայ կենդանութեան նշոյլ մը տեսնելու : Հիմակ որ

* Ամերիկեան երկայնութեան չափ որ մեզբօէն ըլլէ մը պակաս է. 0.9143

զանի մեռած գտեր էր, կ'ուզէր որ կենդանի լինէր: Իր բոլոր ճգունքն ապարդիւն ելեր էին: Կ'մնար իրեն միայն վերջին պարտաքը հատուցանել այն անձին զոր այնչափ կ'սիրէր:

Այն ատեն Նապ իր ընկերները յիշեր էր: Անտարախոյս ասոնք ևս կ'փափաքէին տեսնել վերջին անգամ տարաբաղդ չափազէտը:

Թօփ անդ էր. միթէ կարելի չէր այս հաւատարիմ կենդանիին ճարտարամտութեան վստահիլ: Նապ քանի մ'անգամ թղթակցին անունն արտասանեց, չափադիտին ընկերներուն մէջ այն ընկերը զոր Թօփ ամենէն աւելի կ'ձանչէր. ապա ցոյց տուաւ անոր ծովեզրին հարաւային կողմը, և շունն իրեն ցոյց տրուած կողմը վազեց դնաց:

Ընթերցողը գիտէ արդէն թէ ինչպէս Թօփ՝ զրեթէ իբր գերբնային համարուելու արժանի բնազդումով մը, վասն զի կենդանին երբէք կարկառ սեսած չէր, կարող եղաւ անդ հասնելու:

Նապի ընկերները ծայրայեղ ուշադրութեամբ այս պատմութիւնը մտիկ ըրեր էին: Իրենց համար անբացատրելի բան մը կար թէ ինչպէս Կիւրոս Սմիթ՝ ծովէն ազատելու համար ամէն ճիգ թափելէն ետև՝ ժայռերէն անցնելու ատեն՝ և ոչ իսկ կեղեքած մ'առած լինի: Եւ որ աւելի անբացատրելի էր, ինչպէս չափազէտն՝ ծովափէն մղոն մը հեռու՝ աւազակոյտներու մէջ կորսուած քարայրը հասնելու կարող եղեր էր:

«Այսպէս Նապ, ըսաւ թղթակիցը, դուն չէն մինչև այս տեղ տէրդ փոխադրողը:

— Ո՛չ, ես չեմ, պատասխանեց Նապ:

— Բացայայտ է որ Պ. Սմիթ մինակ եկած է այս տեղ, ըսաւ Բէնքրօֆ:

— Իբրաւի, այդ բացայայտ է, դիտեց Գեղէոն Սքիլէդ, բայց հաւատալի չէ՞:

Այս իրողութեան բացատրութիւնը միայն չափադիտին բերնէն իմանալ կարելի էր: Հետևապէս պէտք էր սպասել որ խօսելու կարողութիւնը գայ: Բարեբաղդօրէն՝ կեանքն արդէն վրան եկեր էր: Շփումներն արեան շրջանը հաստատեր էին: Կիւրոս Սմիթ վերստ-

տին թեւերը շարժեց, ապա դուրսը, և իր շրթունքէն քանի մը անխմանալի խօսքեր ելան:

Նապ՝ անոր վրայ ծռած՝ կ'ուզէր, բայց չէր երևեր որ չափազէտը լսէր անոր ձայնը, և աչքերը միշտ գոց էին: Միայն շարժումներով կ'յայտնէր որ կենդանի էր, բայց զգայարանքն դեռ անմասն էին այս կենդանութեան:

Բէնքրօֆ շատ ցաւեցաւ որ կրակ չունէր, և ոչ պէտք եղածը վառելու համար, վասն զի՝ մոռցեր էր գժբաղդաբար այրած լաթ բերելու, զոր պիտի կարենար երկու գայլախազ իբարու զարնելով բռնկել անվրէպ: Իսկ չափադիտին զբայանները բոլորովին պարապէին, բաձիոնակին զբպանէն զատ՝ որ իր ժամացոյցը կը պարունակէր: Ուստի պէտք էր Կիւրոս Սմիթը կարկառները փոխադրել, և կարելի եղածին չափ շուտով: Այս եղաւ ամենուն կարծիքը:

Սակայն՝ չափադիտին տրուած խնամքը կարծուածէն աւելի շուտ անոր ողի սլիտի տային: Զուրն որով իր շրթունքը կ'թանային քիչ քիչ անոր կենդանութիւն կ'բերէր: Բէնքրօֆ մտածեց որ իր հետը բերած տետրասի մինչ հիւթէն այն ջրին հետ խառնէ: Հարպէրդ՝ որ ծովեզրը վաղեր էր, վերագործաւ երկու երկպատեան խեցիներով: Նաւաստին տեսակ մը բաղադրութիւն շինեց, և չափադիտին շրթանց մէջ մտցոց, որ կարծես թէ այս խառնուրդն անկշտօրէն ծծեց:

Այն ատեն իր աչքերը բացուեցան:

Նապ և թղթակիցն անոր վրայ ծռեր էին:

«Տէ՛ր իմ, տէ՛րդ իմ», պոռայ Նապ:

Չափադէտը լսեց ձայնը: Ճանչեց Նապն ու Սքիլէդը, յետոյ՝ իր երկու ընկերները՝ Հարպէրդն ու Նաւաստին, և իր ձեռքն անոնցը սեղմեց մեղմիկ:

Քանի մը բառ ևս իր բերնէն ելան, — բառեր զոր անշուշտ արտասաներ էր արդէն, և ցոյց կ'տային թէ՛ այն միջոցին իսկ իր միտքն ինչ խորհուրդներով կ'տանջուէր:

Այս անգամ սոյն բառերը հասկանալի եղան:

«Կղզի՛ թէ ոչ աշխարհ, մըմոաց նա :

— Ա՛խ, գոչեց Բէնքրօֆ, որ չկրցաւ բայցադանչութիւնը զսպել : Սատանան վկայ, մեր փոյթը չէ բնաւ թէ ո՛ւր ենք, բաւական է որ դու ապրիս, Պ. Կիւրոս, կղզի՛ թէ ոչ աշխարհ, այդ վերջի գործ է » :

Չափազեար Հաստատական թեթեւ նշան մ'ըրաւ, և կարծես թէ քնացաւ :

Այս քունը յարգեցին, և թղթակիցն իսկոյն պէտք եղած պատրաստութիւնները տեսաւ որպէս զի չափազեար Հանգիստ փոխադրուի :

Նապ, Հարպէրդ և Բէնքրօֆ քարայրէն ելան և բարձր աւազակոյտ մը դիմեցին որու գազաթը քանի մը վտիտ ծառեր կային, և ճամբայ ընելով՝ նաաստին ինքզինք զսպել չկրնալով՝ կ'կրկնէր .

«Կղզի՛ թէ աշխարհ : Չնայել որ վրան շունչ չունի և այս բանին վրայ կ'մտածէ, ինչ մարդ » :

Երբ աւազակոյտին գազաթը Հասան՝ Բէնքրօֆ և իր երկու ընկերները՝ միայն իրենց թեքերն ունենալով իբրև պորձիք, բաւական ազազուն, տեսակ մը հովասնաշ ծովային նոճի մեծ ճիւղերը կտրեցին. ապա՝ այս ճիւղերով գեսպակ մը շինեցին որ՝ եթէ տերևներով ու խոտերով ծածկուէր, պիտի կարենար չափազեար փոխադրել :

Գրեթէ քառասուն վայրկենի գործ եղաւ, և ժամը տասն էր երբ որ նաաստին, Նապ և Հարպէրդ Կիւրոս Սփիթին մօտ եկան, որու քովէն Գեղեճոն Սբիլէդ չէր հեռացեր :

Այն ատեն չափազեան իր գանուած քունէն կամ լաւ ևս թմբրութենէ կ'սթափէր : Այսերուն գոյնը կ'զար, որոնք մինչև ատեն՝ մեռելատիպ էին : Քիչ մը վեր ելաւ, իր չորս զին նայեցաւ, և կարծես թէ ո՛ւր լինելու կ'հարցընէր :

«Կիւրոս, կրնան առանց յոգնելու լսել ըսելքես, հարցուց թղթակիցը :

— Այո՛, պատասխանեց չափազեար :

— Իմ կարծիքս այս է, ըսաւ այն ատեն նաաստին, որ պարն

Սփիթ աւելի լաւ պիտի լսէ ըսելքդ եթէ այս տեսրասի մուզէն քիչ մ'աւ ճաշակէ . — վասն զի, Պ. Կիւրոս, տեսրաս է այն, յարեց նա նոյն մուզէն քիչ մը տալով, որու այս անգամ՝ քանի մը կտոր միս ալ խառնեց :

Կիւրոս Սփիթ տեսրասի այս կտորները ծամեց, որոց մնացորդն իր երեք ընկերները բաժնեցին իրենց մէջ, որ անթոթութենէ կը տագնապէին և նախաճաշիկը շատ վտիտ գտան :

«Լաւ, ըսաւ նաաստին, կերակուրները մեզի կ'սպասեն Կարկաններուն մէջ, վասն զի՝ պէտք է գիտնաս, Պ. Կիւրոս, որ վարը, հարաւակողմը, սենեակներով տուն մ'ունինք, նոյնպէս անկողիններ և վաւարան, իսկ՝ խոհանոցն ալ՝ բաւական շատ թուշտներ՝ զոր մեր Հարպէրդը կուրուհուներ կ'անուանէ : Բուզեսպակդ պատրաստ է, և երբոր ոյժ զգաս, մեր բնակարանը պիտի փոխադրենք քեզ :

— Շնորհակալ եմ, բարեկամդ իմ, պատասխանեց չափազեարը, մէկ երկու ժամ ևս, և կրնանք մեկնիլ . . . : Հապա հիմակ, խօսի՛ր նայիմ, Սբիլէդ » :

Այն ատեն թղթակիցն անցած զարձածին նկարագիրն ըրաւ . Կիւրոս Սփիթին՝ ի հարկէ անձանթ եղած դէպքերը պատմեց, օգտապարկին վերջին անկումը, այս անձանթ հողին վրայ ելնելը, որ անապատ կ'երևէր, և չէր դիտցուէր թէ կղզի՛ է թէ ոչ աշխարհ, Կարկաններուն գիւտը, չափազեար դանելու համար եղած խուզարկութիւնները, Նապին անձնու իրութիւնը, ամէն ինչ որ պարտաւոր էին հաւատարիմ թօփին խելքին, և այլն :

«Բայց, հարցուց Կիւրոս Սփիթ գեռ ևս տկարացած ձայնով մը, ուրեմն զիս աւազակին վրայ դանելով հոս չբերիք :

— Ո՛չ, պատասխանեց թղթակիցը :

— Եւ միթէ՛ դու չբերի՛ր զիս այս քարայրը :

— Ո՛չ :

— Արեմն ծովու ժայռերէն սրջափ հեռու է այս քարայրը :

— Շուրջ կէս մլոն, պատասխանեց Բէնքրօֆ, և եթէ կ'զարկ մտնաս, Պ. Կիւրոս, մենք ալ նոյնչափ զարմացած ենք քեզ այս անդ տեսնելով :

— Իրաւի, պատասխանեց չափազէտը, որ քիչ քիչ կ'վաւուէր և այս մանր պարագաներէն հետաքրքրութիւնը կ'շարժէր, իրաւի, այս շատ տարօրէն բան մ'է:

— Բայց, վրայ բերաւ նաւաստին, կրնամ ինձ ըսել թէ ինչ անցաւ երբոր կոհակն առաւ տարաւ քեզ:

Կիւրոս Սմիթ իր յիշատակները գրողեց: Քիչ բան գիտէր: Կոհակը զինքն օգապարկին ցանցէն խլեր էր: Նախ քանի մը գրկաչափ ջրին խորն իջաւ: Երբ ծովուն երեսն եկաւ, այն կէս մթութեան մէջ, իր մօտ կենդանի արարածի մը շարժումը զգաց: Թօփն էր այն, որ անոր օդնութեան վազեր էր: Աչերը վեր վերցընելով՝ այլ ևս օգապարկը չտեսաւ, որ՝ իր բեռին ու շան ծանրութենէ թեթեւալով՝ նետի պէս մնկներ էր նորէն:

Այս զայրապին ալեաց մէջ՝ տեսաւ որ ծովափէն կէս մղոն հեռու պիտի լինէր: Ուժգին լողալով՝ կոհակներուն դէմ մաքառելու փորձ փորձեց: Թօփ իր զգեստէն զինք կ'բռնէր. բայց կայծակի յորձանք մը վրան հասաւ, դէպ 'ի հիւսիս մղեց զինք, և կէս ժամու չափ ամէն ճիգ թափելէն ետև՝ անդնդալէճ ընկաւ Թօփն ալ հետը քարշելով: Այս վայրկենէն մինչև իր բարեկամաց զիրկը գտնուած վայրկեանն բնաւ բան մը չէր յիշեր:

«Սակայն, վրայ բերաւ Բէնքրօֆ, ծովեզրը նետուած և բաւական ոյժ ունեցած պիտի լինիս մինչև այս տեղ քալելու, քանի՛ որ Նապ քու քայլերուդ գրոշմները գտաւ:

— Այո . . . այսպէս պիտի լինի . . . պատասխանեց չափազէտը մտածելով: Եւ միթէ այդ փերուսն վրայ մարդու հետք բնաւ չտեսա՞ք:

— Եւ ոչ հետք մը, պատասխանեց թղթակիցը: Սակայն՝ եթէ դիպուածով այն տեղ ազատարար մը գտնուած լինէր՝ ճիշտ պատէ՛հ ժամուն, ինչո՞ւ համար՝ քեզ ծովէն ազատելէն ետև՝ երեսի վրայ ձգած պիտի լինէր:

— Իրաւունք ունիս, սիրելիդ իմ Սքիլէդ: — Ըսէ ինձ, Նապ, յարեց չափազէտն իր սպասաւորին դառնալով, Փիթէ գու չես . . . դու վայրկեան մը խելքդ կորուսիր . . . և այն միջոցին . . .

մէջ, անհեղեղ է ըսածս . . . : Արդեօք այն նշաններէն մէկ քանին դեռ կ'մնան, հարցուց Կիւրոս Սմիթ:

— Այո՛, տէր իմ, պատասխանեց Նապ. աւասիկ մտից կողմը, ճիշտ այս աւազաբլրին յետակողմը կ'գտնուի, հովէն և անձրեկէն պատսպարուած վայր մ'է: Միւսները փոթորկէն աւրուեր են:

— Բէնքրօֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, կ'ուզես իմ սօլերներս առնուլ և տեսնել թէ արդեօք այդ հետքին հետ բոլորովին կ'յարմարին»: Նաւաստին չափազիտին խնդիրը կատարեց:

Հարպէրդ և ինք՝ Նապին առաջնորդութեամբ, հետքերուն գտնուած վայրը գացին, մինչդեռ Կիւրոս Սմիթ թղթակցին կ'ըսէր.

«Այս տեղ անբացատրելի բաներ տեղի ունեցան: — Արդարև՝ անբացատրելի են, պատասխանեց Գեդէոն Սքիլէդ:

— Բայց այս միջոցին այս բանին վրայ չպնդենք, սիրելիդ իմ Սքիլէդ, վերջէն կրնանք խօսակցիլ»:

Պահ մ'ետք՝ նաւաստին, Նապ և Հարպէրդ ներս կ'մտնէին: Այլ ևս կասկածիլն անկարելի էր: Չափազիտին սօլերները ճիշտ կ'յարմարէին պահուած նշաններուն հետ: Ուրեմն, այդ հետքը ձողղը Կիւրոս Սմիթն էր:

«Աղէ՛, ըսաւ, ես ունեցած պիտի լինիմ այն ցնորքն, այն անուրջքն որով Նապը կ'մեղադրէի: Քնաշըջկի մը պէս քալած պիտի լինիմ, առանց դիտնալու թէ ո՞ւր կ'քալեմ, և Թօփն՝ իր բնազդումովն՝ այս տեղ առաջնորդած պիտի լինի ինձ՝ ծովէն ազատելէն ետև . . . : Եկո՛ւր, Թօփ, եկո՛ւր, իմ շունս»:

Փառաւոր կենդանին հաջելով մինչև տիրօջը մօտ ցատկեց, և շատ զգուանք ընդունեց:

Պէտք է հատալ որ Կիւրոս Սմիթին ազատումին պատճառ եղող իրողութիւններուն ուրիշ բացատրութիւն մը առաջ կարելի չէր, և այս գործին բոլոր պատիւը Թօփին տալու էր:

Կէսօրին մօտ՝ Բէնքրօֆ Տարցուց Սմիթին թէ արդեօք փոխադրուելու փափաք ունի՞։ Սմիթ՝ իբրև պատասխան, և իր ազգուկամաց յայտարար ճիղ մ'ընելով միայն՝ ոտք ելաւ։ Բայց պէտք եղաւ իրեն նաւաստիին վրայ կռթնիլ, թէ ոչ պիտի վար ընկնէր։

«Լաւ, լաւ, ըսաւ Բէնքրօֆ. — Պարոն չափազիտին դեսպալը բերէք»։

Գեսպալը բերին։ Կրտսերնակ ճիւղերուն վրայ մամուռներ ու երկար խոտեր սիւներ էին։ Անոնց վրայ տարածեցին Կիւրոս Սմիթը, և դէպ 'ի ծովեզրը գիմեցին, Բէնքրօֆ սամիքին մէկ ծայրը, և Նսպ միւս ծայրը բռնած։

Ութ մղոն ճամբայ կար ընելու, և որովհետև արող չէին կարող երթալ, և թերևս ստէպ կանկ առնլու պէտք պիտի լինէր, հաշիւ ընելով՝ դէթ վեց ժամէն պիտի կարենային հասնիլ Կարկաւը։

Հովը միշտ բուռն էր, բայց բարեբաղդօրէն չէր անձրևեր։ Թէև պառկած էր, չափապէտը՝ իր թևին յեռած՝ ծովեզրը կ'զիտէր՝ մանաւանդ ծովուն գիմացի կողմի եզերքը։ Չէր խօսեր նա, բայց կ'նայէր, և անտարակոյս այս երկրին պատկերն իր անհարթ հողերով, անտառներով, տեսակ տեսակ բերքովը մտքին մէջ տպաւորուեցաւ։ Սակայն՝ երկու ժամ ճամբայ քալելէն ետև՝ Սմիթը յողնոթեան չզիմացաւ, և դեսպալին վրայ քնացաւ։

Ժամը հինգ ու կէսին, այս փոքրիկ խումբը պատին անկիւնը հասան, և քիչ մ'ետք, Կարկաւին առջև։

Մանրը գաղար աւին, և դեսպալին աւազին վրայ դրին։ Կիւրոս Սմիթ խորունկ կ'քնանար, ուստի չարթնցաւ։

Այն ատեն Բէնքրօֆ՝ յետին ծայր զարմանալով՝ կարող եղաւ ստուգել որ առջի օրու ան սոսկալի փոթորիկը նոյն տեղերուն կերպարանքը փոխեր էր։ Հատ տեղեր փլեր էին։ Ապառաժի խոշոր հատորներ ապագոփին վրայ կ'երևէին, և բոլոր ծովեզրն ծովային լճուերու թանձր օթոցով մը ծածկուեր էր։ Ակներև էր որ ծովը՝ կղզիին փայէն անցնելով՝ մինչև հասաքարի ահագին պատուարին ստորտը հասեր էր։

Կարկաւին մուտքին առջև՝ հողը խոր փոս բանալով՝ կոհակներուն յարձակումը կրեր էր։

Բէնքրօֆի մտքը նախազգացումով մը պաշարուեցաւ։ Շուտ մը քարափոսը վազեց։

Գրեթէ նոյն միջոցին դուրս կ'ելնէր, և անշարժ կ'մնար, իր ընկերներուն նայելով. . . :

Կրակը մարեր էր։ Զբամոյն մոխիրները պարզապէս տիղմ դարձեր էին։ Այրած լաթն՝ որ արեթի տեղ պիտի ծառայէր, անհետ եղեր էր։ Ծովը մինչև քարափոսներուն խորը թափանցելով՝ ամէն բան ստկնուլոյս ըրեր, Կարկաւին ներքին կողմն ամէն բան կարծաներ էր։



ՓԼՈՒՆ Փ.

Մերոս անդ է — Բէնքրօֆէ փոքրէրը — Շփուած փայտ — Կղզի՛ թէ ու աշխարհ — Չափաբէտին խորհուրդները — Խաղաղական ովկէանու ո՞ր կէտին վրայ — Գեղահոռնը շո՞ն — Բաբէէէ (cabiati*) որսը — Բարեբոլակ մոտի մը.

Բէնքրօֆ քանի մը խօսքով բացատրեց իրաց վիճակը՝ Գեղէնն Սերլէգին, Հարպերդին և Նսպին։ Այս դիպուածն՝ որ շատ ծանր հետևանք կրնար ունենալ — դէթ Բէնքրօֆ այսպէս կ'երևակայէր — տարբեր տարբեր ներդրում թիւն ունեցաւ պարկեշտ նաւաստիին ընկերներուն վրայ։

Նսպ՝ իր տէրը դտնելուն վրայ ուրախութեամբ լցուած, բան մը մտիկ չըրաւ, կամ լաւ ևս չուղեց հող ընել Բէնքրօֆի ըսածը։

* Խաղի տեսակ մը։

Բայց կ'երևեր թէ Հարպերդ՝ քիչ շատ նաւաստիին երկիւղն աւ կասկածը կ'տածէր :

Իսկ թղթակիցը՝ Բէնքրոֆի խօսքերուն պարզապէս պատասխանեց. «Հաւատս վկայ, Բէնքրոֆ, այդ ամենը բնաւ փոյթս չէ :

— Բայց քեզի նորէն կ'ըսեմ որ ա՛լ կրակ չունինք :

— Բա՛ :

— Եւ ոչ նորէն վառելու հնարք մը :

— Բա՛ւ է :

— Սակայն, Պ. Սբիլէդ . . . :

— Միթէ Կիւրոս աստ չէ՞, պատասխանեց թղթակիցը : Միթէ կենդանի չէ՞, մեր չափադէտը : Այն՝ անշուշտ մեզի կրակ վառելու հնարը պիտի գտնէ :

— Եւ ինչո՞վ :

— Ո՛չ ինչով » :

Ի՞նչ պիտի պատասխանէր Բէնքրոֆ : Հարկաւ պատասխան չունէր, վասն զի՝ ինքնին՝ Կիւրոս Սմիթին վրայ՝ իր ընկերներուն ունեցած վատահումեան մասնակից էր : Չափադէտն մանրաշխարհ մ'էր իրենց համար. մարդկային ամէն դիտութեան և ամէն իմացականութեան բաղկացում մ'էր : Աւելի կ'աժէր անպատ կողքի մը գտնուիլ Կիւրոսին հետ քան թէ Միացեալ-Նահանգաց ամենէն ճարտարագէտ մէկ քաղաքն առանց Կիւրոսի : Անոր հետ եղողը բանէ մը չէր զրկուեր : Անոր հետ եղողը չէր կրնար յուսահատիլ : Եթէ այս բարեսիրտ մարդոց գային ըսէին որ հրաբխային պայթում մը այս երկիրը պիտի կործանէր, թէ բոլոր կողքին Խաղաղականին խորը պիտի սուզէր, անշուշտ պիտի պատասխանէին անսասան .

«Կիւրոս աստ է, տեսէ՛ք Կիւրոսը» :

Այլ սակայն՝ նոյն միջոցին չափադէտը՝ նորէն սկարութիւն մը զգաց որ փոխադրութեան արդիւնքն էր, և հետևապէս կարելի չէր անոր հնարագիտութեան դիմել : Առ հարկի՝ ընթրիքը շատ ցամաք պիտի լինէր : Արդարև՝ տետրաններուն բոլոր միսը սպառեր էր և՛ երէի ուրիշ միս մ'եփելու հնարը չկար : Ասկից զատ՝

պահեստի կուրուկուններն ալ անհետ եղեր էին : Ուստի պէտք էր ուրիշ բան ճարել :

Նախ՝ Կիւրոս Սմիթը կեդրոնական քարափոսը փոխադրեցին : Այն տեղ՝ որեթէ չոր մնացած ծովու լճուերով խշտի մը պատրաստեցին անոր : Այնպիսի խորունկ քուն մը կոխեր էր վրան որ շուտով և անտարակոյս աւելի լաւ պիտի կազդուրէր իր ոյժը քան թէ սուտ կերակուր մը :

Գիշերը հասեր էր, և ասոր հետ՝ հովը հիւսիս-արևելեան կողմը դառնալով՝ օլը բաւական ցրտեց : Արդ՝ որովհետև՝ քարափոսներու քանի մը տեղուանքը Բէնքրոֆի հաստատած միջնորմները ծովէն կործաներ էին, հովի յորձանքներ սկսան փչել, ուրով Կարկառն անբնակելի կ'գառնար : Ուստի չափադէտը բաւական ծանր վիճակի մէջ՝ պիտի գտնուէր, եթէ իր ընկերները՝ իրենց բաճկոնակը կամ հաստ շապիկը հանելով՝ զինքը ինամօք չձածկէին :

Այն իրիկուան ընթրիքն ուրիշ բան չէր այլ միայն այն անխուսելի քարափորներն, որոցմէ մեծ քանակութեամբ ժողվեցին Հարպերդ և Նապ աւազափին վրայ : Սակայն՝ այս թուլատարներուն հետ պատանին բաւական ուտելի լճուեր միացուց, զոր բարձր ժայռերու վրայէ հաւաքեց, և այս ժայռերուն որմերը միայն մեծ մակընթացութիւններու ժամանակ կ'ընթրուէին անշուշտ : Այս մամուկներն որ՝ Զրուսի (fucacée) ցեղին կ'ստականէին, տեսակ մը սագաս (sagasse) էին, որ երբ չոր լինին, գոնդող (gélatineux) և սննդարար մասունքով հարուստ հիւթ մը կ'հայթայթեն :

Թղթակիցն ու իր ընկերները՝ բազմաթիւ քարափորներ կ'լլելէն ետև՝ այս սագասները ծծեցին, զոր բաւական համեղ գտան, և պէտք է ըսել որ ասիական ծովափերու վրայ՝ բնիկներուն կերակուրին գլխաւոր մասը կ'կազմեն :

«Ի՞նչ որ է, ըսաւ նաւաստին, ժամ է որ Պ. Կիւրոս մեզի օղնութեան հասնի» :

Սակայն ցուրտը շատ սաստկացաւ, և՛ դժբաղդարար՝ հնարը չկար սնոր դէմ՝ շնելու :

Նաւաստին՝ իրապէս նեղացած լինելով՝ ամէն կարելի միջոց ՚ի գործ դրաւ կրակ ճարելու համար : Նասին անդամ անոր ձեռնտու եղաւ : Քանի մը չոր մամուռներ դտեր էին, և՛ երկու կոպիճ՝ իրարու դարնելով՝ կայծեր արձակեց, բայց մամուռը՝ բաւական դիւրավառ չլինելուն՝ կրակ չտաւ, և ասկից զատ՝ սոյն կայծերն որ հրաչէկ կայծքարներ էին, սովորական հրահանի մէջ պողովատի կտորն ելած կայծերուն սերտութիւնը չունէին : Ուստի այս գործողութիւնը յաջող ելք չունեցաւ :

Բէնքրօֆ՝ թէև այս միջոցին վրայ ալ բնաւ վստահութիւն չունէր՝ երկու չոր փայտ իրարու հետ շփելու փորձ փորձեց՝ ինչպէս որ վայրենիները կ'ընեն : Իրաւի՝ Նասին և Բէնքրօֆի բրած շարժումն եթէ ջերմութեան փոխադրուէր, նոր դրութեանց համեմատ՝ բաւական պիտի լինէր շոգենալի մը կաթնայն եռ հանելու : Այս ջանքն ալ անարդիւն մնաց : Փայտի կտորները տաքացան միայն, և դարձեալ գործողներուն չափ չտաքցան :

Ժամ մ'աշխատելէն ետև՝ Բէնքրօֆ արիւն քրտինքի մէջ էր, և բարկութեամբ մէկդի նետեց փայտի կտորները :

« Երբոր հատապընեն ինձ որ վայրենիներն այս կերպով կրակ կ'վառեն, ըստ նա, տաք պիտի ընէ, մինչև անդամ ձմեռը : Աւելի դիւրին է իմ թեքս վառել իրարու գէմ շփելով » :

Նաւորդն իրաւունք չունէր այս հնարքն ուրանալ : Ստոյգ է որ վայրենիները փայտը կ'վառեն արագ արագ շփելով : Բայց ամէն տեսակ փայտ այս գործողութեան չյարմարիր, և ասկից զատ՝ նուիրեալ բացարձակեան համեմատ՝ հարուստ կայ, և հաւանաւոր է որ Բէնքրօֆ հարուստ չունէր :

Բէնքրօֆի սրտնեղութիւնն երկար չտևեց : Անոր նետած երկու կտոր փայտը Հարպէրդ առեր էր, որ աւելի ուժով շփելու կը ձգնէր : Կտորի նաւորդը քահ քահ մը ձգեց ակամայ, գիտելով պատանիին ճիգն որով յաջողիլ կ'ուզէր այն բանին մէջ որմէ ինքն անյաջող ելեր էր :

« Ըփէ, տղաս, շփէ, ըստ նա :
— Կ'շփեմ, պատասխանեց Հարպէրդ ծիծաղելով, բայց իմ

փափաքս է միայն ըստ կարգի տաքնալ սրտփալու տեղ, և քիչ տանէն էս ալ քեզի չափ պիտի տաքնամ, Բէնքրօֆ » :

Եւ իրօք շատ տաքցաւ : Բայց ինչ որ է, պէտք եղաւ նոյն դիւշերուան համար, կրակ ճարելու փորձը մէկդի թողուլ : Գեղէոն Սքիլէդ քսան անդամ եղաւ որ կ'կրկնէր թէ Կիւրոս Սմիթի համար շատ դիւրին բան մ'էր այդ : Եւ՝ նոյն պահուն՝ քարափոսի մը մէջ՝ աւաղին վրայ երկնցաւ : Հարպէրդ, Նասի և Բէնքրօֆ անոր օրինակին հետեցան, մինչդեռ Թօփ իր տիրոջը ոտքին տակ կ'պառկէր :

Հետեւեալ օրը՝ մարտի 28՝ երբ չափազէտն արթնցաւ՝ առաւօտեան ժամն ուժին մտնելով իր ընկերները բոլորապէս տեսաւ, որ անոր արթննալուն կ'սպասէին, և՛ առջի օրուան պէս՝ իր առաջին խօսքերն եղան .

« Կըզի թէ ոչ աշխարհ » :
Ինչպէս կ'երեւի՝ այս էր իր հաստատուն գաղափարը :
« Այն, պատասխանեց Բէնքրօֆ, բան մը չզլտենք, Պ. Սմիթ :
— Գեռ չգիտէք . . . » :

— Բայց պիտի դիտանանք : յարեց Բէնքրօֆ, երբոր այս երկրին մէջ մզի առաջնորդ լինիս :

— Կարծեմ թէ այդ փորձն ընելու վիճակին մէջ կ'գանուիմ, պատասխանեց չափազէտն, որ՝ առանց մեծ ճիգ մ'ընելու՝ ելաւ ու ոտքի վրայ կեցաւ :

— Ահա այդ բարենշան է, գոչեց նաւորդը :
— Ես մանաւանդ տկարութիւնէ կ'մեռնէի, պատասխանեց Կիւրոս Սմիթ : Բարեկամներ, քիչ մը սնունդ բերէք, և այս տկարութիւնս ալ չպիտի վայ : — Կրակ ունիք, այնպէս չէ՞ » :

Այս հարցումն անմիջական պատասխան չտացաւ : Բայց քանի մը վայրկեան ետք .

« Ահա, կրակ չունինք, ըստ Բէնքրօֆ, կամ լաւ էս ըսեմ, Պ. Կիւրոս, ալ կրակ չունինք » :

Եւ նաւաստին առջի օր անցածը պատմեց : Չափազէտը զուարճացուց իրենց միակ վառիկին պատմութիւնն ընելով, նոյնպէս

վայրենիներուն պէս կրակ ճարելու համար ըրած ապարդիւն փորձը :

«Պիտի նայինք, պատասխանեց չափազէտն, և եթէ արեթիբն նման նիւթ մը չգտնենք . . . :

— Լաւ, Ի՞նչ պիտի ընենք, հարցուց նաւորդը :

— Լաւ, վառիկ պիտի շինենք :

— Քիմիական :

— Քիմիական :

— Վ՛նայի՛ն, այնքան դժուարին չէ՞, պոռայ թղթակիցը, նաւորդին ուսին զարնելով :

Նաւորդն այնքան պարզ չէր համարեր այս գործը, բայց չաւարկեց : Ամենքը դուրս ելան : Օդն աղւոր բացուեր էր : Ծովուն հորիզոնին վրայ վառվռուն արև մը կ'եւէր և ոսկեզոյն հատիկներով ահագին պատին հատուածական խորտուբորտը կ'ծակծկէր :

Չափազէտն իր չորս դին արագ նայուածք մը նետելէն ետև՝ ժայռի մը հատորին վրայ նստաւ : Հարպէրդ քանի մ'ափ քարո՞ւփոր և սադաս մեծարեց անոր՝ ըսելով .

«Այս է ահա մեր բոլոր ունեցածը, Պ. Կիրոս :

— Շնորհակալ եմ, տղաս, պատասխանեց Կիրոս Սմիթ, այս պիտի քաւէ — դո՞նէ՛ այս առաւօտեան համարը» :

Եւ շխորժանօք կերաւ այս վախտ սնունդը, զոր քիչ մը թարմ ջրով ուտեց՝ ըստ խեցիով մը գետակէն առնելով :

Իր ընկերներն երեսը կ'նայէին անձայն : Ապա՛ աղէկ գէշ կշտաւ նալէն ետև՝ Կիրոս Սմիթ իր թևերը ծալելից ու ըսաւ .

«Այսպէս, բարեկամներս, գեւ չկրցա՞ք հասկնալ թէ բաղդը մեզ ո՞ւր նետեց, ցամաք երկրի, թէ ոչ կղզիի մը վրայ :

— Ո՛չ, չկրցանք, Պ. Կիրոս, պատասխանեց պատանին :

— Վաղը պիտի իմանանք, վրայ բերաւ չափազէտը : Առայժմ բան մը չկայ ընելու :

— Վայ, պատասխանեց Բէնքրօֆ :

— Ի՞նչ կայ ուրեմն :

— Կրակի պէտք կայ, ըսաւ նաւորդն, որ՝ ինքն ևս՝ իր հաստատ գաղափարն ունէր :

— Կրակ պիտի վառենք, Բէնքրօֆ, պատասխանեց Կիրոս Սմիթ : Երբոր երէկ զիս կ'փոխադրէիք՝ միթէ արևմտեան կողմը չտեսա՞ք լեռ մ'որ այս հողին վրայ կ'ախրէ :

— Այո՛, պատասխանեց Գեդէոն Սքիլէդ, լեռ մ'որ բաւական բարձր պիտի լինի . . . :

— Լաւ, պատասխանեց չափազէտը : Վաղն անոր կատարը պիտի եւնենք, և պիտի տեսնենք թէ այս հողը կղզի՞ մ'է թէ ոչ ընդարձակ երկիր : Աւստի կ'կրկնեմ որ առայժմ բան մը չկայ ընելու :

— Հասա՛ կրակը, ըսաւ նորէն կամակոր նաւորդը :

— Բայց կրակ պիտի վառենք, պատասխանեց Գեդէոն Սքիլէդ : Քիչ մը համբերէ՛, Բէնքրօֆ» :

Նաւորդը Գեդէոն Սքիլէդի նայեցաւ այնպիսի դէմքով որ կարծես թէ ըսել կ'ուզէր . «Եթէ դու պիտի վառես կրակ, վայ գլխուս, շուտով խորտիկը չպիտի ճաշակենք» : Բայց լռեց :

Սակայն Կիրոս պատասխան չէր տուած : Այս կրակի խնդիրն այնքան հողը չէր ընել : Ատեն մը խորհրդածութեանց մէջ համակուած մնաց . յետոյ՝ բերանը բանալով .

«Բարեկամներս, ըսաւ, թերևս մեր վիճակն ողբալի է . բայց ինչ որ է, շատ պարզ կ'իծուի ինձ : Կամ ցամաք երկրի վրայ ենք, և այն ատեն՝ քիչ շատ յոգնութիւն կրելով՝ մարդաբնակ վայր մը պիտի հասնինք, կամ կղզիի մը վրայ ենք : Այս վերջին պարագայիս մէջ՝ երկուքէն մէկը պիտի լինի . եթէ կղզին մարդաբնակ է, բնակիչներուն հետ դժուարութենէ սղատելու պիտի ջանանք, եթէ անսպաս է, այն ատեն՝ առանձին մեր գլխուն ճարը պիտի նայինք :

— Արդարև ասկից աւելի պարզ բան մը չկայ, պատասխանեց Բէնքրօֆ :

— Բայց թէ ցամաք երկիր թէ կղզի լինի, հարցուց Գեդէոն Սքիլէդ, ո՞ւր կարծես որ այս ուրականը նետած լինի մեզ, Պ. Կիրոս :

— Ձեմ՝ կարող ճշգրտապէս գիտնալ, պատասխանեց չափազէտը :

բայց աւելի հակամէտ եմ կարծելու որ Խաղաղականին մէկ հոգին վրայ կ'դանուինք: Եւ իրաւի, երբ Ռիչմոնտէն մեկնեցանք, հովե հիւսիս-արեւելքէն կը փչէր, և իր ուժընտրութիւնն իսկ ապացոյց մ'է որ իր ուղղութիւնը փոխած չպիտի լինի: Եթէ այդ ուղղութիւնը հիւսիս-արեւելքէն հարաւ-արեւմուտք շարունակեց՝ հիւսիսային Գարօլինի, չարաւային Գարօլինի, Գէորդիայի վիճակներէն անցանք, նոյնպէս Մեքսիկոյի ծովածոցէն, նոյն իսկ Մեքսիկոյի նեղ մասէն, ապա Խաղաղական Ովկիանու մէկ մասէն:

Օղապարհին անցած հեռաւորութիւնն՝ իմ կարծեքս, վեցէն մինչև եօթն հազար մղոնէն պակաս չպիտի լինի, և եթէ հովե լով կէս քառորդի չափ շեղած է՝ մեզ Մանտանայի արշիպեղապար ըրած պիտի լինի, կամ Բաժօղուի վրայ, կամ մինչև Նոր-Ջէրանայի երկիրները, եթէ կարծածէս աւելի արագութիւն ունէր: Եթէ այս վերջին ենթադրութիւնս իրացած է՝ մեր վերայարձը հայրենիք պիտի դիւրանայ: Անկլիայի կամ Մարիա միշա խօսելու մարդ պիտի դաննէք: Իսկ եթէ՝ ընդ հակառակն՝ Միքքոնէզեան արշիպեղապար մ'ամայի կղզիի մը կ'պատկանի այս եղբրը՝ կարելի է այս երկրի վրայ տիրող լեռին տարէն կարեւանք հասկնալ, և այն ատեն այս տեղ հատատուելու միջոցները կ'խորհինք, որպէս թէ ասկից բնաւ ելնելիք չունինք:

— Բնաւ, գոչեց թղթակիցը: Բնաւ կ'ըպես, սիրելիդ իմ Կիւրոս:

— Աւելի աղէկ է ամէն բանին զէշը խորհիլ իսկոյն, պատասխանեց չափադէտը, և աւելի լաւը դաննելու յանկարծակիսն ուրախութիւնը վերասպահել:

— Շատ աղէկ ըսաւ, պատասխանեց Բէնքրօֆ: Եւ պէտք է նաև յուսալ որ այս կղզին, եթէ կղզի է, նաեւրու ճամբէն շատ հեռու չդանուիր: Եթէ գտնուէր, ճշմարիտը յետին ծայր վատաբաղդ պիտի լինէ ինք:

— Նախ այս լեռն ելնելէն ետև միայն պիտի կարող լինինք մեր ընկելն որոշել, պատասխանեց Սմիթ:

— Բայց վաղը, Պարոն Սմիթ, այս վերելքին խոնջէնքն ու

նեղութիւնը տանելու չափ ոյժ պիտի ունենան, հարցոյց Հարպէրդ:

— Կ'յուսամ տանիլ, պատասխանեց չափադէտը, բայց այս պայմանաւ որ վարպետ Բէնքրօֆ և դու, աղաս, ուշիմ և ճարպիկ որսորդներու զործը տեսնէք:

— Պարոն Կիւրոս, պատասխանեց նաւորդը, քանի որ երէի վրայ կ'խօսիս, եթէ՝ ՚ի դարձիս, այնքան ապահով լինէի զայն խորովելու որքան որ բռնելու ստոյգ եմ. . . :

— Դու նայէ որ երէ որասս, Բէնքրօֆ, պատասխանեց Կիւրոս Սմիթ:

Ուստի որոշուեցաւ որ չափադէտն ու թղթակիցը Կարկառն անցընեն նոյն օրը, որպէս զի ծովեզրն ու վերին լեռնադաշտը զննելու ելնեն: Նոյն միջոցին՝ Նապ, Հարպէրդ և նաւորդն անտառը պիտի դնային, փայտի պաշար պիտի բերէին և փետրաւոր ու մազոտ ինչ կենդանի որ գտնէին բռնելու պիտի ջանային:

Ուստի ճամբայ ընկան՝ առաօտեան ժամը տասնին մօտ՝ Հարպէրդ վտաահ, Նապ զուարթ, Բէնքրօֆ մեկուսի մըմնջելով.

«Եթէ ՚ի դարձիս՝ կրակ գտնեմ առնը, անշուշտ շանթն ընկած ու զայն վառած պիտի լինի»:

Երեքնին ալ թմբէն վեր ելան՝ և գետակին յօրինած անկիւնն համնելով՝ նաւորդը կայ առաւ և իր երկու ընկերներուն ըսաւ.

«Նախ որսորդ պիտի լինինք թէ ոչ փայտահատ»:

— Որսորդ, պատասխանեց Հարպէրդ: Ահա արգէն Թօփ խոզարկելու վրայ է:

— Աւրեմն որսանք, վրայ բերաւ նաւորդը. ապա՝ այս տեղ պիտի դանք մեր փայտի պաշարը պատրաստելու համար»:

Այս ըսելով՝ Հարպէրդ, Նապ ու Բէնքրօֆ՝ նորարոյս եղևնի մը կոճղէն երեք հատ դաւաղան կտրելով՝ Թօփին ետեէն դացին որ բարձր խոտերու մէջ կ'ոստոտէր:

Այս անգամ՝ որսորդներն՝ փոխանակ գետակին եզրը քերելու՝ ուղղակի անտառին խորը մտան: Միշտ նոյն ծառերն էին, որոց մեծ մասը շոճի տեսակին կ'վերաբերին: Տեղ տեղ՝ այս շոճերն

աւելի ցանցառ , փունջ փունջ զատուած գտնուելով՝ ահադին աւարածութիւն մը կ'ընենէին , և իրենց ուռճանալովն ցոյց կ'տային որ այս երկիրը լայնութեամբ աւելի բարձր կ'երևէր քան զոր չափադէտը կ'կարծէր : Քանի մը բացատներ , որոց մէջ ժամանակէն մաշուած կոճղեր կային , չոր փայտերով ծածկուած էին , և այսպէս այրելի փայտի անսպառելի պաշար մը կ'յօրինէին : Ապա՝ երբ բացատէն անցնէին , պարակը կ'սեղմուէր և գրեթէ անթափանցելի կ'դառնար :

Այս ծառերու խիտ անտառակէն անցնել՝ առանց որ և է շաղի մը , բաւական դժուարին գործ էր : Ուստի՝ նաւորդն՝ ճամբուն վրայ նշաններ կ'ընէր՝ քանի մը ճեղքուածք բանալով՝ որ դիւրաւ պիտի նշմարուէին : Բայց կարելի է գէշ ըրեր էր գետակին ընթացքը չեղնելով , ինչպէս որ Հարպէրդ և ինք իրենց առաջին արշաւաքին ժամանակ բռներ էին , վասն զի՝ ժամ մը քալելէն ետեւ՝ բնաւ երէ մ'երևան չէր ելեր : Թօփ ցած ոստերու տակէն վազելուն՝ միայն թռչուններ երևան կ'ենէին թէ և անոնց մօտենալ կարելի չէր : Նոյն իսկ կուրուկունները բոլորովին անտեսանելի էին , և հաւանական էր որ նաւորդը պիտի ստիպուէր անտառին այն մօրուտ վայրը վերադառնալ , ուր այնքան յաջողութեամբ տետրասներն որսացեր էր :

Եւ , Բէնքրօֆ , ըսաւ Նապ փոքր ինչ երգիծական ձայնով մը , եթէ այսպէս պիտի բռնես իմ տիրոջս խոստացած երէզ , շատ կրակ պէտք չէ՛ զայն խորովելու համար :

— Համբերութիւն , Նապ , պատասխանեց նաւորդը , 'ի դարձին պակասան երէն չպիտի լինի :

- Ուրեմն՝ Պ. Սմիթին վրայ վստահութիւն չունին :
- Ունիմ :
- Բայց չես հաւտար որ նա կարող է կրակ վառել :
- Պիտի հաւտամ՝ երբոր վառարանին մէջ կրակը շողայ :
- Պիտի շողայ , քանի որ այդպէս ըսաւ իմ տէրս :
- Ա՛լ նայինք » :

Սակայն՝ արևն՝ հորիզոնէն վեր՝ իր ընթացքին բարձրագոյն կէ-

տը չէր հասած դեռ : Ուստի խուզարկուներն իրենց դործը շարունակեցին , և օգուտ մը քաղեցին երբ Հարպէրդ ծառ մը գտաւ , որու պտուղներն ուտելի էին : Այս էր դեղահատուտ շոճին , որ ընտիր նուշ մը կ'արտադրէ , և շատ յարգի է Ամերիկայի և Եւրոպայի բառեխառն երկիրները : Այս նուշերը լիովին հաօնք էին և Հարպէրդ իր երկու ընկերներուն ցցուց , որ առին ճաշակեցին :

« Աղէ , ըսաւ Բէնքրօֆ , լօտեր հացի տեղ , հում ուլականջներ մսի տեղ , և նուշեր աղանդերի տեղ՝ աւասիկ մեզի պէս մարդոց ճաշն , որոնք վառիկ մ'անգամ չունին իրենց գրպանը :

- Պէտք չէ՛ գանգատիլ , պատասխանեց Հարպէրդ :
- Պեմ՝ զանդատիր , տղաս , պատասխանեց Բէնքրօֆ , միայն կ'կրկնեմ որ միտն այս կերակուրներուն մէջ բնաւ իր երեսը չցուցըներ :

— Թօփին կարծիքն այդ չէ . . . » , գոչեց Նապ , որ դէպ 'ի թաւուտ մը վազեց , որու մէջ շունն անհետ եղեր էր հաջելով : Թօփին հաջումներուն հետ այլանդակ խանչուններ կ'լսուէին :

Նաւորդն ու Հարպէրդ Նապին ետեւէն դացեր էին : Եթէ կարանդ երէ մը , ժամը չէր վիճելու թէ ինչպէս պէտք էր խորովել՝ այլ ինչպէս պէտք էր բռնել զայն :

Որսորդներն այն ինչ թաւուտը մասն , որ Թօփը կուռի բրունուած տեսան կենդանիի մը հետ որու ականջէն կ'բաշէր : Այս չորքոսանին շուրջ երկու ոտք երկար տեսակ մը խող էր , սեռի գորշագոյն , թէ և փոքր տնջան մտթ չէր , կարծր և ոչ այնքան թանձր մաղեր ունէր , և որու մատերն՝ որ նոյն միջոցին հողին վրայ ուժով կոխած էին , և մաշկով մը կցուած կ'երևէին ,

Հարպէրդ կարծեց թէ այս կենդանին կ'բլէ մ'է , այսինքն կրծան կենդանեաց կարգէն ամենէն նշանատը մէկ օրինակը :

Սակայն կարիէն շան գէմ չէր մարտեր : Թանձր ճարպէ խաւի մը մէջ խոր մտած խոշոր աչքն ապուշ ապուշ կ'դարձնէր : Արեւիկ է առաջին անգամն էր որ մարդ կ'տեսներ :

Սակայն՝ Նապ՝ իր գաւազանը ձեռքին մէջ պիտի բռնելով՝ կրծան կենդանին պիտի հարուածէր , երբ այն՝ Թօփին ականջ-

րէն պրծելով՝ մինչդեռ շան բերանը միայն անոր ականջին մէկ կտորը մնաց, ուժգին խանչեց, Հարպէրդին վրայ վազեց, կէս մը վար տապալեց, և անտառին մէջէն աներևոյթ եղաւ:

«Ա՛խ, ապիրատ», զօչեց Բէնքրօֆ:

Երեքնին ալ շուտ մը Թօփին հետքը բռնելով վաղեր էին, և այն միջոցին որ անոր պիտի միանային՝ կենդանին՝ դարաւոր մեծ շօճինեթէ հովանաւոր ընդարձակ մօրի մը ջրերուն մէջ աներևոյթ կ'լինէր:

Նապ, Հարպէրդ և Բէնքրօֆ անշարժ կեցեր էին: Թօփ ջուրը նետուեր էր, բայց կարիէն՝ մօրին խորը թաղչած՝ չեր երևեր:

«Սպասենք, ըստ պատանին, վասն զի քիչ ատենէն ջրին երեսը պիտի ելնէ շունչ առնլու համար:

— Արդեօք պիտի չխղդուի՞, հարցուց Նապ:

— Ո՛չ, պատասխանեց Հարպէրդ, քանի որ լայնչի ոտք ունի, և զրեթէ երկակենցաղ մ'է: Բայց լաւ դիտենք»:

Թօփ միշտ լողալու վրայ էր: Բէնքրօֆ և իր երկու ընկերները դացին իւրաքանչիւրը թմբին մէկ կողմը նստելու, որպէս զի կարիէյին փախուսան արդիւնէն, մինչդեռ շունը մօրին մէջ ՚ի լայն կ'փնտուէր զայն:

Հարպէրդ չէր սխալեր: Քանի մը վայրկեան ետք՝ կենդանին ջրէն վեր ելաւ: Թօփ ոստելով անոր վրայ ընկաւ և նորէն խորասուզելու արդիւնեց: Քիչ մ'ետք՝ կարիէն՝ մինչև քարափը քաշուելով՝ Նապին գառազանէն հարուած մը կ'ընդունի և գետինը կ'փռուի:

«Կեցցէ՛, զօչեց Բէնքրօֆ, որ յօժարակամ այս յաղթութեան ձայնը կ'արձակէր: Հրավառ ածուխ մը բաւական է որ այս կրծանը մինչև սոկորները կրծուի»:

Բէնքրօֆ կարիէն շալկեց, և արևուն բարձրութենէ գատելով որ ժամն երկու պիտի լինէր՝ վերադարձի նշանը տուաւ:

Թօփին բնազդն որսորդներուն օգնեց, որ ուշիմ կենդանիին չնորհիւ, իրենց արդէն քալած ճամբան գտնելու կարող եղան: Կէս ժամ ետք՝ գետակին արմու կը հասան:

Ինչպէս որ առաջին անգամ ըրեր էր՝ Բէնքրօֆ շուտ մը լատտ մը շինեց, թէև՝ ՚ի չդոյէ կրակի՝ այս գործն իրեն անօգուտ կը թուէր, և լատտը ջրին ընթացքը բռնելով՝ դէպ ՚ի Կարկառն հասան:

Բայց՝ նաւորդն՝ հազիւ յիսուն ոտք Կարկառէն հեռու էր որ կանկ առաւ, վերստին ահագին աղաղակ մը ձգելով, և ձեռքը ծովափին անկեան կարկառելով:

«Հարպէրդ, Նապ, նայեցէք» կ'զօչէր նա:

Ժայռերուն վերևն մուխ մը կ'լինէր ոլորակի:



ՊԼՈՒՆ Ժ.

Չափաքիտին Ձի հնարւը — Ախրոս Սօթին Վարը շքադեցընող ինդերը —
Չա դէպ ՚ի լէսը — Անդարը — Հրաբխային հող — Տրաքօպան* — Արս
ոյի — Առաջին սարահարթը — Օրէան քիչերսան համար — Կոնին քա
րախը:

Քանի մը վայրկեան ետք՝ երեք որսորդները շողուն վառարանի մ'առջև կ'գտնուէին: Ախրոս Սօթի և թղթակիցն անդ էին: Բէնքրօֆ երկուքին երեսն ալ կ'նայէր, առանց բառ մ'ըսելու, կարիէն ձեռքը բռնած:

«Լաւ ուրեմն, այո՛, քաջդ իմ, զօչեց թղթակիցը: Այո կրակ է, ճշմարիտ կրակ մ'որ կատարելագէս պիտի խորովէ այս փառաւոր երէն որով իսկոյն ինչոյք մը պիտի ընենք:

— Բայց ո՞վ վառեց կրակը . . . հարցուց Բէնքրօֆ:

— Արեւը»:

* Փառեանի սեւին վերաբերող հաւ, որ Հնդկաստան ալ կ'գտնուէ:

Գեղէնն Սբիւէղի պատասխանը ճիշտ էր : Արեւն էր այս կրակը տուողն որու վրայ Բէնքրօֆ կ'զմայլէր : Նաւորդն իր աչաց հաւտալ չէր ուզեր, և այնքան ապշեր էր որ չափազիտին հարց ու փորձ ընելու չէր խորհեր :

« Աւրեմն ոսպնակերպ ապակի՞ մ'ունէիր, հարցուց Հարպէրդ Կիւրոս Սմիթին :

— Ա՛չ, տղաս, պատասխանեց Սմիթ. բայց մէկ հատ շինեցի՞ :

Եւ ոսպնակերպ ապակի տեղ ծառայող գործին ցոյց տուաւ : Պարզապէս թղթակցին և իր ժամացոյցէն հանած երկու ապակիներն էին : Զրով լեցնելէն և քիչ մը կաւով անոնց ծայրերը կցելէն ետև՝ ճշմարիտ ոսպնակերպ ապակի մը շիներ էր, որ շատ չոր մամուռի վրայ արևային ճառագայթները կեդրոնէն ետև՝ զայն վառեր էր :

Նաւորդը գործին դիտեց, և ապա առանց բառ մ'արտասանելու՝ չափազիտին նայեցաւ : Միայն այս նայուածքը շատ բաներ կ'ըսէր : Եթէ իրեն համար աստուած մը չէր Կիւրոս Սմիթ, մարդէ գեր ՚ի վեր էակ մ'էր : Ի վերջէ՝ բերանը բացաւ և դոչեց .

« Նշանակէ այս զիտը, Պարոն Սբիւէղ, նշանակէ թղթիդ մէջ :

— Արդէն նշանակեր եմ՞ պատասխանեց թղթակիցը :

Ապա՝ նապին օղնով թեմքը, նաւորդը շամփորը շտկեց և կաքիէնին փորը լաւ մը պարպուելէն ետև՝ շուտ մը սխաւ կարմրիլ՝ պարզ խոճկորի մը պէս՝ պայծառ ու շողողուն բոցին առջև :

Կարկանդակն աւելի բնակելի դարձեր էր, ոչ միայն անոր համար որ քարափոսները վառարանին կրակէն կ'տաքնային, այլ նաև անոր համար որ քարէ ու աւաղէ միջնորմները հաստատուեր էին :

Ինչպէս որ կ'երևի՝ չափազեան և իր ընկերն իրենց օրն արդիւնաւոր կերպով անցուցեր էին : Կիւրոս Սմիթ իր ոյժը գրեթէ բոլորովին գտեր և փորձեր էր վերին սարահարթին երնելով : Այս կիտէն՝ աչքը՝ որ վարժ էր բարձրութիւններն ու հեռաւորութիւնները չափելու, երկար ատեն սեւեռած մնայեր էր այս կոնին վրայ որով սարը հասնիլ կ'ուզէր հետեւեալ օրը : Լեռն՝ որ հիսսիս-

արեւմտեան կողմէն՝ շուրջ վեց մղոն հեռու կ'գտնուէր, իրեն այնպէս երևցաւ որ ծովուն երեսէն երեք հազար հինգ հարիւր տոք բարձր է : Հետեւապէս՝ անոր գաղաթը գտնուող դիտողի մը նայուածքը՝ գէթ յիսուն մղոն շրջան ունեցող հորիզոնի մը վրայ պիտի կարենար տարածուիլ : Աւրեմն հաւանական էր որ Կիւրոս Սմիթ հեշտիւ պիտի լուծէր այս խնդիրը, ցամաք երկիր թէ կղզի է . խնդիր մ'որ՝ իրաւամբ՝ իր աչքին միւս բոլոր խնդիրներէն աւելի կարևոր կ'իթուէր :

Բաւական լաւ ընթրիք մ'ըրին : Կարիէի միւր շատ պատուական գտան : Սարդասներն և գեղահանուտ շոճին նուշերը կերակուրն ամբողջացուցին, և չափազէսը կերակուրի ատեն շատ քիչ խօսեցաւ : Միւս օրուան խորհուրդները միտքը գրաւեր էին :

Բէնքրօֆ մէկ երկու անգամ քանի մը կարծիք յայտնեց թէ ինչ պարտ է ընել . բայց Սմիթ որ՝ անշուշտ կանոնապահ մարդ մ'էր, բաւական համարեց իր գլուխը ցնցելու :

« Աղաք, կ'կրկնէր նա, մեր ուր գտնուիլը պիտի հասկընանք, և ըստ այնմ՝ պիտի վարուինք » :

Կերակուրը լմնալէն ետև՝ վառարանը նորէն փայտեր նետեցին, և Կարկանդակն հիւրերը, հաւատարիմ Թօփին ալ միասին, խոր քուն մը քնացան : Այս հանգարա գիշերն անվողով և առանց դիպուածի անցաւ և հետեւեալ օրն — 29 մարտ — առոյգ ու կայտառ արթննալով՝ պատրաստուեցան այս արշաւանքն սկսելու՝ որ իրենց ճակատագիրը պիտի որոշէր :

Ամէն բան պատրաստ էր մեկնելու համար : Կարիէի մնացորդքը կ'բաւէին Կիւրոս Սմիթն ու իր ընկերները դեռ քսան չորս ժամ անուցանելու : Ասկից զատ՝ կ'յուսային ճամբան կերակուր ճարել : Որովհետև ապակիները դարձեալ չափազիտին և թղթակցին ժամացոյցներուն անուցին, Բէնքրօֆ քիչ մը լաթ վառեց որ կրնար իրրև աբեթ գործածուիլ : Իսկ այս բնիկ հրաբխային հուրերուն վրայ կայծքար պակաս չպիտի լինէր անշուշտ :

Առաւօտեան ժամը հինգ ու կէս էր՝ երբոր այս երկրադէտներն (explorateur) զաւազաններով զինուած՝ Կարկանդակն գտնուեցան :

Բէնքրօֆի խորհրդին համեմատ՝ արժան դատուեցաւ անտառին ճամբան բռնելու՝ որմէ արդէն անցեր էին, ուրիշ ճամբով վերադառնալու ազատ լինելով: Այս էր նաև լեռը հասնելու ամենէն ուղիղ շաւիղը: Ուստի հարաւային անկիւնէն դարձան և դետակին ձախ եզրը բռնեցին, որմէ հեռացան այն կիտէն ուր հարաւ-արեւմտեան կողմը կ'ձուէր: Գտան այն շաւիղն՝ որու կանաչազարդ ծառերու տակէն անցեր էին, և ժամն իննին՝ Վիւրոս Սմիթ և իր ընկերներն անտառին արեւմտեան եզրը հասան:

Հողն՝ որ մինչև ցայն վայր գրեթէ հարթ էր, նախ ճախճախուտ, ապա չոր ու աւազուտ, թեթև դարելվար մը կ'ցուցընէր՝ որ ծովեզրէն երկրին ներքին կողմը կ'երևէր: Քանի մը խիստ փախտական կենդանիներ՝ ծառերուն մէջէն նշմարուեցան: Թօփ թեթևակի կ'վանէր զանոնք, բայց իր տէրը շուտ մը կ'կոչէր շունը, վասն զի անոնց ետեւէն ընկնելու ատենը դեռ հասած չէր: Ետքէն պիտի հողային որսը: Չափազէտն իր հաստատ գաղափարը մոռցող մարդ չէր: Եթէ հաստատենք թէ երկիրը չէր դիտեր նա, ոչ իր արտաքին ձևին և ոչ իր բնական արտադրութեանց մասին, չպիտի սխալինք: Իր միակ նպատակն էր այն լեռն՝ որմէ կ'ուզէր մագլցի ելնել և շիտակ այն կողմը կ'գիտէր:

Ժամը տասնին՝ քանի մը վայրկեան գաղար առին: Երբոր անտառէն ելան՝ երկրին լեռնագրական (orographique) դիրքն իրենց աչաց երեցաւ: Լեռն երկու կոն ունէր: Առաջինը՝ շուրջ երկու հազար հինգ հարիւր ոտք բարձրէն կտրած անկանոն մյթերով բռնուած էր, որ կարծես թէ հողին վրայ փակած ահադին ճիւրանի մը ճանկերուն պէս ճիւղեր կ'արձակէին: Այս մյթերուն միջև նոյնքան նեղ ձորեր կ'բացուէին, ծառերով ծածկուած՝ որոց վերջին փունջերն մինչև առաջին կոնին հատուածին կ'հասնէին: Սակայն լեռին հիւսիս-արևելեան կողմն ընկած մասն այնքան բուսաբեր չէր երևեր, և այն տեղ բուսական խոր կ'տեսնուէին շերտեր (strata) որ լավալի հոսք (coulee) պիտի լինէին:

Առաջին կոնին վրայ երկրորդ կոն մը կար՝ որու սարը թեթև մը կըր էր և որ փոքր ինչ կ'ձուէր: Այնպէս կ'երևէր թէ բո-

լորշի փեղոյր մ'էր ականջի վրայ հակած: Մերկ (denude) հողէ յօրինուած կ'երևէր, որու շատ կողմերը կարմրագոյն ապառաձներ կ'հասանէին:

Այս երկրորդ կոնին գաղաթն էր որ պէտք էր հասնիլ, և մոյթերուն ողնայարն անդ հասնելու համար լաւագոյն շաւիղը պիտի ընծայէր:

«Արդեօք հրալեռնային հողի վրայ ենք» ըսեր էր Վիւրոս Սմիթ, և իր ընկերն անոր հետեւելով՝ քիչ քիչ մոյթի մը կոնակն ելնելու սկսան, որ՝ մանուածապատ և հետեւապէս դիւրանց դժով մը, առաջին սարահարթին կ'յանդէր:

Անշուշտ հրաբխային զօրութիւններէ շարժ եկած այս հողին վրայ մի շատ ուռոյցք (intumescence) կային: Գէս ու դէն կերէին անկայուն (erratique) քարի հատորներ, երկաթակուճի բեկորներ, չէջաքարներ, վանակատներ: Չատ զատ փունջաձև կը բարձրանային կոնաբերներ, որ նեղ կիրճերու խորը՝ քանի մը հարիւր ոտք վար՝ խիտ թաւուտներ կ'յօրինէին՝ գրեթէ անթափանց արևուն ճառագայթներուն:

Ստորին գարակներէն վեր ելնելու միջոցին՝ Հարպէրդ գիտել տուաւ այլ և այլ հետքեր որով կ'երևէր թէ եղջերային կամ այլ կենդանիներ նոյն կողմերէն նոր անցեր էին:

«Թերևս այս անասունները յօժարակամ չպիտի տան մեզի իրենց կալուածները, ըսաւ Բէնքրօֆ:

— Լաւ ուրեմն, պատասխանեց թղթակիցն որ արդէն վազր որսալու ելեր էր՝ ի Հնդկաստան և առիւծ յԱփրիկէ, պիտի ջանանք անոնց ձեռքէն պրծելու: Բայց առ այժմ, զրոյշ կենանք»:

Սակայն քիչ քիչ վեր կ'երևէին. միայն թէ ճամբան, ուղղակի անցնելու անկարելի եղած շրջաններէ ու արդելքներէ մեծնալով երկար էր: Երբեմն ալ իրենց ոտից ներքև ուղին յանկարծ կ'անհետէր, և խոր ծերպերու ծայրը գանուելով՝ կ'ստիպուէին պառոյտ ընել: Այսպէս անցանելի ուղի մը գտնելու համար նոյն տեղէն դառնալ, ժամանակ կորուսել ու սաստիկ յոգնիլ էր:

Երբ այս փոքրիկ խումբը վաղար առաւ կէսօրին՝ եղևիններու-

լայն արցակի մը ստորտը, վտակի մը մօտ՝ որ ջրվեժի պէս կը սահէր, դեռ ևս առաջին սարահարթին կէս ճամբան էին, ուստի հաւանօրէն երեկոյեան դէմ պիտի կարենային անդ հասնիլ:

Այս կէտէն՝ ծովուն հորիզոնն աւելի լայն կ'երևէր, բայց աջ կողմէն՝ մարդուս աչքն հարստ-արևելեան սուր հրուանդանէն սքողուելով, չէր կարող որոշակի հասկընալ թէ ծովեզրը ներքին ցամաքին հետ կցուած էր յանկարծական շրջումով մը: Ինչու է որ ձախակողմէն՝ տեսութեան ճառագայթը քանի մը մղոն տեղ դէպ 'ի հիւսիս կ'տարածուէր, սակայն հիւսիս-արևմտեան զին, այն կէտն ուր երկրագէտները կեցեր էին, սոյն ճառագայթը շուտ մը կ'ընդհատէր այլանդակ կերպով կտրուած մոյթի մը ողնայարէն, որ կարծես թէ կեդրոնական կոնին հզօր կամարակալը կ'յօրինէր: Հետեւապէս դեռ կարելի չէր կիրոս Սմիթին լուծելէր խնդրոյն վրայ բան մ'ըսել:

Ժամը մէկին նորէն վեր ելնելու սկսան: Պէտք եղաւ դէպ 'ի հարստ-արևմտեան կողմը խոտորիլ և բաւական թանձր անտառակներու մէջ մտնել: Այն տեղ՝ ծառերու ծածկոյնի ներքև փաստաններու ընտանիքէն զոյգ զոյգ հաւեր կ'թռչաւին: Ատոնք քոպուաններ (tragon) էին, որ իբրև զարդ ունէին իրենց վզէն կախուած մսեղ ֆանօն (fanon) մը, և իրենց աչաց ետևի կողմը տնկուած երկու նուրբ գլանաձև եղջիւրներ: Այս զոյգ զոյգ ազաղաղի մեծութեամբ թռչուններու մէջ էզը միակերպ գորշ էր, մինչդեռ արուն կարմիր փետուրներով կ'ըղար, որոց վրայ մանր սպիտակ բիծեր ցանուած էին:

Գեղէն Սբիլէզ քար մ'առնելով՝ ճարպիկութեամբ և ուժգին նետեց և այս արագօպաններէն մին սպաննեց. իսկ Բէնքրօֆ՝ բաց օդէն քաղցած լինելուն՝ անկուշտ աչօք սկսաւ այս թռչունը դիտել:

Անտառակէն ելնելէն ետև՝ ուղևորներն՝ հարիւր ոտք միջոց ունեցող խիստ ցից գառիթափէ մը վեր ելան, և բարձրագոյն դարակ մը հասան, ուր ցանցաւ էին ծառերը, և որու հողն հրաբխային կերպարան մը կ'առնուր: Այն ատեն պէտք կար դէպ 'ի

արևելք դառնալ, շեղ 'ի շեղ զնալով, այնպէս որ դարուվարներն աւելի դիւրագնաց կ'լինէին, վասն զի այն ատեն շատ ցից էին, և ամէն մէկը պարտաւոր էր կոխած տեղը լաւ դիտել:

Նսպ ու Հարպէրդ առջևէն կ'երթային, Բէնքրօֆ ետևէն, իսկ կիրոս Սմիթ և թղթակիցը մէջ տեղէն կ'բալէին: Այս բարձունքը յաճախող կենդանիներն — և ասոնց հետքը պակաս չէին — ան հարկի այն անսայթաք ոտք և դիւրաշարժ միջնոցներն ունեցող ցեղերուն պիտի պատկանէին, այս է քարայծրերուն: Մէկ քանի հատ տեսան. բայց այս անունը չտուաւ անոնց Բէնքրօֆ, վասն զի՝ պահ մը:

«Ոչխարներ» պոռաց նա:

Ամենքը կայ առեր էին հինգ վեց անասուններէ յիսուն քայլ հեռու, որոնք մեծ հասակ, ետեք ծոած ուժեղ եղջիւրներ ունէին՝ ծայրերը տափակ, թաւ դեղմ, որ շէկ երկար մետաքսի պէս մազերու ներքև ծածկուեր էին:

Ասոնք սովորական ոչխարներ չէին, այլ առ հասարակ բարեխառն գօտիներու լեռնոտ գաւառները ցրուած տեսակէն, որոց Հարպէրդ «բոնի» անունը տուաւ:

«Ջիստ ու կողիկ ունին», հարցուց նաւորդը:

— Այո՛, պատասխանեց Հարպէրդ:

— Լաւ ուրեմն, ասոնք ոչխարներ են՝ ըսաւ Բէնքրօֆ:

Այս կենդանիներն երկաթակուճի բեկորներու մէջ անշարժ կեցած՝ զարմացած աչօք կ'նայէին, որպէս թէ առաջին անգամ մարդկային երկոտանիներ կ'տեսնէին: Ապա՝ յանկարծ՝ իրենց երկիզը զրգոտելով՝ ժայռերուն վրայ ոտստստելով աներևոյթ եղան:

«Ի կրկին տեսութիւն» պոռաց անոնց Բէնքրօֆ այնպիսի ծաղրաշարժ կերպով մ'որ կիրոս Սմիթ, Գեղէն Սբիլէզ, Հարպէրդ ու Նսպ չկրցան իրենց ծիծաղը զսպել:

Հարունակեցին վերելքը: Գիւրին էր ստեպ զիտել: քանի մը զառիթափերու վրայ՝ լավայի հետքեր, խիստ անկանոն կերպով ակօսաւոր: Երբեմն փոքրիկ ծմբոտ հողեր (solifatare) կ'կարէին վեր ելնողներուն հետեւած ճամբան, և այն ատեն պէտք կ'լինէր եր-

կայնել եղըները : Տեղ տեղ՝ ծծումբը վանեայ զանդուածի ձևով թափեր էր, այն նիւթերուն մէջ որ ընդհանրապէս լաւայի հոստմներէն առաջ կ'պատահին, այսինքն անկանոն հասիկներէ քարատարը և պինդ եփած հող, ճերմիկ մոխիր որ ֆելտսպաթիկան (feldspathique) մանր անհամար բիւրեղներէ բաղադրուած է :

Երբ ստորին կոնին հատուածէն (troncature) յորինուած առաջին սարահարթին մօտեցան ուղեորները՝ վերելքին դժուարութիւնները շատ աւելի զգալի եղան : Ժամը չորսին մօտ՝ ծառերուն ծայրագոյն դիծն անցեր էին : Միայն դէս ու դէն քանի մը ծամածուռ ու լեւրի շոճիներ մնացեր էին, որ նոյն բարձրութեան նայելով՝ առկուն կեանք մ'ունենալ պէտք էին՝ ծովուն մեծ հովերուն դիմանալու համար :

Բաղդաւոր էին չափազէտն ու իր ընկերներն որ օդն աղւոր, մթնոլորտը հանգաւոր էր, վասն զի, եթէ երեք հազար ոտք բարձրութեան վրայ բուռն քամի մը փչէր՝ իրենց շրջումներուն մեծ արգելք պիտի լինէր : Երկնից յստակութիւնն 'ի զէնիթ թափանցիկ օդին մէջէն կ'երևէր : Իրենց բոլորտիքը կատարեալ հանդարտութիւն մը կ'տիրէր : Չէին տեսներ ալ արևը, որ նոյն միջոցին վերին կոնին լայն պահնակէն (écran) ծածկուեր էր, որ արևմուտքի կէս հորիզոնը կ'սքողէր, և որու ահագին ստուերը՝ մինչև ծովափը երկայնելով՝ կ'մեծնար քանի որ իր օրական ընթացքին մէջ լուսափայլ աստղը մարը կ'մտնէր : Արևելքի կողմը շողիներ որ մէդ էին քան ամպ՝ սկսեր էին երևիլ, և արևային ճառագայթներու ներքև՝ անըջային գոյներով կ'ներկուէին :

Այն ատեն ուղեորները միայն հինգ հարիւր ոտք հեռու էին իրենց հասնելու փափաքած սարահարթէն, որպէս զի այն տեղ օթեան մը հաստատեն զիշերուան համար. բայց այս հինգ հարիւր ոտքն երկու հազար ոտքէն աւելի երկարեցաւ, վասն զի պէտք եղաւ օձաձև պտոյտներ ընել : Հողը կերպով մը կ'հասնէր ոտից ներքև : Շատ անդամ՝ դարուվարներն այնպիսի բայ անկիւն մը կ'ընծայէին, որ լաւայի հոսուածքի վրայ կ'սահէին ուղեորները, երբոր փորուածին (strie) օդէն մաշուելով՝ բուռական հաստատ

կուռան մը չէին ընծայեր : Աերջապէս՝ քիչ քիչ մուլթը կ'կոխէր, և գրեթէ դիշեր էր՝ երբ Կիւրոս Սմիթ և իր ուղեկիցները՝ եօթ ժամու վերելքէ մը սաստիկ յոգնելով՝ առաջին կոնին սարահարթը հասան :

Այն ատեն որոշեցին օթեանը պատրաստել և իրենց ոյժը դարմանել, նախ ընթրիք ընելով, և ապա քնանալով : Աեռին այս երկրորդ դատիկոնը՝ ապառաժներու խարսխի մը վրայ կ'բարձրանար, որոց մէջ զիւրաւ ապաստան մը գտան : Առուելքն առատ չէր, սակայն կարելի էր կրակ վառել չոր մամուռներու և մացառներու միջոցաւ որ սարահարթին քանի մը տեղուանքը կ'ծածկէին :

Երբոր նաւորգը քարեր շարելով իր վառարանը կ'պատրաստէր, Նսպ ու Հարպերդ փայտ բերելու զացին : Հրահանը դարակին, կայծքարին կայծերը խանձն առին, և Նսպին փչելովն՝ քանի մը վայրկեանի մէջ ժայռերէն պատսպարուած խոխը բռնկեցաւ և

Այն կրակը վառելով մտադիր էին միայն զիշերուան փոքր ինչ ցորս օլը մեղմել, այլ փասեանն անով չեփեցին. Նսպ զայն միւս օրուան պահեց : Կարէի ի մնացորդով և քանի մը նոճի նուշերով ընթրիք ըրին : Գեռ ևս ժամը վեց ու կէս շկար և ամէն բան աւարտեր էր :

Այն ատեն Կիւրոս Սմիթ միտքը դրաւ՝ այն կէս մթութեան ժամանակ՝ դնելու լեռին բարձրագոյն կոնին վրայ դանուած բոլորջի լայն քարաշարքը : Քիչ մը հանդիստ առնլէն առաջ կ'ուզէր հասկնալ լէ արդեօք այս կոնին խարսխէն կրնա՞ր վեր ելնել, եթէ երբէք իր կողերն՝ շատ զու 'ի վայր լինելով՝ մինչև դաօ գալթը հպելի շախլ մը շքոյցընէին : Այս խոնիրն իր միակ հողն էր, վասն զի կարելի էր որ՝ դիտարկին ծուած կողմէն՝ այսինքն հիսիսէն՝ սարահարթն անցանելի չլինէր : Արդ՝ եթէ մէկ կողմէ՝ լեռին կատարը կարելի չլինէր հասնիլ, և եթէ միւս կողմէ՝ կոնին հիմն վեր ելնել զիւրին չլինէր, նոյն երկրին արևմտեան մասը քննելն անհնար պիտի գտնար, և հեռուապէս այս վերելքին նպատակը մասամբ 'ի դերև պիտի ելնէր :

Ուստի՝ Կիւրոս Սմիթ՝ իր խոնջէնքը մտնալով՝ թողուց որ Բէն-
քրօֆ ու Նապ պառկելու տեղ պատրաստեն, Գեղէոն Սքիլէդ
օրուան դիպուածները նշանակէ, և ինքն սկսաւ սարահարթին բո-
լորչի եզրն ընթանալ՝ դէպ ՚ի Տիւսիս դիմելովն: Հարպէրդ իրեն
ուզեկից էր:

Գիշերն աղօր ու անդորր էր, մութը դեռ ոչ այնքան թանձր:
Կիւրոս Սմիթ և պատանին իրարու մօտ կ'քալէին, առանց խօ-
սելու: Տեղ տեղ՝ սարահարթը լայն կ'բացուէր իրենց առջև և
անարդել կ'անցնէին: Տեղ տեղ ալ՝ հողակոյտներէն խափանուե-
լով՝ միայն նեղ ուղի մը կ'ննդկայացընէր, որու վրայ երկու մար-
դիկ քովէ քով չէին կարող քալել: Տեղ մը հանդիպեցաւ իսկ՝
որ քսան վայրկեան քալելէն ետե՛՛ կիւրոս Սմիթ և Հարպէրդ
պարտաւորեցան կանկ առնելու: Այս կիտէն սկսեալ՝ երկու կոնե-
րուն զառիթափն իրար կ'շօշափէին: Այլ ևս չկար թումբ մ'որ
լեռին երկու կոներն իրարմէ զատէր: Անոր շրջանն ընել զրեթէ-
եօթանասուն աստիճան հակած զառիթափերու վրայ անհնարին
բան մը կ'դառնար:

Բայց եթէ չափազան ու պատանին պարտաւորեցան բոլորչի
գողցումեան մը հետեւէն ետ կենալ, ասոր փոխարէն, կոնէն
ուղղակի վեր ելնելու հնարաւորութիւնն իրենց առջև ներկայա-
ցաւ:

Արդարե՛ իրենց առջև կ'բացուէր լեռին մէկ խորունկ փորուած-
քը: Արքին խառնարանին բացուածքը, եթէ կ'ուզե՛ս՝ պարանոցն
էր, որմէ ժայթքուն հեղուկ նիւթեր կ'ելնէին, երբոր հրաբուխը
գեռ վառ էր: Կարծրացած լալաները, քարայած փրփուրները
տեսակ մը բնական ամուրձ կ'յօրինէին, որոց աստիճանները լայն
լայն կ'երևէին և ՚ի հարկէ լեռին զագաթը հասնելու դիւրու-
թիւն պիտի տային:

Այս գիւրքը հասկընալու համար բաւական եղաւ Կիւրոս Սմի-
թին անոր վրայ աչք մը նետել, և՛ առանց վարանելու, պատա-
նիին ուղեկցութեամբ, ահադին պատառուածը մտաւ՝ մինչդեռ
խաւարը հետզհետէ կ'առնէր:

Բայց դարձեալ հաղար ոտք կար անցնելու: Միթէ խառնարա-
նին ներքին դարու վարներէն կարելի պիտի լինէր անցնիլ: Քիչ
ատենէն պիտի իմացուէր: Չափադէտը՝ որչափ ատեն որ արդելք
մը չունենար, իր ընթացքը դէպ ՚ի վեր պիտի շարունակէր: Բա-
րեբաղօրէն՝ այս դարու վարներն՝ որ խիստ երկար ու սրբուտ
էին, հրաբուխին ներքնակողմը լայն շրջաններ կ'դժէին, և վեր
ելնելու կ'նպաստէին:

Այլ նոյն իսկ հրաբուխին դալով՝ տարակոյս չկար որ բոլորու-
վին մարած էր: Իր կողերէն մութ մ'անդամ չէր ելներ. բոց
մ'անդամ իր խորունկ ծակերուն մէջ չէր երևեր. որոտում մը,
մրմունջ մը, ցնցում մը չկար այս մութ վերային մէջ՝ որ թեր-
ևս երկրադոտին մինչև խորքը կ'հասնէր: Նոյն իսկ մթնոլորտն՝
այս խառնարանին մէջ՝ բնաւ ծծմբային հոտ մը չէր արտադրեր:
Հրաբուխը զաղարած չէր միայն այլ բոլորովին մարած:

Կիւրոս Սմիթին փորձը պիտի յաջողէր: Փոքր առ փոքր՝ Հար-
պէրդ և ինք՝ ներքին միջնորձներէն վեր ելնելով՝ տեսան որ խառ-
նարանն իրենց զլեռն վերեր կ'լայննար: Երկնից այս բոլորչի
մասին շառաւիղը՝ որ կոնին եզրներով շրջապատուած էր, զգալի
կերպով մեծցաւ: Կիւրոս Սմիթ և Հարպէրդ ամէն մէկ քայլ առ-
նելու ատեն՝ կերպով մը նոր նոր աստղեր իրենց անտաթեան շա-
ռաղին մէջ կ'մտնէին: Այս հարաւային երկնից շքեղ համաստե-
ղութիւնները կ'փառլիւէին: Զէնիթը՝ յստակ լուսով կ'ցոլային
Կարիճի Անդարէսը, և ասոր մօտ՝ Չիացուլին այն β վիճան որ եր-
կրադոտին ամենէն մօտաւոր աստղը կ'կարծուի: Ապա՝ քանի խառ-
նարանը կ'բացուէր՝ Չկան Փօմալհոսը, հարաւային Եռանկիւնն
երևցան, և ՚ի վերջէ, գրեթէ աշխարհի Հակարժային բեկուր՝ այն
շողողուն Խաչը՝ որ Տիւսիսային կիսագնդին Բեկոյին աստղին
տեղը կ'ընէ:

Ժամն ութին մօտ էր, երբոր Կիւրոս Սմիթ և Հարպէրդ լե-
ռին վերնագոյն կատարը, կոնին սաքն ոտք կոխեցին:

Այն միջոցին մթութիւնը կատարեալ էր, և կարելի չէր որ
աչքն երկու միոն շառաւիղի մը տարածուի: Արդեօք ծովն այս

անձանօթ երկիրը կ'ըջապատէր, կամ այս երկիրն՝ արեւմտեան կողմէն՝ Խաղաղականին մէկ աշխարհին հետ կցուած էր: Գեռ գիւրին չէր նշմարել: Արեւմտեան դին՝ ամպային կոյտ մը՝ որ հորիզոնին վրայ բացորոշ կ'երեւէր, խաւարն աւելի թանձր կ'դործէր, և աչքը չէր կարող նշմարել թէ երկին և ջուրն նոյն բուրշէ գծին վրայ իրարու կ'խառնուէին թէ ոչ:

Բայց՝ այս հորիզոնին մէկ կիտին վրայ՝ յանկարծ անորոշ նշոյլ մ'երեւցաւ, որ ծանր ծանր կ'իջնէր, քանի ամպը դէպ 'ի զէնիթ կ'բարձրանար:

Այս է լուսնին նրբածիր մահիկը, որ արդէն անբեղոյթ լինելու մօտ էր: Բայց իր լոյսը բաւական եղաւ հորիզոնական դիծը յստակ ծրագրել, այն միջոցին ամպէն զատուած լինելով, և չափադէտը կարող եղաւ անոր դողդոջուն նկարը հեղուկ մակերեւոյթի մը վրայ ցուցած տեսնել:

Կիւրոս Սմիթ պատանիին ձեռքը բռնեց և ծանր ձայնով մը.
«Աղղի մը» ըսաւ նա, այն միջոցին որ լուսնային մահիկը ծուկն մէջ կ'մարեր:



ՔԼՈՒԽ ԺԱ.

Կանին գագաթը — Խառնարանին ներքնակողմը — Չորս դին ծովը — Ցա-
մաւ էրկիր մը արեւմուտք — Ծովեզրեայ սահմանը դէպ ուղիւ — Ծովա-
գրութեան և լեռնագրութեան — Կղզին մարդաբնակ է — Խորշերուն ,
ծոցերուն , ճլւղիներուն , գեղատներուն և այլն միտքութեանը — Լինուի
կղզին .

Կէս ժամ ետք՝ Կիւրոս Սմիթ և Հարպերդ օթեանը դարձեր էին: Չափազէտը բաւական կ'համարէր իր ընկերներուն ըսելու թէ այն երկիրն՝ ուր դիպուածը նետեր էր զերենք՝ կղզի մ'էր և

թէ հետեւեալ օրը պէտք եղածը պիտի տնօրինեն: Ապա՝ քնա-
նալու համար ամէն մեկն ըստ կարի իր պատրաստութիւնը տե-
սաւ, և այս երկաթակուճի ծակին մէջ, հանդարտ դիշերով, եր-
կու հաղար հինգ հարիւր ոտք ծովէն բարձր տեղը՝ խորունկ քուն
մը քաշեցին՝ կղզեցի:

Հետեւեալ օրը՝ մարտի 30ին՝ կարճ նախաճաշկէ մ'ետք՝ որու բոլոր նիւթը խորոված տրագօսպանն էր, չափադէտը հրաբխին զազաթն ուզեց ելնել, որպէս զի մտադիր դիտել կղզին, որու վը-
րայ ինք և իւրայինք թերեւս մինչև ցիւսհ բանտարկուած պիտի մնային, եթէ այս կղզին ցամաքէ շատ հեռու կ'գտնուէր, կամ եթէ Խաղաղական Ավերիանսը շրջող նաւերուն ճամբուն վրայ չէր գտնուէր: Այս անգամ Սմիթին ընկերներն իրեն ուղեկից եղան այս նոր խուլարկութեան ժամանակ: Անոնք ալ կ'ուզէին տեսնել այն կղզին որմէ իրենց բոլոր պիտայից հոլը պիտի խնդրէին.

Գրեթէ առատօտեան ժամը եօթը պիտի լինէր, երբոր Կիւրոս Սմիթ, Հարպերդ, Բէնքրօֆ, Գեյզեյն Սքիլզ և Նասպ իրենց օթեանէն ելան: Աչ ոք մտայոյլ չէր երեւեր իր ակամայ գտնուած վիճակին վրայ: Անտարակոյս իրենց վրայ վստահութիւն նշնէր. բայց պէտք է դիտել որ այս վստահութեան յեռակէտը մի և նոյնը չէր Կիւրոս Սմիթին և իր ընկերներուն համար: Չափազէտը վստահ էր, վասն զի կ'զգար որ կարող էր այս վայրենի բնութենէ յուսաւ մար, և ասոնք ալ բանէ մը վախ չունէին, յատկապէս անոր համար որ Կիւրոս Սմիթ իրենց հետն էր: Այս զանազանութիւնը դիւրաւ պիտի հասկըցուի: Մանաւանդ Բէնքրօֆ՝ վստահութեան կրակին դիպուածէն 'ի վեր, վայրկեան մը չպիտի յուսահատեր, եթէ մերկ ապառաժի մը վրայ գտնուած լինէր անգամ, միայն թէ չափազէտը նոյն ապառաժին վրայ իրեն հետ լինէր:

«Վա՛շ, ըսաւ նա, Ռիչմոնտէն ելանք՝ սուանց կառավարութեան հրամանին: Արդղը պիտի տանի մեզ եթէ օրին մէկը կարող չլինինք մեկնելու այս տեղէն, ուր անտարակոյս ոչ ոք մեզ պիտի բռնէ պահէ»:

Կիւրոս Սմիթ առջի իրիկուան ճամբան բռնեց : Կոնին շրջանն ըրին այս սարածարթէն որ հողաբլուրը կ'կազմէր մինչև ահագին ճեղքուածին բերանը : Օդը շքեղ էր : Արևը երկնից վրայ կելնէր և իր ճառագայթներով լեռին բոլոր արևելեան կոյսը կը ծածկէր :

Խառնարանին մտայնան : Ճիշտ նոյնն էր , ինչպէս որ չափազեւոր գիտեր էր արդէն մութին , այսինքն լայն ձաղար մ'որ երթալով կ'բացուէր սարահարթէն վեր մինչև հազար ոտք բարձր : Ճեղքուածքին ստորոտն լայն ու թանձր լավայի հոսք լեռին կողերուն վրայ կ'սողային և այսպէս ժայթքուն նիւթերով ճամբան կ'նշանակէին մինչև ստորին հովիտներն որ կղզիին հիւսիսային մասը կ'ախօսէին :

Խառնարանին ներքնակողմը՝ որու հակումն երսուն հինգէն քառսուն աստիճան չէր անցներ , վերելքին համար ոչ դժուարութիւններ և ոչ արգելք չէր ներկայացնէր : Շատ հին լավայի հետք կ'տեսնուէին , որ հաւանօրէն կոնին զազաթէն կ'հոսէին , այս կողմնակի ճեղքն անոնց նոր ճամբայ մը բանալէն առաջ :

Իսկ հրաբխային վառարանին դալով՝ որ ստորերկրեայ խառնարուն և խառնարանին մէջ հաղորդակցութիւն կ'հաստատէին , աչքով կարելի չէր անոնց խորութիւնը չափել . վասն զի մութին մէջ կ'կորսուէին : Իսկ հրաբուխին բոլորովին մարած լինիլն անտարակուսելի էր :

Ժամն ութէն առաջ՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերները խառնարանին զազաթը միացեր էին՝ կոնաձև ուռոյցքի մը վրայ որ անոր հիւսիսային եզրը կ'ուռեցնէր :

«Ծոփն , ամենուրեք ծովը՝ գոչեցին ամենքը , որպէս թէ իրենց շրթունքը չկրցան չարտարերել այս բառն որով կղզեցեք կը դառնային :

Արդարև՝ ծովը՝ իրենց բոլորաէքը իբրև ջրային ահագին սաւան մը տարածուած էր : Թերևս կոնին զազաթն ելնելով՝ Կիւրոս Սմիթ յոյս ունէր ծովեզր մը , մտաւոր կղզի մը գտնելու , զոր առջի իրիկուն մութին չէր կրցած նշմարել : Բայց մինչև հո-

ըրզոնին սահմանը բան մը չերեցաւ , այսինքն յիսուն մղոն տարածութեամբ շրջանի մը մէջ : Բոլոր այս անհունութիւնն անպատ էր , և կղզին այնպիսի բոլորակի մը կեդրոնը կ'գտնուէր որ կարծես թէ անեզր էր :

Չափազեւոր ու իր ընկերները՝ անձայն և անշարժ կեցած՝ աչքով կ'շրջին քանի մը վայրկեան՝ Ովկիանոսի բոլոր կէտերը : Իրենց աչքն այս Ովկիանոսին մինչև ծայրագոյն սահմանները խողարկեցին : Բայց Բէնքրօֆ՝ որ տեսութեան այնպիսի հրաշալի գորութիւն մ'ունէր , բան մը չտեսաւ , և ստուգիւ՝ թէ հորիզոնին վրայ երկիր մը բարձրանար , թէ նորը շուիի մ'երևոյթն անդամ ունենար , անտարակոյս նաւորդը զայն պիտի ճանչէր , վասն զի երկու ճշմարիտ հեռագէտներ էին զոր բնութիւնն անոր յօնական կամարին ներքև հաստատեր էր :

Ովկիանոսէն՝ ամենուն աչքը կղզիին վրայ դարձաւ՝ որու վրայ կ'տիբէին լիովին , և Գեդէոն Սքիլէդ առաջինն եղաւ որ այս հարցմունքն ուղղեց , այս կերպով .

«Ո՞րքան կրնայ լինիլ այս կղզիին մեծութիւնը» :

Իրաւի՝ շատ մեծ չէր երևեր այս ահագին Ովկիանոսին մէջ : Կիւրոս Սմիթ քանի մը վայրկեան մտածեց , կղզիին շրջապատն ուշադրութեամբ զննեց՝ իր գտնուած բարձրութիւնն ի համար տանլով , ապա .

«Բարեկամներս , ըսաւ նա , կարծեմ՝ թէ չեմ սխալիք եթէ ըսեմ որ կղզին հարիւր մղոն՝ եզրային տարածութիւն ունի :

— Եւ հետևապէս՝ իր մակերևոյթը . . . :

— Գժուարին է զայն ճշգրտել , պատասխանեց չափազեւոր , վասն զի շատ խորատուրբ տեղուանք ունի» :

Եթէ Կիւրոս Սմիթ իր հաշուին մէջ չէր սխալեր , կղզին՝ մօտ՝ Մալդայի կամ Զանթայի տարածութիւնը պիտի ունենար . Բայց՝ միանգամայն՝ շատ աւելի անկանոն էր , և աւելի քիչ զլուխներ , հրուանդաններ , ծայրեր , խորշեր , ծոցեր ունէր : Իր ձևն՝ որ

*Գրեթէ 45 փարօսի՝ ամէն մէկը 4 հազարամղր :

ստուգիւ շատ սարօրինակ էր, աչաց զարմանք կ'պատճառէր, և ելք Գեղեճոն Սբիլէզ' չափազիտին խորհրդին վրայ' անոր ուրուազիծը քաշեց' տեսան որ այլանդակ կենդանիի մը կ'նմանէր, տեսակ մը հրէշային մաշկոտի* մը (ptéropode) որ Խաղաղականին երեսը պատկած լինէր:

Արդարև՝ աւասիկ սոյն կղզիին ձևակերպութիւնը՝ որ պարտ է յայտնել, և որու աշխարհացոյցն անմիջապէս հանեց թղթակիցը բաւական ճշգրտութեամբ:

Ծովափին արևելեան սահմանը՝ այսինքն այն մասն ուր նաւաբեկները ցամաքն ելեր էին, լայնօրէն ասամնաձև կարուած էր և ընդարձակ ծովախորշ մը կ'պատէր՝ որու հարաւ-արևելեան կողմն սուր գլխով մը կ'վերջանար, և այդ գլուխը Բէնքրօֆ իր առաջին արշաւանքին ժամանակ չէր տեսեր՝ հրօտնդանով մը գոցուած լինելուն: Հիւսիս-արևելեան գին՝ ուրիշ երկու գլուխներ խորշ մը կ'փակէին և ասոնց մէջ նեղ ծոց մը փորուած էր, որ ահապին շանաձկան մը կիսրայ կգակին կ'նմանէր:

Հիւսիս-արևելեան կողմէ գեպ ՚ի հիւսիս-արևմուտ՝ եղջերային կենդանիի մը տափակ գանկին պէս ծովեզրը կ'բոլորնար, և կ'բարձրանար տեսակ մ'ուռոյցք ձևացընելով՝ որ կղզիին այս մասին բաւական որոշ սրահեր մը չէր ընծայեր, կղզի՝ որու կեդրոնը հրարխային լեռը բունէր էր:

Այս կիտէն՝ կղզիին ծովափնեայ սահմանը բաւական կանոնաւոր կերպով հիւսիսէն ՚ի հարաւ կ'ընթանար, իր շրջապատին երկու երրորդ մասը փորուած էր նեղ ծոցով մը, որմէ սկսեալ երկար պոչով մը կ'նկրէր, նման հսկայական կայմանի մը (caïman կամ alligatorի**) երկայն ու բարակ աւտորին (appendice caudal):

Այս պոչը բուն թերակղզի մը կ'յօրինէր, սր երսուն մղոնէն աւելի ծովուն վրայ կ'երկննար, կղզիին արդէն յիշուած հարաւ-

* Տեսակ մը թուրտար որ լուղաներ ունի իբրև շարժիչ զործի:
 ** Կոկորդիլոսի տեսակ որ ծովու վրայ խիստ արագ կ'ընթանայ և որու միսը բաւական համեղ է:

արևելեան գլխէն հաշուելով, ապա կ'բոլորնար և արտաքին լայն նաւահանդիստ մը կ'ձևացընէր, զոր այս այլանդակ կերպով կըտրուած երկրին ստորին սահմանը կ'զծէր:

Իր ամենէն փոքր լայնութեան մէջ, այսինքն Կարկառին և լայնութեամբ իրեն համապատասխանող արևելեան ծովափին վրայ տեսնուած խորշին մէջ՝ կղզին միայն տասն մղոն ունէր. բայց իր ամենէն լայն կողմը, հիւսիս-արևելեան ծնօտէն մինչև հարաւ-արևմտեան պոչին ծայրը, երսուն մղոնէն պակաս չկար:

Իսկ կղզիին ներքին կողմը դալով՝ իր ընդհանուր տեսքն այս էր. իր բոլոր հարաւային մասն անտառուտ, լեռէն մինչև կղզիին ծովեզրեայ սահմանը, խոպան էր և աւաղուտ իր հարաւային կողմ մը: Կիւրոս Սմիթ և իր ընկերները բաւական զարմացան հրաբուխին և արևելեան ծովափին վրայ լճակ մը տեսնելով, որու շուրջը դալարի ծառերով պատած էր, թէ և իրենց մտքէն այսպիսի բան մը չէր անցներ: Այս բարձրութենէն տեսնուելով՝ կարծես թէ լճակը ծովուն հետ հարթ հաւասար գծի վրայ էր. բայց պահ մը մտածելէն ետև՝ չափազէսն իր ընկերներուն բացատրեց որ այս պզտիկ ջրշեղջին բարձրութիւնը պէտք էր որ երեք հարիւր ոտք ունենար, վասն զի իրեն աւաղանի աեղ ծառայող սարահարթը միայն ծովափին աւաղանին երկարաձգութիւնն էր:

«Ուրեմն անուշ ջրի լճակ մ'է, հարցուց Բէնքրօֆ:
 — Ի հարկէ, պատասխանեց չափադէտք, վասն զի լեռնէն հասող ջրերն անշուշտ անոր մէջ կ'լծափին:
 — Գետակ մը կ'տեսնեմ որ անոր մէջ կ'լծափի, ըստ Հարսպերդ, նեղ առուակ մը ցոյց տալով, որու աղբիւրն արևմտեան մոյթերուն մէջ կ'հոսէր անշուշտ:

— Իրաւի, պատասխանեց Կիւրոս Սմիթ, և քանի որ այս առուակը լճակին ջուր կ'մատակարարէ, հաւանական է որ ծովուն կողմէ սահանք մը կայ որմէ ջրին աւելորդը կ'վայթի: Ի դարձին այդ բանը պիտի քննենք»:

Այս առուակը, որ բաւական օժուտ էր, և արդէն մեզի ծածօթ զետակը, ահա այս էր կղզիին ջրաղբական դրութիւնը, գեթ

խուզարկուներուն աչքին այսչափ կ'երևէր : Սակայն՝ կարելի էր որ, այս ծառերուն կոյտերուն ներքև՝ որով կղզիին երկու երրորդ մասն ահազին անտառ մը դարձեր էր, ուրիշ վտակներ աչ ծովը թափէին : Պէտք էր նաև այսպէս ենթադրել, այնքան արգասաւոր և հարուստ կ'երևին այս կողմերը բարեխառն գոտիներու բոյսերու փառաւոր տեսակներով : Իսկ հիւսիսային մասին դալով՝ բնաւ վաղուն ջրերու հետք մը չկար . թերևս հիւսիսային-արևելեան ճախճախուտ մասին մէջ մնայուն ջրեր կային, բայց ամենն այս էր : Մէկ կ'ստորով աւազարլուրներ, աւազներ, խիստ յայտնի երաշուութիւն մ'որ հողին մեծ մասին ճոխութեան հետ խիստ զգալի դիմապատկեր մը կ'ընծայէր :

Հրաբուխը կղզիին կեդրոնական մասը չէր բռներ : Ընդ հակառակն՝ հիւսիսային-արևմտեան գաւառին վրայ կ'կանգնէր, և կարծես թէ երկու գոտիին սահմանը կ'զօժէր : Հարաւային, հարաւարևմտեան, հարաւ-արևելեան կողմերը՝ քարամոլթերուն (concrete-fort) առաջին գոտիկոնները դէզադէզ դալարիներու ներքև աներևոյթ կ'լինէին : Ընդ հակառակն՝ հիւսիսակողմը՝ դիւրին էր հետևել անոնց բազմաձիղ գծերուն, որ մինչև աւազուտ դաշտերը կ'յանդէին : Նոյնպէս այս կողմէն էր որ հրաշնչութեան ժամանակ՝ հոսմունքը ձամբայ մը բացեր էր, և լավայի լայն քարայատակ մը մինչև այն նեղ ծնօտը կ'երկննար որ հիւսիս-արևելեան դին ծոց կ'յօրինէր :

Կիրոս Մփիթ և իրեններն այսպէս ժամ մը կեցան լեռին գագաթը : Իրենց աչաց ներքև կ'տարածուէր կղզին՝ իրրև ցցուն յատակադիծ մ'իրենն այլազան դոյներով, անտառներուն համար գալարի, աւազներուն համար դեղին, ջրերուն համար կապոյտ : Իր բոլոր ամբողջութեամբը կ'նկատէին կղզին՝ և միայն ահազին խոստերու ներքև ծածկուած այս հողը, հովանաւոր հովիտներուն ջրուղին, նեղ կիրճերուն ներքնակողմը, որ հրաբուխին օտորաբար փորուած էր, իրենց խուզարկու նայուածքէն կ'խուսէին : Ամբար ծանր խնդիր մը լուծել, որ նաւաբեկելոց ապագային վրայ մեծապէս պիտի ներդրուէր :

Կղզին մարդարնմլ էր :

Թղթակիցն էր որ այս հարցումն առաջարկեց, որուն կարծես թէ արդէն կարելի էր բացասական կերպով պատասխանել, կղզին այլ և այլ կողմերուն մանրակրկիտ քննութենէ ետք :

Եւ ոչ տեղ մը կ'երևէր մարդկային ձեռակերտ մը : Չկար տնակներու խումբ մը, մենաւոր հիւղ մը, ծովափին վրայ ձկնաբան մը : Մտիւ մը չէր քարձրանար օդին մէջ և մարդու ներկայութեանը նշմարանքը չկար : Իրաւ է, շուրջ երսուն մղոնի հեռաւորութիւն մը խուզարկուները ծայրագոյն կէտերէ կ'բաժնէր, այսինքն այն ծայրէն որ հարաւ-արևմտեան կողմը կ'տարածուէր, և դժուարին պիտի լինէր, մինչև անգամ Բենքրօֆի աչաց համար, բնակութիւն մը դանել : Նոյնպէս կարելի չէր կղզիին երեք քառորդ մասը ծածկող դալարի վարագոյրը վերցնել, և տեսնել թէ արդեօք աւան մը կ'ծածկէր թէ ոչ : Բայց՝ ընդհանրապէս՝ կղզեցիք, խաղաղականին ջրերէն ելնող այս նեղ տեղերը՝ աւելի ծովեզերքը կ'բնակէին, և ծովեզերքը բոլորովին ամալի կ'երևէր :

Մինչև որ կղզին կատարելապէս խուզարկէին, առ այժմ կարող էին ուրեմն զայն անբնակ համարել :

Բայց գոնէ գրացի կղզիներու բնիկները ժամանակաւոր երթևեկութիւն ունէին : Գժուարին էր այս հարցման պատասխանել : Յիսուն մղոնի շրջանի մը մէջ բնաւ երկիր մը չէր երևեր : Բայց թէ մայլերեան մակոյկներով, թէ պոլինէզեան նաւակներով գիւրաւ այդ յիսուն մղոնը կարելի էր կտրել : Հետևապէս ամեն բան կղզիին ղիբրէն կախումն ունէր, իր մենաւորութենէ խաղաղականին վրայ, կամ արշիպեղադոսին մօտաւորութենէ : Արդեօք Կիրոս Մփիթ պիտի յաջողէր անոր լայնութեան և երկայնութեան դիւրը վերջէն երևան հանել : Այդ դժուարին պիտի լինէր : Ուստի այս տարակուսանաց մէջ՝ անպատեհ չէր քանի մը զդուշութիւններ ընել գրացի բնիկներու կարելի արշաւանքին դէմ :

Կղզիին խուզարկութիւնն աւարտեր էր, իր ձեն որոշուեր, իր շեռները նշանակուեր, իր տարածութիւնը հաշուեր, իր ջրագրութիւնն ու տեղագրութիւնը իմացուեր էին : Թղթակիցն յատակա-

— Ինչո՞ւ համար չէ, պատասխանեց Բէնքրոֆ: Նստո՞ւ
հանդիսարը, այդ շատ կ'յարմարի: Եւ Գեղե՞ոնի ջըւ-իւր . . . :

— Ես նախադաս կը համարիմ մեր հայրենեաց անունները,
պատասխանեց թղթակիցը, որոնք Ամերիկան մեզի պիտի յիշե-
ցընեն:

— Այո՛, գլխաւոր անդերուն համար, ըսաւ այն ատեն հնարա-
միտ Ալուրոս Սմիթ, ծոցերուն և ծովերուն համար, յոժարակամ
կ'ընդունիմ: Անյարմար չլինիր, բարեկամներս, եթէ՛ օրինակի
համար, այս արևելեան լայն նաւահանգստին Միութեան անունը
տայինք, այս հարաւային մահակաձև խորշին՝ Աաշինկթնի, այս լե-
ռին օրու վըայ ենք, Ֆրանքլէնի, այս ըճակին որ մեր առջևը կը
տարածուի, Արէնդի: Այս անունները մեր հայրենիքը և զայն պա-
տուող մեծ քաղաքայիններուն անունները մեզի պիտի յիշեցընեն .
իսկ գետերուն, ծոցերուն, գլուխներուն, հրուանդաններուն հա-
մար, զոր այս լեռին բարձունքէն կ'տեսնենք, այնպիսի անուններ
ընտրենք որ իրենց յատուկ ձևակերպութիւնը ներկայացընեն: Այն
ատեն աւելի լաւ պիտի տպուորին մեր մտաց մէջ, և միան-
դամայն աւելի գործնական պիտի լինին: Աղբիւն ձևը բաւական
սարօրինակ լինելով՝ պիտի շփոթինք անշուշտ նշանակական ա-
նուններ երեակայել: Իսկ մեր չղիտցած գետերը, անտառին դա-
նազան մասերը զոր վերջէն պիտի գնենք, խորշերը զոր ետքէն
պիտի գանենք, պիտի մկրտենք քանի մեր առջևն ելնեն: Ի՞նչ
կ'ըսէք ստոր, բարեկամներս:

Չափազիտին առաջարկութիւնն իր ընկերներուն կողմէ միաձայն
ընդունուեցաւ: Աղբիւն անդ իրենց աչքին առջև բաց աշխարհա-
ցոյցի մը պէս էր, և միայն այս ելուժուտ անկիւններուն, ինչ-
պէս նաև այս բոլոր դարեանդներուն անուն մը գնել պէտք էր:
Գեղե՞ոն Սքիլէդ հետզհետէ պիտի արձանագրէր և կղզիին աշ-
խարհագրական անունակոչութիւնը վճռապէս պիտի ընդունուէր:

Նախ՝ Միութեան (Միացեալ-Նահանգաց) նաւահանգիստ, Աա-
շինկթնի նաւահանգիստ, Ֆրէնքլէնի լեռ անուանեցին երկու նա-
ւահանգիստներն ու լեռն ինչպէս որ չափազէտն անուաներ էր:

Այժմ, ըսաւ թղթակիցը, պիտի առաջարկեմ որ կղզիին հա-
րաւային-արևելեան կողմն երկնցող թերակղզիին Սէրբանդին (օ-
ձապտոյտ) անունը տանք, և Ռէրթիլս Էնտ (սողունի ծագ) այն
հրուանդանին որ կ'որ պոչի պէս կ'վերջաւորի անոր վըայ, վասն
զի իրօք սողունի պոչ մ'է:

— Ընդունուեցաւ, վըայ բերաւ չափազէտը:

— Հիմակ, ըսաւ Հարպէրդ, կղզիին այս միւս ծայրը, այս
ծոցն որ զարմանալի կերպով բաց ծնօտի մը կ'նմանի, Ռըքէնի
(շանաձուկն, shark-gulf) ծոց անուանենք:

— Լաւ դտար, գոչեց Բէնքրոֆ, և այս պատկերը լեռվին պի-
տի աւարտենք Մանդիպուլի (Mandible-cape) գլուխ անուանելով
ծնօտին երկու կողմերը:

— Բայց երկու գլուխ կայ, դիտել տուաւ թղթակիցը:

— Լաւ ուրեմն, պատասխանեց Բէնքրոֆ, հիւսիսային Ման-
դիպուլի և հարաւային Մանդիպուլի գլուխներ պիտի ունենանք:

— Նշանակեցի, պատասխանեց Գեղե՞ոն Սքիլէդ:

— Մ'մնայ անուն մը գտնել կղզիին հարաւ-արևելեան ծոցին
հրուանդանին համար, ըսաւ Բէնքրոֆ:

— Այսինքն Միութեան Աղբիւն նաւահանգստին ծայրը, պա-
տասխանեց Հարպէրդ:

— Ճիրանի գլուխ (claw-cape)՞ գոչեց շուտ մը Նսապ, որ ինքն
ևս կ'ուզէր իր բնակութեան մէկ կտորին կնքահայրը լինիլ:

Եւ իրաւի, Նսապ պատուական անուն մը գտեր էր, վասն զի
այս գլուխը լաւ կ'ներկայացներ այն այլանդակ կենդանիին Ճիրանն
զոր կ'պատկերէր այնքան զարմանալի կերպով ուրօւադրեալ այս
կղզին:

Բէնքրոֆ կ'զմայլէր որ գործերն այս ձեռն առին և երեակայու-
թիւնները փոքր ինչ բորբոքելով՝ շուտ մ'անուններ ճարեցին:

Գաղթականներուն ըմպելի ջուր մատակարարող դետին, որու
մօտ օդապարիկն ընկեր էր, Սէրսի (շնորհ) անունը տուին, առ

Նախախնամութիւն ճշմարիտ շնորհակալք մը:

Փրկութեան կղզեակ (safety-island) անունը տուին այն տեղին

ուր առաջին անգամ նաւաբեկներն ոտք կոխեր էին : Արկաունե-
րուն վերեւը՝ կրանիդէ բարձր պատուարը ստահող սարահարթին ,
ուսկից դիւրին էր աչքով բոլոր ընդարձակ նաւահանդիսար գրկել ,
Արանտ-Վիւ (մեծ տեսք) անունը տուին :

Վերջապէս Օձապտոյտ թերակղզին ծածկող բոլոր անթափ-
անցելի անտառին , Ֆար-Ուէստ (Խոր-Արեւմուտ) անունը :

Կղզիին ծանօթ և տեսանելի մասերուն անուանակոչութիւնն այս-
պէս աւարտեր էր , և վերջէն՝ քանի նոր նոր գիւտեր ընէին՝ պի-
տի ամբողջացընէին :

Իսկ կղզիին շորս ծաղերը դանելու գալով՝ չափազէսն արդէն
որոշեր էր մօտ 'ի մօտոյ՝ արևուն բարձրութեան և դրից նայե-
լով , այնպէս որ Միտ թեան նաւահանդիսան և Արանտ-Վիւին
բոլոր սարահարթն արեւելեան կողմը կ'ընկնէին : Բայց հեռեեալ
օրն՝ արևուն ելից ու մտից ճիշտ ժամն առնելով՝ և այս ելից ու
մտից մէջ անցած կէս ժամանակին ատեն իր դիրքն որոշելով՝ կը
յուսար կղզիին հիւսիսակողմը նշանակել , վասն զի հարաւային
կիսագնաին վրայ գտնուելովը՝ արևն իր բարձրութեան յետին աս-
տիճանը հասած միջոցին՝ հիւսիսակողմը կ'անցնէր , և չէ թէ հա-
րաւակողմը , ինչպէս որ իր երեւթական շարժման մէջ կարծես
թէ այսպէս կ'շարժի հիւսիսային կիսագունար գտնուած տեղերը :

Ուրեմն ամէն բան լրացած էր , և դաղթականներն ուրիշ բան
չունէին ընելու այլ միայն Ֆրէնքլինի լեռէն վար իջնել Ար-
կաունեքը վերադառնալու , երբոր Բէնքրօֆ յանկարծ գոչեց .

«Չեղի բան մ'ըսեմ , շատ անխորհուրդ մարդիկ ենք :
— Ինչու համար այդպէս կ'ըսես , հարցոյց Գեդէոն Սքրիլէզ ,
որ իր անարը գոցեր էր , և ոտք կ'ենէր մեկնելու համար :

— Հասպ մեր կղզին , ինչպէս մոռցանք զայն մկրտելու :
Հարպերդ չափադիտին անունը պիտի առաջարկէր , և բոլոր
ընկերները պիտի հաւանէին անտարակոյս , երբ Աիւրոս Ամիթ ը-
սաւ պարզապէս .

«Բարեկամներս , այս կղզին մեր մեծ քաղաքացիին անունովը
կոչենք , այն անձին որ այժմ ամերիկեան հասարակապետութեան

միութիւնը պաշտպանելու համար կ'մտքաօրի : Ուստի անուանենք
զայն Լինքօլն կղզի» :

Չափադիտին առաջարկութեան՝ ընկերներն երեք անգամ կեցցէ
պուալով խնդադին պատասխան տուին :

Եւ այն իրկուն՝ նոր դաղթականները քնանալէն առաջ՝ իրենց
հեռաւոր հայրենեաց վրայ խօսեցան . խօսեցան սոսկալի պատե-
րազմին վրայ որ զայն արիւնլուայ կ'ընէր , տարակոյս չունէին
թէ Հարաւայինք քիչ ատենէն պիտի ընկճին , և թէ Հիւսիսայ-
նոց դատը , արդարութեան դատը պիտի յաղթանակէր , Կրէնդի
շնորհիւ , Լինքօլնի շնորհիւ :

Արդ՝ այս բաները կ'անցնէին 1863 մարտի 30ին , և բնաւ
չգիտէին որ տասն վեց օր ետք՝ Վաշինթնի մէջ սոսկալի ոճիր
մը տեղի պիտի ունենար , և աւագ հինգշաբթի օր՝ Արահամ
Լինքօլն մոլեռանդի մը գնդակէն պիտի ընկնէր :



ՊԼՈՒՆ ՓՔ.

Ժամացոյցները կ'ըսուին — Բէնքրօֆ բուն է — Կառնաճեղէ մասի մը —
Գրէի - Ռոուճի (կարմիր վտակ) ընթացք — Լինքօլն կղզին Բոստօնի
Ռէնը — Կիւրանաբոսնիւնը — Լէնուայնի քառանկեր — Ագուիս
Նէրոս (kangourou) որսը — Ագուիսիէր (agoutis*) — Արէնդի ընկեր
— Վերադարձ գեղի կ'ըսուին :

Լինքօլն կղզիին դաղթականները վերջին ակնարկ մը նետեցին
իրենց բոլորտիքը . խառնարանին շրջանն ըրին իր նեղ ողնայա-
րէն , և կէս ժամ ետք՝ առաջին սարահարթն իջեր էին վերստին ,
այս է առջի օրուան օթեանը :

* Ճագարի անասկ կենդանիներ :

Բէնքրօֆ մտածեց որ նախաճաշկի ժամն է, և՛ այս առթիւ՝ Կիւրոս Սմիթին և թղթակցին ժամացոյցները լարելու ելան:

Արդէն ընթերցողը դիտէ որ Գեղէնն Սքիլէզի ժամացոյցը ծովէն անփնաս ելեր էր, վասն զի թղթակիցն ամենէն առաջ առաջին վրայ նետուեր էր՝ ալիքներէն հեռու: Պատուական շինուած գործի մը, գրպանի ճշմարիտ ժամաչափ (chronometre) մ'էր և Գեղէնն Սքիլէզ չէր մոռցեր բնաւ ամէն օր զայն խնամօք լարելու:

Իսկ չափադիտին ժամացոյցին դալով՝ առ հարկի կեցեր էր երբ որ Կիւրոս Սմիթ հողաբլուրներուն ներքև բնակեր էր:

Ուստի չափադէտը զայն լարեց, և՛ արևուն բարձրութենէ մօտ ՚ի մօտոյ հաշուելով որ առաւօտեան ժամն ինն պիտի լինէր, իր ժամացոյցը նոյն ժամուն վրայ շահեց:

Գեղէնն Սքիլէզ անոր օրինակին պիտի հեռուէր, երբոր չափադէտը՝ ձեռքէն բռնելով՝ անոր ըսաւ.

«Ո՛չ, սիրելիդ իմ Սքիլէզ, կեցիր: Ռիչմոնտի ժամը պահած ես, այնպէս չէ՛:

— Այո՛, Կիւրոս:

— Հեռուապէս՝ քու ժամացոյցդ այդ քաղքին միջօրէականին վրայ լարուած է, միջօրէական որ գրեթէ Վաշինկթօնի միջօրէականին նման է:

— Անշուշտ:

— Լա՛ւ, այդպէս պահէ: Բաւական սեպէ ճշդիւ լարելու նորէն, բայց ասելներուն մի գպիր: Այդ կրնայ մեզի ծառայել:

— Ի՛նչ օդուտ ունի՞ մտածեց նաորդը:

Կերակուրի նստան, և այնպէս լաւ կերան, որ երէին և նուշերուն պահած մասը բոլորովին սպառեցաւ: Բայց Բէնքրօֆ բնաւ փոյթ չըբաւ: Ճամբան նորէն ուտեստ կրնար ձարել: Թօփ որու կերակուրը շատ առատ չէր եղած, պիտի կարենար նոր երէ մը գանել թփերուն ներքև: Ասկէ դատ՝ նաորդը կ'մտածէր չափադիտէն խնդրել բացէ՛ ՚ի բաց որ վառօդ շինէ, նոյնպէս մէկ երկու հատ հրացան, և կ'կարծէր թէ այս մասին բնաւ դժուարութիւն մը չկար:

Սարահարթէն հեռանալու ատեն՝ Կիւրոս Սմիթ իր ընկերներուն առաջարկեց ուրիշ ճամբայ մը բռնել Կարկառը վերադառնալու համար: Կ'փափաքէր Կրէնդ լճակը տեսնել որ շքեղօրէն ծառերով շրջապատուած էր: Ուստի ամբարտակներուն մէկուն կատարը բռնեցին, որոյ մէջէն գրէլը* որ զայն կ'ճարակէր, հասանօրէն կ'ըզլէր: Գաղթականները խօսելու ատեն՝ արդէն իրենց ընտրած յատուկ անունները միայն կ'որոճածէին, և այս բանս իրենց գաղափարներուն փոխանակութիւնը շատ կ'զիւրայնէր: Հարպէրդ ու Բէնքրօֆ — մին նորատի և միւսը փոքր ինչ մանուկ — զմայլեր էին, և նաորդը թէ կ'քալէր և թէ կ'ըսէր.

«Է՛յ, Հարպէրդ, ինչպէս յաջող են գործերը: Կարելի չէ զիրար կորուսել, սղաս, վասն զի՛ թէ Կրէնդի լճակին ճամբան քալենք, թէ Մէրսի հասնինք Հեռուոր-Արեւմտից անտառներէն անցնելով, ՚ի հարկէ Մեծ-Տեսքին սարահարթը պիտի ժամանենք և հեռուապէս Միութեան նաահանդիստը»:

Որոշուեր էր որ՝ առանց խիտ խումբ մը կազմելու, գաղթականներն իրարմէ շատ չպիտի հեռանային: Անտարակոյս՝ քանի մը վտանգաւոր կենդանիներ կղզիին թանձր անտառները կ'ընտկէին, և խոհեմութիւնը կ'պահանջէր որ զոյշ մնան: Ընդհանրապէս՝ Բէնքրօֆ, Հարպէրդ և Նապ առջեւն կ'քալէին, և Թօփ ընդ առաջ կ'քալէր՝ ամէն ծակուծուկը գննելով: Թղթակիցն ու չափադէտն ընկերակցութեամբ կ'երթային, Գեղէնն միշտ պատրաստ գտնուելով որ և է պատահմունք նշանակելու. չափադէտը շատ անդամ լուակաց էր, և իր ճամբէն կ'հեռանար միայն երբեմն բան մը, երբեմն ուրիշ բան մը ժողվելու համար, հանքային կամ բուսական նիւթ, զոր՝ առանց խորհրդածութիւն մը ընելու՝ իր գրպանը կ'նետէր:

«Այսպէս ինչ կ'հաւաքէ այս մարդը, կ'մըմնջէր Բէնքրօֆ: Ընդ ունայն կ'նայիմ. չեմ տեսներ բան մ'որ արժէ ծռիլ ու առնուլ»:

* Այս անունը կ'տան ամերիկացիք անշուն ջրանցքներու:

Ժամը տասնին մօտ՝ փոքրիկ խուճըը Գրէնքլին լեռին վերջին դարակներէն վար իջաւ : Հողին վրայ միայն մացառներ ու քանի մը ծառեր կային : Արուտ (calciné) ու գեղնորակ հողի մը վրայ կ'ըջալէին, որ մէկ մղոնի չափ դաշտ մը կ'ըջինէր և անտառներուն սահմանին ետևի կողմը կ'ընկնէր : Երկաթակուճի խոշոր հատորներ, որ՝ Պիշօֆի* փորձերուն նայելով՝ պողելու համար՝ երեք հարիւր յիսուն միլիօն տարի պահանջեց՝ կ'ծածկէին դաշտը, որ տեղ տեղ շատ վեր ՚ի վայր էր : Սակայն լավայի հետք մը չկար, որ մասնաւորապէս հիւսիսային դարու վարներէն հոսեր էին :

Ուստի Ալուրոս Սմիթ կարծէր թէ առանց դիպուածի պիտի կարենար հասնիլ ջրանցքին, որ՝ իր կարծեօք՝ ծառերու տակ, դաշտին ծայրը կ'ծաւալէր անշուշտ, երբ տեսաւ որ Հարպէրդ արտործօք կ'գար, մինչդեռ Նապ և Նաւորդը ժայռերուն ետին պահուեր էին :

- «Ի՞նչ կայ, տղաս, հարցուց Գեդէոն Սքիլէդ :
- Մուխ մը, պատասխանեց Հարպէրդ : Մեզնէ հարիւր քայլ հեռու, ժայռերուն մէջէն մուխի մ'եղնել տեսանք :
- Արդեօք մարդիկ կան այն կողմը, դուքեց թղթակիցը :
- Ձրու շանանք երևելու մինչև որ հասկընանք թէ որու հետ է մեր դործը, պատասխանեց Ալուրոս Սմիթ : Աւելի բնիկներէն կ'երկնչիմ, եթէ այս կղզիին վրայ կ'գտնուին, քան թէ կ'փախաքիմ : Ո՞ր է Թօփ :

- Թօփ առջեւն կ'երթայ :
 - Եւ ի՞նչպէս, չը՛հաջեր :
 - Ո՛չ :
 - Այլանդակ քան : Սակայն դայն կոչելու փորձ մ'ընենք » :
- Քանի մը վայրկեանէն՝ չափադէտը, Գեդէոն Սքիլէդ և Հարպէրդ իրենց երկու ընկերներուն միացեր էին, և անոնց պէս՝ երկաթակուճի բեկորներուն ետևը պահուեցան :

* Երկրաբան :

Անկից՝ յայտնապէս դիտեցին մուխ մը՝ որ օդն եղնելով պտոյտներ կ'ընէր, մուխ մ'որու գեղնուկ գոյնը շատ նշանակական էր : Թօփ՝ իր տիրոջ թեթև շշեւը լսելով՝ դարձաւ, և Ալուրոս Սմիթ իր ընկերներուն նշմայր մ'ընելով՝ որ իրեն սպասեն, ժայռերուն մէջ սահեցաւ :

Գաղթականներն՝ անշարժ, անձկութեամբ կ'սպասէին այս զննութեան արդիւնքը լսելու, երբ Ալուրոսի կոչման վրայ ամենքը վազեցին : Հուտ մ'անոր, միացան և ամենէն առաջ զարմացան մթնոլորտին մէջ սարածուած անախորժ հոտին վրայ :

Այս հոտն՝ որ շատ զղալի էր, բաւական եղեր էր չափազիտին դուշակելու թէ ինչ էր այս մուխը, որ նախ իրեն անհանդստութիւն պատճառեց, և իրաւամբ :

«Այս կրակը, կամ լաւ ևս այս մուխը, ըսաւ նա, միայն բնութենէ ճարակ կ'գտնէ : Այն տեղ պարզապէս ծծմբային աղբիւր մը կայ, որով կարող պիտի լինինք մեր շնչափողը ցաւը (laryngite) դարմանել :

— Լաւ, դուքեց Բէնքրօֆ : Ի՞նչ դժբաղդութիւն որ հարբուի չունիմ » :

Այն աստե՛ն դաղթականներն մուխին ելած կողմը դիմեցին : Այն տեղ օշնային (sodique) ծծմբու աղբիւր մը տեսան, որ ժայռերէն բաւական առատութեամբ կ'հոսէր, և որու ջրերն ծծմբաջրային թթուի ծանր հոտ մը կ'բուրէին, օդին թթուածինը ծծելէն ետև :

Ալուրոս Սմիթ ձեռքն անոր մէջ թրջեց և շուրջ շատ եղոտ դտաւ : Քիչ մը խմեց և տեսաւ որ ջրին համը փոքր ինչ անուշ կեկ էր : Իսկ անոր տաքութեան վիճակին գալով, Ֆարէնհիդի իննըսուն հինգ աստիճանի հաշուեց (33° հարիւրորդ, զրօն վար) : Եւ երբ Հարպէրդ հարցուց թէ ինչ հիւան վրայ այդ աստիճանը կ'գտնէ, Ալուրոս Սմիթ պատասխանեց .

«Հատ պարզ է, տղաս, ըսաւ նա, վասն զի՝ ձեռքս այս ջրին մէջ դնելով՝ ոչ ցուրտ զգացի և ոչ տաք : Ուրեմն նոյն աստիճանն ունի, ինչպէս մարդկային մարմինը, որ դրեթէ իննըսունը հինգ աստիճան է » :

Սակայն՝ ձմեռային աղբիւրն առ այժմ՝ օդու մը չունենալուն՝ դաղթականներն անտառին թանձր սահմանը դիմեցին, որ քանի մը հարիւր մղոն հեռուէն կ'տարածուէր:

Անդ՝ ինչպէս որ գուշակեր էին, վտակն իր պայծառ ու վճիտ ջրերը կ'սահեցընէր կարմիր հողը բարձր դարափներու մէջ, և այս հողին գոյնէն կ'երևէր որ անդ երկաթի ժանդ կար: Այս գոյնին վրայ՝ վտակին անմիջապէս Կարփը-Վարակ անունը տուին:

Լայն, խորունկ և պայծառ վտակ մ'էր, լեռին ջրերէն ձևացած, որ կէս մը դետակ կէս մը հեղեղ՝ ասդին աւաղին վրայ հեղասահ հոսելով, անդին ժայռերու սարերէն զլորելով կամ ջրվեժի պէս սրահալով՝ այսպէս դէպ ՚ի լճակը կ'վազէր՝ մէկ ու կէս մղոնի լայնութեան վրայ՝ որ երսուն քառսուն ոտքի չափ կը փոփոխուէր: Գետակին ջուրն անուշ էր, որմէ պիտի ենթադրուէր որ լճակին ջրերն ալ այնպէս էին: Բարեբաղդ պսրայ գայ մ'էր այս, եթէ պէտք լինէր անոր ափանց վրայ Կարկառն երէն աւելի յարմար բնակարան մը դանել:

Իսկ ծառերն որ քանի մը հարիւր քայլ վարէն՝ վտակին ափունքը կ'հովանաւորէին, մեծ մասամբ այն տեսակին կ'պատկանէին որ Աստրալիայի կամ՝ Տասմանիայի բարեխառն դօտիին մէջ առատ են, և չէ թէ այն կոնաբեր ծառերուն՝ որ Կրանտ-Վլուին սարահատքէն քանի մը մղոն հեռու գանուող արդէն խուզարկուած կտորը կ'ձածկէին:

Տարւոյն այս ժամանակն՝ ապրիլ ամսեան սկիզբը՝ որ այս կիտայնոսին վրայ հոկտեմբեր ամիսը կ'ներկայացընէ, այսինքն աշնան սկիզբը, դեռ ծառերը տերևներէ զուրկ չէին: Մասնաորապէս կաշարիներ* (casuarinas) ու եւկալիպտոսներ** (eucalyptus) էին, որոց մէկ քանին յաջորդ աշնան շաքարեայ և Արևելքի մանանային նման մանանայ մը պիտի արտադրէին: Բացատներուն

* Կամ casuarine Հնդկաստանի և Նոր-Հոլանտայի ծառ, որու խիտ կանաչ ոտերը՝ չէ թէ տերևներէ, այլ յօդաւոր կտորներէ շինուած են:

** Մրտենի տեսակ՝ մեծ ու դեղեցիկ անտառային ծառեր ՚ի Նոր-Հոլանտայի:

(clairière) մէջ, որ՝ Նոր-Հոլանտա դուսակ (tussac) անուն ունեցող բարձր դալարիով ծածկուած էին, աստրալիական մայրիներու փունջեր կ'բարձրանային. բայց հնդիկ-ընկուզին, որ այնքան առատ է Խաղաղականի արշակեղադոսներուն մէջ, կարծես թէ չկար նոյն կղզիին մէջ, որու լայնութիւնն անշուշտ շատ ցած էր:

«Ինչ դժբաղդութիւն, ըսաւ Հարպերը, քանի՛ օգտակար ծառ է և այնքան աղւոր ընկողիներ ունի»:

Իսկ թռչունները՝ Էսկալիպտոս և կաշարիներ ծառերուն փոքր ինչ վտիտ ոստոց վրայ կ'վտայային, որոնք չէին նեղեր նոյն թռչունները հոլաթե թռելու: Սև, սպիտակ ու մոխրագոյն գարգմանակաւոր պապկաններ (kakatois), երբինադոյն թռթափներ, և ուրիշ ընտիր ու աղբիւ թռչուններ կարծես թէ հատուածակողմէ մը կ'երևէին և շարունակ ճռուողելով կ'թռթռէին:

Յանկարձ՝ անխորժ ձայներու պլանդակ համերգ մը լսելի եղաւ պուրակին մէջ տեղը: Գաղթականները հետզհետէ թռչուններու երգը, չորքոտանիներու աղաղակը լսեցին, նոյնպէս աստակ մը գոչում մը զոր բնիկ մարդու մը բերնէն ելած կրնային կարծել: Նստը և Հարպերը այս թփին կողմը վազեր էին, ամենապարզ խոհեմութեան կանոնները մոռնալով: Բարեբաղդար՝ այն տեղ ոչ ահարկու վայրի կենդանի, ոչ վտանգաւոր բնիկ երևան ելաւ, այլ միայն հինգ վեց հատ այն ծաղրասէր ու երգիչ թռչուններէն էին, և հասկըցան որ «Լեռնային փասեաններ» են: Ճարպիկութեամբ քանի մը դաւազանի հարուածներ իջեցընելով՝ այս հեռուցութեան տեսարանին վերջ տուին, և այսպէս երեկոյեան ընթրիքին համար պտտուական երէ մը ձեռք ձգեցին:

Հարպերը փառաւոր աղանիներ ալ նշմարեց, պիճադայն թևերով, ոմանք շքեղ բրուկ մը, այլք կանաչ փետուրներ ունէին. բայց անկարելի եղաւ տնոնց դաշնել, և ոչ իսկ աղուաններուն ու անձեղներուն՝ որք երամովին կ'խոսէին:

Եթէ մանր զնդիկներով լեցուած հրացան մը լինէր բոլոր այս հատերէն ողջակէզ մը պիտի ընէին. բայց որսորդները՝ իբրև նե-

տաձիգ զէնք՝ մի միայն քար գործածելու ստիպուած էին տակաւին, և սուինի (hast) տեղ զաւազան, և այս նախնական գործիները խիստ անբաւական էին :

Այս զինուոց անբաւականութիւնն աւելի ակներև եղաւ, երբ չորքոտանիններու դասակ մը ցատկի տեսքով, ոստոստելով, երսուն ոտք բարձր ցատկելով ճշմարիտ թուչուն կաթնաբերներու պէս, մացառներուն մէջէն փախան, այնքան արագ և այնքան բարձրն՝ որ պիտի կարծուէր թէ ծառէ ծառ՝ սկիւռներու պէս կ'անցնէին :

«Ազգեվազներ են, գոչեց Հարպէրդ :

— Արդեօք կ'ուտուին, պատասխանեց Բէնքրօֆ :

— Եթէ համեմով եփուին, պատասխանեց թղթակիցը, ամենէն պատուական երէին մին չափ համեղ է . . . » :

Գեղէոն Սրբիլէդ այս գրգռիչ խօսքը հազիւ աւարտած էր որ նաւորդը՝ Նապին և Հարպէրդին հետ՝ ազգեվազներուն ետևէն վազեց : Կիւրոս Սմիթ ընդ ունայն զանոնք կոչեց, բայց որսորդներն ալ ընդ ունայն այս առձիգ երէին ետևէն կ'սնդէին, որ զնդակի պէս կ'ոստոսուէր : Հինգ վայրկեան արշաւելէն ետև՝ շնչասպառ մնացեր էին, և վոհմակը խիտ անտառին մէջ աներևոյթ եղեր էր : Թօփ ալ իր մեծաորներուն պէս անյաջող դարձեր էր :

«Պարոն Կիւրոս, ըսաւ Բէնքրօֆ՝ երբոր չափապէտն ու թղթակիցն անոր միացան, Պարոն Կիւրոս, կ'տեսնես որ անհրաժեշտ է հրացաններ շինել : Արդեօք կարելի պիտի լինի այս բանս :

— Կարելի է, պատասխանեց չափազէտը, բայց առաջ աղեղներ և սլաքներ պիտի շինենք, և աներկմիտ եմ որ դուք ալ աւստրալիացի որսորդներուն պէս ճարպիկութեամբ զանոնք պիտի գործածէք :

— Սլաքներ և աղեղներ, ըսաւ Բէնքրօֆ և արհամարհոտ կերպով երեսը ծռմրկեց : Այդ զէնքը սղոց յարմար է :

— Հպարտ մի լինիր, Բէնքրօֆ բարեկամ, պատասխանեց թղթակիցը : Աղեղներն ու նետերը բաւական եղան, երկար դարեր, աչխարհս արիւնլուայ ընելու : Աստօղը դեռ երէկուան գիւտ մ'է, և պատերազմը մարդկային ցեղին չափ հին — դժբաղդարար :

— Խանջ վիայ, իրաւ է, Պարոն Սրբիլէդ, պատասխանեց նաւորդը, և ես միշտ շուտ կ'խօսիմ : Պէտք է ինձ ներել » :

Սակայն՝ Հարպէրդ՝ իր սիրական զիտութեամբ պաշարուած՝ այս է բնական պատմութեամբ, ազգեվազներու վրայ խօսքը դարձուց, ըսելով :

«Այլ սակայն, մեր գործը դժուարաբունելի կենդանեաց հետ եղաւ : Հսկաներ էին՝ մոխրագոյն երկար մուշտակներով, բայց՝ եթէ չեմ սխալիր, սև ու կարմիր ազգեվազներ ալ կան, ժայռերու ազգեվազներ, մուկ-ազգեվազներ, զոր բունէն աւելի հեշտ է : Այս կենդանիէն տասն երկու տեսակի չափ կ'զտուի . . . » :

— Հարպէրդ, պատասխանեց նաւորդը վճռօրէն, ինձի համար միայն տեսակ մը ազգեվազ կայ, «չամփօրէ անցած ազգեվազ» և ահա ճիշտ ատկից զուրկ պիտի մնանք այս իրկունս :

Ամենքը չկրցան իրենց ծիծաղը բունել վարպետ Բէնքրօֆի այս նոր դասակարգութիւնը լսելով : Բարեսիրտ նաւորդն իր ցաւը չծածկեց երդիչ փաստաններ ուտելու ստիպուած լինելուն . բայց բազդը նորէն նախատաւոր պիտի երևէր իրեն :

Արդարև՝ Թօփ՝ որ կ'զգար թէ իր շահը վտանգի մէջ էր, ամէն տեղ կ'երթար կ'որոնէր բնազդով մ'որ վայրագ ակործակէ մը գրգռեր էր : Հաւանական էր իսկ՝ որ եթէ երէի կտոր մ'իր ակուային ներքև ընկնէր, որսորդներուն բան մը չպիտի թողուր, և Թօփ նոյն միջոցին իր հաշտին համար կ'որսար, բայց Նապ անոր վրայ կ'հսկէր, և աղէկ ըբաւ :

Ժամն երեքին մօտ՝ շունը մացառներուն մէջ անհետ եղաւ, և խուլ խանչիւններէ յայտնի եղաւ քիչ ատենէն որ կենդանի մը հետ կ'մնաբաւէր :

Նապ յառաջ նետուեցաւ, և՝ արդարև՝ տեսաւ Թօփն որ անյայտօրէն չորքոտանի մը կ'լափէր և եթէ տասն վայրկեան ուշանար՝ անկարելի պիտի լինէր զայն ճանչել Թօփին ստամոքսին մէջ : Բայց՝ բարեբաղդաբար՝ շունը բոյնի մը վրայ ընկեր էր . եռապատիկ որս ըրեր էր, և ուրիշ երկու կրծողներ — մեր ակնարկած կենդանիներն այս կարգին կ'պատկանէին — հողին վրայ կ'մնային խղզուած :

Ուստի նապ առօք փառօք դարձաւ, ամէն մէկ ձեռքը կրծող մը բռնած, որ ճագարէ աւելի մեծ էին: Իրենց զեղին մորթը կանաչ բիծերով խառն էր, և իրենց ազին դեռ նոր բուսեր էր:

Միութեան քաղաքացիները չէին կրնար վարանիլ անոնց յարմար անունը տալու: Ասոնք մարասներ (maras) էին, ակոբէի տեսակ մ'որ՝ արեւադարձային երկիրներու մէջ՝ իրենց համասեռներէն քիչ մ'աւելի մեծ են, ամերիկեան ճշմարիտ նապաստակներ, որ երկար ականջներ, հնդական աղօրիքով զինուած ծնօտներ ունին, որով ակուզիներէն որոշապէս կ'տարբերին:

«Կեցցէ, գոչեց Բէնքրօֆ: Խորտիկը հասաւ: Եւ հիմակ կըրնանք տուն գառնալ»:

Պահ մ'իրենց ընթացքն ընդհատելէն ետե՛ նորէն սկսան քալել: Կարմիր-Վտակն իր վճիտ ջրերը կ'թափէր կոշտ-բնի, պանչի* (banksias) և հսկայական խէժի ծառերու կամարին ներքեւ: Փառաւոր շուշանի տեսակ (lilicée) բոյսեր մինչև քսան ոտք կ'բարձրանային: Ուրիշ ծառատունկներ՝ որ նորատի բնագիտին անծանօթ էին, դետակին վրայ կ'հակէին, որու կարկանդ այս դալարաւետ հովանոցներու տակէն կ'լսուէր:

Սակայն դետակը զգալի կերպով կ'լայնար, և Կիւրոս Սմիթ հակամէտ էր հատալու որ քիչ ասենէն անոր բերանը պիտի հասնին: Իրաւի, աղւոր ծառերու թանձր պուրակէ մ'եւնելէն ետե՛ վտակին բերանը յանկարծ երևան ելաւ:

Խուզարկուները Կրէնդ լճակին արեւմտեան եզրը հասեր էին: Նոյն տեղը կ'արժէր որ դիտէին: Այս ջրին տարածութիւնը, որ շուրջ եօթը մղոն բոլորակ և երեք հարիւր եօթսուն հինգ արտավար երես ունէր՝ այլազան ծառերու շրջանակի մը մէջ կ'զրտնուէր:

Արեւելեան գին՝ ծովուն շողուն հորիզոնը կ'երևէր՝ տեղ տեղ զեղանկարօրէն վեր բարձրացած դալարի վարագուրի մը մէջէն:

* Արդեմիան տունկերու տեսակէն, որ Կոր-Հոլանտա կ'գտնուի, կարծր տերեւերով ոտեր ունի, և խեցիով պատած պտուղներու հասկ մը ճիւղերէն կ'կախուին:

Հիւսիսակողմը՝ լճակը փոքր ինչ գոգաւոր դիծ մը կ'զծէր, որ դիմապատկեր մը կ'յօրինէր իր ստորին հրուանդանին սուր նկարին հետ: Մի շատ ջրային թռչուններ կ'յաճախէին այս փոքրիկ Օնգարիոյի փոռնքը, և ասոր համանուն ամերիկեան դետին գրեւորաւոր կղզիները՝ ներկայացուած էին երեսը ցցուող ժայռով մը որ հարաւային եզրէն քանի մը հարիւր ոտք հեռու էր: Անդ կ'ապրէին միասին բազմաթիւ ճայեր զոյղ զոյղ, քարի մը վրայ թառած, ծանրակաց, անշարժ, ձկներուն անցնիլը դիտելով, ապա՝ սրանալով՝ ջուրը կ'սուզէին սուր ճիկ մը հանելով՝ և որսը կտուցնին բռնած՝ նորէն երևան գալով: Այլուր, ափանց և կղզիկին վրայ, վայրի բադեր, հաւալուսներ կ'սիգային, նոյնպէս ջրային հաւեր, կարմրակտուցներ (bec-rouge) ֆիլեդոններ* (philédon) որ վրձինի ձեով լեզու մ'ունին, և քանի մը հատ շքեղ մարտեր (merle) որու ազին քնարի մը շնորհալի սիւնակներուն պէս կ'բացուի:

Իսկ լճակին ջրերն անուշ, յստակ և փոքր ինչ սև էին, և արովհետեւ տեղ տեղ կ'եռային կեղրոնակից պտոյտներով, որ իրենց երեսին վրայ խաչաձև զերար կ'հատանէին, յայտնի էր թէ ձկնառատ պիտի լինէին:

«Իրաւի՛ շատ աղւոր է այս լճակը, ըսաւ Գեդէոն Սրիլէդ: Իր ափանց վրայ կարելի է բնակիլ»:

— Պիտի բնակիլնք՝ պատասխանեց Կիւրոս Սմիթ:

Այն ատեն՝ զաղթականներն ամենէն կարճ ճամբան բռնելով՝ Կարկառը գառնալու մտօք, հարաակողմը՝ մինչև լճակին եզրներուն միանալովը շինուած անկիւնն իջան: Գժուարութեամբ՝ այս պուրակներուն սւ մացառներուն մէջէն ճամբայ մը բացին, զոր մարդու ձեռքը դեռ ևս չէր կարած, և այսպէս դէպ ՚ի ծովափը դիմեցին, այնպէս որ Կրանտ-Վիւին սարահարթին հիւսիսակողմը հասնին: Այս ուղղութեամբ երկու մղոն տեղ առին, ապա՝ ծառերուն վերջին շարքն անցնելէն ետե՛ սարահարթն երեցաւ, որ

* Ճեճղուկի տեսակներ՝ Մատրալա:

խիտ դաշարիով ծածկուած էր, և աւելի հետուն անհուն ծովը կ'անսնուէր :

Կարկառը գալու համար՝ մէկ մղոն տարածութեամբ սարահարթ թէն շեղակի անցնել և մինչև Մէրսիին առաջին շրջանէն յօրինուած անկիւնն իջնել պէտք էր : Բայց չափադէտը կ'փափաքէր իմանալ թէ ինչպէս և ո՞ր կողմէն կ'հոսէին լճակին աւելցուկ ջրերը, և հետևապէս իրենց խողարիութիւնը շարունակեցին դէպ ի հիւսիսակողմը մէկ ու կէս մղոնի չափ :

Իրաւի՝ հաւանական էր, որ տեղ մը աղուղայ մը պիտի լինէր, և անշուշտ ապառաժի մը ճեղքին մէջէն : Իրօք՝ լճակն ահազին առաջան (vasque) մ'էր, որ քիչ քիչ վտակին ջրէն լեցուներ էր, և անտարակոյս պէտք էր որ աւելորդ ջրերը ջրովէժէ մը ծովը թափէր : Եթէ այսպէս էր, չափադէտը կ'մտածէր որ թերևս հնարը կար այս ջրովէժէն օդուտ քաղել և անոր ոյժը՝ որ այժմ անօդուտս կ'կորսուէր, գործածել : Ուստի՝ կրէնդ լճակին եղբքէն իրենց բնթացքը շարունակեցին, սարահարթէն վեր ելնելով. բայց այս ուղղութեամբ մղոն մ'ես գնալէն ետև՝ կիրոս Սմիթ աղուղայն չկրցեր էր գտնել, թէ և անաարակոյս սեղ մը պիտի լինէր :

Այն ատեն՝ ժամը չորս ու կէս էր : Ճաշին պատրաստութիւնները կ'պահանջէին որ գաղթականներն իրենց բնակարանը դառնան : Ուստի փոքրիկ խումրը նոյն ճամբան բռնեց և Մէրսիի ձախ եզրէն կիրոս Սմիթ և իր ընկերները կարկառը վերադարձան :

Այն տեղ՝ կրակը վառեցին, և Նայ ու Բէնքրօֆ՝ որոց կը պատկանէր բնապէս խոհարարի պաշտօնը, մին իբրև խափշիկ, միւսն իբրև նաւորդ, շուտ մը ակուղին կասկարայի վրայ եփեցին, և ամենքը մեծ ախորժածօք կերան :

Ճաշն աւարտելէն ետև՝ այն միջոցին որ ամենքը քուն պիտի մտնէին, կիրոս Սմիթ՝ իր գրպանէն այլ և այլ հանքային նիւթոց մանր կտորներ հանեց և բտական համարեց ըսելու .

« Բարեկամներս, այս երկաթի հանածոյ է, այս հրաքար մ'է, այս կաւ է, այս կիր, այս ամուխ : Ահա բնութեան մեղի տուած-

ները, և այս է ընդհանուր աշխատութեան մէջ իր բաժինը — վաղը պիտի սկսի՛ մարինը » :



ԳԼՈՒԽ ԺԳ.

Թօփէն վրայ բարոտածը — Աղէղէր և Էտեր կ'լինուին — Թրժայ մը — Խեցեղէնէն հնոց — Խոհանոցի գանադան անօթ — Առաջին պարտիկէն — Կեր — Կոր — Եղէն խոր — Հարաւի Խաչը — Ասորդաշէտիան կարևոր քի — Կողմէնէն մը .

« Լաւ ուրեմն, Պ. կիրոս, ամենէն առաջ ինչ գործ պիտի սկսինք, հարցոց Բէնքրօֆ չափադիւսին՝ հետևեալ օրը :

— Սկիզբէն՝ պատասխանեց կիրոս Սմիթ :

Եւ արդարև՝ այս գաղթականները պիտի ստիպուէին գործի ձեռք զարնել սկիզբէն : Գործիք շինելու համար անգամ պիտանի գործիք չունէին, և մինչև անգամ բնութեան պայմաններուն մէջ չէին գտնուեր, որ, « Ժամանակ ունենալով, ճիղը կ'խնայե՛ » :

Ժամանակի կարօտ էին, քանի որ անմիջապէս իրենց օրապահիկը հողալու պարտաւոր էին, և՛ եթէ արդէն ստացած փորձառութեան օդուտ քաղելով՝ հնարելու բան մը չունէին, գէթ ամէն ինչ շինելու պէտք ունէին : Իրենց երկաթը, պողպատը դեռ քրեական անգործ նիւթեր էին, իրենց խեցեղէնը կաւ, իրենց ճերմակեղէնն ու հանգերձը հիւսելի նիւթոց վիճակին մէջ էին :

Այլ սակայն պէտք է ըսել որ այս գաղթականները մարդիկ էին՝ բառին զեղեցիկ ու զօրաւոր սովորներ : Սմիթ չափադէտը չէր կրնար գտնել իբրև աջակից աւելի ուշիմ ընկերներ, որ եռանդով և անձնուիրութեամբ իրեն օյնելու պատրաստ էին : Հարց ու փորձ ըրեր էր անոնց, ամէն մէկին ընդունակութիւնը պիտէր :

Գեղէն Սրիլէզ, աղանդաւոր թղթակից, ամէն բան սորված լինելով որպէս զի ամէն բանի վրայ խօսի, գլխով ու ձեռք մեծապէս պիտի օգնէր կղզիին գաղթականաց հաստատութեան: Բնաւ գործի մ'առջև չէր ընկրկեր, և եռանդազին որսորդ՝ արուեստ մը պիտի ընէր ինչ որ՝ մինչև այն ատեն՝ իրեն համար հաճոյք մ'եղած էր:

Հարպէրդ՝ ազնուախոհ պատանին, և արդէն բնական դիտութեանց քաջավարժ, հասարակաց օգտին զգալի կերպով պիտի աջակցէր:

Նապ՝ նոյն ինք կենդանի անձնու իրութիւնն էր: Ճարպիկ, մտացի, անխոնջ, ուժեղ, առողջութեամբ տոկուն, դարբնութեան փոքր ՚ի շատէ տեղեակ էր և շատ օգտակար կրնար լինիլ գաղթականութեան:

Իսկ Բէնքրօֆի գալով ամէն ծովերու վրայ նաւորդ, Պրուքլինի նաւարաններու մէջ ատաղձագործ, տէրութեան նաւերու մէջ դերձակի օղնական եղեր էր: արձակուրդի ժամանակները պարտիզլան, հողագործ և այլն, և ծովային մարդոց պէս՝ ամէն բանի ատակ՝ ամէն բան ընել պիտէր:

Ճմարիտը՝ գծուարին պիտի լինէր բաղդին դէմ մաքառելու և անկից յաղթական կանգնելու վտաճ՝ աւելի յարմար հինգ հոգի ժողովել:

«Սկիզբէն» ըսեր էր Կիւրոս Սմիթ:

Արդ՝ չափադիտին սկիզբ ըսածը՝ գործիքի մը շինութիւնն էր, որ բնական նիւթեր այլափոխելու կարող լինէր: Այս այլափոխութեանց մէջ ջերմութեան ունեցած դերն ամէն մարդ գիտէ: Արդ՝ այրելն, փայտ կամ հանքային ածուխ, անմիջապէս կըրնար օդակ: Հետեւապէս հնոց մը շինել պէտք էր անկից օդուտ քաղելու համար:

«Այս հնոցն ինչ բանի պիտի ծառայէ, հարցուց Բէնքրօֆ:

— Խեցեղէն շինելու, որմէ պէտք ունինք, պատասխանեց Կիւրոս Սմիթ:

— Եւ հնոցն ինչով պիտի ընենք:

— Աղիւսով:

— Հապա աղիւսը:

— Կաւով: Ճամբայ ելնենք, բարեկամներս: Մեր դորձատունն արտադրութեան տեղը շինենք՝ փոխադրութեանց առաջն առնելու համար: Նապ պաշար պիտի բերէ, և կերակուր եփելու համար կրակ չպիտի պակսի:

— Ո՛չ, պատասխանեց թղթակիցը. բայց՝ եթէ կերակուրը պակսի՝ որսի գործիքի պակսութենէ:

— Ա՛հ, թէ որ դանակ մը միայն ունենայինք, զոչեց նաւորդ:

— Լա՛ւ, ուրեմն, հարցուց Կիւրոս Սմիթ:

— Լա՛ւ, շուտ մը աղեղ մը և նետեր պիտի շինէի, և երէն անպակաս պիտի լինէր մեր խոհանոցը:

— Այո՛, դանակ մը, հատու սայր մը . . . ըսաւ չափազէտը, որպէս թէ իւրովի կ'իտէր:

Նոյն պահուն՝ իր նայուածքը Թօփին վրայ դարձան, որ ծովափը կ'երթնեկէր:

Յանկարծ, Կիւրոս Սմիթին նայուածքը փայլեցաւ:

«Թօփ, աստ եկուր» ըսաւ նա:

Հունն իր տիրոջ ձայնին վազեց: Նա Թօփին գլուխն իր ձեռաց մէջ առաւ, և անոր վրէն կախուած մանեակը հանելով երկու կտոր ըրաւ, ըսելով.

«Աւասիկ երկու դանակ, Բէնքրօֆ»:

Նաւորդն երկու անգամ կիցցէ պոռալով՝ պատասխանեց: Թօփին վրձակը պողովափիկ երկու նուրբ սայրերէ շինուած էր: Ուստի բաւական էր կճաքարի մը վրայ դայն սրել, այնպէս որ սայրին անկիւնը փայլէ: և ապա աւելի բարակ կճաքարի մը վրայ թելերը հանել:

Արդ՝ այս տեսակ փշրական (arénacé) ժայռ առաջափին վրայ առատօրէն կ'գտնուէր, և երկու ժամ ետք՝ գաղթականութեան բորձոյտը (outillage) երկու հասու սայրերէ կ'բաղկանար որու գիւրաւ կոթ մ'անցուցին՝ հաստատուն դաստապանի մը համար:

Այս սուաջին գործիքին գիւտն իբրև յաղթանակ բարեեցին:

Իրաւի, թանկագին յաղթանակ մը որ դէպ ժամուն կ'հասնէր :

Ապա ճամբայ ելան : Կիւրոս Սմիթին միտքը լծակին արեւմտեան կողմը դառնալ էր, այն տեղն ուր առջի օրը կառային հողը գիտներ և անկից կտոր մ'առեր էր :

Ուստի Մէրսիի դարափը բռնեցին, Կրանտ-Վիլին սարահարթէն անցան, և շատ շատ հինգ մղոն քալելէն ետև՝ Կրէնդ լճակէն երկու հարիւր քայլ հեռու բացատ մը կ'հասնէին :

Ճամբան երթալու ատեն՝ Հարպէրդ ծառ մը գտեր էր, որու ճիւղերը կ'գործածեն Ամերիկայի հնդկացիք իրենց աղեղները շինելու համար : Այս էր քրէթիօյա (crejumba) ծառը, արմաւենիներու ընտանիքէն, որ ուտելի պտուղ չըբերէ :

Երկար ու շիտակ ճիւղեր կտրեցին, տերևները հանեցին, տաշեցին՝ մէջ տեղը հաստ ու ծայրերը բարակ թողլով, և միայն աղեղին լարը յօրինելու համար պէտք էր տունկ մը գտնել : Մրտենիի (malvaeeae) ընտանիքին վերաբերող խիստ կարծր թելեր ունեցող տեսակ մը տունկ գտան, որ կրնար կենդանեաց նետարդին հետ բաղդատուիլ :

Այսպէս Բէնքրօֆ բաւական զօրաւոր աղեղներ ստացաւ, որոց միայն նետեր կ'պահուէին : Այս նետերը դիւրին էր շինել շիտակ, ճիգ ու անքոս ոստերով. բայց դիւրին չպիտի լինէր գտնել անոր ծայրը զինելու համար, երկաթին տեղը բռնող յարմար նիւթ մը : Բայց Բէնքրօֆ ըսաւ իւրովի որ ինք աշխատութեան բաժինը տալէն ետև՝ գիպուածը պիտի լրացնէր պակաս մասը :

Գաղթականներն՝ առջի օրը գտնուած հողը հասեր էին : Այս հողը կ'բաղկանար այն թրծուն (figuline) կաւէն որ աղիւս ու կղմնոքը շինելու կ'գործածուի, հետևապէս շատ յարմար կաւ մ'էր ձեռնարկելի գործողութեան համար : Այս գործը դժուարութիւն մը չունէր : Բաւական էր միայն այս թրծուն աւազով մաքրել, աղիւսը կտրել և փայտի կրակով զանսնք թրծել :

Սովորաբար՝ աղիւսներն յուլոյթ (meule) մէջ կ'կուտեն, բայց չափադէտը բաւական համարեց ձեռք շինել : Նոյն ու հետևեալ օրն այս աշխատութեամբ անցուցին : Նախ կաւը ջրով թրջեցին,

ապա յարդարիչներուն ոտքով և դաստակներով թրմելէն ետև՝ հաւասար մեծութեամբ հատուածակողմի ձևով կտրեցին : Աարժ բանւոր մը կրնայ՝ առանց մեքենայի, տասն հազար աղիւս շինել տասն երկու ժամու մէջ. բայց այս երկու օրուան աշխատութեամբ Լինքօլն կղզին հինգ բրուանները հազիւ երեք հազար հատ շինեցին, զոր իրարու մօտ շարեցին, մինչև այն վայրկենին որ կատարելապէս չորնալով՝ կարելի է թրծելու սկսիլ, այսինքն երեք չորս օրուան մէջ :

Ապրիլի 2ին էր որ Կիւրոս Սմիթ կղզին չորս ծագը որոշեց : Առջի օրը՝ Ջշիւ նշանակեր էր ժամն երբ արեւը հորիզոնին ներքև աներևոյթ եղեր էր՝ ճառագայթներուն խոտորման միտ դնելով : Նոյն առաւօտ՝ արևուն ելած ժամը նոյնչափ Ջշութեամբ նշանակեց : Այս ելումիւն մէջ՝ տասն երկու ժամ քսան չորս վայրկեան անցեր էին : Ուրեմն արևն՝ իր ելնելէն վեց ժամ՝ տասն երկու վայրկեան ետք՝ նոյն օրը պիտի անցնէր Ջշիւ միջօրեականէն, և նոյն պահուն երկնից երեսն անոր բռնելիք կողմը հիւսիսը պիտի լինէր* :

Յիշեալ ժամուն՝ Կիւրոս Սմիթ սոյն կէտը նշանակեց, և արևուն հետ իրարու վրայ դնելով երկու ծառ որ իրեն նիշի տեղ պիտի ծառայէին, այսպէս անփոփոխ միջօրեական մը գտաւ իր յաջորդ գործողութեանց համար :

Երկու օր առաջ որ աղիւսներն եփելու վրայ էին, այրելի փայտ համբարելու աշխատեցան : Բացատին բոլորտիքը ճիւղեր կտրեցին և ծառերուն տակ ընկած բոլոր փայտերը հաւաքեցին : Ջանց չըրին նաև փոքր ինչ շրջակայքն որսալու, նա մանաւանդ՝ Բէնքրօֆ այժմ տասն երկու նետ ունէր սուր ծայրերով զինուած : Թօփ այս ծայրերը ճարեր էր, ողնի մը բերելով՝ որ իբրև երէ մեծ նշանակութիւն չունէր իրաւ, բայց իր վրայի փուշերուն համար արժէքը մեծ էր : Այս փուշերը նետերուն ծայրը զըրին ամբ

* Արդարև՝ տարւոյն սոյն ժամանակը և այն լայնութեան համար, արևն առաւօտեան ժամ 5,33 վայրկենին կ'ենէր, և մարը կ'մտնէր ժամ 6,17 վայրկենին երեկոյեան :

Այս զանազան աշխատութիւնէ վերջը՝ ապրիլ Ծին չափադէտը տեսաւ որ իր ձեռքին տակ պատրաստ կիր և քանի մը հազար աղիւս ունէր :

Հետևապէս՝ ժամավաճառ չլինելով՝ թրծոց մը շինելու ձեռք դարկին , և այս թրծոցն այլ և այլ անհրաժեշտ առ տնին անօթներ թրծելու պիտի ծառայէր : Առանց մեծ դժուարութեան յաջողեցան : Հինգ օր ետք՝ այս փոան մէջ նետեցին քարածուխ , որու խաւը գտեր էր չափադէտը Կարմիր-Վտակին բերնին մօտ՝ հողին երեսը , և առաջին անգամ մուխն սկսաւ ելնել քսան ուրի չափ բարձր ծխանէ մը : Բայցատը դործանոց դարձեր էր և Բէնքըրօֆ արամազիր էր կարծելու որ այս հնուցէն արդի ճարտարութեան ամեն արտադրութիւնները պիտի ելնեն :

Սակայն առ այժմ , դաղթականներն ուրիշ բան չլինեցին այլ միայն հասարակ անօթներ՝ որ շատ յարմար էին կերակուր եփելու համար : Առաջին նիւթը ճիշտ այն կան էր , որու քիչ մը կիր ու վանաքար խառնել տուաւ Կիւրոս Սմիթ : Այս զանգուածն իրօք բուն բրտի կաւ կ'կաղմէր , որով ամաններ , թասեր շինեցին՝ յարմարակերպ կոպիւճներու վրայ ձեւելով , նոյնպէս սխալներ , ջրի մեծ սափորներ և կարասներ : Այս ամաններուն ձեւն անշահ , պակասաւոր էր , բայց սաստիկ տաք հնոցէ մ'անցնելէ ետեւ՝ Կարկառներուն խոհանոցն այնքան թանկագին անօթներ ունեցաւ , որպէս թէ այս ամաններն ընտիր ձենաքարի բաղադրութեամբ շինուած լինէին :

Պէտք է յիշատակել այս տեղ թէ Բէնքըրօֆ ուղեւոր չհասկընալ նալ նթէ այս բրտի կաւով կարելի էր ծխափող շինել , քանի մը հատ պատրաստեց որ՝ թէև կոշտ՝ շատ չքնաղ երեցան աչքին , բայց , ափսոս , ծխախոտ պակաս էր : Եւ , պէտք է ըսել , որ մեծ զրկանք մ'էր այս Բէնքըրօֆին համար :

«Բայց ինչպէս ամեն բան՝ ծխախոտն ալ պիտի դանուի» կը կրկնէր նա կատարեալ վստահութեան խանդով մը :

Այս գործերը մինչև ապրիլի 15 տեղեցին , և դիւրին է երևակայել որ այս ժամանակէն խղճահարութեամբ օդուտ քաղելու ջանք

նային : Գաղթականներն՝ բրուտ գառնալով միայն անօթներ շինեցին : Երբոր Կիւրոս Սմիթ արժան գաթի զանոնք դարբիններ ընելու , դարբին պիտի լինին : Բայց հետեւեալ օրը կիրակի , և նոյն իսկ զաակական կիրակի լինելուն՝ ամենքն որոշեցին որ այն օրը սուրբ պահեն : Այս Ամերիկացիք կրօնասէր մարդիկ էին , Սուրբ-Գրոց պատուէրներուն խղճահար հետևողներ , և այնպիսի վիճակ մ'ունէին որ իրենց առ Երարիչն ունեցած զպայումներն անշուշտ պիտի զարգացընէր :

Աւստի ապրիլի 15ին բոլորովին Կարկառները վերագարձան : Մնացորդ անօթները տարին և հնոցը մարեցաւ մինչև որ նոր նպատակի մը ծառայէ : Գառնալու ատեն՝ յաջող զիպուած մը պատահեցաւ , այսինքն նիւթ մը գառ չափադէտն որ լուցկիի տեղ կրնար բռնել : Երգէն յայտնի է որ այս սպինդային և թաւաճանման նիւթը տեսակ մը քաւաք (polyvore) սուսկէ յառաջ կ'զայ : Եթէ պէտք եղածին պէս պատրաստուի շուտով կ'բռնկի , մանաւանդ եթէ առաջուց վառօդով սրսկի կամ բորակի ջրի մէջ խաշուի : Բայց մինչև այն օրը այս քաւաքներէն , և ոչ իսկ այն հասարակ սուսկերէն (morille) չէին գտած որ անոնց տեղը դործածեն : Այն օրը՝ չափադէտը՝ տունկ մը գտնելով եղևին խոտի սեխին վերաբերող , որու տեսակներուն մէջ կ'գտնուին օշինդրը , պատրինջը (citronelle) , նուիկը , կէպէն (géril) և այլն , շատ մը արցակներ բրցուց , և նաւորդին ներկայելով ըսաւ .

«Ահա , Բէնքըրօֆ , քեզի տունկ մ'որմէ պիտի ախորժիս» :

Բէնքըրօֆ ուշի ուշով դիտեց տունկն , որ մետաքսի պէս երկար մաղերով , և տերևները բամբակի նման աղուամազով մը ծածկուած էին :

«Է՛յ , ինչ է այս , Պարոն Կիւրոս , հարցոց Բէնքըրօֆ : Տէ՛ր Աստուած , միթէ ծխախոտ է :

— Ո՛չ , պատասխանեց Կիւրոս Սմիթ , «արթէ» (artémise, եղևին խոտի տեսակ) այսինքն զիտուններուն չինական եղևին խոտ անուանածն , որ մեղի համար լուցկի պիտի լինի» :

Իբրևի , այս եղևին խոտը՝ պատշաճապէս չորնալով շատ դիւ-

քաժառ նիւթ մը դարձաւ, մանաւանդ երբ չափազէտը վերջէն բուրակաթթու անկազով (nitrate de potasse) սրսկեց, որմէ շատ խաւեր ունէր կղզին, և որ տրիշ բան չէ այլ միայն պարզ բորակ:

Այն իրկուն՝ բոլոր դաղթականներն՝ կեղրոնական սենեակը հաւաքուեցան և լաւ ճաշ մ'ըրին: Նապ ախուդիէ (ճաղար) կերակուր մը պատրաստեր էր, նոյնպէս համեմուած ապուխտ, որու հետ խառնեցին բլթակային (aracé, arôide) տեսակի տունկերու խաշած քոսեր: Այս արմատներն (rhizome) շատ համով էին, շատ անդաբար և գրեթէ նման էին Անկլիա՝ Բորդլէնսի սակա (sagou de Portland) անուամբ ծախուած նիւթին, և քիչ շատ այդ սնունդը կրնար հացի անդ բռնել, քանի որ Լինքօլն կղզւոյն դաղթականներն անկէ զուրկ էին:

Երբ ընթրիքը լմնցաւ՝ Կիւրոս Սմիթ ու իր ընկերները քնանալէն առաջ՝ աւազափն ելան քիչ մը օդ առնլու: Երեկոյեան ժամն ութն էր: Կ'երեւէր արդէն որ նոյն դիշերը փառաւոր պիտի լինէր: Լուսինն՝ որ հինգ օր առաջ լրացած էր, դեռ ևս չէր ելած, բայց հորիզոնն արդէն արծաթի պէս կ'փայլէր անուշ և տմոյն գոյներով, զոր կարելի էր լուսնային արշալոյս անուանել: Հարաւային դէնիթը՝ շրջաբեկային աստղատունները կ'փառվէին, և մանաւանդ ամենուն մէջ՝ այն Հարաւային Խաչն զոր քանի մ'օր առաջ՝ չափազէտը Ֆրանքլինի լեռին սարէն բարևեր էր:

Կիւրոս Սմիթ պահ մը դիտեց այս շքեղ համաստեղութիւնը, որու կատարն և ստորտը կ'երևին առաջին կարգի մեծութեամբ երկու աստղեր, ձախ թևին վրայ՝ երկրորդ կարգի մեծութեամբ աստղ մը, աջ թևին վրայ՝ երրորդ կարգի մեծութեամբ աստղ մ'ունի:

Այսպէս մտածելէն ետև, Կիւրոս Սմիթ հարցուց պատանիին, «Հարպէրդ, միթէ այսօր ապրիլի 15 չէ»:

— Այո՛, Պ. Կիւրոս, պատասխանեց Հարպէրդ:

— Լաւ ուրեմն, եթէ չեմ սխալիր, վաղը քանի մ'երկվայրկենի տարբերութեամբ արևը պիտի սնցնի այն միջօրեականին ուր գիշեր ու ցիբեկ կ'հաւասարին: Աստի, եթէ օլը գեղեցիկ լի-

նի, կարծեմ թէ պիտի կարենամ կղզւոյն երկայնութիւնը չափել քանի մը աստիճանի տարբերութեամբ:

— Ի՞նչպէս, առանց գործիքի, առանց վեցէակի (sextant), հարցուց Գեդէոն Սրիլէդ:

— Այո՛, պատասխանեց չափազէտը: Աստի, քանի որ երկինքը յստակ է, այս իրկուն իսկ՝ պիտի փորձ փորձեմ մեր լայնութիւնը դանել Հարաւային Խաչին բարձրութիւնը հաշուելով, այսինքն հարաւային բեկուն հորիզոնին վերեր: Բարեկամներ, շատ լաւ կ'հասկընաք որ բնակութեան համար ծանր գործեր սկսելէն առաջ, բաւական չէ դիտնալ որ այս հողը կղզի մ'է, պէտք է նաև դիտնալ թէ որչափ հեռու է կամ Ամերիկայի երկրէն, կամ Աւստրալիայէն, կամ Խաղաղականին գլխաւոր արշիպելագոսներէն:

— Իրաւ է, պատասխանեց թղթակիցը, փոխանակ տուն մը շինելու, կարելի է մեզի առելի շահաւոր կ'լինի նաակ մը շինել, եթէ դիպուածով մարդաբնակ եղերքէ մը հարիւր մ'ընի չափ հեռու կ'դտնուինք:

— Ահա այդ է պատճառը, վրայ բերաւ Կիւրոս Սմիթ, որ այս իրկուն պիտի փորձեմ Լինքօլն կղզւոյն լայնութիւնը հաշուել:

Եթէ չափազէտը վեցիակի մ'ուննար, այս է գործի մ'որով կարելի է ճշդութեամբ չափել աստղանկրուն անկիւնաւոր հեռաւորութիւնը ցոլացմամբ, այս գործողութիւնը շատ հեշտ պիտի լինէր: Այն իրկուն՝ բեկուն բարձրութեամբ, հեռեեալ օրը՝ արևուն միջօրեականը մտնելուն՝ կղզւոյն դիրքը պիտի կրնար ճշդել: Բայց գործիքը չունէր, պէտք էր անոր անդ ուրիշ բան մը ձարել:

Աստի Կիւրոս Սմիթ Կարկառները մտաւ: Կրակաբանին լուսով երկու հատ տափակ կանոն տաշեց և իրարու կցեց իրենց մէկ ծայրէն, այնպէս որ կարկին մը յօրինեց, որու թևերը կրնային բացուիլ ու մօտենալ: Յօդակապը աբասիայի պինդ փուշով մը բռնուած էր, զոր դիւրին էր փայտափն չոր փայտէն ձարել:

Այս գործիքն աւարտելէն ետև՝ չափազէտը ծովափը դարձաւ, բայց որովհետև բեկուն բարձրութիւնը յստակ հորիզոնի մը

վրայէն չափել պէտք էր, այսինքն ծովու հորիզոնի մը վրայ, և որովհետև Ճիրանի հրուանդանը հարաւային հորիզոնը կ'ծածկէր իր աչքին, հարկ սեպեց ուրիշ աւելի յարմար դիրք մը փնտռել: Անշուշտ լաւագոյն դիրքը հարաւային կողման ուղղակի դիմացը դառնաւ եղբրքը պէտք էր լինել, բայց այն ատեն չափադէտը պիտի ստիպուէր Մէրսիի գետէն անցնիլ, որ նոյն միջոցին խորունկ էր, և հետեւապէս զժուարութիւն մը:

Ուստի՝ Կիւրոս Սմիթ որոշեց Մեծ-Տեսքին սարահարթին վերայէն երթալ դիտել, ծովուն հարթութենէ վեր իր ունեցած բարձրութիւնը ետքէն չափելու մտադրելով — բարձրութիւն զոր հետեւեալ օրը չափելու մտք ունէր տարրական երկրաչափութեան պարզ եղանակով մը:

Ուստի գաղթականները սարահարթը փոխադրուեցան, Մէրսիի գետին ձախ եղբրքէն վեր ելնելով, և զայն այն ծայրը կեցան որ հիւսիս-արեւմտեան և հարաւ-արեւելեան կողմերը կ'նայէր, այսինքն գետակն անկանոնութեամբ ժայռերով կտրող զծին վրայ:

Սարահարթին այս մասն աջ եզրին բարձանց վրայ կ'նայէր յիսուն ոտքի չափ վերէն, և այս բարձունքը կրկին ծերպով կ'իջնէին մինչև Ճիրանի հրուանդանին ծայրը, և մինչև կղզոյն հարաւային կողմը: Հետեւապէս չկար մարդու աչքը խափանող արդեօք մը, և չափադէտը կարող էր կիսաշրջանակի մը վրայ բուրձ հորիզոնը դիտել, հրուանդանէն մինչև Մողոնի սարահարթ: Հարաւային դիէն՝ այս հորիզոնն՝ լուսնին առաջին նշոյններէն շեղակի լուսաւորուելով՝ երկնից վրայ որոշ զծերով կ'երևէր, և շատ դիւրին էր բաւական ճշգրտութեամբ նկատել ու չափել:

Նայն պահուն Հարաւային Խաչը գլխիվայր դիրքով մը կ'երևէր գիտողին, Ալֆաստոն իրրև խարխիս ունենալով, որ հարաւային բևեռին աւելի մօտ է:

Այս աստեղատունն հակարձային բևեռին այնքան մօտ չէ գիրքով որչափ բևեռային աստղը արջային բևեռին մօտ է: Ալֆաստոնը գրեթէ քսան եօթ աստիճան հեռի է. բայց Կիւրոս Սմիթ

դիտէր այս բանս և իր հաշուին մշջ այս հեռաորութիւնն՝ ի համար պիտի առնուր: Նոյնպէս ջանաց զայն դիտել բևեռին տակի միջօրեականէն անցնելու ատեն, և այս բանս պիտի դիւրացնէր իր գործողութիւնը:

Ուստի Կիւրոս Սմիթ իր փայտէ կարկինին մէկ թևը ծովու հորիզոնին վրայ ուղղեց, միւսն ալֆային վրայ, ինչպէս որ պիտի ընէր եթէ կրկնիչ շրջանակի մը գիտակները լինէին. երկու թևերուն բացուածքն իրեն տուաւ անկիւնային հեռաորութիւնն որ ալֆան հորիզոնէն կ'զատէր: Եւ որպէս զի ստացած անկիւնն անփոփոխ կերպով որոշէ, փուշերու միջոցաւ իր գործիքին երկու տախտակներն շեղակի դրուած երրորդ տախտակի մը վրայ մտց, այնպէս որ իրենց բացուածքն հաստատապէս պահուեցաւ:

Այս ընելէն ետև՝ կ'մնար միայն առնուած անկիւնը չափել՝ ծովուն հարթութեան դարձնելով իր գիտողութիւնն, այնպէս որ հորիզոնին խորութիւնը նկատի առնուի, և ասոր համար հարկ էր սարահարթին բարձրութիւնը չափել: Այսպէս այս անկիւնին տախտակները ալֆային բարձրութիւնը պիտի տար, և հետեւապէս հորիզոնէն վեր եզող բևեռին բարձրութիւնը, այսինքն՝ կղզոյն լայնութիւնը, քանի որ երկրագունտին մէկ կէտին լայնութիւնն միշտ հաւասար է բևեռին բարձրութեան, այս կէտին հորիզոնէն վեր:

Այս հաշիւները հետեւեալ օրուան թողուց չափադէտը, և ժամը տասնին՝ ամեն մարդ խորունկ կ'ընանար:

ԳԼՈՒԽ Թ.

Հագագարի պատին չափը — Կոնստանդնուպոլսեան օրի քոր-
ձարքոսի նիւնը — Կղզայն լայնութիւնը — Գեղ Եփեսոսի արշաւանք օր —
Ոսորէնէրու առաջակոյտ օր — Ապագայի համար խորհուրդներ — Սրբուհ
անցիւր օրերէականէն — Լինսօն Կղզայն աշխարհագրական դերքը .

Հետեւեալ օրը՝ սպրիլի 16ին — Չատիկի կիրակին — զաղթա-
կանները Կարկառներէն դուրս ելնելով արշալուսին, սկսեր էին
իրենց ճերմակեղէնը լուալ և հաղուստները մաքրել : Չափադէտը
մտադիր էր աճառ շինելու եթէ ասոր համար պէտք եղած գլխա-
ւոր նիւթը ձեռք ձգէր, այս է աշխան կամ տնկաղ, ճարպ կամ
ձէթ : Կոյնպէս հանդերձանքը նորոգելու կարևոր խնդիրը յար-
մար ժամանակն ու տեղը պիտի քննուէր : Սակայն զլեւտանքը դեռ
վեց ամիս կրնային տևել, վասն զի հաստատուն էին, և ձեռական
աշխատութեանց ու յոգնութեանց մէջ կրնային դիմանալ : Բայց
ամեն բան մարդաբնակ երկիրներու նկատմամբ կղզայն դիրքէն կա-
խում ունէր : Եւ այս բանս նոյն օրը պիտի որոշուէր, եթէ օղը
ներքէր :

Արդ՝ արևը՝ յստակ հորիզոնի մը վրայ ելնելով՝ փառաւոր օր
մը կ'աւետէր, աշխան դեղեցիկ օրերէն մին, որ իբր թէ տաք ե-
ղանակին վերջին հրամեշտները լինէին :

Պէտք էր ուրեմն առջի իրիկուան դիտողութեանց պակասը լրա-
ցընել ծովուն հարթութենէ վեր Մեծ-Տեպքին սարահարթին բար-
ձրութիւնը չափելով :

«Միթէ պէտք չէ՞ քեզի գործի մը նման անոր զոր երէկ գործ-
ածեցիր, հարցուց Հարպէրդ չափադիտին :

— Ա՛յ, որդեակ, պատասխանեց չափադէտը, ուրիշ կերպով
և գրեթէ նոյնչափ ճշգրտութեամբ պիտի շարունակենք մեր գործը » :

Հարպէրդ՝ որ ամեն բան սորվել կ'փափաքէր, չափադիտին ե-
տեէն դնաց, որ հատաքարի պատին ստորուան հեռացաւ՝ մինչև
աւազափն իջնելով : Կոյն միջոցին Բէնքրօֆ, Նասպ և Թղթակիցն
ուրիշ այլ և այլ դործերով կ'պարապէին :

Կիւրոս Սմիթ շիտակ ձողի պէս բան մ'աւեր էր ձեռքը . տասն
երկու ոտքի չափ երկար էր, կարելի եղածին չափ ճշգրտ չափեր
էր զայն, իր յատուկ հասակին հետ համեմատելով, որու բար-
ձրութիւնը դիտէր այնպէս լաւ որ գծի չափ չէր սխալէր : Հար-
պէրդ ուղղաչափ լար մը կ'կրէր, զոր Կիւրոս Սմիթ անոր տուեր
էր, այսինքն պարզ քար մ'որ ճապուկ թելի մը ծայրէն կասուած
էր :

Քսան ոտքի չափ աւազափին ծայրը հասնելով, և ուղղահայեաց
նայող հատաքարի պատէն դրեթէ հարիւր ոտք հեռանալով, Կիւ-
րոս Սմիթ աւազի մէջ երկու ոտք խորունկ մտնց ձողը, և զայն
մոյթերով հաստատելէն ետև՝ ուղղաչափ լարին շնորհիւր, հորի-
զոնին շիտկութեամբ շիտակ դիմ մը քաշեց :

Այս ընտէն ետև՝ պէտք եղածին չափ ետ ետ քաշուեցաւ, որ-
պէս զի ամեն բան աւազին վրայ տեսած լինելով, տեսողական ճա-
ռագայթն աչքէն ելնելով՝ կ'շոշափէր թէ ձողին ծայրն և թէ
պատին կատարը : Ապա նոյն կէտը ցիցով մը նշանակեց :

Այն ատեն Հարպէրդին դառնալով՝

«Երկրաչափութեան առաջին սկզբունքը չէն դիտեր արդեօք,
հարցուց անոր չափադէտը :

— Քիչ մը բան, Պարոն Կիւրոս, պատասխանեց Հարպէրդ,
որ չէր ուզէր չափէն աւելի խոստանալ :

— Անշուշտ կ'իշխէս թէ ի՞նչ են երկու նման եռանկիւններուն
յատկութիւնները :

— Այո՛, պատասխանեց Հարպէրդ : Իրենց համանուն կողմերն
համեմատական են :

— Լաւ ուրեմն, իմ աղաս, երկու հատ իրարու նման եռան-
կիւններ շինեցի, երկուքն ալ ուղղանկիւն, առաջինն, ամենէն
պղտիկն՝ իբրև կողմեր ունի ուղղահայեաց ձողը, այսինքն այն հե-

ուսորութիւնն որով կ'բաժնուի ցիցը ձողին ստորասն, և իմ տեսողական շառաւիղն ունի իբրև ներքնադիծ (hypotenuse). երկրորդն՝ իբրև կողմնը ունի ուղղահայեաց պատը, որու բարձրութիւնը չափել կ'ուզենք, այսինքն այն հեռաւորութիւնն որ ցիցը սոյն պատին ստորասն կ'զատէ, և դարձեալ անոր ներքնադիծը պիտի լինի իմ տեսողական ճառագայթս — ներքնադիծ որ առաջին եռանկիւնին ներքնադիծին շարունակութիւնն եղած կ'զանուի :

— Ա՛՛՛՛՛, Պարոն Կիրոս, հասկըցայ, դռնեց Լարպէրդ : Ինչպէս որ ցիցէն մինչև ձողն եղած հեռաւորութիւնը համեմատական է ցիցին հեռաւորութեան մինչև պատին ստորատը, նոյնպէս ձողին բարձրութիւնն սոյն պատին բարձրութեան համեմատական է :

— Ճիշտ այդպէս է, Լարպէրդ, պատասխանեց չափադէտը, և երբ երկու առաջին հեռաւորութիւնները չափենք, ձողին բարձրութիւնը գիտնալով, միայն համեմատութեան հաշիւ մը կ'մնայ մեզ ընելու, և այդ հաշիւը պիտի տայ մեզի պատին բարձրութեան չափն և զայն ուղղակի չափելու նեղութենէ մեզ պիտի ազատէ՞ :

Երկու հորիզոնական հեռաւորութիւնները չափեցին՝ նոյն իսկ ձողին միջոցաւ, որու երկարութիւնն առաջին վրայ ճիշդ 10 ոտք էր :

Առաջին հեռաւորութիւնն տասն հինգ ոտք էր ձողէն մինչև այն կէտն որ ցիցն առաջին մէջ մտած էր :

Երկրորդ հեռաւորութիւնը հինգ հարիւր ոտք էր, ցողէն մինչև պատին ստորատը :

Այս չափերն առնելն ետև, Կիրոս Սմիթ և պատանին Կարկառները վերադարձան :

Այն տեղ, չափադէտը տափակ քար մ'առաւ, զոր իր նախորդ արշաւանքն հետը բերեր էր, տեսակ մը սև թերթաբար էր այն, որու վրայ դիրքին էր թուանշաններ դժեղ սուր լեցելի մը միջոցաւ : Աստի հետեւեալ համեմատութիւնը նշանակեց.

$$15:500::10:f$$

$$500 \times 10 = 5000$$

$$5000$$

$$15 = 333, 33.$$

Այս հաշուէն հետեւեալ որ հատաքարի պատն երեք հարիւր երսուն երեք ոտք բարձրութիւն ունէր : *

Այն ատեն Կիրոս Սմիթ առջի օրը շինած գործին առաւ, որու երկու տախտակներն՝ իրենց հեռաւորութեամբ, կ'տային իրեն հորիզոնի վրայ ալֆա աստղին անկիւնաւոր հեռաւորութիւնը : Այս անկեան բացաւածքը ճշդիւ չափեց շրջանակի մը վրայ զոր երեք հարիւր վաթսուն հաւասար մաս բաժնեց : Արդ՝ չափադէտն այս անկիւնը յիսուն երեք աստիճան գտաւ, երրորդ ալֆան հակաբջային բևեռէն զատող հեռաւորութիւնն անոր աւելցուց՝ և սարահարթին բարձրութիւնն, որու վրայ ըրեր էր դիտողութիւնը, ծովուն հաւասարութեամբ իջեցուց : Այս յիսուն երեք աստիճանն իննսուն աստիճանէն հանելով — այս է բևեռէն մինչև հասարակած հեռաւորութիւնը — կ'մնար երսուն եօթն աստիճան :

Աստի Կիրոս Սմիթ հետեւեալ օր Լինքօլն կողմին հարաւային լայնութեան երսուն եօթերորդ աստիճանին վրայ կ'զանուէր, կամ, իր գործողութեանց անկատարութեան պատճառաւ, հինգ աստիճանի տարբերութիւն մը ՚ի համար առնելով, պէտք էր ըսել որ երսուն հինգերորդ և քառասներորդ զուգահեռականին մէջ կ'ըլտնուէր կողմն :

Արդ՝ կ'մնար երկայնութեան չափն առնուլ, որպէս զև կողմն կացութիւնը լիովին իմանայ : Եւ այս բանս ալ չափադէտը նոյն օրը կատարելու պիտի փորձէր՝ կէսօրին, այսինքն այն պահուն որ արեւը միջօրէականէն պիտի անցնէր :

Կողմնեցիք որոշեցին որ այն կիրակի ժուռ դալու ելնեն, կամ լաւ ևս քննելու երթան կողմին այն մասն որ լճակին հիւսիսակողմին և Շանաձկի ծովածոցին մէջ տեղը կ'զանուէր, և եթէ օդը ներքէր այս զննութիւնն մինչև Մանտիպուլ խաւանդին յետնակողմը քշեն : Արողեր էին աւազակոյտին վրայ ճաշ ընել և իրիկունը դառնալ :

Առաւօտեան ժամն ութ ու կէսին՝ մեր փոքրիկ խումբը ջրանց-

* Այս տեղ պէտք է իմանալ անկիւնական ոտք, որ 30 հարիւրամեր էր կար է :

քին եղըը քերելով կ'յառաջէր : Միւս կողմէն՝ Փրկու թեան կղզին վրայ , մի շատ թուշուներ ծանր կ'պտըտէին : Լուսորդներ էին սագի (manchet) տեսակէն , որ իրենց անախորժ աղաղակէն շուտով կ'ճանչցուին , աղաղակ որ իշու զուարը կ'լիշեցընէ :

Բէնքրօֆ այս թուշուները դիտեց հասկընալու համար թէ արդեօք կ'ուտուին , և երբոր իմացաւ որ իրենց միսը՝ թէև սևուկ , լաւ կ'ուտուի՝ բաւական դո՛հ եղաւ :

Նոյնպէս աւաղին վրայ կ'սողային խոշոր երկակենցաղներ , անշուշտ փոկեր , որ կարծես թէ կղզեակն իրենց սպաւէն ընտրեր էին : Կարելի չէր բնաւ այս կենդանիներն ուտելու մտօք քննել , վասն զի իրենց եղոտ միսը զաղըալի է : Սակայն Կիւրոս Սմիթ ուշադիր դիտեց զանոնք , և առանց իր միտքը բացատրելու , իր ընկերներուն յայտնեց թէ քիչ ատենէն կղզեակն այցելութեան ելնելու կ'փափարի :

Այն ծովափն որու վրայ կ'քալէին կղզեցիք , բազմաթիւ խեցիներով ծածկուած էր , որոնցմէ մէկ քանի Մալաքոլոգիան (malacologie) սիրողներուն մեծ խնդութիւն կրնային պատճառել : Այլ և այլ խեցեմորթներէ շատ կային , Քասպիան (phasianelle) երկպարեան (tèrebratule) եռակողմանի (trigonie) և այլն : Բայց ամենէն աւելի օգտակար պիտի լինէր ահագին սարեկնոց (huatrière) մը , զոր ցած ծովու մէջ դտան և Նասպ ժայռերուն մէջ զանի նշմարեց , Կարկանտներէն գրեթէ չորս մըն ճեռու :

« Նասպ իր օրն անօգուտ չանցուց , գոչեց Բէնքրօֆ , երբոր ծովուն մէջ երկնցող ոտորէնոցը դիտեց :

— Այդ յաջող դիւտ մ'է , արդարև , ըսաւ թղթակիցը , և եթէ երբէք , ինչպէս որ կ'ըսեն , ամեն մէկ ոտորէ տարին յիստուն՝ վաթսուն հազար հակիթ արտադրէ , անոր մէջ անսպառելի պաշար մը պիտի գտնենք :

— Միայն կարծեմ թէ ոտորէն շատ աննդարար չէ , ըսաւ Հարպէրդ :

— Չէ , պատասխանեց Կիւրոս Սմիթ : Ոտորէն շատ քիչ ապօրով նիւթ կ'պարունակէ , և եթէ մարդ մ'անով միայն կերա-

կրուէր , հարկ էր որ գոնէ օրն երկու հարիւր հատ ուտէր :

— Լաւ , պատասխանեց Բէնքրօֆ : Կրնանք հարիւրաւոր ոտորէ ուտել առանց ոտորէ կոյտը սպառելու : Արդեօք կարելի չէ՞ մեր նախաճաշին համար քանի մը հատ առնուլ » :

Եւ առանց իր առաջարկութեան պատասխանին սպասելու՝ Նաւորդն ու Նասպ՝ գիտնալով կանխաւ որ ամենքը պիտի հաւանին , այս թուլատարներէն շատ մը քաղեցին : Տեսակ մը վարմի մէջ դրին զանոնք , և այս վարմը տուղտի (hibiscus) թեւերէն շիներ էր Նասպ , և արդէն նախաճաշին համար ուտելիքը կ'պարունակէր . ապա՝ սկսան իրենց ճամբան շարունակել և աւաղակոյտին ու ծովուն մէջ տեղը գտնուած ծովափէն վեր ելնել :

Կիւրոս Սմիթ ատեն ատեն իր ժամացոյցին կ'նայէր , որպէս զի արեւը դիտելու համար ժամանակին պատրաստուի , և այս դիտողութիւնը ճիշտ կէտօրին պիտի ընէր :

Կղզոյն բոլոր այս մասը շատ անջրդի էր՝ մինչև այն ծայրն որ Միութեան խորը կ'օրինէր , և որ Վանդիպուլի դարաւանդ անունն առեր էր : Այն տեղ միայն աւաղ ու խեցի կ'տեսնէին , որ լավայի բեկորներով խառնուեր էր : Քանի մը ծովու թուշուներ այս ամալի ափունքը կ'յաճախէին , ինչպէս որորներ , վայրի բադեր , որ իրաւամբ Բէնքրօֆի փափարը գրողեցին : Ջանաց նետով զարնել մէկ քանին , բայց պարապ տեղը , վասն զի տեղ մը չէին գազարեր և պէտք էր թուշու ատեն անոնց նշան առնուլ :

Եւ ասոր վրայ նա որզը չափադիտին կրկնեց .

« Կ'տեսնեն , Պարոն Կիւրոս , որչափ ատեն որ մէկ երկու հատ որսի հրացանէ զուրկ մնանք՝ մեր բոլոր ինչքը թերակատար պիտի մնայ :

— Անշուշտ , Բէնքրօֆ , պատասխանեց թղթակիցը , բայց դորձին յաջողութիւնը քեզմէ կախում ունի : Մեզի երկաթ գալիք փողերուն համար , մարտիոյներուն համար պողովատ , բորակ , ածուխ և ծծումբ վառօղին համար , պայթիչին համար (fulminant) ազոտաւոր (azotique) թթու , վերջապէս կապար գնդակներուն

համար, և Պ. Կիրոս այն ատեն ընտիր հրացաններ պիտի կարենայ շինել:

— Է՛հ, պատասխանեց չափազէտը, բոլոր այս նիւթերը՝ պիտի յաջողենք անշուշտ կղզոյն մէջ գտնել, բայց հրազէն մը փափուկ գործի մ'է և շատ ճիշտ գործոյք պէտք են շինելու համար: Վերջապէս այդ բանին վրայ ալ ետքը կ'մտածենք:

— Ինչո՞ւ համար, գոչեց Բէնքրօֆ, ինչո՞ւ համար մեր օդապարիկէն վար ծովը նետեցինք մեր ունեցած բոլոր զէնքերը, գործիքներն և մինչև անգամ մեր զրպանի դանակները:

— Բայց թէ որ չնետէինք, Բէնքրօֆ, օդապարիկը մեզ պիտի նետէր ծովուն յատակը, ըսաւ Հարպէրը:

— Եւ սակայն իրաւ է այդ ըսածդ, բարեկամ՝ պատասխանեց նաորդը:

Ապա ուրիշ խօսք մը բանալով.

«Բայց նայէ միտքս ինչ ընկաւ, յարեց նա, արդեօք սրբան ապշած մնաց Յովնաթան Փօրսպըր և իր ընկերներն, երբ հետևեալ օրն՝ մարդ մը չտեսան նոյն տեղն և օդապարիկն անյայտացած գտան:

— Իմ բնաւ փոյթս չէ թէ ինչ մտածեցին այս մասին, ըսաւ թղթակիցը:

— Եւ սակայն այդ գաղտնիքն ես ունեցայ, ըսաւ Բէնքրօֆ զոհո՞ւնակ զէմբըզ մը:

— Աղւոր գաղտնիք մ'էր, Բէնքրօֆ, պատասխանեց Գեղէն Սքիլէզ ծիծաղելով, քանի որ մեզ այս ներկայ վիճակին մէջ ձգեց:

— Ատելի լաւ ունիմ՝ այս տեղ լինիլ քան թէ հարաւայնոց ձեռքը, գոչեց նաորդը, մանաւանդ քանի որ Պ. Կիրոս շնորհ ըրաւ մեզ զալ գտնելու:

— Ես ալ զոհ եմ, յերտի, պատասխանեց թղթակիցը: Իրօք, ինչ կ'պակսի մեզի. ո՞չ ինչ:

— Եթէ ոչ, . . . ամեն բան, պատասխանեց Բէնքրօֆ, որ քահ քահ խնդաց իր լայն ուտերը շարժելով: Բայց օրին մէկը մեկնելու հնար մը պիտի գտնենք:

— Եւ կարելի է կարծածէ՞ք ատելի շուտով, բարեկամներս, ըսաւ այն ատեն չափազէտը, եթէ Լինքօլն կղզին մարդաբնակ արշակեղազոսէ մը կամ ցամաքէ մը միջին հեռաւորութիւն մ'ունի: Թամ մը չանցած պիտի հասկընանք: Խաղաղականին աշխարհացոյց տախտակը չունիմ, բայց իմ յիշողութիւնս իր հարաւային դերքը բաւական լաւ հասկըցած է: Երէկուան գտած լայնութենէս կ'իմացուի որ Լինքօլն կղզին Նոր Զելանտայի արևմտեան կողմը կ'իյնայ, և Բիլիին արևելեան կողմը: Բայց այս երկու ցամաք երկիրներու մէջ, հեռաւորութիւնը գէթ վեց հազար մղոն է: Ուրեմն կ'մնայ որոշել թէ կղզին այս ընդարձակ ծովուն մէջ ինչ տեղ կ'ընէ, և այս բանս լայնութեան աստիճանէն պիտի իմանանք, բաւական քիչ տարբերութեամբ, յուսամ:

— Միթէ Բօմօդուի արշակեղազոսը չէ՞ որ լայնութեամբ մեզի ամենէն ատելի մօտ է:

— Այո՛, պատասխանեց չափազէտը, բայց մեզ անկից բաժնող հեռաւորութիւնն հազար երկու հարիւր մղոնէն ատելի է:

— Հասցաւ այս կողմէն, ըսաւ Նապ, որ մեծ ուշադրութեամբ խօսակցութեան կ'հետեւէր, և որու ձեռքը հարաւային կողմին ուղղութիւնը ցցուց:

— Այն կողմէն բան մը չկայ, պատասխանեց Բէնքրօֆ: Երօք բան մը չկայ, յարեց չափազէտը:

— Լաւ ուրեմն, Կիրոս, հարցուց թղթակիցը, ինչ պիտի ընենք եթէ Լինքօլն կղզին Նոր Զելանտայէն կամ Բիլիէն երկու երեք հարիւր մղոն հեռու է . . . :

— Լաւ ուրեմն, պատասխանեց չափազէտը, փոխանակ տուն մը շինելու, նաւակ մը կ'շինենք և վարպետ Բէնքրօֆ զայն վարելու հողն իր վրայ պիտի առնու . . . :

— Ի՞նչպէս ուրեմն, Պարոն Կիրոս, գոչեց նաորդը, պատրաստ եմ նաւապետ լինիլ. . . երբոր հնար մը գտնես ծովուն վրայ ճամբորդելու համար յարմար նաւակ մը շինելու:

— Այն նաւակը պիտի շինենք, եթէ պէտք է՝ պատասխանեց Կիրոս Սֆիթ:

Բայց երբոր այս մարդիկ կ'իսուակցէին, որ իրօք բանէ մը չէին վախնար, աստղաբաշխական դիտողութիւնն ընելու ժամը կ'հասնէր: Կիւրոս Սմիթ ինչ կերպով պիտի ստուգէր կղզւոյն միջօրէականէն արևուն անցնիլը, առանց որ և է գործիքի: Ահա այս բանս չէր կրնար գուշակել Հարպէրդ:

Այն միջոցին դիտողներն Կարկառէն վեց մղոն հեռու տեղ մը կ'գտնուէին, աւազակոյտներուն այն մասէն ոչ այնքան հեռու որու մէջ չափազէտը գտնուեր էր, իր խորհրդաւոր ազատուէն ետք:

Նոյն տեղը դադար առին, և ամեն բան պատրաստեցին նախաձաշին համար, վասն զի ժամը տասն ու մէկ ու կէս էր: Հարպէրդ գնաց անուշ ջուր բերելու գետակէն որ անկից կ'հոսէր, և Նապին հետը բերած սափորը լեցուց:

Այս պատրաստութեանց ժամանակ՝ Կիւրոս Սմիթ ամեն բան կարգադրեց իր աստղաբաշխական դիտողութեան համար: Աւազակին վրայ խիստ մաքուր վայր մ'ընտրեց, որ հարթուեր էր բոլորովին ծովուն քաշուելու միջոցին: Աւազի այս խիստ բարակ խաւը հայելիի պէս հարթ էր և աւազի հատիկ մ'ուրիշ աւազի հատիկէ չէր անցներ: Սակայն՝ այնքան փոյթ չէր որ այս խաւն հորիզոնական լինէր թէ ոչ, նոյնպէս հոյ չէր որ վեց ոտք բարձր գաւազանն, որ այն տեղ անկուեցաւ՝ ողլահայեաց գծով բարձրանար:

Ընդ հակառակն՝ չափադէտն այն գաւազանը դէպ ՚ի հարաւ ծուեց, այսինքն արևուն դիմացը, վասն զի պէտք չէ մոռնալ որ Լինքօրն կղզիին գաղթականներն, ճիշտ անոր համար որ կղզին հարաւային կիսագնդին վրայ կ'գտնուէր, կ'տեսնէին շողողուն աստղին օրական շրջանը կատարելը՝ հիւսիսային հորիզոնին վրայ և չէ թէ հարաւային հորիզոնին վրայ:

Այն ատեն Հարպէրդ հասկըցաւ որ չափադէտն արևուն միջօրէականին հասնիլը աստղելու պիտի սկսի, այսինքն իր անցքը կղզւոյն միջօրէականէն, կամ ուրիշ խօսքով, տեղւոյն կէսօրը: Եւ այս գործողութիւնը պիտի կատարէր գաւազանին աւազի վրայ

ձգած ստուերին միջոցաւ, միջոց մ'որ՝ գործիք չգտնուելուն՝ կարելի եղածին չափ մօտաւոր հաշիւ մը պիտի տար իրեն:

Իրաւի, երբոր այս ստուերն իր ամենէն կարճ աստիճանին հասնէր՝ ճիշտ կէսօր պիտի նշանակուէր, և բաւական պիտի լինէր այս ստուերին ծայրը դիտել, որպէս զի կարելի լինէր որոշել այն վայրկեանն՝ երբ հետզհետէ նուազելէն ետեւ՝ նորէն երկննալու պիտի սկսէր:

Կիւրոս Սմիթ իր գաւազանն արևուն ներհակ կողմը ծուելով ստուերն աւելի պիտի երկնցընէր, և հետևապէս, իր փոփոխումներն աւելի դիւրաւ պիտի որոշուէին: Իրօք՝ որչափ արևու ժամացոյցի մ'ասեղը մեծ լինի, այնքան դիւրաւ կարելի կ'լինի նշանակել իր ծայրին տեղափոխութիւնը: Գաւազանին ստուերն ուրիշ բան չէր այլ միայն արեգակնային ժամացոյցի մ'ասեղը:

Երբոր Կիւրոս Սմիթ դիտեց որ ժամն հասած է, աւազին վերայ ծունկ չոքեց, և՛ պղտիկ փայտէ ցիցերու միջոցաւ՝ զոր աւազին վրայ կ'անկէր, սկսաւ գաւազանին ստուերին յաջորդական նուազումները նշանակել: Իր ընկերներն՝ իր գլխուն վերևը ծածկ յետին ծայր հետաքրքրութեամբ այս գործողութիւնը կ'դիտէին:

Թղթակիցն իր ժամացոյցը ձեռքը բռներ էր՝ որպէս զի նշանակուած ժամը յայտնէ, երբոր ստուերն ամենէն կարճ աստիճանին հասնի: Ասկից զատ՝ որովհետև Կիւրոս Սմիթ ապրիլի 16ին այս չափը կ'առնէր, այն օրն որ բուն օրն միջին օրին հետ կը խառնուի, Գեդէոն Սբիլէդի տալիք ժամն նոյն միջոցին Ուօշենկութիւնի մէջ բուն ժամը պիտի լինէր, և այս բանս հաշիւը շատ պիտի պարզէր:

Սակայն արևը ծանր կ'յառաջանար. գաւազանին ստուերը քիչ քիչ կ'նուազէր, և երբոր դիտեց Կիւրոս Սմիթ որ վերստին մեծնալու վրայ էր,

«Ժամը քանի՞ է, հարցուց:

— Էնիդ ժամ և մէկ վայրկեան» պատասխանեց շուտ մը Թէնքրօֆ:

Կ'մնար միայն գործողութիւնը հաշուի առնել: Այս շատ դի-

րին էր : Ինչպէս կ'տեսնուի , կլոր թուով միայն հինգ ժամ տարբերութիւն կար Աւօշինկի թրնի միջօրեականին և Լինքօշնի միջօրեականին մէջ , այսինքն Լինքօշնի կղզին կէսօր էր , երբ արդէն Երեկոյեան ժամը հինգ էր Աւօշինկի թրն : Արդ՝ արևն՝ երեկոյթական շարժմամբն երկրիս բոլորտիքը , մէկ աստիճան կ'ըջի չորս վայրկեանի մէջ , բսնք ժամը՝ տասն հինգ աստիճան : Տասն հինգ աստիճանն հինգով բազմապատկելով եօթանասուն աստիճան կը սար :

Ուրեմն , քանի որ Աւօշինկի թրն 77° 3' 11" աստիճան է , Կրիսիչի միջօրեականին վրայ հաշուելով — զոր Ամերիկացիք երկայնութեան աստիճանին իբրև մեկնակէտ կ'ընեն Անկլիացոց հետ — ուրեմն կ'հետևէր որ կղզին կ'գտնուէր եօթանասուն եօթ աստիճան աւելի եօթանասուն հինգ աստիճան Կրիսիչի միջօրեականին արևմտեան կողմն , այսինքն հարիւր յիսուն երկու երկայնութեան աստիճան դէպ 'ի արևմուտ :

Կիրոս Սմիթ այս արդիւնքն իմացոց իր ընկերներուն , և զիտողութեան սխալմունքն ալ 'ի համար առնելով , ինչպէս որ ըրեր էր լայնութեան համար , կարծեց թէ կարող է հաստատել թէ Լինքօշն կղզոյն զիբքը կ'գտնուէր երսուն հինգերորդ և երսունը եօթերորդ զուգահեռականին մէջ , և հարիւր յիսուներորդ և հարիւր յիսունը հինգերորդ միջօրեականին մէջ՝ Կրիսիչի միջօրեականին արևմտեան կողմը :

Կիրոս Սմիթի զիտողութեան սխալմունքի վերադրած հեռաւորութիւնն , ինչպէս կ'տեսնուի , երկու կողմէն ալ հինգ աստիճանի էր , և ամեն մէկ աստիճանին վաթսուն մղոն հաշուելով կրնար լայնութեան կամ երկայնութեան մասին՝ սխալած լինիլ երեք հարիւր մղոնի չափ՝ որով կղզիին դիրքը ճշդիւ պիտի որոշուէր :

Բայց այս սխալմունքը պէտք չէր որ իրենց յարմար դատած բռնելիք ընթացքին վրայ ներդրուէ : Շատ բացայայտ էր որ Լինքօշն կղզին այնպիսի հեռաւորութիւն ունէր ամեն ցամաքէ կամ արշիպեղապուէ , որ չպիտի համարձակէին այն հեռաւորութիւնը պարզ և շիւրաբեկ նաւակի մը մէջ մտնելով կտրել :

Արդարև՝ կղզոյն դիրքին նայելով՝ հազար երկու հարիւր մղոն հեռու էր Գայիգիէն , և Բօմթու արշիպեղապուէ կղզիներէն , հազար ութ հարիւր մղոնէն աւելի՝ Նոր Զելանտայէն և չորս հազար հինգ հարիւր մղոնէն աւելի ամերիկեան եղերքէն :

Եւ երբ Կիրոս Սմիթ կ'ջանար յիշելու թէ արդեօք՝ Խաղաղական ովկիանոսին մէջ Լինքօշն կղզոյն զիբքով կղզի մը կար թէ ոչ , չէր կրնար բնաւ այնպիսի բան մը գտնել իր յիշողութեան մէջ :



ՊԼՈՒՍ Ժ.Ե.

Քուլտիւն Կորուտի այն տեղ յիշելու — Մեպալաքոթական խնդիրը — Քրիստիան կուշն բնելու կէտէն — Փոկերոս որսը — Իտիլու մը (Echidne) կ'բռնեն — Բուսա (kouba) — Կապալանեան եղանակ ըստաճն ինչէ — Երկու բորձելու — Ինչպէս կ'ընեն պողպատը :

Հետևեալ օրը՝ ապրիլի 17ին՝ նաւորդն իր առաջին խօսքը Գեդէոն Սքիլէրի ուղղեց .

« Լաւ ուրեմն , պարոն , հարցոց անոր , այսօր ինչ պիտի լինինք :

— Ինչ որ Կիրոս ուզէ՝ պատասխանեց թղթակիցը : Արդ՝ մինչև այն օրն չափազէտին ընկերներն աղիտազործ և բրուտ եղեր էին , այնուհետև մետաղագործ պիտի լինէին :

Առջի օրը՝ նախաձաշկէն ետք՝ իրենց երկրագնործութիւնը մինչև Մանգիպուլի դարաւանդը քշեր էին , որ Կարկառներէն գրեթէ եօթը մղոն հեռու էր : Այն տեղ կ'վերջանար աւաղակոյտներուն երկար շարքը , և հողն հրաբխային երեկոյթ մը կ'առնուր : Բարձր պատեր ալ չէին տեսնուեր , ինչպէս Մեծ-Տեքին սարահար-

Թին մօտ, այլ այլանդակ ու անկանոն շրջանակ մը, որ հրաբուխէն ժայթքած նիւթերէ շինուած երկու դարաւանդներու մէջ գանուող խորը կ'ըլլորէր: Այն ծայրը հասնէին ետե՛ գաղթականները վերադարձեր էին և գիշերուան դէմ Կարկառները կ'մանէին, բայց չքնացան մինչև որ չորոշեցին այն խնդիրը թէ Լինքօրն կղզիէն պիտի կարենան ելնել թէ ոչ պիտի մնան:

Ահագին հեռաւորութիւն մ'էր այն որ կղզին Բօմոդոտի արշիպելագոսէն կ'զատէր: Նաակ մը բաւական չպիտի լինէր այն ծովէն անցնելու, մանաւանդ որ ձմեռը կ'մօտենար:

Բէնքրօֆ բացէ 'ի բաց յայտներ էր այս դժուարութիւնն: Արդ՝ պարզ նաակ մը շինել, կարևոր գործիներն ունենալով անդամ, դժուարին գործ մ'էր, և զաղթականները գործիք չունենալով՝ պէտք էր սկսիլ մուրճ, տապար, սղոց, դուր, քերիչ և այլն շինելու, և ասոր համար ալ բաւական ժամանակ պէտք էր: Ուստի որոշուեցաւ որ Լինքօրն կղզին անցընեն ձմեռը և աւելի հանդիստ բնակարան մը փնտռեն քան Կարկառներն ձմեռուան ամիսներն անցընելու համար:

Ամենէն առաջ հարկ էր երկաթի հանածոյքը գործածել, որու մէկ քանի խաւերը նշմարեր էր չափազեւոր կղզոյն հիւսիսարեւմտեան կողմերը, և այս հանածոյքն երկաթի կամ պողովաթի փոխել:

Սովորական հողը մաքուր հանքային նիւթ չպարունակեր: Հատերը թթուածնով կամ ծծմբով խառնուած կ'դառնուին: Իրօք Կիւրոս Սմիթին բերած երկու կտոր հանքէն մին մագնիսական երկաթ էր, միւսը հրաքար կամ, ինչպէս որ կ'ըսուի, երկաթի ծծմբաթթու էր:

Հետեւապէս առաջինն, այսինքն՝ երկաթի «սիւն» էր որ պէտք էր ածուխով այրել, այսինքն թթուածինը հանել՝ որպէս զի մաքուր երկաթ դառնայ: Այս պարտաւորութիւնը կ'կատարուի հանածոյքն ածուխին մէջ սաստիկ տաքընելով կամ արագ ու գիւրին կադալանեան եղանակով, որու առաւելութիւնն է առաջին գործողութեամբ հանածոյքը ուղղակի երկաթի դարձնել, կամ հրա-

բորբոք հնոցներու միջոցաւ, որ նախ հանածոյքը ձուլածոյ կ'ընէ, յետոյ ձուլածոյն երկաթ, հարիւրին երեք չորս մաս ածուխ ունենալով՝ որ անոր հետ խառնուած է:

Արդ՝ Կիւրոս ինչ բանէ պէտք ունէր, երկաթէ պէտք ունէր և ոչ ձուլածոյի, և զայն հալեցընելու համար ամենէն արագ միջոցը փնտռելու էր: Այլ սակայն իր ժողոված հանածոյքն իրօք ինքնին շատ մաքուր և շատ հարուստ էր:

Ահա այս «սիւն» (oxymule) էր որ՝ մութ գորշ գունով խառն կայծերու պէս ներկայանալով՝ սև փոշի մը կ'սար, կանոնաւոր ութանիստներ, բնական մագնիսներ կ'մատակարարէ, և եւրոպայի մէջ՝ առաջին կարգի երկաթները շինելու կ'ծառայէ, որով Հուէա և Նորվեկիան լի են: Այս խառն քիչ մը հեռու՝ քարածուխի հանքեր կ'դառնուին, զոր արդէն զաղթականները քններ էին: Ասոր համար՝ մեծ դիւրութիւն կար հանածոյքը գործելու, քանի որ զայն շինելու միջոցներն իրարու մօտ էին: Ճիշտ այս է Մեծն Բրիտանիոյ հանքահանութեանց հրաշալի հարստութեան պատճառը, քանի որ քարածուխն իրեն պէս նոյն միջոցին և նոյն հողէն ելած մետաղը շինելու կ'ծառայէ:

«Ուրեմն, Պարոն Կիւրոս, ըսաւ անոր Բէնքրօֆ, երկաթի հանածոյք շինելու պիտի սկսինք:

— Այո՛, բարեկամ, պատասխանեց չափազեւոր, և ասոր համար — յուսամ որ չես դժարիր — պէտք է սկսիլ փոկեր որսալ կղզիէն մէջ:

— Փոկերու որս, գոչեց նաւորդը Գեդէոն Սքիլէզի կողմը դառնալով: Ուրեմն փոկ պէտք է երկաթ շինելու համար:

— Քանի որ այդպէս կ'ըսէ, պէտք է հատալ՝ պատասխանեց լիցքակիցը:

Բայց չափազեւոր արդէն Կարկառները թողեր էր երբ Բէնքրօֆ փոկեր որսալու պատրաստուեցաւ, առանց ուրիշ բացատրութիւն մը ստանալու:

Բիչ առնէն Կիւրոս Սմիթ, Հարպէրդ, Գեդէոն Սքիլէզ, Նապ և նաւորէն աւաղափին վրայ հաւաքուեր էին, այսպիսի կէտ

մ'որ ջրանցքը տեղատուութեան ժամանակ տեսակ մը հուն կ'ըն-
դար անցնելու համար : Ծովը շատ իջեր էր և որսորդներն հա-
զիւ թէ մինչև իրենց ծունկը թըջելով՝ կարող եղան մուս եզրն
եղնել :

Ուրեմն Կիւրոս Սմիթ առաջին անգամ ոտք կ'կոխէր կղզեակը :
Իսկ իր ընկերներն երկրորդ անգամ, քանի որ առաջին անգամ
օդապարիկը զիրենք այն տեղ նետեց :

Երբոր ցամաքն եղան, քանի մը հարիւր սպեր անմեղ աչքով
մ'իրենց նայեցան : Գաղթականներն՝ որ գառազաններով զինուած
էին, կրնային դիւրաւ սպաննել զանոնք, բայց այն կրկնակի ան-
օգուտ կոտորածն ընելու յանձն չառին, վասն զի պէտք էր եր-
կակենցադները չահարեկել, որ առաջին վրայ պառկեր էին՝ քա-
նի մը հարիւր գրկաչափ հեռու : Նոյնպէս քանի մը խիստ ան-
մեղ սպերու խնայեցին ; որոց թւերն տեսակ մը ձեռնատ քա-
ղաւներ դառնալով լուղակներու ձևով կ'ստփակնային՝ ըստ երեց-
թին թեփաւոր փետուրներ ունենալով :

Գէպ 'ի հիւսիսային հրաւանդանը յառաջ անցան զգաղթական-
ները՝ մանր խոռոչներով լն հողին մը վրայ քալելով, որ նոյն-
չափ ջրային թռչուններու բոյներ կ'յօրինէին : Կղզեկին ծայրը՝
սև խոշոր կէտեր կ'երևէին որ ջրին երեսը կ'լողային : Կարծես
թէ ժայռի գլուխներ էին շարժման մէջ :

Ասոնք երկակենցադներ էին, զոր պէտք էր բռնել : Նախ ար-
ժան կ'գատեն թողու որ ցամաքն եղնեն, վասն զի իրենց նեղ ու-
րովայնով, իրենց կարճ ու խիտ մասերով, իրենց իլաձև (fusiforme)
կազմուածքով այս փսկերն, պատուական լուղորդներ էին
և այս պատճառաւ ծովու վրայ որսալ դժուարին էր ; մինչդեռ
հողի վրայ, իրենց կարճ ու լայնի ոտքը չէին թողուր որ շուտով
շարժին :

Բէնքրօֆ այս երկակենցադներու սովորութիւնը գիտէր, և խոր-
հորդ ատաւ սպասել որ առաջին վրայ տարածուին՝ արևուն ճա-
սպայթներուն ներքև, որով քիչ ատենէն խոր քունի մէջ պիտի
նսնէին : Նոյն միջոցին այնպէս կ'շարժէին մեր գաղթականներն

որ անոնց ճամբան կտրեն և լաւ մը անդունքին զարնեն : Ուստի որ-
սորդներն՝ ծովեզրին ժայռերուն ետև պահաւորեցան և լուսութեամբ
սպասեցին :

Ժամ մ'անցաւ՝ և դեռ փոկերն առաջին վրայ ընկնելու չէին ե-
կած : Աւելց հասի չափ կար : Այն ատեն Բէնքրօֆ և Հարպերդ
հեռացան և կղզին հրուանդանը վերադարձան, որպէս զի ետևէն
արգիլեն և չթողուն որ նահանջեն :

Նոյն միջոցին Կիւրոս Սմիթ, Գեդէոն Սքիլէդ և Նապ՝ ժայ-
ռերուն երկայնքը սողալով կ'սահէին այն տեղն ուր պայքարը պի-
տի սկսէր :

Յանկարծ՝ նաւորդին երկայն հասակն երեցաւ : Բէնքրօֆ աղա-
ղակ մ'արձակեց : Չափադէտն և իր երկու ընկերները շտապա-
ծովուն և փոկերուն մէջ տեղը նետուեցան : Այս կենդանիներէն
երկուքը ուժգին զարնուելով առաջին վրայ ընկան մուռն, իսկ
միւսները կրցան խոյս տալ և ծովուն խորը քաշուիլ :

«Աւասիկ խնդրած փոկերդ, Պարոն Կիւրոս, ըստ նաւորդը
չափադէտին կողմն երթալով :

— Լաւ, պատասխանեց Կիւրոս Սմիթ : Այս կենդանիներն դար-
բնի փքոցներ պիտի ընենք :

— Գարբնի փքոցներ, դոչեց Բէնքրօֆ : Լաւ ուրեմն, աւասիկ
փոկեր որ բարեբաղդ են՝ :

Իրօք՝ փշող մեքենայ մ'էր, հանածոյքի դորձածութեան հա-
մար պիտանի, և չափադէտը կ'մտաբերէր զայն շինել երկակեն-
ցադներու մորթով : Միջին հասակ ունէին, վասն զի իրենց եր-
կայնութիւնը վեց ոտքէն աւել չէր, և իրենց գլխով շուներու
կ'նմանէին :

Որովհետև անօդուտ էր այս կենդանիները շարժելով տանիլ,
Նապ ու Բէնքրօֆ որոշեցին նոյն տեղը զանոնք քերծել, մինչդեռ
Կիւրոս Սմիթ և թղթակիցը կղզեակը զննելու եղնելով՝ ամեն
կողմը պարտեցան :

Նաւորդն ու խափշին իրենց գործը մեծ ճարպիկութեամբ գլուխ
հանեցին, և երեք ժամ ետք՝ Կիւրոս Սմիթ իր ձեռքին տակն ու-
21

նէր երկու հաս փոկի մորթ, որոցմէ օգուտ քաղել կ'յուուար, առանց աչաղի ենթարկելու :

Գաղթականները ստիպուեցան սպասելու որպէս զի ծովը ցածնայ, և ջրանցքէն անցնելով՝ Կարկառները վերագարձան :

Պզտիկ գործ չէր այս մորթերը ձկտել փայտէ շրջանակներու վրայ որով իրարմէ պիտի գատուէին, և նուրբ թեւերով կարել, որպէս զի կարելի լինի օդը ներս պահել և շունչ առնլու ծակ չթողուլ : Հարկ եղաւ քանի մ'անգամ կարել : Կիւրոս Սփիթ իր ձեռքը միայն երկու հաս պողովատէ կ'առ ունէր զոր Թօփին վննցէն առեր էին, և սակայն, այնքան ճարպիկութեամբ աշխատեցաւ, իր ընկերներն այնպէս խելքով իրեն օղնեցին, որ՝ երեք օր ետք՝ պզտիկ գաղթականութեան զործիներուն փշող մեքենայ մը աւելցեր էր, որու գործը պիտի լինէր բովին մէջ հով փշել երբոր զայն տաքցընէին — անհրաժեշտ պայման այս զործողութեան յաջողութեան համար :

Ապրիլի 10ին էր որ մետաղագործական շրջանն սկսաւ : Չափագէտն որոշեր էր՝ ինչպէս դիտենք, նոյն խկ քարածուխին և հանածոյքին ելած տեղն աշխատիլ : Արդ՝ իր դիտողութեանց նայելով այս խաւերը Քրանքլին լեռին հիւսիսային արևելեան լեռնամայթներու ստորոտը կ'գտնուէին, այսինքն վեց մղոն հեռու : Քստի կարելի չէր ամեն օր Կարկառները գառնալ, և որոշուեցաւ որ այս գաղթականները ճիւղերէ շինուած հիւղի մը ներքե բնակին, որպէս զի այս կարևոր գործը զիշեր ցերեկ յառաջ տանին :

Այս որշումն ընելէն ետև՝ հետեւեալ օրն իսկոյն ճամբայ ելան : Նապ ու Բէնքրօֆ փշող մեքենան վանդակի մը վրայ կ'քաշէին, շատ մ'ընդեղէն և մանղէն ուտելիքով, զոր սակայն, ճամբուն վրայ պիտի նորոգէին :

Գաղթականներն Յակամարի ճամբան բռնեցին, որմէ շեղակի անցան հարաւ-արևելեան կողմէ՝ հիւսիս-արևմտեան կողմը, և իրենց ամենաթանձր տեղերէն : Պէտք էր ճամբայ մը բանալ, որ՝ վերջէն Մեծ-Տեսքին սարահարթին և Քրանքլին լեռին մէջ ա-

մնէն ուղիղ արահետը պիտի լինէր : Ծառերն՝ որ արդէն ծանօթ տեսակներու կ'պատկանէին, փառաւոր էին : Հարպէրդ ուրիշ նոր ծառեր ալ դիտեց, ինչպէս վիշապաորներ (dragonnier) զոր Բէնքրօֆ բամբարտաւան պրամներն անուանեց — վասն զի՝ իրենց մեծութեան չնայելով՝ շուշանակերպ (liliacée) բանջարեղէնի ընտանիքէն էին, սոխին կամ ծներեկին պէս : Այս վիշապաորներն փայտատին արմատներ կրնային տալ, որ երբ եփուին, շատ պատուական կ'լինին, և եթէ քիչ մը խաշուին խիստ ախորժեղի ըմպելի մը կ'հայթայթեն : Ուստի այս տունկերէն ժողվեցին :

Երկար եղաւ այս ճամբորդութիւնն անտառին մէջ : Բոլոր օրը տեկեց, և ստով կարող եղան կենդանիներն ու բոյսերը դիտել : Թօփ՝ որ մասնաւորապէս կենդանիներ կ'փնտուէր, խոտերուն ու մացառներուն մէջէն կ'վազէր, և անխախտ ամեն տեսակ երէ դուրս կ'հանէր : Հարպէրդ ու Գեղէոն Սրիլէդ երկու քանկաւոր սպաններէն նետի հարուածներով, նոյնպէս կենդանի մ'որ ողնիի և մըջնակեր թռչունի մը կ'նմանէր. առաջնոյն կ'նմանէր, վասն զի զնդակի պէս կ'լոր էր և սուր խայթիչներ ունէր, երկրորդին՝ վասն զի պեղիչ ըղունդներ ունէր, նոյնպէս երկար ու վտիտ ցուռ կ'որ կտուցի պէս կ'վերջանար, և տարածուն լեզու մ'որ փոքր փուշերով ծածկուած էր և բոտոտները պահելու կ'ծառայէր :

Եւ երբոր պտուկը նետենք այդ կենդանին, ըսաւ բնականապէս Բէնքրօֆ, ինչ բանի պիտի ծառայէ :

— Պատուական կովի կտորի մը, պատասխանեց Հարպէրդ :

— Մենք ալ իրմէ ուրիշ բան չպիտի պահանջենք՝ պատասխանեց նաւորդը :

Այս արշաւանքին ժամանակ՝ քանի մը կինձեր տեսան, որ բնաւ մտադիր չէին փոքրիկ խմբին վրայ յարձակելու և կ'երևէր թէ ահարկու վայրի կենդանիներու չպիտի հանդիպէին, երբ թանձր պուրակի մը մէջ թղթակիցը՝ իրմէ քանի մը քայլ հեռու՝ ծառի մ'առաջին ճիւղերուն մէջ՝ կենդանի մը կարծեց տեսնել որ իրեն աչքին արջ մ'երևցաւ, և սկսաւ զայն գծադրել հանդարտութեամբ : Բարեբաղդարար՝ Գեղէոն Սրիլէդի համար՝ այս կենդանի-

բանաստեղծ (plantigrade) սոսկալի կենդանիներու ընտանիքէն էր : Պարզապէս Կուլա (koula) մ'էր, որ քոյլ անուամբ աւելի ծանօթ էր, մեծ շան մը հասակն ունէր, տնկուած և աղտոտ մազեր, թաթերն զօրաւոր ձիրաններով զինուած, որով կարող կ'լինէր ծառերէն մտնելու և տերեւներով մնանելու : Երբ լաւ մը քննեցին այս կենդանիին տեսակը, որուն զբաղմունքը չվրդովեցին, Գեդէոն Սըիւէզ սքրեց ուրջ բառն իր դժադրին տակէն և անոր տեղ Կուլա դրաւ : ապա իրենց ճամբան շարունակեցին :

Երեկոցեան ժամը հինգին՝ Կիւրոս Սմիթ նշան ըրաւ որ դադար առնուն : Անտառէն դուրսն էր, այն հզօր քարամոյթներուն սկիզուն որ Փրանքլէնի լեռին արեւելեան կողմը կ'ամրապնդէին : Քանի մը հարիւր քայլ հեռու Կարմիր-Վտակը կ'հոսէր, և հետեւապէս ըմպելի ջուրը հեռու չէր :

Շուտ մը բնակութեան տեղը պատրաստեցին : Մէկ ժամ հազիւ անցեր էր որ անտառին ծայրը՝ ծառերուն մէջ՝ ոստերէ և բազիզով հիւսուած ու բրտի կառով ձեփուած հիւզ մը շինեցին բաւական ապահով : Հետեւեալ օրուան ձյեցին երկրաբանական խուզարկութիւնները : Ընթրիքը պատրաստուեցաւ, հիւզին առջև աղւար կրակ մը սկսաւ վառել, շամփուրը դարձաւ, և ժամն ութին մինչդեռ գաղթականներէն մին կ'հսկէր որպէս զի կրակարանին կրակը վառ պահէ, եթէ երբէք վտանգաւոր կենդանի մը շրջակայքը թափառի, միւսները խոր քուն մը կ'քաշէին :

Հետեւեալ օրն՝ ապրիլի 21ին, Կիւրոս Սմիթ Հարպէրդին ընկերակցութեամբը՝ գնաց փնտռելու այն հին հողերն որոց վրայ արդէն հանածոյքի կտոր մը դասեր էր : Հանքին խառն հողին երեսը գտաւ, գրեթէ գետակին աղբիւրին մօտ, հիւսիս-արեւելեան քարամոյթներուն մէկուն կողմնակի հիման ոտքը : Այս հանածոյքն որ շատ երկաթ ունէր, հալելի հողի մը մէջ փակուած, կատարելապէս կ'յարմարէր այն երկաթի աշխատութեան կերպին զոր չափազէտը մասձեր էր ՚ի գործ գնելու, այսինքն կատալանեան եղանակն, բայց պարզուած՝ ինչպէս որ Քօքսիքա կղզին կ'գործածեն :

Երգարն՝ կատալանեան եղանակը կ'պահանջէ հնոցներու և բո-

վերու շինութիւնն որոց մէջ ածուխն ու հանածոյքը՝ վրայէ վրայ գրուելով կ'այլափոխին ու կ'հալին :

Բայց Կիւրոս Սմիթ կ'փափաքէր այս շինութիւններն արդիւնաւորել, և կ'ուզէր պարզապէս շինել, հանածոյքի և ածուխի հետ խորհանարդ կոյտ մը, որու կեդրոնը պիտի ուղղէր իր փքոցին հովը :

Անտարակոյտ այս պիտի լինէր Տուրալ-Կայէնի և մարդարնակ աշխարհին առաջին մետաղագործները : Երբ ինչ որ յաջողեր էր Ալափն թուներուն, ինչ որ արդէն լաւ արդիւնք կ'տար հանածոյքն ու այրելին առատ եղող երկիրներու մէջ՝ անտարակոյտ պիտի յաջողէր այն պարագաներու մէջ ուր կ'գտնուէին Աինքօլն կղզւոյն գաղթականները :

Ինչպէս հանածոյքը՝ նոյնպէս քարածուխն ալ գտան, առանց դժուարութեան և մօտ տեղ մը հողին երեսը : Նախ հանածոյքը մանր կտորներ ըրին, և ձեռքով մաքրեցին անոր երեսն աւրող աղակերթիւնները : Այն տեսն ածուխ և հանածոյք կոյտ կոյտ պատրաստեցին և յաջորդական խաւերով — ինչպէս որ ամխաւաձառը կ'ընէ երբոր ածուխ ընել կ'ուզէ : Ինչպէս որ փայտի ամխաւաձառը կ'ընէ երբոր այդ փայտն ածուխ ընել ուզէ :

Այս կերպով՝ փքոցին տուած հովին զօրութեամբը՝ ածուխն ամխաթթու պիտի գտնուար, ապա ածխի որսից, որմէ պիտի լուծուէր երկաթի որսիցը, այսինքն թթուածինը պիտի զատուէր :

Այսպէս շարունակեց գործը չափազէտը : Փոկի կաշիէ փքոցն, որու ծայրը դժուարահալ (refractaire) հողէ խողովակ մը կար, և որ արդէն կաւեղէնի թրծոցին մէջ պատրաստուած էր, հանածոյքին կոյտին մօտ դրուեցաւ : Չափազէտն այս մեքենան ունեւնալով որ շրջանակէ, չուաններէ և հակակշիռներէ կ'բաղկանար, այն հանածոյքի կոյտին վրայ անբաւ հով թափեց, որ ջերմութիւնը սաստկացրնելով՝ քիմիական այլակերպութեան օգնեց զուտ երկաթ յառաջ բերելով :

Այ գործողութիւնը դժուարին եղաւ : Չայն զլուխ հանելու համար գաղթականներուն բոլոր համբերութիւնն և ուշիմութիւնը

Բայց դարձեալ՝ եթէ ցուրտը դեռ սպառնալից չէր, անձրևա-
յին եղանակը մտաւուտ էր, և այս մնաւոր կղզւոյն մէջ՝ ծովուն
ամեն խտուրթեանց ենթակայ դանուելով՝ Խաղաղական Ովկիանո-
սին միջևը, դէշ օդերը յաճախ և թերևս շատ ահուելի պիտի լի-
նէին:

Հետևապէս հարկ էր լրջօրէն մտածել և շուտով որոշել ա-
ւելի հանդիստ բնակարան մը գտնելու խնդիրը քան թէ Կարկառ-
ները:

Բնապէս Բէնքրօֆ յատուկ սէր ունէր այն բնակութեան հա-
մար զոր ինք գտեր էր, բայց հասկըցաւ որ հարկ էր ուրիշ մը
գտնել: Արդէն՝ ծովուն կողմէն Կարկառները քններ էին, այն պա-
րագաներուն մէջ՝ զոր ընթերցողը կ'ըլլէ, և չէին կարող մի և
նոյն վտանգներուն մէջ ընկնիլ:

«Սակայն, յարեց Կիրոս Սմիթ, որ նոյն օրն այս բաներու
վրայ կ'խօսակցէր իր ընկերներուն հետ, հարկ է որ քանի մը
զգուշութիւններ ընենք:

— Ինչո՞ւ համար, ըսաւ թղթակիցը, կղզին մարդաբնակ չէ
բնաւ:

— Արդ՝ հաւանական է, պատասխանեց չափազէտը. թէև ամեն
կողմն դեռ լաւ մը չքննեցինք, բայց եթէ մարդկային արարած
մը չկայ այս տեղ՝ կ'վախնամ որ վտանգաւոր կենդանիներ առտո
չլինին: Ուստի՝ պէտք է որ կտրելի յարձակման մը դէմ սլափա-
րուինք, և չստիպենք մեզմէ մէկը հսկելու ամեն իրիւրն՝ կրակը
վառ պահելու համար: Ասկէ զատ՝ բարեկամներս, պէտք է ամեն
բան դուշակել: Այս տեղ Խաղաղականին մէկ կողմն ենք ուր
ստէպ մալեցի ծովահէներ կ'յաճախեն . . . :

— Ինչ, ըսաւ Հարպերդ, ամեն ցամաքէ այսչափ հեռու տեղ
մը պիտի գային:

— Այո, որդեակ, պատասխանեց չափազէտը: Այս ծովահէն-
ներն յանդուգն նաւորներ են ինչպէս նաև ահարկու չարադործ-
ներ, և հետևապէս պարտաւոր ենք կարևոր զգուշութիւնները զանց
չընել:

— Լաւ ուրեմն, պատասխանեց Բէնքրօֆ, երկուտանի կամ
քառուտանի վայրենիներուն դէմ ինքզինքնին պիտի զօրացնենք:
Բայց, Պարոն Կիրոս, միթէ արժան չէք դատեր կղզւոյն բոլոր
մասերը զննել գործի մը ձեռնարկելէն առաջ:

— Այդ աւելի օրինաւոր է, յարեց Գեդէոն Սթիլէզ: Ո՞վ
դիտէ, կարելի է դիմացի եզերքը պիտի կարենանք գտնել քար-
այր մը զոր պարագ տեղն այս կողմը փնտռեցինք:

— Այդ իրաւ է, պատասխանեց չափազէտը. բայց կ'մոռնաք,
իմ բարեկամներս, որ առուակի մը մտ բնակիլը մեզի շատ յար-
մար է, և թէ Քրանքէնի լեռին սարէն ոչ առուակ տեսանք և
ոչ գետ արևմտեան կողմը: Ընդ հակառակն՝ այս տեղ Մէքսի-
կեան և Արևնդ լճակին մէջ կ'գտնուինք, և այս մեծ առաւելու-
թիւն մ'է զոր պէտք չէ մոռնալ: Ասկէ զատ՝ այս ծովափունքն
որ արևելեան կողմը կ'նայի, միւսին պէս տարևոր հովերու են-
թարկուած չէ: որ հիւսիս-արևմտեան կողմէ կ'փչէ այս կիսա-
դուռափն մէջ:

— Ուրեմն, Պարոն Կիրոս, պատասխանեց նաւորը, լճակին
ծայրը սնակ մը շինենք: Հիմակ թէ աղիւս և թէ գործիներ ու-
նինք: Աղիւսագործ, բրուտ, ձուլիչ, դարբին լինելէն ետե՛ կըր-
նանք եթէ կամենաք որմնաղիր ալ լինիլ:

— Այո, բարեկամ, բայց որոշում մ'ընելէն առաջ՝ պէտք է
փնտռել: Եթէ բնակարան մը գտնենք որ բնութիւնն ինքնին պատ-
րաստած է, շատ նեղութիւններէ կ'ազատինք, և աւելի ապահով
պատասպարան մը կրնար դառնալ մեզի համար, վասն զի թէ ներ-
քին և թէ արաւքին թշնամիներու դէմ պաշտպանուած պիտի լի-
նէր:

— Իրաւ է, Կիրոս, պատասխանեց թղթակիցը, բայց արդէն
ծովեզրին բոլոր այն հատաքարէ լեռը քննեցինք, և ծակ մը, և
ոչ իսկ բացուած մը գտանք:

— Ո՛չ, և ոչ սոր մը, յարեց Բէնքրօֆ: Ա՛հ, թէ որ կա-
րենայինք այս պատին մէջ բնակարան մը փորել՝ քիչ մը բարձր,
այնպէս որ յարձակումը զերծ պահուի, ահա այս բան շատ յար-
մար է:

մար պիտի լինէր : Արդէն ասկից կ'տեսնեմ՝ ծովուն վրայ նայող ճակատը հինգ վեց սենեակ . . . :

— Այդ սենեակները լուսաւորելու համար պատուհաններ ալ, ըստ Հարպէրդ ծիծաղելով :

— Եւ սանդուղ մը վեր ելնելու համար, յարեց Նապ :

— Կ'ծիծաղեք, զոչեց նաւորդը, և ինչո՞ւ համար : Ի՞նչ կայ անկարելի առաջարկածիս մէջ : Միթէ քարուքար և բրիչ չունինք : Միթէ Պ. Կիրոս վաւօդ չ'պիտի կարենայ շինել քարերը կարելու համար : Այնպէս չէ՞, Պարոն Կիրոս, մեզն պէտք եղած օրն՝ վաւօք պիտի շինես :

Կիրոս Սմիթ խանդագին Բէնքրօֆի խօսքերը մտիկ ըրեր էր, որ իր քիչ շատ մտացածին խորհուրդները բացատրելու ետեւէ էր : Այս հասարակէ կոյար կոտրել՝ մինչև իսկ վաւօդով՝ հերքելէսեան զործ մ'էր, և ստուգիւ ցաւալի էր որ բնութիւնն այս աշխատութեան ծանր մասը չէր կատարած : Բայց չափազանս պատասխանեց միայն նաւորին ըսելով թէ պատն աւելի ուշ ուշով քննել պէտք է, զետակին բերանէն՝ մինչև հիւսիսակողմն աւարտող անկիւնը :

Ուստի դուրս ելան, և դրեթէ երկու մղոն տարածութեամբ տեղեր յետին ծայր ուշադրութեամբ զննեցին : Բայց և ոչ տեղ մը լեռին որմն՝ որ հարթ ու շիտակ էր, որ և է խոռոչ մը չունէր : Ժայռի աղանիներու բոյներն որ նոյն լեռին կատարը կը թռչտէին՝ իրօք սարին նոյնպէս հատաքարին առաջարկներուն վերայ բացուած ծակեր էին :

Այս ցաւալի պարտալայ մ'էր, իսկ անկարելի բան էր՝ բաւական լայն փապար մը բանալու մտօք՝ այն քարածայրը կոկնել ուրազով կամ վաւօդով : Գիպուածն այնպէս բերել էր որ՝ նոյն ծովեզրին կողմերն՝ Բէնքրօֆ մէկ հատիկ բնակելի պատասպարանը գտեր էր . գէթ առ ժամայ, այսինքն՝ այն կարկառներն զոր պէտք էր սակայն թողուլ :

Երբոր կրկրազննութիւնը լմնցաւ՝ զաղթականները պատին հիւսիսային անկիւնը գտնուեցան, որ կ'լմննար երկայն դարձուցող

ներով որ մինչև առաջափը դալով կ'անհետէին : Այս վայրէն մինչև արևմտեան կողմի ծայրագոյն սահմանը՝ տեսակ մ'արձախէ (talus) կ'յօրինէր, հողերէ և աւաղէ, և խիտ քարակոյտներէ, տունկերով, խոտերով կապուած՝ և միայն քառսուն հինգ աստիճանի անկեան մը տակ ծռած : Գէս ու դէն՝ դեռ ևս հատաքարը կ'ցցուէր և սուր ծայրերով դուրս կ'ելնէր այս տեսակ մը Ժայռալէն (falaise) : Այս դարձուփոսներու վրայ փունջ փունջ ծառեր աստիճանաբար կ'երևէին, և բաւական թանձր խոտ մը զայն կը ծածկէր : Բայց այս ցանցաւ բոյներն ասկից անդին չէին տարածուեր և աւաղուտ երկար դաշտավայր մը, որ ծայրափին ստորոտէն կ'սկսէր, մինչև ծովեզրը կ'տարածուէր :

Կիրոս Սմիթ իրաւամբ մտածեց որ լճակին աւելցուի ջրերն այս կողմէն ջրվէժի պէս պիտի հոսէին : Իրաւի, պէտք էր անշուշտ որ կարմիր-Գետակին բերած աւելորդ ջուրը տեղ մը կորուէր : Արդ՝ այս տեղն զեռ չէր գտած չափազէտը՝ արդէն քննուած ծովափներու վրայ, այսինքն՝ զետակին բերանէն՝ արևմուտեան կողմը, մինչև Սեծ-Տեսքին սարահարթը :

Այն ատեն չափազէտն առաջարկեց իր ընկերներուն որ որմնութիւն վեր մազին, և բարձունքը բռնելով կարկառները վերագտնան, լճակին հիւսիսային և արևելեան ափունքը զննելով :

Այս առաջարկութիւնն ընդունուեցաւ, և՛ քանի մը վայրկեանի մէջ՝ Հարպէրդ ու Նապ վերին սարահարթը հասեր էին : Կիրոս Սմիթ, Գեդէոն Սքիլէզ և Բէնքրօֆ աւելի ծանր քաշելով անոնց ետեւն զացին :

Երկու հարիւր օտք բարձրէն՝ տերևներուն մէջէն՝ ջրին հարթ երեսն արևուն ճառագայթներուն տակ կ'շողար : Շատ չքնաղ էր դաշտանկարը նոյն տեղը : Գեղնորակ տերևներով ծառեր խմբուելով աչերու հաճոյք կ'պատճառէին : Քանի մը հին ահադին կոճղեր՝ տարիներէ ընկճած՝ իրենց սևորակ կեղևներով՝ դալարաւետ հողին վրայ կ'նկարուէին :

Այն տեղ կ'ճռուողէին անհամար վայրի թռչուններ՝ ճշմարիտ շարժուն հատուածակողմեր՝ որ մէկ ճիւղէ մը ընկնէ մը կ'ցատ

կէին : Կարծես թէ լոյսն՝ այս եղական ոստերուն մէջէն՝ լուծուած կ'հասնէր :

Գաղթականները՝ փոխանակ լճակին հիւսիսային ափունքը հասնելու՝ սարահարթին եզրը դարձան՝ այնպէս որ վտակին բերանը հասնին ձախ եզրին վրայ : Շատ շատ՝ մէկ ու կէս մղոնի շրջան մ'էր այս : Պտոյտը զիւրին էր, վասն զի ծառերն որ իրարմէ հեռու բուսած էին, ազատ անցք մը կ'ընդունին : Յայտնի էր որ այս սահմանին մէջ՝ արդատանգ դօտին կ'ըմնար և բոյսերն աւելի վտիտ կ'երեւէին այս տեղ քան թէ Կարմիր-Ատակին և Մերսիին միջևը գտնուած մասին մէջ :

Կիւրոս Սմիթ և իր ընկերներն այս նոր հողին վրայ քիչ շատ զգուշութեամբ կ'բալէին : Աղբիւր, նետեր, սրածայր երկաթէ կոթ ունեցող դաւազաններ, ահա ասոնք էին միայն իրենց զենքը : Սակայն բնա վայրի կենդանի մը չեղեցաւ և հասանական էր որ այս կենդանիներն աւելի կ'յաճախէին հարաւային խիտ անտառները : Բայց գաղթականներուն վրայ անախորժ սպառնութիւն մը բրու մեծ օձ մ'որու առջև Թօփ կայ առաւ, և որ տասն չորսէն մինչև տասն հինգ ոտք երկայնութիւն ունէր : Կայ գաւազանի հարուածով մը զոյն սպաննեց : Կիւրոս Սմիթ այս սողունը քննեց և ըստ որ թունա որ չէր, վասն զի անդամանդ-օձ տեսակին կը պատկանէր, որու միտով կ'կերակրին հարաւային Նոր-Կալի բնիկները : Բայց հասանական էր որ թունա որ տեսակէն ալ գտնուէին, ինչպէս այն լիճերն՝ որ ակիշտ որ ագի ունին, և ոտքին տակ կանգնին, կամ այն թևա որ օձերն, որ երկու ականջ ունին, որով կարող կ'ընին կարգէ դուրս արագութեամբ սլանալու :

Երբ Թօփի առաջին երկիւղն անցաւ, կատաղօրէն սողուններուն ետէն ընկաւ այնպէս որ կրնար վտանգի հանգիստիլ : Աւստի իր տէրը շարունակ զանի իր քովը կ'կանչէր :

Քիչ ատենէն Կարմիր-Ատակին բերանը՝ ձիւտ այն տեղն ուսկից լճակը կ'ընալէր, գաղթականները հասան : Գիմայի եզրին վրայ տեսան այն կէտն ուր գայեր էին Փրանքէնի լեռէն իջնելու ատեն :

Կիւրոս Սմիթ տեսաւ որ վտակին ջուրը բաւական առատ էր՝ տասի հարիւր բնութիւնն անոր խորշակ մը պատրաստած էր որպէս զի լճակին տեղցուկ ջուրն հոսի : Ահա այս խողովակը զըտնել պէտք էր, վասն զի անտարակոյս սահանք մը կ'յօրինէր որու մեքենական զբոս թիւնը կարելի էր օգտակար կերպով դորձածել :

Գաղթականներն՝ ըստ հաճոյս քալելով՝ բայց սուանց իրարմէ շատ հեռանալու՝ սկսան լճակին եզրերը դառնալ որ շատ ժայռուտ էր : Զրբըր յետին ծայր ձկնուէտ կ'երեւէին, և Բէնքրօֆ միտքը դրաւ քանի մը գործիներ շինել որպէս զի զանմէք որսայ :

Նախ հարկ եղաւ հարաւ-արեւելեան եզրին սուր ծայրէն դառնալ : Կարելի էր ենթադրել որ ջրերուն հստամն այս կողմէն կը կատարուէր, վասն զի լճակին ծայրը գրեթէ սարահարթին եզրերը կ'զար շոշափելու : Բայց սխալ կարծիք մ'էր այս, և դաղթականներն ափունքը զննելը շարունակեցին, որ թեթեւ մը կորեւէն ետև՝ զուգահեռական դժով նորէն ծովըրը կ'իջնէր :

Այս կողմէն՝ քարափը (berge) նուազ անտառուտ էր, բայց քանի մը ծառերու փոռնիք, պտղիս անդին ցրուած՝ դաշտանկարին նկարակերտ գեղեցիկութիւնը կ'աւելցընէին : Այն ատեն Կրէնդ լճակն իր բոլոր տարածութեամբը կ'երեւէր, և ջրերուն երեսը թեթեւ հով մ'անդամ չէր խորշոմիր :

Թօփ մացառներէն անցնելով՝ այլ և այլ թռչուններու երամներ թուցոց, և Գեղէրն Սքիլէր ու Հարպէրը իրենց նետերով զանոնք ողջունեցին : Այս հատերէն մին պատանակին նետին հանդիպեցաւ, և ճախճախուտ խոտերու մէջ ընկաւ : Թօփ անոր վրայ պեցաւ, և ճախճախուտ խոտերու մէջ ընկաւ, սևազոյն կարճ վազեց, և լուզերդ աղւոր թռչուն մը բերաւ, սևազոյն կարճ կտուցով, լայնկիկ ճակատով, փնջա որ շրջանակէ մը լայնցած մատերով, սպիտակ ծիւղով մը շրջապատած թերթով : Փուլ (soulque) մ'էր այս, խոշոր կաքառի մը մեծութեամբ, երկայնաձառ խոբրին վերաբերող թռչուն մ'որ երկայնասրունք և մաշկոտն հաւերու կարգին մէջ անցում մը կ'յօրինէ : Տխուր երէ մը վերջապէս, և ոչ այնքան ակորժահամ : Բայց Թօփ այնքան բժախոյիք չպիտի երեւէր և որոշուեցաւ որ հաշուն անոր ընթերթին համար պահանջ

Այն ատեն դաղթականները լճակին արեւելեան եզրը կ'փառէին, և քիչ ժամանակէն արդէն ծանօթ կողմը հասնելու չսկիտի ուշանային:

Չափազէտը շատ կ'զարմանար, վասն զի չէր տեսներ աւելորդ ջրերու հոսման նշան մը: Թղթակիցն ու նաւորդն իրեն հետ կը խօսակցէին, և իր զարմանքը չէր ծածկեր անոնց առջև:

'Նոյն միջոցին' Թօփ որ մինչև այն ատեն հանդարտ էր, անհաստութեան նշաններ ցոյց տուաւ: Ուշիմ կենդանին քարափին վրայ կ'երթար կ'գար, յանկարծ կ'կենար, և լծակին մէկը վէր բռնած՝ ջուրը կ'նայէր՝ որպէս թէ անսեսանելի որսի մ'ետեւէ էր. ապա կատաղօրէն կ'հաջէր, կերպով մը բան մը կը փնտռէր և յանկարծ ձայնը կ'կտրէր:

Ոչ Աիրոս Սմիթ, ոչ իր ընկերները նախ Թօփին այս վիճակին ու չէին դրած. բայց շան հաջումներն այնքան շտուգան, որ չափազէտը սկսաւ հող ընել:

«Ի՞նչ կայ, Թօփ՝ հարցուց նա:

Շունն սատասելով իր տիրոջ քովը դնաց, ճշմարիտ անհանգստութիւն մը ցոյց տալով, և նորէն քարափը սրայաւ: Ապա յանկարծ լճակին մէջ նետուեցաւ:

«Աստ եկուր, Թօփ, պոռայ Աիրոս Սմիթ, որ չէր ուզեր թողուլ իր շունն կասկածելի ջրերու մէջ մանելու:

— Բայց ի՞նչ կ'զատնայ ջրերուն տակը, հարցուց Բէնքրօֆ լճակին երեսը քննելով:

— Թօփ երկակնեցալ մը տեսած պիտի լինի, պատասխանեց Հարպէրդ:

— Կայնա՞ մը, անշուշտ, ըսաւ Թղթակիցը:

— Կայնաներն լայնութեամբ աւելի ցած երկիրներու մէջ կը գտնուին:

Սակայն Թօփ վերադարձեր էր իր տիրոջ կոչման վրայ և քարափն ելեր էր. բայց չէր կարող հանդարտ մնալ. Բարձր խոտերուն վրայ կ'ցատկէր, և իր բնազդովը զինքն առաջնորդելով, կարծես թէ աներևոյթ էակի մը կ'հետեւէր, որ լճակին ջրերուն

ներքև սարդած լինէր՝ անոր եզերքը քերելով: Սակայն ջրերը հանդարտ էին, և անոր երեսը խորշոմ մը չէր վրդովեր: Շատ անդամ քարափին վրայ կեցան դաղթականներն և ուշադրութեամբ դիտեցին: Բան մը չերեցաւ: Ասոր մէջ դաղտնիք մը կար:

Չափազէտը շատ կ'նեղանար:

«Լճացրնեք մեր երկրազնութիւնը՝ ըսաւ նա:

Աէս ժամ ետք՝ ամենքը լճակին հարաւ-արեւելեան անկիւնը հասեր էին և Մեծ-Տեսքին սարահարթին վրայ կ'դանուէին: Այս կէտը հասնելով՝ լճակին ափերուն քննութիւնն իրբև վերջացած կ'երեւէր, և սակայն չափազէտը չկրցեր էր երևան հասնել թէ ուսկից և ի՞նչ կերպով ջրերը կ'պարպուէին:

«Սակայն այն խողովակը պիտի գտնուի, կ'կրկնէր նա, և որովհետև դրսէն չէ, այնտեղ է որ ներսէն, ծովեզրին հասաքարէ լեռին ներսէն փորուած լինի:

— Բայց ի՞նչ կարևորութիւն կ'ընծայես այս բանն իմանալու, սիրելիք իմ Աիրոս, հարցուց Գեդկոն Սրիլէդ:

— Բաւական մեծ կարևորութիւն մը, պատասխանեց չափազէտը, վասն զի եթէ ջրերուն հոսումը լեռին մէջէն կ'կատարուի, կարելի է որ անոր մտ խողովակը մը գտնուի, որ թերևս բնակելի դառնար՝ եթէ ջրերը դարձնէինք:

— Բայց միթէ կարելի չէ, Պարոն Աիրոս, որ ջրերը նոյն իսկ լճակին յատակէն հոսին, ըսաւ Հարպէրդ, և ծովը թափին ստորերկրեայ ճամբով մը:

— Իրաւի, այդ կարելի է, պատասխանեց չափազէտը, և եթէ այդպէս է, պիտի ստիպուինք մենք մեր ձեռք մեր տունը շինել, քանի որ բնութիւնն շինութեան առաջին պատրաստութիւնները չէ ըրած:

Ուրեմն դաղթականները՝ Կարկառներն երթալու համար սարահարթէն անցնելու կ'պատրաստուէին, վասն զի երկիւյեան ժամը հինգն էր՝ երբ Թօփ անհանգստութեան նոր նշաններ ցցուց: Կատաղօրէն կ'հաջէր. և երկրորդ անգամ լճակը նետուեցաւ, առանց իր աւելը զայն քովը պահել կարենալու:

Ամենքը գէպ 'ի քարտիր վանկեցին : Շունն արդէն քսան ոտք
հեռու էր , և Վիբոս Սմիթ զանի բարձրաձայն կ'կոչէր , երբ ա-
հաղին զլուխ մ'ելաւ ջրերուն երեսն , որ այն սեղուանքն այնչափ
խորունկ չէր նրեկեր :

Հարպէրդ իսկայն հասկըցաւ որ այս կենդանին երկակենցաղ մ'էր
կոնաձև գլխով և խոշոր աչերով , և մետաքսի պէս երկայն մա-
զերով պիտեր ունէր :

« Զբախով մը » պտայ նա :

Զբախով մը չէր այն , այլ այս տեսակին մէկ օրինակը , որ
կիտերու գասին կ'վերարերի , և ախտն անուն ունի : Վասն զի իր
ունդունըր ցուկին վերի կողմէն բաց էին :

Այս ահաղին կենդանին շան վրայ յարձակեր էր , որ 'ի զուր
ջանաց անորմէ խոյս տալ քարափն ելնելով : Կիբոս Սմիթ չէ՞
կարող բան մ'ընել զայն աղատելու համար , և զեռ Գեղէն Սրի-
լէգ կամ Հարպէրդ իրենց աղեղները լարելու միաք չըրած՝ Թօփ
ախտնէն բռնուելով ջրին տակը կ'սուղէր :

'Նապ' երկաթապատ գերանը ձեռքը բռնած՝ շան օգնութեան
համար ուղեց , միտքը դնելով ահարկու կենդանին հալածել մին-
չև անդամ լճակին մէջ :

« Ո՛չ , 'Նապ » ըսաւ չափազէտը , իր քաջախիտ սպասաւորը
չ'թողլով որ երթայ :

Սակայն ջրերուն մէջ պայքարը կ'շարունակուէր , անբացարե-
լի պայքար մը , վասն զի , այն վիճակին մէջ Թօփ 'ի հարկէ չէր
կարող գինալբել , պայքար մ'որ սոսկալի պլախ լինէր , ինչպէս
որ լճակին երեսը ջրերուն եռալէն կ'երեկէր , վերջապէս՝ պայքար
մ'որ միայն շան մահուամբը կրնար լիննալ :

Բայց յանկարծ՝ փրփուրէ շրջանակի մը մէջ՝ Թօփ երեսն ե-
լաւ : Անձանօթ զօրութենէ մը գէպ 'ի օղը սրանալով լճակին ե-
րեսէն տաս ոտք վեր բարձրացաւ , նորէն ընկաւ սաստիկ պղտո-
րած ջրին մէջ , և քիչ առանձն առաջ ծանր վէրքի՝ հրաշքով
մ'աղատելով քարափն ելաւ :

Կիբոս Սմիթ և իր ընկերները կ'նայէին առանց բան մը հաս-

կրնալու : Ուրիշ աւելի անմեկնելի դէպք մը կ'պատահի : Կարծես
թէ կիւր դեռ ևս կ'շարունակուէր ջրին տակ : Անշուշտ ախ-
տնէր հզօր կենդանիէ մը զարնուելով՝ իր աղատութեան համար կը
մարտուէր՝ շունն արձակ թողլէն ետև :

Բայց այս կոխն երկար չտեկց : Զրերը արիւնով կարմրեցան ,
և ախտնէն մարմնն՝ կարմրուն ծածկոյթէ մը դուրս ելնելով՝ որ
չորս կողմը տարածուեցաւ , լճակին հարաւային անկիւնն՝ պղտիկ
աւազափին վրայ եկաւ ընկաւ :

Գաղթականներն այն կողմը վաղեցին : Տիւնիկը մեռած էր :
Ղիթխարի կենդանի մ'էր , տասն հինգէն մինչև տասն վեց ոտք
երկար , որ անտարակոյտ երեք չորս հազար լիպրէ ծանրութիւն
պիտի ունենար : Իր վզին վրայ վէրք մը բացուած էր , որ կարծես
թէ սրածայր սուրի մը միջոցաւ եղած էր :

Ի՞նչ էր ուրեմն այն երկակենցաղն որ՝ սոսկալի հարուածով
կրցեր էր ահարկու ախտնէն սպաննելու : Ոչ որ կարող էր ըսել ,
և՛ այս դիպուածին վրայ խորհելով՝ Կիբոս Սմիթ ու իր ընկեր-
ները Կարկանտերը դարձան :



ԳԼՈՒՆԾ ԺԷ.

Այնչափ լճակին — Ազգարար յորձանդը — Կիբոս Սմիթի խորհուրդը —
Ներք — Տիւնիկին ճարտը — Թերթատարէ հրատարներու — Կիբոս — լճակին —
Ծճճբար երկուրէ — Ինչպէս կ'ընտել տղայրանիւնը — Ահա — Բարակ
— Ծճճբայ լիւն — Ազոտի լիւն — Նոր վրէժ մը .

Հետեւեալ օրը՝ մայիսի 7ին՝ Կիբոս Սմիթ ու Գեղէն Սրիլէգ՝
թողլով որ 'Նապ նախաձաշը պատրաստէ՝ Մեծ — Տեղին սարա-
հարթէն վեր ելան , մինչդեռ Հարպէրդ և Բէնքրօֆ գետակէն վեր
կ'ելնէին , որպէս զի փայտի պաշարը նորոգեն :

Չափազետն և թղթակիցը քիչ ասենէն պզտիկ աւաղափը հասան, լճակին հարաւային ծայրը, և որու վրայ երկակենցաղն ընկած կ'մնար: Արդէն թռչուններն երամովին այս մտտա կոյտին վրայ իջեր էին, և պէտք եղաւ զանոնք քարերով վունտել, վասն զի Կիւրոս Սմիթ Տի-կոնիկն ճարտը պահել կ'ուզէր և դաղթականութեան պիտոյից համար գործածել: Իսկ կենդանիին միւր, անշուշտ պատուական սնունդ մը պիտի տար, վասն զի Մալէզիոյ քանի մը կողմերը՝ բնիկ իշխաններուն սեղանին համար կ'պահեն զայն: Բայց այս գործը հասպին կ'վերաբերէր:

Նոյն պահուն՝ Կիւրոս Սմիթ՝ ուրիշ խորհուրդներ ունէր գլխուն մէջ: Առջի օրուան դիպումը մտքէն չէր ելած՝ և իրեն անդադար հոգ կ'պատճառէր: Կ'փափաքէր այս ստորաջրային կառուցի պողտնիքը թափանցել և իմանալ թէ պտիվածանիներուն (mastodonte) կամ ծովային հրէշներուն որ ցեղին կ'պատկանէր այն կենդանին որ փակուելին այնպիսի տարօրինակ վէրք մը տուեր էր:

Ուրեմն անգ՝ լճակին եզրն էր Կիւրոս Սմիթ, կ'նայէր, կ'գիտէր, բայց բան մը չէր երևեր հանդարտ ջրերուն ներքև, որ աբեռն առաջին ճառագայթներէն կ'փախչէին:

Այն պզտիկ լճակին վրայ որ փակուելի մարմինը կ'կրէր, ջրերը շատ խոր չէին. բայց այս կէտէն սկսեալ՝ լճակին յատակը քիչ քիչ կ'ցածնար և հաւանական էր որ կեդրոնը, անհուն պիտի լինէր խորութիւնը: Լճակը կրնար նկատուիլ իբրև աւազան (vasque) որ Կարմիր-Վտակին ջրերէն լեցումած պիտի լինէր:

«Լաւ ուրեմն, Կիւրոս, հարցուց թղթակիցը, ինձ կ'երևի որ այս ջրերը կասկածելի բան մը չունին»:

— Ո՛չ, սիրելիք իմ՝ Սքիլէդ, պատասխանեց չափադէտը, և իբրև չգիտեմ թէ ինչպէս պէտք է բացատրել երկկուան դիպումը:

— Կ'խոստովանիմ, վրայ բերաւ Գեդէոն Սքիլէդ որ այս երկակենցաղանին եղած վէրքը գէթ տարօրինակ է, և նմանապէս չեմ կարող բացատրել թէ ինչպէս Թօփ այնպէս ու ժղին ջրերէն դուրս նետուեցաւ: Իբրև պիտի կարծուէր թէ հզօր բողբոջ մը զայն

այսպէս նետեց, և թէ այս բազուկը՝ դաշոյնով մը զննուած՝ տիկնակը սպաննեց:

— Այո՛, պատասխանեց չափադէտը, որ սկսեր էր խորհիլ: Ասոր մէջ բան մը կայ՝ զոր չեմ կարող հասկընալ: Բայց դու, սիրելիք իմ՝ Սքիլէդ, կարող ես ըմբռնել թէ ես ալ ինչ կերպով ազատեցայ, ինչպէս ալիքներէն պրծելով՝ աւաղափոյաներուն մէջ փոխադրուեցայ: Ո՛չ, չեմ կարող ըմբռնել, այնպէս չէ: Ուստի ասոր մէջ դաղտնիք մը կ'տեսնեմ, զոր անշուշտ օրին մէկը երևան պիտի հասնէք: Այս զարմանալի դիպումներուն վրայ դիտողութիւն ընենք, բայց անոնց վրայ շնորհէք մեր ընկերներուն առջև: Մեզի համար պահէք մեր դիտողութիւններն ու մեր գործը շարունակենք»:

Արդէն գիտենք որ չափազետը չէր կրցած դտնել թէ սակից կ'եղէր լճակին աւելցուել ջուրը, և որովհետև յորդեղուն նշանը տեղ մը չէր տեսած՝ ի հարկէ խողովակ մը պիտի դանուէր ուրիշ տեղ մը:

Արդ՝ Կիւրոս Սմիթ բաւական զարմացաւ տեսնելով զգալի յորձանք մ'որ նոյն տեղը կ'նշմարտէր: Քանի մը փայտի մանր կտորներ նետեց և դիտեց որ այդ փայտերը դէպ ՚ի հարաւային անկիւնը կ'գիմէին: Այս յորձանքին հետևեցաւ, քարափին վրայ քալելով և լճակին հարաւային ծայրը հասաւ:

Այն տեղ ջրերը քիչ մը կ'նուաղէին, այնպէս որ կարծես թէ յանկարծ հողին մէկ ծերպէն կ'հոսին:

Կիւրոս Սմիթ մտիկ ըրաւ, լճակին երեսը դնելով իր ականջը՝ որոշակի լսեց սառեբրկոեայ ջրվէժ մը:

«Ահա այս տեղ է, ըսաւ ոտք ելնելով, այս տեղ ջրերը կը հոսին, անշուշտ, այս տեղին է որ հատաքարին մէջ խողովակ մը դտնելով ջրերը դէպ ՚ի ծովը կ'հոսին, խոռոչներու մէջէն, որմէ կրնանք օգուտ քաղել: Լաւ, ես այդ ջրվէժին ճամբան պիտի դտնեմ»:

Չափազետը երկար ճիւղ մը կտրեց, տերևները հանեց և երկու արփերուն անկեան մէջ մղելով, դիտեց որ լայն ծակ մը կայ

բացուած՝ ջրերէն գրեթէ մէկ ոտք վար, այս էր խողովակին բերանը, զոր մինչև այն օրը պարապ տեղը կ'փնտուէին, և յորձանքին զօրութիւնն այնքան մեծ էր այն կողմն, որ ճիւղը չափազէտին ձեռքէն թուաւ և անյայտ եղաւ:

«Ա՛լ տարակոյս չկայ հիմակ, յարեց Կիւրոս Սմիթ: Այս տեղն է խողովակին բերանը, և այդ բերանը պիտի երեւան հանեմ:

- Ի՞նչպէս, հարցուց Գեղէոն Սրիլէդ:
- Լճակին ջրերուն հարթութիւնն երեք ոտք վար իջեցընելով:
- Եւ ի՞նչպէս կարելի է վար իջեցընել, իրենց հարթութիւնը (niveau):

- Այս ծակէն ուրիշ աւելի լայն ծակ մը բանալով:
- Ո՞ր կողմը, Կիւրոս:
- Լճակին այն կողմն որ ամենէն աւելի ծովափին կ'մտնենայ:
- Բայց այս հատաքարէ եզր մ'է, դիտել տուաւ թղթակիցը:
- Լաւ ուրեմն, պատասխանեց Կիւրոս Սմիթ, վաւօղով պիտի կարեմ այդ հատաքարը, և ջրերը հոսելու ատեն՝ պիտի ցածնան այնպէս որ այդ ծակը պիտի երեւան հանն . . . :

- Եւ ջրվէժ մը պիտի յօրինեն աւազափին վրայ թափելով, յարեց թղթակիցը:
- Զրվէժ մը որ կրնայ մեզի ծառայել, պատասխանեց Կիւրոս: Եկու՛ր, եկու՛ր:

Չափազէտն իր ընկերը հեան առաւ տարաւ, որու վստահութիւնը Կիւրոսի վրայ այնքան մեծ էր որ տարակոյս չունէր թէ այս ձեռնարկութիւնը պիտի յաջողէր: Եւ սակայն՝ այս հատաքարէ եզրը, ի՞նչպէս պիտի բանար, ի՞նչպէս պիտի բանար առանց վաւօղի և պակասաւոր գործիներով ժայռերը պիտի ճեղքէր: Միթէ այս աշխատութիւնն իր ուժէն վեր չէր, որով պիտի ճգնէր չափազէտը:

Երբ Կիւրոս Սմիթ և թղթակիցը Կարկանդակները մտան, Հարպէրդն ու Բէնքրօֆը գտան որ իրենց փայտերուն բեռն իջեցընելու կ'պարապէին:

«Փայտահատներն իրենց գործը լմնցընելու վրայ են, Պարոն

Կիւրոս, ըսաւ նաւորդը ծիծաղելով, և երբոր որմնադործի պէտք ունենաս . . . :

— Որմնադործի պէտք չունիմ, այլ տարրաբանի, պատասխանեց չափազէտը:

— Այո՛, յարեց թղթակիցը, կղզին վաւօղով պիտի վեր հաննք . . . :

- Կղզին պիտի վեր հաննք, զոչեց Բէնքրօֆ:
- Գէթ մասամբ մը, պատասխանեց Գեղէոն Սրիլէդ:
- Մտիկ ըրէք ինձ, բարեկամներս՝ ըսաւ չափազէտը:

Եւ անոնց հաղորդեց իր դիտողութեանց արդիւնքը: Իր կարծիքն այս էր որ Մեծ Տեսքին սարահարթին տակ գտնուած հատաքարէ կոյտին մէջ անպատճառ քիչ շատ մեծ քարայր մը պիտի գտնուէր, և կ'մտադրէր մինչև այն քարայրը թափանցելու: Այս ընելու համար՝ պէտք էր նախ բանալ այն ճեղքուածքն ուսկից ջրերը կ'հոսէին, և հետեապէս անոնց հարթութիւնը ցածցընել՝ աւելի լայն ծակ մը բանալով: Սակայն հարկ կար պայցընել՝ աւելի մը շինել, որպէս զի լճակին մէկ ուրիշ կողմը մեծ եւք թիչ նիւթ մը շինել, որպէս զի լճակին մէկ ուրիշ կողմը մեծ եւք մը բանան: Ահա այս գործը փորձելու պիտի սկսէր Կիւրոս Սմիթ այն քրէական նիւթերուն միջոցաւ զոր բնութիւնն իրեն կ'մատակարարէր:

Աւելորդ է ըսել թէ ամենքը, մանաւանդ Բէնքրօֆ ինչ խանդով ընդունեցան այն խորհուրդը: Մեծ միջոցներ գործածել, հատաքարը փորել, ջրվէժ մը բանալ, այս ամեն բաները նաւորդին փափաքած բաներն էին: Եւ ինք տարրաբան, նոյնպէս որմնադիր կամ կողշակար լինելու պատրաստ էր, քանի որ չափազէտը տարբարանի պէտք ունէր: Ինչ որ ուզէր պիտի լինէր, մինչև անգամ պէ՛տք էր:

Նախ՝ նապի ու Բէնքրօֆի յանձնեցին պիւլօնի ճարպը հանելու և միտը պահելու հոգը. այդ միտը կերակուրի սահմանուած էր: Շուտ մը ճամբայ ելան, առանց ուրիշ բացատրութիւն մը խնդրելու իսկ: Չափազէտին վրայ իրենց ունեցած վստահութիւնն անսահման էր:

Քանի մը վայրկեան ետք՝ Կիւրոս Սմիթ, Հարպերը և Գեդէոն Սքիլէր՝ վանդակաձև սապատը քաշելով և զետակէն վեր ելնելով, քարածուխի հանքը կ'զիմէին ուր առատ էին այն լներթաքարի հրաքարներն (pyrites schisteuses) որ իրօք՝ նորայարդար խառն հողերու մէջ կ'գտնուին, և որոց մէկ օրինակն արդէն Կիւրոս Սմիթ իր հետը բերեր էր:

Բոլոր օրը զօրծածեցին այս հրաքարներէն փոխադրելու կարկանդակը: Գիշերը շատ մը տակաւ հրաքար կար այն սեղ:

Հետևեալ օրը՝ մայիսի 8ին, չափազեան սկսաւ իր զործողութիւնը: Այս լներթաքարի հրաքարները բաղադրուած լինելով գլխաւորապէս ածուխէ, կոպճուտ հողէ (silice), պաղլեղէ և ծծումբ-երկաթէ — և այս շատ առատ էր — հարկ էր ծծումբ-երկաթը զտակ և կարելի եղածին չափ շուտ ծծմբատի (sulfate) վերածել: Իբրք մի անգամ ծծմբատը ձեռք ձգէր, կրնար այնուհետև ծծմբոյ-թթուն անկից հանել:

Երախ՝ այս էր չափազիտին նպատակն՝ որու կ'փափաքէր հասնիլ: Ծծմբոյ-թթուն ամենէն շատ զօրծածուած օժանդակ մ'է, և ազգի մը ճարտարական կարեորութիւնն անոր սպառման վրայ կրնայ չափաւ լ: Այս թթուն վերջէն շատ օգտակար պիտի լինէր պաղթականներուն, մոմի, մորթերու, աղազի և ուրիշ բաներու համար. բայց նոյն պահուն՝ չափազեան օրիշ բանի զօրծածութեան համար կ'պահէր զայն:

Կիւրոս Սմիթ՝ Կարկանդակներուն ետին՝ սեղ մ'ընտրեց որու հողը շատ լաւ հարթուած էր: Այս հողին վրայ կոյտ մը ճիւղեր և կտրուած փայտ դիզեց, որու վրայ հրաքարեայ լներթաքարեր դրուեցան, իրարու մօտ կամարաձև դիրլով. ապա բոլորին վրայ կայծքարի բարակ խաւ մը ծածկեց՝ առաջուց ընկոյզի խոշորութեան վերածելով:

Այս ընելէն ետև՝ փայտին կրակը տուին, որու տարութիւնը լներթաքարերուն հաղորդուեցաւ, որ սկսան բռնկել, վասն զի ածուխու ծծումբ կ'պարունակէին: Այն ատեն՝ ուրիշ նոր մանրած կայծքարի խաւեր այնպէս մը դրուեցան որ ահադին կոյտ մը

յօրինեցին, և այս կոյտին արտաքին կողմն հարով ու խոտերով ծածկեցին, անոր վրայ քանի մը հովածուար (oven) բանալէն ետև, որպէս թէ ածուխ շինելու համար փայտի գէղ մը կ'աղէին ածուխէ (carboniss):

Յետոյ թոյլ տուին որ այլափոխութիւնը կատարուի, և սասն սասն երկու օրէն աւելի պէտք կար որպէս զի ծծումբ-երկաթը ծծմբատի, և պաղլեղը՝ պաղլեղի-ծծմբատի փոխուի. երկու լուծանելի նիւթեր, միւսներն, այս է կոպիճն, այրած ածուխն ու մոխիրը լուծանելի չլինելով:

Երբոր այս քիմիական զօրծողութիւնը կ'կատարուէր, Կիւրոս Սմիթ ուրիշ զօրծերու ալ զբաղեցուց իր ընկերներն, որ ոչ միայն եռանդ այլ աշխատութեան համար տեսակ մը մոլեկոլութիւն կ'ցուցնէին:

Նսպ ու Բէնքրօֆի պիւնկի ճարար հաներ էին, որ հողէ մեծ սափորներու մէջ գրուեցաւ: Այս ճարարին տարրներէն մին դտել պէտք էր, այս է կլէտերին (glicérine) զայն աճառելով: Արդ՝ այս արդիւնքը ստանալու համար, բաւական էր միայն կալքաքարով (soude) կամ կիրով յարդարել:

Արդարե՛ն՝ այս նիւթերէն մին կամ միւսը՝ ճարարին հետ խառնուելով աճառ մը պիտի շինէր կլէտերինը զատելով, և ահա ճիշտ այս կլէտերին էր որ չափազեալը կ'ուզէր ձեռք ձգել: Կիր՝ պահաս չէր, արդէն յայտնի է. միայն կիրի զօրծածութիւնն կրային, անլուծանելի, հետևապէս անօդուտ աճառ մը պիտի տար, մինչ զեռ կալքաքարի կիրառութեամբ կարելի պիտի լինէր ստանալ դիւրալոյժ աճառ մը, որ առ տնին բաներ մաքրելու համար շատ լաւ կ'զօրծածուի:

Արդ՝ իբրև զօրծնական մարդ՝ Կիւրոս Սմիթ պիտի ջանար կալքաքար գտնել: Միթէ դժուարին էր այս. ոչ, վասն զի ծովային տունկերն ծովեզրը առատ էին, ինչպէս՝ Էրաբոյա (salicorne), Կլէտեր (floeide) և ամեն մամուային բոյսերն որ լուսեր կ'յօրինեն: Ուստի այս տունկերէն շատ մը ժողվեցին, նախ չորացուցին, և ապա բայ օդին այրեցին փոսերու մէջ: Այս այրուելը շատ օրեր

տեկց, այնպէս որ ջերմութիւնն մոխիրը հալելու չափ բարձրացաւ և աճիւն ընելու դործողութեան արդիւնքն եղաւ խիտ գորշախառն կոյտ մը, որ շատ ասեմէ 'ի վեր քնտկա՞ն կալաւք անուամբ ծանօթ է :

Այս արդիւնքը ստանալէն ետե՛ւ չափադէտը կալաքարով դործեց ճարպը, և այսպէս՝ մէկ կողմէն ստացաւ լուծանելի աճառ և միւս կողմէ՛ այն չէզոք նիւթը, կէտէրէնը (քաղցրանիւթ) :

Բայց այս բաւական չէր : Կիւրոս Սմիթին պէտք էր՝ վերջէն ընելիք պատրաստութեան համար, ուրիշ նիւթ մը, բորակածնի թթու-կալի (azotate de potasse) որ աւելի ծանօթ է բորակաղի (sol de nitre) կամ աղբորակի անուամբ :

Կիւրոս Սմիթ պիտի կարենար այս նիւթը շինել՝ ածխոյ թթու-կալի գործածելով՝ որ բոյսերու աճիւնէն դիւրաւ կ'հանուի՝ բորակի թթուով : Բայց բորակի թթու (acide azotique) չկար և իրօք այս թթուն էր զոր վերջապէս կ'ուզէր ստանալ : Ուրեմն յուր շրջանի մը մէջ կ'գտնուէր, որմէ երբէք չպիտի կարենար ելնել : Բարեբաղդարար՝ այս անգամ, բնութիւնն իրեն աղբորակ պիտի հայթայթէր, և ասոր համար ուրիշ նեղութիւն մը չպիտի քաշէր, այլ միայն ծուր ու հաւաքել : Հարպէրդ շար մ'աղբորակ (gisement) դտաւ կղզիին հիւսիսակողմը, Ֆրանքլէն լեռին ստորտը, և կ'մնար միայն այս աղը մաքրել :

Այս այլ և այլ աշխատութիւններն ութ օրի չափ տեկցին : Ուրեմն լմացած էին, ծծմբաւորին (sulfure) ծծմբոյ-երկաթի փոխելու դործողութիւնն աւարտելէն առաջ : Հետեւեալ օրերն՝ գաղթականները ժամանակ ունեցան պլաստիկ (plastique) կաւով դժուարահալ ամաններ յօրինել և ալիսէ հնոց մը շինել՝ մասնաւոր գերք մը տալով անոր, որ ծծմբաւոր-երկաթը զտելու պիտի ծառայէր, երբոր այս ծծմբաւոր-երկաթը ձեռք ձգուէր :

Մայիսի 15ին մօտ՝ այս ամեն բաները լմացան, գրեթէ այն միջոցին որ քիմիական այլաձևութիւնը կ'աւարտէր : Գեգէոն Սքիլէդ, Հարպէրդ, Նապ ու Բէնքրօֆ՝ չափադիտին ճարտար հրահանգաց վրայ՝ աշխարհիս ամենէն ճարպիկ բանորնները դարձեր

էին : Իրաւ է որ՝ հարկն՝ ամեն դասատուներու մէջ՝ այնպիսի դասատու մ'է որու մարդ աւելի ականջ կ'ընէ և որ աւելի լաւ կ'հրահանգէ :

Երբոր հրաքարի կոյտը կրակէն լուծուեցաւ, այս դործողութեան արդիւնքը ծծմբաւոր երկաթի, ծծմբաւոր պաղլեղի, կոպիճի, ածուխի և աճիւնի մնացորդ լինելով՝ բոլորն ալ ջրով լի աւազանի մը մէջ դրուեցաւ : Այս խառնուրդը շարժեցին, թողուցին որ հանդչի, ապա ամանի մը մէջ պարպեցին, և ստացան հեղուկ մ'որ լուծման մէջ կ'պարունակէր ծծմբաւոր երկաթի և ծծմբաւոր պաղլեղի, միւս նիւթերը պինդ մնալով, քանի որ անլոյծ էին :

Վերջապէս այս հեղուկը մասամբ շոգիանալով՝ երկաթի ծծմբաւոր բիւրեղներ պամանին տակը նստան, և անշոգիացած հեղուկը, որ պաղլեղի ծծմբաւոր կ'պարունակէր, մէկ դի թողուցին :

Ուրեմն Կիւրոս Սմիթ իր ձեռքին տակն ունէր երկաթի ծծմբաւոր բառի շատ մը վանակներ, որմէ պէտք էր հանել ծծմբոյ թթուն :

Ճարտարական կիրառութեանց մէջ՝ ծծմբոյ թթուն շինելու համար պէտք եղած դործիւնները սուղ են : Իրօք՝ ահագին գործարաններ, կապարէ կազմածք, պլադինէ գործիւններ պէտք են, թթուէն անվթար մնացած, և որու մէջ այլափոխութիւնը կ'կատարուի և այլն :

Չափագէտը չունէր բնաւ այս գործոյքն իր ձեռքին ներքեւ, բայց գիտէր որ 'ի Պոհեմիա մասնաւորապէս, ծծմբոյ թթուն կ'զործածուի աւելի պարզ միջոցներով, որ մինչև անգամ կեղբոնաւորութեան վերին ասօիճան մ'արտադրելու առաւելութիւնն ունին, Այսպէս կ'շինուի Նորտհոլլանդի թթու անուամբ թթուն :

Ծծմբաւոր երկաթը ձեռք ձգելու համար՝ Կիւրոս Սմիթ մէկ գործողութիւն մը միայն ունէր ընելու, այսինքն գոյ ամանի մէջ երկաթի ծծմբաւոր վանակները կիրի շրջել, այնպէս որ ծծմբոյ թթուն շոգիանալով՝ զտուի, և այս շոգիւնները վերջէն խտանալով թթուն արտադրեն :

Ահա այս գործողութեան կ'ծառայէին դժուարահալ ամաններն, որոց մէջ վանակները դրուեցան և փուն, որու ջերմութիւնը

ծծմբոյ թթուն պիտի զտէր : Այս գործողութիւնը շատ լաւ յառաջ գնաց , և մայիսի 20ին , սկսելէն տասն երկու օր ետք՝ չափազէտը ստացեր էր այն օժանդակն (argent) զոր վերջէն պիտի գործածէր այլ և այլ կերպով :

Արդ՝ ինչո՞ւ համար ուրեմն այս օժանդակը կ'ուզէր ունենալ : Պարզապէս բորակի թթուն արտադրելու համար , և այս դիւրին եղաւ , քանի որ աղբորակն՝ ծծմբոյ թթուով խառնուելով՝ զամամբ ճիշտ այդ թթուն իրեն տուաւ :

Բայց վերջապէս այդ բորակի թթուն ի՞նչ բանի պիտի գործածէր . ահա այդ բանը դեռ չգիտէին իր ընկերները , վաս զի չափազէտն իր աշխատութեան էական նպատակը չէր յայտնած :

Սակայն չափազէտն իր նպատակին կ'հասնէր , և վերջին գործողութեամբ մը ձեռք ձգեց այն նիւթն որ այնքան աշխատութիւն պահանջեր էր :

Բորակի թթուն առնելէն ետև՝ կէտէրինի մօտ դրաւ որ առաջուց կեդրոնացած էր ջրեփոցի (bain-marie) մէջ շոյիանալով , և այսպէս չափազէտն՝ առանց զովացուցիչ խառնուրդ գործածելու , շատ մը եղատ ու դեղնորակ հեղուկ ստացաւ :

Այս վերջին գործողութիւնն Կիւրոս Սմիթ առանձին ըրեր էր՝ Կարկառներէն հեռու , վասն զի վտանդ կար պայթելու , և երբ իր բարեկամներուն բերաւ այս հեղուկէն սրուակ մը , բաւական համարեց ըսելու անոնց .

«Աւասիկ բորակաւոր-կլիսէրին» :

Իրաւի՛ նոյն սոսկալի արտադրութիւնն էր , որու պայթիչ զօրութիւնն տասնապատիկ աւելի է քան սովորական վառօդինը և որ արդէն այնքան պատահարներ պատճառեց : Սակայն՝ քանի որ զայն սնդաղընելու , այսինքն հաստատուն նիւթի մը հետ , կաւի կամ շաքարի հետ՝ խառնելու միջոցը գտան , որոնք բաւական ծակոտէն (poreux) են զայն պահելու , այս վտանգաւոր հեղուկը կարելի եղաւ գործածել աւելի ապահովութեամբ : Բայց այս միջոցը դեռ ծանօթ չէր այն միջոցին որ Լինքօլն կղզիին զաղթականները կ'աշխատէին :

«Միթէ այս հեղուկն է որ մեր ժայռերը պիտի ճայթեցընէ , ըսաւ Բէնքրօֆ բաւական կասկածոտ դէմքով մը :

— Այո՛ , բարեկամդ իմ , պատասխանեց չափազէտը . և այս բորակաւոր կլիսէրինն այնքան աւելի ներգործութիւն պիտի ունենայ որչափ որ այս հատաքարը յետին ծայր կարծր է և պայթելու համար աւելի մեծ դիմադրութիւն պիտի ընէ :

— Եւ ե՞րբ պիտի տեսնենք այդ բանը , Պարոն Կիւրոս :

— Վաղը , երբոր հատաքարին մէջ բովի ծակ մը բանանք՝ պատասխանեց Կիւրոս Սմիթ :

Հետեւեալ օրը — մայիս 21 — կանուխ այդուն՝ հանքահանները Կրէնդ լճակին արևելեան եզրը յօրինող հրուանդանը գացին , որ ծովափէն հինգ հարիւր քայլ հեռու էր : Նոյն տեղը՝ սարահարթը ջրէն դէպ 'ի վար էր , և ջրերն հատաքարի շրջանակէն անդին չէին անցներ :

Ուրեմն յայտնի էր որ եթէ այս շրջանակը կտրէին , ջրերն այդ ելքէն դուրս պիտի վայթէին և գետակ մը պիտի յօրինէին , որ սարահարթին հակ երեսին վրայ հոսելէն ետև՝ պիտի դահաժիժէին առաջափին վրայ : Հետեւապէս լճակին ջրերուն երեսը պիտի ցածնար և խողովակին բերանը բաց պիտի մնար , և այս էր չափազէտին վերջնական նպատակը :

Ուտտի պէտք էր հատաքարի շրջանակը կտտրել : Չափազէտին հսկողութեան ներքե՛լ՝ Բէնքրօֆ՝ ձեռքը քարուրազ մը , զոր ճարպիկութեամբ և ուժգնութեամբ կ'գործածէր , հատաքարն սկսաւ կոփել արտաքին պատուարին կողմէ :

Այն ծակը զոր պիտի բանային , եզերքին հորիզոնական ողնայարին վրայ կ'սկսէր , և շեղակի պիտի ներս մղուէր , այնպէս որ լճակին ջրերէն վար մակերևոյթ մը դասէր :

Այսպէս՝ պայթիչ զօրութիւնը , ժայռերը հեռացընելով՝ պիտի թողուր որ ջրերն առատօրէն դուրս թափին և հետեւապէս բաւական վար իջնեն :

Այս աշխատութիւնն երկար եղաւ , վասն զի չափազէտը , ահազին ներգործութիւն մը պատճառել ուզելով , կ'փափաքէր որ

դոնէ տասը լիտրէ բորակաւոր կլիսէրին գործածէ այս գործողութեան համար : Բայց Բէնքրօֆ, Նապին օդնութեամբը, այնքան վաւ գործեց որ երեկոյեան ժամը չորսին՝ բովի ծակը լմնցեր էր :

Ամառ բորբորիչ նիւթը բռնկելու խնդիրը : Սովորաբար՝ բորակաւոր կլիսէրինն պայթիչ խանձով կ'բռնկի, որ պայթելով՝ շաչիւնն յառաջ կ'բերէ : Արդարեւ՝ պէտք է ընդհարում մ'որ այս շաչիւնը պատճառէ, և եթէ պարզապէս այդ նիւթը վառէին, առանց պայթելու պիտի այրէր :

Կիւրոս Սմիթ անշուշտ կարող էր խանձ մը պատրաստել : Պայթիչ նիւթ չգտնուելուն՝ չափազէտը կարող էր վառօգեայ բամբակէ նման նիւթ մը շինել, քանի որ բորակաթթու ունէր : Այս նիւթն երբ փամփուշտի մը մէջ սեղմուէր և բորակաւոր կլիսէրինի մէջ գրուէր՝ պատրոյդի մը միջոցաւ պիտի կարենար պայթիլ և շաչիւնն յառաջ բերել :

Բայց Կիւրոս Սմիթ գիտէր որ բորակաւոր կլիսէրինը բախումով շտապէլու յատկութիւնն ունի : Աստի միաբը գրաւ այս յատկութենէ օգուտ քաղել, ուրիշ միջոց մը գործածելու ազատ լինելով՝ եթէ այն ուզած միջոցը չյաջողէր :

Արդարեւ՝ եթէ մտրձով բախեն բորակաւոր կլիսէրինի քանի մը կաթիլներ, կարծր քարի մը վրայ թափուած, բաւական է պայթում պատճառել : Բայց այդ գործողութիւնն ընողը չէր կարող անդ մնալ և մտրձի հարուածը տալ՝ առանց նոյն գործողութեան զոհ գնալու :

Կիւրոս Սմիթ մտածեց ուրեմն՝ բովի ծակին վերեւ դերանէ մը կախել, բուսային թելի մը միջոցաւ, երկաթի ծանր կոյտ մը : Աւրիշ երկար թել մը՝ առաջուց ծծմբելով՝ առաջնոյն կապուած էր իր մէկ ծայրէն, մինչդեռ միւս ծայրը հողին վրայ էր շատ մը քայլ հեռու բովի ծակէն : Կրակն այս երկրորդ թելին պիտի տային, որ մինչև առաջնոյն հասնելը պիտի այրէր : Այս ալ բոս կարգի կրակ առնելով՝ պիտի կօտրուէր, և երկաթէ կոյտը բորակաւոր կլիսէրինի վրայ պիտի գահավիժէր :

Ուստի այս գործիքը պատրաստուեցաւ . յետոյ չափազէտն՝ իր

ընկերները հեռացընէլէն ետեւ՝ բովի ծակը լեցուց այնպէս որ բորակաւոր կլիսէրինը մինչև բերանը հասաւ, և ծայրին երեսը քանի մը կաթիլ թափեց, արդէն կախուած երկաթի կոյտին տակը :

Այս ընէլէն ետեւ՝ Կիւրոս Սմիթ ծծմբաւոր թելին ծայրը բռնեց վառեց, և ապա նոյն տեղէն հեռանալով՝ դարձաւ Կարկանդէն իր ընկերներուն մօտ :

Թելը քսան հինգ վայրկեան պիտի այրէր, և իրօք՝ քսան հինգ վայրկեան ետք՝ անսկարագրելի պայթում մ'որոտաց : Կարծես թէ բոլոր կղզին հիմէն կ'զղրզէր : Քարերու կոտրուանքներ օդն ելան, այնպէս որ կարծես թէ հրալեռէ մը կ'սրու թկային : Օդին մէջ ցնցումն այնքան ուժգին էր որ Կարկանդէն ծայրերը տատանեցան : Գաղթականները թէև բովէն երկու մղոնէն աւելի հեռու էին՝ բայց գետինն ընկան : Նորէն կանգնեցան, սարահարթէն վեր ելան, և վաղեցին այն տեղն ուր լճակին քարափը պայթումէն բացուած պիտի լինէր . . . :

Ահադին ցնձու թեան աղաղակներ արձակեցին, հատաքարէ շրջանակէն լայն ձեղք մը բացուեր էր : Զուրն անկից արագօրէն կը վիժէր, սարահարթէն կ'վազէր փրփրելով՝ մինչև ողնայարը հասնելով, և երեք հարիւր ոտք բարձրութենէ աւազափին վրայ կ'գահավիժէր :



ՊԵՆՏԱՆԻ ԹԵՆ

Բէնքրօֆ ալ բանի մը վրայ կասկած չուէր — Լճակն հին ջրհորը — Սարոս երկրեայ էջոմ մը — Կրանիքէ ճամբայ մը — Թե՛ք անկէս եզաւ — Կերբոնային բարայր — Սորոքին ջրհոր — Գաղտնիք — Քարոտարաքի հարսածոյնէր — Վերադարձ :

Կիւրոս Սմիթի խորհուրդը յաջողեր էր . բայց իր սովորութեան համեմատ՝ առանց գոհունակութիւն մը յայտնելու, անշարժ

կ'կենտրոն՝ պուկունքը սեղմած, աչքն անթարթ: Հարպեղ սաստիկ վառուած էր. Նսպ ուրախութենէ կ'ցատկուէր. Բէնքրօֆ իր խոշոր գլուխը կ'օրէր և այս խօսքերը կ'արտասանէր.

«Օ՛ն, մեր չափադէտը շատ ճարտար է»:

Իրաւի, բորակաւոր կլիսէրինն զօրապէս ազդեր էր: Լճակին տրուած հարուածն այնքան կարևոր էր, որ այն նոր խողովակէն դուրս ելած ջրերն հին խողովակէն անցնող ջրերուն դէթ եռապատիկն էր: Ուրեմն այս պիտի հետևէր որ, գործողութենէ քիչ մ'ետք՝ լճակին մակերևոյթը գոնէ երկու կանգուն վար պիտի իջնէր:

Գաղթականները վերադարձան Կարկառները, որպէս զի ուրազ, երկաթասայր դերաններ, թելէ չուաններ, հրահան և լուցիկ առնուն, ապա վերադարձան սարահարթը: Թօփ անոնց հետ կ'երթար:

Ճամբան երթալու ատեն՝ նաւորդը չկրցաւ համբերել և չափադէտին ըսաւ.

«Բայց միթէ գիտես, Պարոն Կիւրոս, որ այն հնարած չքնաղ հեղուկովդ բոլոր կղզին օդը հանել դիւրին պիտի լինէր»:

— Տարակոյս չկայ. ոչ միայն կղզին, այլ բոլոր ցամաք աշխարհները, նոյն իսկ երկիրը, պատասխանեց Կիւրոս Սփթ, Միայն քանակութեան խնդիր մ'է այս:

— Միթէ չէն կարող այն բորակաւոր կլիսէրինը գործածել հրացաններ պարպելու համար, հարցուց նաւորդը:

— Ո՛չ, Բէնքրօֆ, վասն զի շատ պայթիչ նիւթ մ'է. բայց դիւրին է բամբակէ վառօդ շինել, և մինչև անգամ սովորական վառօդ, քանի որ բորակաթթու, աղբորակ, ծծումբ և ածուխ ունինք: Գոժաղդարար, հրազէն կ'պակսի մեզ:

— Ո՛հ, Պարոն Կիւրոս, պատասխանեց նաւորդը, եթէ միայն քիչ մը կամք ընես . . . »:

Չճամբիտը, Բէնքրօֆ «անկարելի» բառը Լինքօնի կղզիին բառարանէն սրբեր էր:

Գաղթականներն՝ Մեծ-Տեսքին սարահարթը հասնելով՝ իսկոյն

լճակին ծայրը դիմացին, որու մօտ հին ջրմուղին բերանը կը բացուէր, որ հիմակ՝ ջրէն վեր մնացած պիտի լինէր: Հետևապէս ջրմուղն անցանելի պիտի լինէր, վասն զի ջրերն անկից չպիտի հոսէին, և անշուշտ դիւրին պիտի լինէր ներքին դիւրքը հասկընալու:

Քանի մը վայրկեան ետք՝ գաղթականները լճակին ստորին անկիւնը հասեր էին, և բաւական եղաւ իրենց աչք մը նետելով հասկընալ որ ցանկալի արդիւնքը ստացեր են:

Արգարև՝ լճակին կրանիդէ որմին վրայ, որ այժմ՝ ջրերուն մակերևոյթէն վեր էր, այնքան փափաքելի բացուածքը կ'երևէր: Նեղ հողաբլուր մը, ջրերուն քաշուելովը մերկ մնալով՝ թոյլ կ'տար որ անդ հասնին: Այս ջրմուղը դրեթէ քսան ոտք լայնութիւն ունէր, իսկ բարձրութիւնը միայն երկու ոտք էր: Կարծես թէ կոյնոցի մը բերանն էր՝ շրջապատը լրիկով մը: Այս ջրմուղէն չպիտի կարենային անցնիլ: Բայց Նսպ ու Բէնքրօֆ իրենց քարուրագն առին, և ժամ մը չանցած՝ անոր բաւական բարձրութիւն տուին:

Այն ատեն չափադէտը մօտեցաւ և գիտեց որ ջրմուղին որմերը, իր վերին մասին մէջ՝ զառիթափ մը չէր ցուցնէր երսուն երսուն հինգ աստիճանէն աւելի: Ուրեմն անցանելի էին, և եթէ իրենց գարուվարը չաւելնար, դիւրին պիտի լինէր մինչև ծովուն հարթութիւնը վար իջնել: Ուստի եթէ, ինչպէս որ շատ հաւանական էր, ընդարձակ խոռոչ մը կար այն կրանիդէ քարածայռին մէջ, թերեւ անկից օդուտ քաղելու միջոց մը գտնիէն:

«Լաւ ուրեմն, Պարոն Կիւրոս, ո՛վ կը բռնէ մեզ, հարցուց նաւորդը՝ նեղ անցքէն ներս մտնելու անհամբեր լինելով: Կ'նայիս որ Թօփ մզմէ առաջ դնաց»:

— Լաւ, պատասխանեց չափադէտը: Բայց պէտք է զդուռթեամբ գործել: Նսպ, զնա քանի մը ուետինի ճիւղ հաւաքէ»:

Նսպ ու Բէնքրօֆ լճակին ծովեզրը վաղեցին, որու եկերքն հովանաւոր եղի իններ և ուրիշ գալարի ծառեր կային: Եւ շատ չանցաւ իրենց ճիւղերով ներս մտան զոր ջահի ձևով շինեցին:

Այս ջահերն լուցիլի կրակով այրեցան և Կիւրոս Սմիթ, գաղ-
թականներուն գլուխն անցած՝ մութ քարայրին մէջ մտաւ, որ
երբեմն ջրի առատութենէ լեցուեր էր:

Ամեն ենթագրութեան հակառակ՝ այս ջրմուղին (boyau) տրա-
մաղիծը քանի կ'երթար կ'լայնար, այնպէս որ երկրազննիչները
վար իջնելով՝ կարող եղան գրեթէ խիոյն ոտքի վրայ շտակ կե-
նայ: Կրանիդին (հասաքար) անբաւ ժամանակէ՝ ի վեր մաշած
որմերը սահուն էին, և պէտք էր զգուշանալ գետինը չսահելու
համար:

Ուստի՝ գաղթականներն իրարու կապուեր էին լարով մը, ինչ-
պէս որ լեռէ վեր ելնող մարդիկ զերար կ'կապեն: Բարերազդա-
բար՝ կրանիդի ցյուած տեղեր, կերպ մը սանդուղ ձևացրնելով՝
վար իջնելու գործողութեան վտանգը կ' թեթևէին: Կայլակներ
որ դեռ ժայռերէն կախուած էին, ջահերուն լոյսէն երփն երփն
կ'փայլէին, և այնպէս կ'երևէր թէ անթիւ շթաքարի (stalactite)
ծածկեր էին որմերը:

Չափազէտը լաւ մը դիտեց այս սև կրանիդը: Չտեսաւ ոչ աս-
տիճան մը, (strate) և ոչ ճեղք մը: Բոլոր քարակոյտը խիտ ու
յետին ծայր պինդ էր և հետևապէս այս ջրմուղը կողիին չափ
հին: Քիչ քիչ ջրերը չէին փորած, չէ թէ Պասիդոն այլ Պլու-
տոն իր ձեռք ծակեր էր դայն, և պատին վրայ գիւրին էր նշմա-
րել ժայթքիչ գործողութեան մը հետքը զոր ջրերու հոսումն չէր
կրցեր բոլորովին ջնջել:

Գաղթականները շատ ծանր վար կ'իջնէին: Ա՛հ հարկէ այլայ-
լութիւն մը կ'զգային այս լեռին խորքն այսպէս յատաջելով, և
հասանական էր որ առաջին անգամ մարդկային էակներ այն տեղը
կ'այցելէին: Չէին խօսակցեր, այլ կ'մտմտային, և այս մամուռքը
ամեն մէկուն մտքէն անցաւ թէ կարելի է որ ահողին պողպտոյ
մը (poulpe) կամ ուրիշ հսկայական գլխաւոր մը (cephalopode) ներ-
քին փապարներուն մէջ բնակէր, որ ծովու հետ հարորակցու-
թիւն ունէին: Ուստի պէտք էր խոհեմութեամբ յառաջ երթալ:

Երաւ է որ Թօփ այս պղտիկ խմբին առջևէն կ'քալէր, և այս

շան ճարտարամտութեան կարելի էր վտահիլ, վասն զի՝ եթէ
վտանգ մը տեսնէր՝ անշուշտ պիտի ձայն տար:

Հարիւր ոտքի չափ վար իջնելէն ետև՝ բաւական ոլորուն ճամ-
բայ մը բռնելով՝ Կիւրոս Սմիթ որ առջևէն կ'քալէր, կանկ առ
ուռ, և ընկերներն իրեն միացան: Իրենց դարար առած տեղը
խոռոչաւոր էր, այնպէս որ միջին ընդարձակութեամբ քարայր մը
կ'ձևանար: Կամարէն ջրի կաթիլներ կ'հոսէին, բայց լեռին մե-
ջէն չէին ծորէր, այլ պարզապէս վերջին հետքն էին այն ջրանց-
քին որ այնքան երկար ժամանակ սոյն խոռոչին մէջ թաւալեր էր,
և թեթև մը տամուկ օլը բնաւ ժահահոտ բուրում մը չունէր:

«Լաւ ուրեմն, սիրելի Կիւրոս, բնաւ այն ատեն Գեղեկոն Սքի-
լէդ: Աւասիկ անծանօթ, խորանիստ օթեան մը, բայց՝ իրօք՝ բնա-
կելի չէ:

- Ինչո՞ւ համար բնակելի չէ, հարցուց նաւորդը:
- Ասան զի շատ պղտիկ է և շատ մութ:
- Կարող ենք զայն մեծցրնել, փորել, արև ու օդ առնելու
համար ծակեր բանալ, պատասխանեց Բէնքրօֆ, որու ամեն ինչ
կարելի կ' թուէր:
- Հարունակներ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, շարունակներ
մեր զննութիւնը: Կարելի է՝ աւելի վար իջնելով՝ պիտի տեսնենք
որ բնութիւնն այդ աշխատութենէ մեզ ազատած է:
- Գեռ բարձրութեան մէկ երրորդ մասն ենք, դիտել տուաւ
Հարպերդ:

— Գրեթէ երրորդ մասը, պատասխանեց Կիւրոս Սմիթ, վասն
զի ջրմուղին բերանէն հարիւր ոտքի չափ վար իջած ենք, և ան-
կարելի չէ որ հարիւր ոտք աւելի վար . . . :

— Ո՛ր է ուրեմն Թօփ . . . » հարցուց նապ իր տիրոջ խօսքն
ընդհատելով:

Քարայրին մէջ ասդիս անդին փնտուցին և շունը չգտան:
«Հաւանական է որ իր ճամբան շարունակած պիտի լինի, ը-
սաւ Բէնքրօֆ:

— Երթանք անոր միանանք՝ պատասխանեց Կիւրոս Սմիթ:

Նորէն սկսաւ իջնել : Չափադէտն ու շարիր կ'գիտէր թէ ջրմուղն
ինչ շեղումներ կ'ընէր, և թէ և շատ պայտաններ ունէր, անոր ընդ-
հանուր ուղղութիւնը կ'ըմբռնէր գիւրաւ, ուղղութիւն՝ որ դէպ 'ի
ծով կ'յանդէր :

Ուղղահայեաց գծին նայելով կողքեցիք յիսուն ոտնաչափ ևս
վար իջեր էին, երբ լեռին խորքէն եկած հեռաւոր ձայներ իրենց
ուշադրութիւնը գրաւեցին : Կանկ առին ու մտիկ ըրին : Այս ձայ-
ները գարահասաններէն դաշով կնչպէս ձայնը խողովակէ մը, որո-
շակի ականջի կ'հասնէին :

Թօփին հաջումներն են, պոռաց Հարպէրդ :

— Այո, պատասխանեց Բէնքրօֆ, և մեր քաջ շունը կատա-
ղօքէն կ'հաջէ այս անգամ :

— Մեր երկաթածայր վերդերն ունինք սյառաստ, ըսաւ Կիւ-
րոս Սմիթ : Զոյշ լինինք և առաջ անցնինք :

— Երթալով գործը հետաքրքրական կերպարան մը կ'առնու՞
մքմուաց Գեղէն Սքիլէզ նաւորդին ականջին, և նաւորդն ալ հաս-
տատական նշան մ'ըրտ :

Կիւրոս Սմիթ և իր ընկերները շան օդնութեան հասնելու հա-
մար սկսան շատ քալել : Թօփին հաջումներն հեռոցհեռէ աւելի
ղզալի կ'գառնային : Իր ընդհատ ձայնին մէջ տարօրինակ կատ-
ղութիւն մը կ'երևէր : Արդեօք կենդանիի՞ մը հետ կ'կրուէր որո-
մանութիւնը վերսկզբէր : Կարելի է ըսել որ կողքիք՝ չնայե-
լով այն վտանգն որու կ'գիմէին, հիմակ անդիմադրելի հետա-
քրքրութեամբ զրգուած էին : Գարահասուն վար չէին իջներ,
այլ կերպով մ'անոր որմին վրայ կ'սահէին, և քանի մը վայրկե-
սէն՝ վաթսուռն ոտք աւելի վար՝ Թօփին գտնուած տեղը հասան :

Այն տեղ՝ ընդարձակ ու փառաւոր քարայրի մը կ'յանդէր դա-
րահասոյ : Այն տեղ՝ Թօփ՝ վեր վար քալելով կ'հաջէր մոլեղնա-
բար : Բէնքրօֆ ու Նայ՝ իրենց ջահերը շարժելով հատաքարին
ամեն խորտ ու բորտ անդուանքը լոյս տարին, և նոյն պահուն՝
Կիւրոս Սմիթ, Գեղէն Սքիլէզ, Հարպէրդ՝ վերջը ձեռք բռնած՝
ամեն պատահարի պատրաստ կ'գտնուէին :

Ահագին քարանձաւը պարագ էր : Աղբեցիք ամեն կողմը պտը-
տեցան. բան մը չկար, ոչ կենդանի մը և ոչ շնչաւոր էակ մը :
Եւ սակայն Թօփ՝ հաջելը կ'շարունակէր. ոչ զգուանք, ոչ սպառ-
նալիք չիրցան զայն լռեցնել :

«Անտարակոյս ծակ մը պիտի լինի տեղ մը, ուսկից լճակին
ջրերը ծովը կ'հոսէին, ըսաւ չափադէտը :

— Ստոյգ է, պատասխանեց Բէնքրօֆ, և մեր աչքը չորս բա-
նանք որ ծակի մը մէջ չընկնինք :

— Գնա՛, Թօփ, դնա՛ պոռաց Կիւրոս Սմիթ :

Շունը՝ իր տիրոջ խօսքէն զրդուելով՝ քարայրին ծայրը վա-
ղեց, և այն տեղ սկսաւ աւելի սաստիկ հաջել :

Ետեէն գացին, և ջահերուն լուսով ճճմարիտ ջրհորի մը բե-
քանը տեսնուեցաւ, որ հատաքարին մէջ բացուեր էր : Ահա այն
տեղէն կ'վազէին լեռին մէջ երբեմն գտնուած ջրերը, և այս՝ շե-
ղակի ու անցանելի դարահաս մը չէր այս անգամ՝ այլ ուղղա-
հայեաց ջրհոր մը, որու մէջ մասնէլ անկարելի պիտի լինէր :

Ջահերը ջրհորին բերանը տարին ձուեցին : Բան մը չիրցան
տեսնել : Կիւրոս Սմիթ բոցավառ ոստ մը կտրեց և այս անդունդը
նետեց : Հրավառ ուտինն, որ արագօրէն վար իջնելուն աւելի
ևս բորբոքելու սկսաւ, ջրհորին ներսի դին լուսաւորեց, բայց
դեռ բան մը չերեցաւ : Ապա՝ բոցն անցաւ թեթեւ գողով մը, որմէ
խմացուեցաւ որ ջրին երեսը հասեր էր, այսինքն ծովուն երեսը :

Չափադէտը հաշուեց թէ որչափ ժամանակի մէջ բոցավառ ոս-
տը վար ընկաւ և ջրհորին խորութիւնը գտաւ, որ էր զրեթէ
իննսուն ոտնաչափ :

Հետեւապէս քարայրին յատակն իննսուն ոտնաչափ ծովուն մա-
կերեղոյթէն վեր էր :

«Աւասիկ մեր բնակարանն, ըսաւ Կիւրոս Սմիթ :

— Անշուշտ արարած մը կ'բնակէր այս տեղ, պատասխանեց
Գեղէն Սքիլէզ, որու հետաքրքրութիւնը դեռ գոհ եղած չէր :

— Լաւ ուրեմն, որ և է՝ արարած՝ երկակենդան կամ ուրիշ
մը, այս ծակէն փախաւ, օյատասխանեց չափադէտը, և իր տեղը
մեղի թողուց :

— Հոգ չէ, յարեց նաւորդը, կ'փափաքէի Թօփ լինիլ, քա-
ռորդ մ'առաջ, վասն զի պատճառ մ'ունէր անշուշտ հաջելուք:

Կիւրոս Սմիթ իր շան կ'նայէր, և իր քովը գտնուող ընկեր-
ներէն մին լսած պիտի լինի այս խօսքն զոր կ'մըմնջէր.

«Այո, կարծեմ թէ Թօփ մեզմէ աւելի բան դիտէ շատ բա-
ներու վրայ»:

Սակայն կողքեցոց փափաքը մեծ մասամբ իրացած էր: Գիպ-
ուածը՝ իրենց գլխաւորին հիանալի խորագիտութեան միանալով
գործին յաջող ելք մը տուեր էր: Այն տեղ՝ իրենց իշխանու-
թեան տակ ունէին՝ լայնարձակ քարայր մը, որու ընդարձակու-
թիւնը չէին կարող լինիլ չափել ջահերուն անբաւական լուսով,
այլ սակայն դիւրին պիտի լինէր այդ քարայրը զատ զատ սե-
նեակներու բաժնել, աղիւսէ միջնորմներով և զայն գործածել,
եթէ ոչ իբրև տուն, գէթ իբրև ընդարձակ օթեան: Զրեբը քա-
շուեր էին անկից և չէին կարող վերստին դառնալ: Նոյն տեղն
թափուր, անբնակ էր:

Միայն երկու դժուարութիւն կար. նախ՝ միթէ կարելի պիտի
լինէր այս վիճափոր խուռչը լուսաւորել. երկրորդ՝ անոր մուտքը
դիւրացընելու հարկ կ'ար: Լուսաւորութեան գալով անհնար էր
վերէն վար լոյս բերել, քանի որ քարայրին առաստաղն ահա-
դին խտութեամբ հատաքար էր, բայց կարելի է որ կողմնակի
որմը ծակելու յաջողէին, որ ծովու կողմը կ'նայէր:

Կիւրոս Սմիթ, որ վար իջնելու ատեն՝ քիչ շատ չափեր էր
անոր շեղակի ուղղութիւնն, և հեռեկայէս ջրմուղին երկայնութիւ-
նը, պատճառ ունէր կարծելու որ պատին առաջոյ մասն այնքան
թանձր չպիտի լինէր: Եթէ այսպէս լոյս բերէին ներս, նոր ելք
մ'ալ կրնար բացուիլ, վասն զի որչափ դուռ մը նոյնչափ պատու-
հաններ փորելով բանալ, և արտաքին ելնարան մը հաստատել
դիւրին պիտի լինէր:

Կիւրոս Սմիթ իր կարծիքը ընկերներուն հաղորդեց:

«Որեմն, Պարն Կիւրոս, գործի սխիւք, պատասխանեց Բէն-
քոօֆ: Ես իմ քարուրդս ունիմ, և այս պատը ծակելով լոյս
բերելու խօսք կ'արամ: Ո՛ր պէտք է զարնել:

— Այս տեղ՝ պատասխանեց չափադէտն, կորովի նաւորդին
ցոյց տալով՝ որմն վրայ բաւական խոր փորուած մը, որով խտու-
թիւնը պիտի նուազէր անշուշտ:

Բէնքոօֆ հատաքարին դարկաւ, և կէս ժամու չափ՝ ջահերու
լուսով՝ անոր կոտորուանքը շորս կողմը ցատկեցոց: Թայոն իր
հարուածներուն ներքև կ'շողար: Նապ անոր տեղն անցաւ, յի-
տոյ Գեդէոն Սրիլէյ, ապա Նապ:

Արդէն այս աշխատանքն երկու ժամէ 'ի վեր կ'տէր, և կա-
րելի է վախնային որ պատը քարուրդին երկայնութենէ աւելի մեծ
չլինէր, երբ Գեդէոն Սրիլէյի տուած վերջին հարուածին վրայ՝
գործիքը՝ պատէն անցնելով՝ դուրս ընկաւ:

«Կեցցէ, միշտ կեցցէ՝ պողաց Բէնքոօֆ:

Պատը նոյն կողմէն միայն երեք ոտնաչափ խիտ էր:

Կիւրոս Սմիթ աչքը բացուածքին վրայ դրաւ, որ ութսուն ոտք
վերէն գետինը կ'նայէր: Իր առջևը կ'տարածուէր ծովեզրին դի-
ժը, կղզեակը, և անկից անդին՝ անհուն ծովը:

Բայց այս բաւական լայն ծակէն, վասն զի պատը մեծապէս
քակուեր էր, լոյսն առատօրէն ներս մտաւ և մոզական ներգոր-
ծութիւն մ'արտադրեց սոյն շքեղ քարայրը լուսաւորելով: Եթէ՝
իր ձախ կողմէն՝ միայն երսուն ոտք բարձր ու լայն էր, հարիւր
ոտք երկայնութեամբ, ընդ հակառակն՝ իր աջ գիւն՝ ահադին էր,
և իր կամարն ութսուն ոտքէն աւելի բարձրութեամբ կ'բոլորուէր:
Տեղ տեղ՝ հատաքարէ մարդակներ, որ անկանոն կերպով գրուած
էին, կ'վերջընէին կամարին պարանոցները (retombée) ինչպէս որ
կ'երևին մայր եկեղեցոյ միջավայրի մը մէջ:

Այս կամարն կողմնաւոր սիւնակներու վրայ յենած էր, ասդին
բոլորաձև կ'ցածնար, անդին՝ աղեղնաձև կ'բարձրանար, մոթ վեր-
նատուններու (travée) մէջ կորսուելով, որոց ոլորածոյ կամարիկ-
ներն (arceau) ստուերի մէջ կ'տեսնուէին, անթիւ զարաւանդնե-
րով (saillie) զարդարուած որ նոյնչափ գմբեթարթներ կ'յօրի-
նէին: Իրաւի՝ գեղանկար էր այս կամարն, վասն զի բիզանդեան,
առմանական և կոթական ճարտարապետութեան խառնուրդ մը կը

ներկայեր : Եւ ստիպյն մարդու դործ չէր այն , այլ բնութեան : Բնութիւնը միայն փորձեր էր այս դիւթական Ալհամայրան հատաքարէ լեւի մը մէջ :

Գաղթականներն ապշած կ'նայէին այս փառաւոր քարայրին : Նեղ խուռչ մը կարծեր էին գտնել , և հրաշալի սրաւատ մը գտեր էին , և Նասպ գլուխը բացեր էր , որպէս թէ տաճարի մը մէջ փոխադրուած լինէր :

Ամն բերանէ սքանչացման աղաղակներ ելան : Կայթիւնները կը հնչէին և արձագանք տալով մութ միջավայրերուն խորը կ'կորսուէին :

«Ա՛հ , բարեկամներս , պոռաց Կիւրոս Սմիթ , երբոր լաւ մը լուսաւորենք այս լեռին ներսի կողմը , երբոր մեր սենեակները շինենք , նոյնպէս մեր մթերանոցները , գործարանները ձախ մասին մէջ , գարձեալ պիտի մնայ մեզի այս շքեղ քարայրը , զոր մեր աշխատութեան սրահն ու մեր թանկարանը պիտի ընենք :

— Եւ ի՞նչ պիտի անուանենք . . . հարցոյց Հարպէրդ :

— Քարեայ — պալատ» պատասխանեց Կիւրոս Սմիթ . անուն մը զոր ընկերները կեցցէնէրով ողջունեցին :

Նոյն պահուն՝ ջահերը գրեթէ բոլորովին հատեր էին . և որովհետեւ վերագառնալու համար պէտք էր ջրմուղէն վեր ելնելով սարահարթին կատարը հասնիլ , որոշուեցաւ որ հետեւեալ օրուան ձգուի նոր բնակարանին կարգադրութեան վերաբերող գործերը :

Սեկնելէն առաջ՝ Կիւրոս Սմիթ նորէն եկաւ մութ ջրհորին վրայ ձուլու , որ ուղղահայեաց դժով մինչեւ ծովուն մակերեւոյթը կ'հասներ : Աւշադրութեամբ մտիկ ըրաւ : Շշուկ մը չլսեց , և ոչ խիկ ջրերու կարկաչը , զոր ծովուն ծիփները պիտի շարժէր երբեմն այս անդունդին մէջ : Աւերստին բոցավառ ուտին մը նետեց : Զրհորին որմերը պահ մը լուսաւորեցան , բայց առաջին անգամուն պէս՝ գարձեալ կասկածելի բան մ'երևան չեկաւ : Եթէ ջրերը քաշուելով յանկարծ ծովային հրէշ մը խոյս տուաւ , անտաքակոյս հիմակ բաց ծովը հասած պիտի լինէր ստորերկրեայ ձամբ

բով , որ մինչև առաջին կ'տարածուէր և որմէ կ'հոսէր լճակին աւելցուկ ջուրը՝ դեռ ևս նոր ելք մը չբացուած :

Սակայն՝ չափադէտը , անշարժ , ուշադիր , աչքն անդունդը սեւուած՝ բաւ մ'անդամ չէր արտասաներ :

Այն ատեն նաւորդն անոր մօտեցաւ , և թեկն դպելով .

«Պարոն Սմիթ , ըսաւ նա :

— Բարեկամ , ի՞նչ կ'ուզես , պատասխանեց չափադէտը , որպէս թէ երազէ մը կ'սթափէր :

— Քիչ ատենէն ջահերը պիտի մարին :

— Ճամբայ ելնենք» պատասխանեց Կիւրոս Սմիթ :

Փոքրիկ խումբը քարայրէն ելաւ և ջրմուղէն վեր սկսաւ քալել : Թօփ առջևէն կ'քալէր և գարձեալ այլանդակ կերպով կը հաջէր : Աւերելքը բաւական տաժանելի եղաւ : Գաղթականները հաջէր մ'ատեն վերին անձաւը գազար առին , որ անսակ մը վերնադաւիթ կ'յօրինէր , հատաքարէ այս երկար սանդղին միջին բարձրութեան վրայ : Յետայ սկսան նորէն վեր ելնել :

Քիչ մ'ետք՝ աւելի թարմ օդ մը ձծել սկսան : Կայլակներն՝ որ շոյխանալով չորցեր էին , որմերէն չէին հոսեր : Զահերուն մրախառն լոյսը կ'շեղնէր : Նասպին կրածը մարեցաւ . և որպէս զի խոր մթութեան մէջ չդեղերին , կղեցիք դուրս ելնելու արտորացին :

Աւերջապէս հասան , և ժամը չորսէն քիչ մ'առաջ՝ այն միջոցին որ նաւորդին ջահն ալ մարեցաւ , Կիւրոս Սմիթ և իր ընկերներն ջրմուղին բերնէն դուրս կ'ելնէին :



ՊԼԱՆԵՆ ՓՓ.

Կիւրոս Սփիթին յարակալեծը — Բարեայ-պալատին ճակարը — Չոռնէ
Եւրոս — Բէնդրեֆէ երանէրը — Հաճեալսը խորտը — Բնական ճարտար
նոյ ճը — Նոր քնակարանին պէտքից համար ջրերու խորորու՝ — Բարեայ-
պալատին պարտահաններուն դիմացի որեստը .

Հետեւեալ օրը՝ 22 մայիսի՝ նոր բնակարանն իւրացնելու հա-
մար պէտք եղած գործերն սկսան : Իրաւի՝ պալատականները կը
փափաքէին իրենց առջի անբաւական պատուարանը, Կարկառները՝
փոխանակել այն ընդարձակ և առողջասուն քարակոփ օթեանին
հետ, որ ծովուն և երկնից ջրերէն ազատ էր : Սակայն Կարկառ-
ները բոլորովին երեսէ պիտի չձգէին, և չափադէտին միտքը զայն
կոշտ գործերու համար գործատուն մը դարձնել էր :

Կիւրոս Սփիթին առաջին հոգն եղաւ ստուգել թէ Բարեայ-
պալատին ճակատն որ կիտին վրայ կ'ընդլայնէր : Աւաղափին վը-
րայ, ահային պատուարին ստորոտը պնաց, և որովհետեւ քարու-
րազը թղթակցին ձեռքէն սահելով անշուշտ ուղղահայեաց դժով
վար ընկած պիտի լինէր, բաւական էր այդ քարուրազը դանել
հասկընալու համար թէ հատաքարին որ կողմէն ծակը բացուեր էր :

Քարուրազը դիւրաւ պտան, և ստուգիւ ուղղահայեաց դժով
ծակ մը բացուեր էր այն կէտին վերեր, ուր ուրապն աւաղին վրայ
մտուեր էր, գրեթէ աւաղափէն ու թսուն ոտք վեր : Արդէն քանի
մը ժայռի աղաւնիներ նոյն նեղ բացուածքէն կ'մանէին կ'երէնէին :
Իրաւի՝ կ'երեւէր թէ անոնց համար գտեր էին Բարեայ-պալատը :

Չափադէտին գիտաւորութիւնն էր քարայրին աջ մասը բազմա-
թիւ սենեակներու բաժնել մտից անցք մը շինելով, և զայն լուս-
ստորել հինգ պատահաններով և ճակատին վրայ ծակուած դռնով
մը : Բէնքրօֆ կ'հաւանէր որ հինգ հատ պատահան բացուի :

բայց չէր կարող ըմբռնել զրան օգուտը, քանի որ հին ջրմուղը
բնական սանդուղ մ'էր; սրմէ դիւրին էր միշտ Բարեայ-պալատ-
տը մտնելու :

Բարեայ-պալատին պատասխանեց անոր Կիւրոս Սփիթ, և թէ դիւրին
է մեզ ջրմուղէն մեր օթեանն իջնել, այդ բանն ուրիշներուն ալ
կրնայ դիւրին լինիլ : Ես՝ ընդ հակառակն՝ կ'մտածեմ որ այդ ջրմու-
ղին բերանը գոցեմ ամրապէս, և՛ եթէ պէտք լինի, բոլորովին
անոր մուտքը ծածկել և պատնէշով մ'այնպէս խցել որ լծակին
ջրերը նորէն վեր ելնեն :

— Եւ ի՞նչպէս պիտի մտնենք ներս, հարցուց նաւորը :
— Արտաքին ելնարանով մը, պատասխանեց Կիւրոս Սփիթ :
չուանէ ելնարան մ'որ, երբ մը անգամ վեր քաշուի, անկարելի
պիտի ընէ անոր մուտքը :

— Բայց ինչո՞ւ համար այդքան զգուշութիւններ կ'ընես, ըսաւ
Բէնքրօֆ : Մինչև այսօր կենդանիները մեզի շատ ահարկու չերե-
ցան : Իսկ մեր կողմն բնակիչներ չունի :

— Միթէ ստոյգ ես այդ բանին վրայ, Բէնքրօֆ, հարցուց
չափադէտը, նաւորին նայելով :

— Ստոյգ պիտի լինինք անշուշտ, երբոր կղզիին ամեն կողմը
քննենք, պատասխանեց Բէնքրօֆ :

— Այո՛, ըսաւ Կիւրոս Սփիթ, վասն զի դեռ միայն անոր մէկ
մասը գիտենք : Սակայն դարձեալ՝ եթէ ներսէն թշնամիներ չու-
նինք, կրնան դրսէն գալ, վասն զի Խաղաղականին այս եզերքը
շատ վտանգաւոր են : Ուրեմն պէտք է որ մեր ամեն զգուշութիւն-
ներն ընենք որ և է գիպուածի դէմ » :

Կիւրոս Սփիթ իմաստութեամբ կ'իտուէր . և առանց ուրիշ ա-
ռարկութիւն մ'ընելու, Բէնքրօֆ անոր հրամանները կատարելու
պատրաստուեցաւ :

Ուրեմն Բարեայ-պալատին ճակատը պիտի լուստորուէր հինգ
պատահաններու և մէկ զրան միջոցաւ : որ բնակարանին համար
էին, և լայն խորշով ու լուսամտաններով լոյսն առատօրէն պի-
տի մացընէին այն հրաշալի միջավայրն : որ մեծ քրահի տեղ պի-
տի

տի ծառայէր : Այս ճակատն՝ որ գետնէն ու թսուն ոտնաչափ բարձրութիւն ունէր՝ արևելեան կողմը կ'նայէր , և նորել արևն իր առաջին նշոյլներով զայն կ'ողջունէր :

Ճակատը միջնորմին այն մասին վրայ կ'տարածուէր որ մէկ կողմէ Մէրսիի բերնին վրայ ցցուած անկիւն մը ձևացընող վայրին մէջ կ'գտնուէր , միւս կողմէ՝ ուղղահայեաց գծի մը մէջ , որ Կարկառները կազմող քարակոյտին վերեւ ձգուած է :

Այսպէս գէշ հովեր , այսինքն հիւսիս-արևելեան հովեր , միայն շեղակի կ'ըզրնէին նոյն ճակատին , վասն զի ցցուածքին արևելեան դիրքէն պահպանուած էր : Սակայն՝ մինչև պատահաններու շրջանակները շինուիլը , չափադէտը միտք ունէր թանձր փեղկերով բացուածքները գոցել , որով ոչ հով , ոչ անձրև պիտի անցնէր և զոր կարող էր բոլորովին անայտ ընել ՚ի հարկին :

Արդ՝ առաջին աշխատութիւնն եղաւ այս բացուածքը խարտել : Այն կարծր ժայռին վրայ ուրաղին գործը շատ ծանր պիտի քալէր , և արդէն գիտենք որ Կիւրոս Սմիթ մեծ մեծ միջոցներ գործածող մարդ մ'էր :

Գեռ ևս ունէր բաւական բորակի-կլիւսէրին իր ձեռքին տակ , և զայն օգտակար կերպով գործածեց : Պայթիչ նիւթին ներդրածութիւնն պէտք եղածին պէս նեղ շրջանի մը մէջ բանեցընել ուղեցին , և անոր զօրութեամբ հասաքարը փորոտեցաւ չափազեղ տին ընտրած տեղէն : Յետոյ քարուրազն ու բրիչն հինգ պատահաններու կամարաձև պատկերն աւարտեցին , նոյնպէս ընդարձակ խորշին , լուսամուտներուն և դրան , անոնց ծուռումուր տեղումնքը շտկեցին , որոց զծերը բաւական անկանոն կերպով կատարուեցան , և զործերն սկսելէն քանի մ'օր ետք՝ քարեայ-պալատը պայծառութեամբ լուսաւորուած էր արևելքի այն արևով , որ մինչև իր գաղտնի խորութեանց մէջ կ'մտնէին :

Կիւրոս Սմիթ , պատրաստած յատակադժին վրայ , օթեանը ծովու վրայ հինգ մասի պիտի բաժնէր . նախ՝ աջ կողմը՝ մուտք մը գունով՝ որու պիտի հասնէր ելնարանը , ապա՝ խոհանոցի սենեակ մը , երսուն ոտնաչափ լայն , ճաշատուն մը , քառուսն ոտնաչափ

ննջարան մը , նոյն լայնութեամբ , և վերջապէս քարեկամներու սենեակ մը զոր Բէնքրօֆ կ'պահանջէր , և որ մեծ սրահին կից էր :

Այս սենեակները՝ կամ լաւ ևս ըսենք , այս սենեակներու շարքը , որ քարեայ-պալատին դատիկոնը կ'կազմէին , բոլոր խոռոչին խորութիւնը չպիտի բռնէր , այլ անոր դիմացը երկար մթերանոց մը պիտի շինուէր , և ասոր ու սենեակներուն մէջ տեղ նրբագաւթի մը : Սոյն մթերանոցը պիտի պարունակէր դործիներ , պաշար , պահեստիք (reserves) : Կղզիին բոլոր բերքերէն , թէ՛ կենդանիի և թէ՛ բոյսի վերաբերող , շատ լաւ պիտի պահուէին՝ խոնաւութենէ զերծ : Տեղ շատ կար , և ամեն բան կրնար կարգով տեղաւորուիլ : Սակէ զատ՝ կղզեցիք մեծ քարայրէն վեր ուրիշ անձաւ մ'ունէին , որ կրնար նոր բնակարանին շտեմարանը լինիլ :

Այս յատակադիծն որոշելէն ետե՛ կ'մնար անոր գործադրութիւնը : Ուստի քարահատներն աղլուսագործ դարձան . յետոյ , աղլուսները բերին և քարեայ-պալատին ստորոտը շարեցին :

Մինչև այն օրը՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերները հին ջրմուղէն կ'իջնէին քարայրը : Այս հաղորդակցութեան միջոցը երկար էր և տաժաւ էլի . վասն զի պէտք էր նախ Մեծ-Տեպին սարահարթին ելնել՝ գետակին քարափէն շրջան մ'ընելով , ապա ջրմուղէն երկու հարիւր ոտք վար իջնել , յետոյ նորէն վեր ելնել՝ սարահարթը դառնալու համար : Ուստի Կիւրոս Սմիթ չուանէ ելնարան մը շուտով շինելու ձեռք զարկաւ , ելնարան մ'որ եթէ վերցընէին՝ ներս մտնելէն ետե՛ քարեայ-պալատն անհպելի պիտի ընէին բոլորովին :

Մեծ խնամք տարին այս ելնարանը շինելու . պարանի չափ աւմուր եղան երկու սիւնակներն , որ ուղբէլի մը (moulinet) միջոցաւ հիւսուած պրտուի թելեր էին : Իսկ ելնարանին աստիճանները տեսակ մը կարմիր մայրի փայտերէ յօրինեցին , որ թեթեւ ու առկուն աստեր ունին , և Բէնքրօֆ շատ վարպետութեամբ զործեց այս ելնարանը :

Նոյնպէս բուսային թելերով օւրիշ չուաններ ալ ուղբեցին , և

տեսակ մը կոչա խեցեղէն անօթ գրան դրին : Այս կերպով՝ աղիւսները մինչև քարեայ-պալատին մակերևոյթը դիրբաւ վերցուցին : Այլ և այլ նիւթերու փոխադրութիւնը պարզուեցաւ և ներքին կարգադրութիւնը սկսաւ : Կիր առատ կար, և բիրտաոր աղիւսներ զիզեր էին այն տեղ, որ պիտի գործածուէին : Միջնորմներուն տակտակամածները կանգնեցին, թէև այնքան կոկիկ չէին, և քիչ ատենէն՝ օթեանը սննեակներու և մթերանոցներու բաժնուեցաւ, արդէն որոշուած յատակաւ ծին համեմատ :

Այս զանազան գործերը արագապէս կ'կատարէին՝ չափազէտին հսկողութեան ներքև, և ինք ալ մուրձով ու ծեփիչով կ'բանէր : Կիրոս Սմիթ ամեն գործէ կ'հասկընար և ուշիմ ու եռանդոտ ընկերներուն օրինակ կ'հանդիսանար : Աստահութեամբ կ'աշխատէին, նոյն իսկ զուարթութեամբ, Բէնքրօֆ միշտ ծիծաղ շարժելու համար բառ մ'ունէր, երբեմն հիւսն, երբեմն լաքադործ, երբեմն որմնագիր կ'լինէր և իր խնդրութիւնն այս պղտիկ խմբին կ'հաղորդէր : Անբաւ վստահութիւն ունէր Բէնքրօֆ չափադիտին վրայ, և բան մը չէր կարող զայն վրդովել : Նա կարծէր թէ չափազէտը ամեն բան կարող էր ընել և յաջողի :

Զգեսաներու և մուճակներու խնդիրը — արդարև ծանրակշիւ խնդիր — ձմեռ պիշերներ լոյս գանկելու խնդիրը, կղզիին արդասաւոր մասերը մշակելու խնդիրը, այն վայրի բոյսերը քաղաքաւաթեալ բոյսեր դարձնելու խնդիրը, բոլոր այս բաներն իրեն հեշտ կ'երևէին, Կիրոս Սմիթի օրնութեամբը, և ամեն բան ժամանակին պիտի կատարուէր : Բէնքրօֆ ջրանցիկ (canalise) գետեր կ'երազէր, որ երկրին հարստութիւնները փոխադրելու պիտի ծառայէին, կ'երազէր քարահաններու և հանքերու ձեռնարկութիւններ, ամեն ճարտարական գործերու յարմար մեքենաներ, երկաթուղիներ կ'երազէր, սցմ, երկաթուղիներ, որու բազմաթիւ դժերն օրին մէկը Վիքթօրն կղզին պիտի ծածկէին :

Չափազէտը կ'թողար որ Բէնքրօֆ ուզածը խօսի : Բնաւ այս ընտիր սրտին կարգէ դուրս խորհուրդները չէր կարեր : Գիտէր չա թէ վստահութիւնն որքան ճարակիչ է, մինչև անգամ կը

ծպտէր երբոր Բէնքրօֆ կ'խօսէր, և բան մը չէր ըսեր այն մտասանջութեան վրայ զօր ապագան իրեն կ'ներշնչէր :

Արդարև՝ Խաղաղականին այս կողմերը՝ որ նաեւ բու անցուցաբեր մի միայն իրենց վրայ կ'ընային վստահիլ կղզեցիք, վասն զի Վինքթօրն կղզիին հեռաւորութիւնն ուրիշ երկիրներէ այնքան մեծ էր, որ նաակի մը մէջ մանկելով ճամբայ ելնելը՝ շատ ծանր ու վտանգաւոր գործ մը պիտի լինէր :

Բայց, ինչպէս որ նաւորդը կ'ըսէր, հին ատենի Ռօպէնտոններէն հարիւրապատիկ աւելի ճարտար էին, որոյ համար ամեն նոր բան հրաշք մ'էր :

Եւ՝ արդարև՝ մեր գաղթականները՝ գէտէն և մարդն որ գէտէ կը յաջողի այնպիսի տեղեր ուր ուրիշ մարդիկ ՚ի հարկէ պիտի բուսնէին և կորսուէին :

Այս աշխատութեանց ժամանակ՝ Հարպերդ հռչակ առաւ : Ուշիմ էր և ծիւր, շուտով կը հասկընար բան մը, լաւ կ'կատարէր, և Կիրոս Սմիթ օրէ օր այս պատանիին կ'կապուէր : Հարպերդ՝ եռանդուն ու յարգական բարեկամութիւն մը կ'զգար չափադիտին համար : Բէնքրօֆ կ'զիտէր զձէ ինչ սերտ համակրութիւն կ'տիրէր այս երկու անձերու մէջ՝ բայց բնաւ չէր նախանձեր :

Նապ միշտ Նապն էր : Ինչ որ միշտ եղեր էր նոյնն էր, այսօր Ինքն՝ բուն քաջատրտութեան, եռանդեան, անձնուիրութեան և անձնուրացութեան տիպար : Իր տիրոջը վրայ Բէնքրօֆին չափ հաւատ ունէր, սակայն նոյնչափ եռանդաղին չէր յայտնէր : Երբոր նաւորդը կ'ողևորուէր՝ Նապ միշտ այնպիսի կերպարան մը կ'դասէր որ ըսել կ'ուզէր, Բայց ինչ կայ ասկից աւելի բնականօ :

Բէնքրօֆ և Նապ զիրար շատ կ'սիրէին, և արդէն իրարու հետ դուրեւրով խօսելու սկսեր էին :

Իսկ Գեդէոն Սքիլէր՝ հասարակաց աշխատութեան մասնակից կ'լինէր և ճարտարութեան կողմէ միասնեան վար չէր մնար, — և նաւորդն այս բանին վրայ միշտ կ'զարմանար : Լրագրագիր մը՝ որ ճարպիկէ էր, ոչ միայն ամեն բան իմանալու, այլ ամեն բան գործադրելու :

Մայիսի 28ին՝ ելնարանը բոլորովին հաստատուեցաւ : Այս ութ-
տուն ոտք ուղղադիժ բարձրութեան վրայ հարիւր աստիճանէն ա-
ւելի կար : Բարեբաղդորէն Կիւրոս Սմիթ կարող եղեր էր ելնա-
րանն երկու մաս բաժնել, օգուտ քաղելով պատուարին մէկ սա-
բաւանդէն (surplomab) որ գետնէն քառասունի չափ ոտք բարձր տե-
ղէ դուրս կ'ըցուէր : Այս ցցուածքը՝ ուրաղին միջոցաւ հարթուե-
լով տեսակ մը վերնաբակ դարձաւ, ասոր վրայ դամեցին առա-
ջին ելնարանը որու օրորումն (ballant) կիսովին պակսեցաւ, և
զոր չուանով մը մինչև քարեայ-պալատին բերանը կարելի էր
վերցընել : Իսկ երկրորդ ելնարանն թէ՛ ստորին ծայրէն կապե-
ցին, որ սարաւանդին վրայ գրուեր էր, թէ վերին ծայրէն, որ
նոյն իսկ դռնէն կապեր էին : Այս կերպով աւելի դիւրին եղաւ
վեր ելնելը : Բայց դարձեալ Կիւրոս Սմիթ մտադիր էր վերջէն
ջրաբաշխական վերաբարձի մը (ascenseur) հաստատել, որով քա-
րեայ-պալատին բնակներն առանց յողնութեան և ժամանակի կո-
րուստի պիտի կարենային վեր ելնել :

Գաղթականներն այս ելնարանը գործածելու միջոցը շուտով
սորվեցան : Թեթևաշարժ էին և ճարպիկ՝ և Բէնքրօֆ՝ իրրև նա-
ւաստի՝ վարժած լինելով պարաններէն վեր վար վազել, իր ըն-
կերներուն դաս տուաւ : Բայց պէտք եղաւ Թօփին ալ դաս տալ :
Իսեղճ՝ շունն իր չորս թաթերովը այս վարժութեան անյարմար
էր. բայց Բէնքրօֆ այնչափ եռանդոտ դասատու մ'էր, որ վեր-
ջապէս Թօփ յաջողեցաւ ելնարանէն վեր ելնել, ինչպէս որ վա-
զելով կ'ելնեն իր ցեղակիցները կրկեսներուն մէջ : Կարելի չէ
ըսել թէ նաւորդն արդեօք պարծենալու պատճառ մ'ունէր իր ա-
շակերտին վրայ : Այլ սակայն՝ քանի քանի անգամ՝ Բէնքրօֆ
Թօփը կռնակն առնելով վեր հանեց և շունն ալ այս մասին գան-
գատ մը չըրաւ :

Պէտք է դիտել այս տեղ որ սոյն աշխատութեանց ժամանակ,
զոր սակայն ժրութեամբ յառաջ տարին, վասն զի ձմեռը կ'մօ-
տենար, ուտելիքի խնդիրը բնաւ անտես չէին ըրած : Ամեն օր
թղթակիցն ու Հարպէրդ, որ իրօք գաղթականութեան մատակա-

րարները դարձեր էին, քանի մը ժամ որսորդութեամբ կ'անցը-
նէին : Միայն Յակամարի անտառը կ'յաճախէին, զետակին ձախ
կողմը, վասն զի կամուրջ ու նաւակ չունենալով՝ Մէրսիէն չկրցեր
էին անցնիլ : Բոլոր այն ահապին անտառներն որոց Խոր-Արև-
մուտ անունը տուեր էին, զեռ ևս քննուած չէին : Յաջորդ դար-
նան առաջին աղոր օրերն ընելու որոշեր էին այս կարևոր ար-
շաւանքը : Բայց Յակամարի անտառակները բաւական որսաշատ
էին, ապեվազներ ու կինձեր առատ կային, և որսորդներուն եր-
կաթածայր վերկերը, աղեղն ու նետերը մեծ կոտորած կ'ընէին :
Գարձեալ՝ Հարպէրդ, ջրշեղջին (lagon) հարաւ-արեւմտեան կող-
մը՝ բնական ճաղարնոց մը դատաւ, տամուկ մարգի նման՝ ուռենի-
ներով և համեմաւոր խոտերով ծածկուած, որ օգն անուշ հո-
տերով կ'լեցընէին, ինչպէս, թիւմ, ծոթորին, շահասպրամ,
կորդին (sarriette) շրթնաձև (labie) ընտանիքին վերաբերող ամեն
տեսակ հոտաւետ բոյսեր, զոր շատ կ'սիրէին ճաղարները :

Թղթակիցը դիտեց որ այս վայրը յատուկ ճաղարներու համար
պատրաստուած սեղան մը լինելով՝ զարմանալի պիտի երևէր ի-
րեն եթէ ճապար չգտնէին : Ուստի երկու որսորդներն ամեն ու-
շադրութեամբ խուզարկեցին այս ճաղարնոցը : Ստուգիլ՝ շատ օգ-
տակար տունկեր կային նոյն վայրը, և բնագէտ մը պիտի կարե-
նար բուսային կարկին վերաբերող տեսակ տեսակ բաներ գտնել :

Այսպէս Հարպէրդ շահասպրամի, խնկունիի, թուրինջի և այլ
բողբոջներ հաւաքեց, որ այլ և այլ բուժական յատկութիւններ
ունին. մէկ քանին կուրծքի և տենդի համար օգտակար են, մէկ
քանին պնդիչ են, այլք ջիւերու կամ հարբուխներու օգուտ ու-
նին :

Եւ երբ վերջէն Բէնքրօֆ հարցուց թէ ինչ բանի կրնային
ծառայել այդ խոտերը :

«Մեզ զարմանելու համար, պատասխանեց պատանին, երբ
հիւանդանաք, այս բոյսով զեղ շինելու համար :

— Ինչու համար հիւանդ պիտի լինիք, քանի որ՝ բժիշկ չկայ
կղզիին մէջ՝ պատասխանեց Բէնքրօֆ ծանրութեամբ մը :

Այս դիտողութեան պատասխան չկար, բայց սրտանին իր բոյսի պաշարն ըրաւ, որ իր միւս ընկերներուն շատ հաճելի եղաւ, մանաւանդ երբ տեսան որ այս բուժական տոնկերուն միացուց շատ մը կեֆուկ մուտրոկներ (monarde didyme) որ հիւսիսային Ամբիկայի մէջ Օւֆէլոյի թէյ անուամբ կ'ճանչցուի և անով պատուական ըմպելի մը կ'շինուի:

Վերջապէս նոյն օրը՝ լաւ մը փնտելով՝ երկու որսորդները ճագարնոցին բուն անդը հասան: Հողը՝ պարզուածի պէս ծածկուած էր:

«Խշախներ են ասոնք, պոռայց Հարպէրդ:

— Այո՛, պատասխանեց թղթակիցը, կ'ստաննամ:

— Բայց մէջը կենդանի կայ:

— Այո է խնդիրը՝:

Քիչ ատենէն այս խնդիրը լուծուեցաւ: Հարիւրաւոր մանր կենդանիներ՝ ճագարներու նման, այլ և այլ կողմեր սկսան խոյս տալ, և այնպէս արագ, որ նոյն ինք Թօփ չպիտի կարնար անոնց հասնիլ: Որսորդ ու շուն պարապ տեղը վազեցին, այս կրծան կենդանիները դիւրաւ պրծան: Բայց թղթակիցը միտքը գրեթէ նոյն տեղէն չհեռանալ մինչև որ գոնէ վեց հատ չլռնէ: Նախ խոհանոցին համար բռնել կ'ուզէր, վերջէն բռնուածներն ընտելացրնելու գործն ուրիշ անդամու թողով: Խշախներուն բերանը քանի մը դարաններ լարելով անտարակոյս պիտի յաջողէր, բայց նոյն պահուն, ոչ ցանց կար և ոչ շինելու համար պէտք եղած նիւթը: Ուստի հարկ եղաւ զատ զատ ամեն օրջ փնտուել, դաւազանով խառնել, և համբերութեամբ ընել ինչ որ ուրիշ կերպով կարելի չէր կատարել:

Վերջապէս՝ ժամ մը փնտուելէն ետև՝ չորս հատ ճագար բռնուեցան, որ Եւրոպայի ճագարներուն բաւական կ'անմանէին, և Աֆրիկայի ճագար անուամբ ծանօթ են սովորաբար: Քարեայ-պալատը տարին այս որսորդութեան արդիւնքը, և երեկոյին եփելով սեղանը բերին: Այն ճագարնոցին բնիկները քամահելի չէին, վասն զի խիստ համաղամ էին: Գաղթականութեան համար անգին համբարանոց մ'էր, որ անասունների կ'երէր:

Մայիսի 31-ին՝ միջնորմները լմնցեր էին: Ամառ միայն սենեակները կահել, և այս ալ ձմեռուան երկար զիշերներուն յարմար գործ մ'էր: Առաջին խուցը կրակարան մը շինեցին, որ խոհանոցին էր: Մութը դուրս հանելու համար սահմանուած խողովակը բաւական նեղութիւն պատճառեց մեր ծխահանի նորբելով յարգարիչներուն: Արդու Սմիթ աւելի յարմար դատեց ազիւսով կերտել, բայց կարելի չէր վերին սարահարթէն ծակ բանալ, այլ խոհանոցին վերելը ծակ մը բացին՝ և խողովակը՝ շեղակի դրուելով՝ թանազի ծխանի պէս վեր ելաւ: Արեւելի է, և շատ հաւանական էր անգամ, որ ուղղակի Քարեայ-պալատին ճակատը զարնող արեւելեան հովերէն՝ կրակարանը պիտի ծխար, բայց այս հովերը ստեպ չէին պատահեր, և ասկից զատ՝ «սայ» խոհարան, այդչափ բծախնդիր չէր:

Երբոր այս անական կարգադրութիւնները լմնցան, չափազէտը ջանաց հին ջրմուղին բերանը, որ լճակին կ'յանդէր, դոցել, որպէս զի այն կողմէն քիչը չկրնայ ներս մտնել: Նոյն բացուածքին առջև՝ ժայռի կտորներ գլորեցին և շաղխով ամուր ծնկեցին: Թէև Արդու Սմիթ մտադիր էր բոլորովին լճակին ջրով ծածկել ջրմուղին ծակը՝ ջրերն առաջին մակերեսութիւն բերելով, բայց առայժմ բաւական սեպեց խոտերով, տունկերով կամ մացառներով ծածկել բերանն, և այս բոյսերն ժայռերուն ճեղքերուն մէջ տնկեց, այնպէս որ գարունը գալով՝ պիտի ծաղկէին և ուռճանային:

Սակայն լճակին անուշ ջրէն մինչև նոր բնակարանը բերելու համար՝ պզտիկ առու մը բացաւ: Այս առուն՝ որ ջրերուն մակերեսութիւն հաստար շտկութեամբ էր, պէտք եղած արդիւնքն ունեցաւ, այնպէս որ այս մաքուր ու անպառելի աղիւր օրը քսան հինգ, երուն կալն* ջուր կ'մատակարարէր Քարեայ-պալատին, որ ջրէ չպիտի զրկուէր բնաւ:

Վերջապէս՝ ամեն բան լմնցաւ, և պէտք էր լմնար, վասն զի

* կալոնը՝ գրեթէ չորս ու կէս լիտրէ է:

ձմեռը կ'մտանար : Թանձը փեղկերով դոցեցին ճակախն սպտու-
հանները , մինչև որ չափադէտը ժամանակ դանկ ապակի շինելու :

Գեգէոն Սբիլէ-գ խիստ վարպետութեամբ՝ այլ և այլ սեսակ
բոյսեր , նոյնպէս ծփուն խոտեր գրաւ ժայռին ցլուածքներուն վը-
րայ , սպտուհաններուն բոլորտիքը , և այսպէս՝ բոլոր բացուած-
ները շրջապատուած էին գեղանկար ու չքնաղ խոտերով :

Այս ամուր , ողջատուն և ապահով օթեանին բնականին ան-
տարակոյս գոհ ու զմայլած էին իրենց գործին վրայ : Պատուհան-
ներէն կարող էին անկող հորիզոնը դիտել , զոր հիւսիսէն Յան-
գիպուլի-Գլուխն և հարաւէն շիրանի-Գլուխը կ'դոցէր : Միու-
թեան նաւահանդիստը փառաւորապէս կ'տարածուէր իրենց աչ-
քին առջև : Այո՛ , այս քաջասիրտ զաղթականներն իրաւունք ու-
նէին գոհ լինելու , և Բէնքրօֆ անգաղար կ'պարծենար իր սենե-
կին վրայ , զոր՝ զուարթօրէն՝ «Գեանայարկին վերեւ՝ հինգերորդ
դասիկոսի սենեակը» կ'անուանէր :



ՊԼՈՒՆ Ս.

Անյրևոյ Էջանակ — Հագոսարի խնդիրը — Փոփերոս սրբ — Մոփ շե-
նոթիւնը — Քարեայ-պալատին մեջներէն գործեր — Երկու կահուիք —
Ոտորինոցին այլեւ-թիւն ու վերագործ — Հարդերդին գործն իր գրդա-
նին մեջ .

Արդարե՛ ձմեռն սկսաւ յունիսի ամսուն հետ՝ որ հիւսիսային
կիսադնախն սեպտեմբեր ամսուն կ'համապատասխանէ : Նախ եկան
տարափներ ու մրդկալի հովեր որ իրարու յաջորդեցին անդա-
դադար : Քարեայ-պալատին բնակները կարող եղան իրենց բնա-
կարանին յարդն աւելի ճանչել , քանի որ եղանակին խստութիւն-

ներն անդօր էին անոր գէմ : Կարկառները ստուգիւ անյարմար պա-
տասարան մ'էին ձմեռուան փոթորիկներուն գէմ , և վախ կար որ
ծովը բարձրանալով՝ ալէկոծութեամբ՝ նոյն տեղը չարշաէր : Այս
դիպուածը դուշակելով՝ Կիրոս Սմիթ քանի մը զգուշութիւններ
ըրաւ , որպէս զի՝ կարելի եղածին չափ՝ անոր մէջ զրուած դարբ-
նոյն ու հնոցը պահպանէ :

Բոլոր այս յունիս ամիսն անցուցին այլ և այլ դործերով , ո-
րոց մէջ կ'մտներ նաև որսորդութիւնն ու ձկնորսութիւնը , և խո-
հանոցի պաշարն առատութեամբ հողացին : Բէնքրօֆ մտադիր էր ,
երբ ժամանակը ներէր , ծուղակներ շինել , որմէ շատ արդիւնք
կ'յուտար : Արդէն փայտի թերեւէ ցանցեր յօրիներ էր , և օր
չէր անցներ որ ճագարնոցէն բաւական որս չընէր : Նսայ՝ իր
բոլոր ժամանակը դեթէ միտերն աղելով կամ ձկնելով կ'անցը-
նէր , և սյոսպէս պատուական պահեստի պաշար կ'պատրաստէր :

Այն ատեն հաղուստի խնդիրը ծանր վիճարանութեան նիւթ
եղաւ : Գաղթականներն ուրիշ զգեստ չունէին այլ միայն իրենց
կրածներն երբոր օդապարիկը զիրենք կղզին նետեց : Այս զգեստ-
ները տաք ու ամուր էին . մեծ հոգ տարեր էին թէ ասոնց և թէ
ձերմակեղէն լաթերուն վրայ , և բոլորովին մաքուր կ'պահէին .
բայց բոլոր այս հանդերձանքը քիչ ատենէն պիտի մաշէին և նո-
րեք պէտք էին : Այս բտական չէր . եթէ ձմեռը շատ խիստ լի-
նէր , գաղթականները ցրտէն պիտի տառապէին :

Այս պէտքը հողալու մասին՝ Կիրոս Սմիթի հնարադիտութիւ-
նը չէր զօրեր : Ամենէն ստիպողական բաները գտեր էր , բնակա-
բան մը հիմներ , սնունդը ապահովեր էր , սակայն ցուրտը վրայ
պիտի դար հազուստի խնդիրը լուծուելէն առաջ : Ուստի՝ այս ա-
ռաջին ձմեռն առանց տրտնջելու համբերութեամբ անցընել պէտք
էր : Երբ գարունը գառնար՝ արաիկներ որսալու կրնային ելնել :
Այս կենդանիներէն տեսեր էին արդէն Ֆրանքլէնի լեռն ելնելու
ատեն , և անոր բորդն առնելով չափադէտը պիտի յաջողէր ան-
շուշտ տաքուի ու հաստատուն ատուի շինել . . . Ինչպէս , վեր-
ջէն պիտի մտածէր :

Ճարպը աճաւել (saponifier) : Այս կերպով կրեայ աճաւ մը ստա-
ցաւ : զոր դիւրին էր լուծել ծծմբայ-թթուին միջոցաւ , որ կիրը
ծծմբաափ վերածեց և իւզոտ թթուներն ազատ թուլուց :

Այս երեք թթուներէն , իւզայինը , մարդարինը և ստէարինը ,
առաջինն , որ հեղուկ էր , բաւական ճշմամբ վանեց . իսկ մուս-
ները՝ բուն իսկ այն նիւթերն էին որով մոմբը պիտի կաղապարէր :

Այս գործողութիւնը քսան չորս ժամէն աւելի չտեւեց : Պատ-
րոյցներն՝ շատ մը փորձեր ընելէն ետև՝ բուսային թիւրով շի-
նուեցան , և ջրային նիւթին մէջ թաթախուելով՝ ճշմարիտ ստէա-
րական մոմբը շինուեցան , ձեռքով յորինուած , և միայն պէտք
ունէին լուացուիլ ու մաքրուիլ : Անշուշտ պատրոյցներն մտաղեայ
(borique) թթուով թրջած չլինելով՝ քանի վառէին սպառելու
առաւելա թիւնը չունէին . բայց Արարտ Սմիթ զոյգ մ'աղբոր բաղ-
մակալ շինած լինելով՝ այս մոմբը մեծ յաբգ ստացան Գարեայ-
պալատին մէջ՝ ձեռք գիշերները :

Բոլոր այս ամիսը՝ նոր բնակարանին մէջ աշխատանքը պակաս
չէր : Հիւաները գործ ունեցան . գործոյքը կատարելագործեցին ,
որոնք շատ կոշտ էին , նոյնպէս ամբողջացուցին :

Ուրիշ գործիներու հետ՝ մկրատներ ալ շինուեցան , և զող-
թականները կարող եղան վերջապէս իրենց մաղերը կտրելու , և
եթէ ոչ ածիլուելու , դոնէ իրենց մօրտփն ալ կարճեցրնելու :
Հարպերդ անմօրտս էր , Նասյ բնաւ չունէր , բայց իրենց ընկեր-
ներն այնքան ծածկուած էին մաղերով՝ որ մկրատի պէտքը շատ
կ'զգային :

Ձեռքի սղոց մը (égohine) շինելու համար չափազանց նեղութիւն
կրեցին , բայց վերջապէս գործիք մը ձեռք ձգեցին որ , ուժգին
գործածուելով՝ կարող եղաւ փայտային բարակ թիւեր բաժ-
նել : Ուստի՝ սեղաններ , աթոռներ , պահարաններ շինեցին ,
որով զլսուուոր սենեակները կահեցին . նոյնպէս մահճի շրջանակ-
ներ , որու բոլոր անկողինն ջրարոյսի (zostière) պատառէ կը
բաղկանար : Կոհանոցն , իր տախտակներով , որոց վրայ դրուե-
ր էին թրծուն հողէ ամաններ , իր աղիւսէ փոռով , իր լոյսալի քա-

րով՝ շատ աղբոր կ'երևէին , և Նասյ՝ այն սեղ զլուխ բռնելով
կ'աշխատէր , որպէս թէ քիմիաբանի մը գործատունը դանուէր :

Բայց քիշ ասնէն հիւաներուն սեղ ասաղձագործներն ան-
ցան : Իրաւի , նոր ջրովին , որ բովով շինուած էր , երկու կա-
մուրջի պէտք ունէր . մին Սեծ-Տեսքին սախհարթին վրայ ,
մուսը նոյն իսկ առաջափին վրայ : Ստուգիլ՝ հիւանի՝ սարահարթն
ու առաջափը շեղակի կտրուած էին առուակէ մ'որմէ պէտք էր
անցնել , երբոր գաղթականները կղզիին հիւսիսակողմն երթալ ու-
ղէին , ապա թէ ոչ՝ պիտի պարտաւորէին երկար պաշտա մ'ընել
և արեւմտան կողմն ելնել մինչև Կարմիր-Առափին աղբուրը :

Ուրեմն ամենէն կարճ ճամբան՝ սարահարթին և առաջափին վը-
րայ երկու հաս կամուրջ շինելն էր , քսան , քսան հինգ ոտք
երկայնութեամբ , և որու բոլոր ասաղձը՝ սապարով սաշուած
քանի մը ծառեր եղան : Այս գործին համար քանի մը օր բաւեց :
Երբ կամուրջները շինուեցան՝ Նասյ ու Բէնքրօֆ յարմար դասե-
ցին մինչև ոսարէնոյն երթալ , որ առաջաբլուրններն անդին ծա-
վուն մէջ արդէն գտնուէր էր : Իրենց հետ քաշեր սարեր էին
տեսակ մը կոշտ սայլակ , որ հին և անյարմար սապաաին սեղը
կ'ըռնէր , և իւրաւոր ոսարէներ բերին , որ շուտով այն ժայռե-
րուն մէջ սեղ բռնեցին ու մեծցան , ժայռեր որ Յէրսիլ բերանը
բաղմաթիւ բնական առաջաններ կ'յօրնէին : Այս լուրատարներ-
ը պատուական տեսակէն էին , և գաղթականները գրեթէ ամեն
օր անկից կ'ուսէին :

Ինչպէս որ կ'անտուի՝ Լինքօլն կղզին արդէն գաղթականնե-
րուն բոլոր պիտոյքը կ'հայթայթէր , թէև միայն պզտիկ մէկ մա-
սը քննուած էր : Եւ հաւանական էր որ , եթէ ամեն ծակուծուկը
փնտռուէր , բոլոր այն անտառուտ մասն , որ Յէրսիլէն մինչև Սո-
ղունի հրտանդանը կ'սարածուէր , անտառակոյտ նոր նոր դանձեր
երևան պիտի ելնէին :

Լինքօլն կղզիին բնակները՝ բանէ մը միայն զրկուած էին որ
իրենց շատ ծանր կ'երևէր : Բորակաւոր մտաւոր պակաս չէր , և
ու բուսային բերքեր , որ անոր գործածութիւնը կ'բարեխառնէին :

գարձեալ վիշապաւորներու թելաւոր արմատները՝ եփուելով՝ իրենց թթուադին ըմպելի մը կ'տային, որ տեսակ մը գարն ջուր էր, պարզ ջրէն շատ նախադասելի. մինչև անգամ շաքար շիներ էին, առանց եղէգնի ու բանձարի, այլ միայն հաւաքելով ըմպելի մ'որ շաքարեայ հելթէ մը (acer saccharinum) կ'կաթի, տեսակ մը հացի ծառ է, որ ամեն միջին գօտիներու մէջ կ'բուսնի և որմէ կղզին շատ առատ ունէր, ընտիր թէյ մը կ'շինէին ճապարնոցէն բերուած մոնարդէններէ (monarde). վերջապէս շատ առատ աղ ունէին, և հանքային բերքերու մէջ միայն այս կերակուրի կ'գործածուի. . . բայց հայ միայն պակաս էր:

Կարելի է վերջէն՝ գաղթականները հացի անդ ուրիշ անորման բան մը գտնէին, այսինքն արմատնիի ալիւր կամ հացի ծառի փոշի, և ստուգիլ՝ կարելի էր որ հարաւային կողմերն այս թանկագին ծառերէն ունենային, բայց մինչև այն օրը չէին տեսած:

Սակայն Նախախնամութիւնը՝ այս պարագայիս մէջ՝ ուղղակի գաղթականներուն օգնութեան պիտի գար, չափազանց փոքր չափով մ'իրաւ, բայց վերջապէս Կիւրոս Սմիթ՝ իր բոլոր խելքով, իր բոլոր ճարտարամտութեամբը չպիտի կրնար երբէք արտագրել ինչ որ, անմկնելի դիպուածով՝ Հարպէրդի բաձկոնին աստաւին մէջ գտնուեցաւ օր մը, երբ զայն կարկտելու կ'ընդդէմ:

Այն օրը հեղեղի պէս անձրև կ'վազէր. գաղթականները քարեայ-պալատին մեծ սրահին մէջ հաւաքուեր էին, երբ պատանին յանկարծ պոռայ:

«Նայէ, Պարոն Կիւրոս, ցորենի հատիկ մը»:

Եւ իր ընկերներուն ցոյց սուաւ ցորենն, մէկ հատիկ ցորեն, որ իր ծակած գրպանէն, բաձկոնին աստաւին մէջ մտեր էր:

Հարպէրդի գրպանին մէջ այս ցորենը գտնուիլն ուրիշ կերպով չբացատրուիր՝ բայց եթէ՝ սովորութիւն ունէր Ռիչմոնտ եղած ատենը քանի մը հաւփալներ սնուցանել զոր Բէնքրօֆ իրեն ընծայեր էր:

«Յորենի հոն մը, պատասխանեց չափաւան աշխուժութեամբ:

— Այո՛, Պարոն Կիւրոս, բայց հատ մը միայն, միայն մէկ հատիկ:

— Է՛հ, տղաս, դոչեց Բէնքրօֆ ժպտելով, ճշմարիտը, ի՛նչ մեծ դիւտ, ի՛նչ կրնանք ընել հատ մը ցորենով:

— Հաց պիտի ընենք, պատասխանեց Կիւրոս Սմիթ:

— Հաց, կարկանդակ, կտակ, պատասխանեց նաւորդը: Ասոյ մեր գլխին, այս ցորենի հատին տալիք հացը մեզ չպիտի խղզէ, յուսամք:

Հարպէրդ մեծ կարեւորութիւն մը չէր տար իր գիւտին և այդ ցորենը նետելու կ'պատրաստուէր, երբոր Կիւրոս Սմիթ զայն առաւ, քննեց, տեսաւ որ լաւ վիճակի մէջ է, և հաւորդին երեսը նայելով:

«Բէնքրօֆ, հարցոյց անոր հանդարտօրէն, դիտես արդեօք թէ ցորենի հատ մ'որչափ հասկ կ'բերէ:

— Մէկ հատ, կարծեմ, պատասխանեց նաւորդը, այս հարցման վրայ զարմանալով:

— Տաս հատ, Բէնքրօֆ, և դիտես թէ հասկ մ'որչափ ցորեն կ'բերէ:

— Իրաւ որ չդիտեմ:

— Միջին հաշուով ու թսուն հատ, ըսաւ Կիւրոս Սմիթ: Ուրեմն եթէ այս ցորենի հատը տնկենք՝ առաջին հունձքին՝ ութ հարիւր ցորեն պիտի քաղենք, որոնք՝ երկրորդ հունձքին՝ վեց հարիւր քառսուն հազար հատ պիտի տան, երրորդ հունձքին՝ յիսուն երկիւիտն տասն երկու միլիոն հատ, չորրորդին՝ չորս հարիւր երկիւիտն և աւելի, այս է համեմատութիւնը:

Կիւրոս Սմիթի ընկերները մտիկ կ'ընէին ըսածն՝ առանց պատասխանելու: Այս թուանշանները զիրենք կ'ապշեցընէին: Սակայն ճիշտ էին:

«Այո՛, բարեկամներս, վրայ բերաւ չափազէտը: Ասոնք են բարգաւանդ բնութեան թուաբանական յառաջադրութիւնները: Եւ դարձեալ՝ ցորենի հատին այս բաղմապատկութիւնն ի՛նչ է, որու հասկը միայն ութն հարիւր ցորեն կ'տայ, բաղդատելով այն խաշ:

խաշի գլուխներուն հետ, որ երսուն երկու հազար հատիկ ունին, այն ծխախոտի բուններուն հետ որ երեք հարիւր վաթսուն հազար հատ կ'արտադրեն: Եթէ չպատահէին բազմաթիւ պատճառներ որ տանկերուն աճումը կ'արգիլեն, այդ տունկերը բոլորովին երկիրը պիտի ծածկէին»:

Բայց չափազէտը չէր ըմբոսցած իր սրբիկ հարցափորձութիւնը: «Եւ հիմակ, Բէնքրօֆ, վրայ բերաւ նա, միթէ գիտես թէ չորս երկիւղոն ցորենը քանի կապի՞ճ (12¹/₂ լիպրէ) կ'լեցնէ:

— Ո՛չ, չգիտեմ, պատասխանեց նաւորդը, միայն այս գիտեմ որ անբան կենդանի մ'եմ:

— Լաւ, այդ քանակութիւնն երեք միլիոնէն աւելի պիտի ընէ, խորաբանչիւր կապի՞ճ հարիւր երսուն հազար ցորեն ունենալով, Բէնքրօֆ:

- Երեք միլիոն, գոչեց Բէնքրօֆ:
- Երեք միլիոն:
- Չորս տարուան մէջ:
- Չորս տարուան մէջ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, մինչև անգամ երկու տարուան մէջ, եթէ՛ ինչպէս կ'յուսամ, կարենանք այս լայնութեան ներքև տարին երկու հունձք ընել»:

Իր սովորութեան համեմատ՝ Բէնքրօֆ այս խօսքին ուրիշ պատասխան չտաւ այլ սոսկալի ցնծութեան աղաղակ մը:

«Այսպէս, Հարպերդ, յարեց չափազէտը, շատ կարեւոր գիտ մ'ըրբի մեզի համար: Ամեն բան, բարեկամներս, ամեն բան մեր այս գտնուած վիճակին մէջ կրնայ մեզ ծառայել: Ա՛ղաղչեմ, մի մոռնաք այս բանը:

— Ա՛չ, Պարոն Կիւրոս, ո՛չ, պիտի չմոռնանք, պատասխանեց Բէնքրօֆ, և եթէ ծխախոտի հունա մը գտնեմ, որ երեք հարիւր վաթսուն հազարներով կ'շատնայ, կ'հաստատեմ որ չպիտի նեանեմ: Եւ միթէ գիտէք հիմա թէ ինչ կ'մնայ մեզ ընել:

— Մեր ընելին այս ցորենը անկել է, պատասխանեց Հարպերդ:

— Այո, յարեց Կենդան Սքիլէդ, և պէտք է անկել անոր

վայել ամեն յարգանք, վասն զի իր մէջ կ'պարունակէ մեր ապագայ հունձքը:

- Բաւական է որ բունի, գոչեց նաւորդը:
 - Պիտի բունի» պատասխանեց Կիւրոս Սմիթ:
- Յունիս ամուսն ՉՍն էր: Ուստի այս մէկ հատիկ և անյին ցորենը ցանելու յարմար պտենն էր: Նախ խօսք ըրին ամանի մը մէջ անկել զայն, բայց՝ բաւական մտածելէն ետեւ՝ որոշեցին բնութեան ինամոց յանձնել ցորենն աղատօրէն և երկրին մէջ թաղել: Այս բանս նոյն օրն ըրին, և աւելորդ է ըսել որ ամեն զգուշութիւններ ձեռք առին որպէս զի գործը յաջողն:

Օղը թեթև մը պարզուեր էր, զաղթականները Բարեայ-պալատին բարձունքն ելան: Այն տեղ՝ սարահարթին վրայ՝ հովէ գերծ վայր մը փնտուեցին, որու վրայ կէսօրուան արևն իր բոլոր ջերմութիւնը կ'թափէր: Նոյն տեղը մաքրեցին, փորեցին, որպէս զի ամեն միջատ կամ որդ դուրս հանեն, անոր մէջ կիրով խառն հողն աղոր խաւ մը դրին, բոլորտիլը պատնէշ քաշեցին, ապա՝ ցորենը տամուկ խաւին մէջ տեղաւորեցին:

Միթէ այնպէս չէ՞ր երևեր որ գաղթականներն շէնքի մ'առաջին քարը կ'գնէին: Այս գործողութիւնը Բէնքրօֆի միտքը բերաւ այն օրն երբ առաջին վառիկը վառեր էր այնքան հոգ և նեղութիւն կրելով: Բայց այս անգամ գործն աւելի ծանր էր: Իր բախի՛ նաւարկները միշտ կրակ ճարելու պիտի յաջողէին, որ և է միջոցաւ, բայց և ոչ մարդկային զօրութիւն մը ցորենի այս հատը նորէն պիտի կարենար շինել, եթէ՛ զժրաղէտար, այդ ցորենը կորսուէր:

ՊԼՈՒԽ ԻՊ.

Ջրօվն Կանի Ժ'ապրիլի մար — Կղզիին հարա-արեւելեան մերուր մասին երկրաշնորհները — Աղու-էսէր — Ծովուն պետը — Խուսկոյ-Սիւան մը Խաղաղական Ովկիանոսին ապագային վրայ — Ջրահմէկերս անդու-լ աշխա-րանքը — Երկրագնդանքն Էնչ պիտի լինի — Որսորդո-Սիւանը — Տարորնի ճանճնէրը.

Այն ատենէն 'ի վեր' Բէնքրօֆ օր մը չէր անցներ առանց եր-թալ տեսնելու ինչ որ ծանրաբար իր «Յարէնի արքը» կ'անուանէր: Եւ վայ այն միջատներուն որ այդ արտը մտնելու կ'յանդգնէին, Բէնքրօֆ անխնայ կ'ջարդէր զանոնք:

Յունիս ամսուն վերջերը, անհասանում անձրևներէ ետք՝ օդը ցուրտի դարձաւ լիովին և Քարէնհայտի ջերմաչափին անտարա-կոյս զրօէն վար քսան աստիճան պիտի նշանակէր (6⁰, 67 հարիւր-մաս. սառոյցէն վար):

Հետեւալ օրը՝ — յունիս 30 — որ հիւսիսական տարոյն դեկ-տեմբերի 31ին կ'համապատասխանէ, ուրբաթ օր մ'էր: Նապ դիտել տուաւ որ տարին ղէշ օրով մը կ'վերջանար. բայց Բէն-քրօֆ պատասխանեց անոր որ, բնապէս, միւսը լաւ օրով մը կ'սկսէր — և այս աւելի հաճելի էր:

Այս իրաւ է որ տարին շատ կծու ցրտով մը սկսաւ: Մէր-սիի բերանը սառոյցներ դիզուեցան, և քիչ ատենէն լճակին բո-ւր երեսը սառ բռնեց:

Պէտք եղաւ քանի մ'անգամ փայտի պաշարը նորոգել: Բէն-քրօֆ գետը սառելէն առաջ՝ շատ մը փայտի բեռեր Քարեայ-պալատը փոխադրեց: Հասանքն անձանձիր շարժիչ մ'էր, ուստի անոր միջոցաւ փայտերը կրեցին մինչև այն ատենն որ ցուրտը զաւրով գետաջը սառ կորեց:

Անտառէն այս առնուած այրելիքը բաւական չհամարելով՝ շատ մը սայլակ քարածուխ կրեցին՝ Քրանքէն լեռին քարամոյթներուն ստորոտէն բերելով: Հանրածուխին այս զօրաւոր ջերմութիւնը օդը շատ բարեխառնեց, որ յուլիսի 14ին Քարէնհայտի ութ աս-տիճանի իջաւ (13⁰ հարիւրմաս. զրօյէն վար):

Ճաշարանն երկրորդ վառարանն մը շինեց էին, և այն տեղ ա-մենքը միասին կ'աշխատէին:

Այս ցուրտ եղանակը տեսնելով Կիւրոս Սմիթ շատ զոհ եղաւ որ Կրէնդ լճակէն փոքրիկ առուի մը միջոցաւ մինչև Քարեայ-պալատը ջուր իջեցուցեր էր: Լճակին սառած երեսէն վար զրա-պալատը ջուրն՝ հին ջրմուղէն անցնելով՝ իր ծորելի բնութիւնը նուաճ ջուրն՝ հին ջրմուղէն անցնելով՝ իր ծորելի բնութիւնը պահէր էր և ներքին աւազան մը կ'հասնէր, որ մթերանոցին մէկ անկիւնը փորուեց էր, և որուն աւելցուկը ջրհորէն մինչև ծովը կ'թափէր:

Նոյն միջոցին, օդը չափազանց չոր էր, դաղթախանները, որ կարելի եղածին չափ լաւ հագուած էին, որոշեցին օր մը նուի-րել Մէրսիի և Ճիրանի-Գլխուն մէջ՝ կղզիին հարա-արեւելեան կողմը գտնուած մասը զննելու համար: Ընդարձակ մօրուտ վայր մ'էր այն, և կարելի է լաւ որս մը ձեռք ձգէին պատահամբ, վասն զի ջրային թռչունները խիստ առատ պիտի լինէին այն կողմերը:

Երթալու համար ութ, ինն մղոն կար, նոյնչափ նաև վերա-դառնալու համար, հետևապէս այն օրը լաւ աշխատելով պիտի անցընէին: Որովհետև կղզիին մէկ անձանօթ մասը պիտի քննէին, պէտք էր որ բոլոր դաղթախաններն այս զննութեան մասնակցէին:

Այս պատճառաւ՝ յուլիսի 3ին՝ առաօտեան ժամը վեցին՝ մինչ-դեռ արշալոյսը գեռ նոր կ'եղնէր, Կիւրոս Սմիթ, Գեդէոն Սքի-լէդ, Հարպէրդ, Նապ, Բէնքրօֆ՝ վիրգեր, նապաստակի որո-ւէր, զայթներ, աղեղ ու նետ առնելով՝ նոյնպէս բաւական ուտելիք, Քարեայ-պալատէն ելան: Թօփ առջեւէն կ'երթար և կ'ցատ-կրտէր:

Ամենէն կարճ ճամբան բռնեցին, և այս ճամբան Մէրսիին սա-

ուսյցներուն վրայէն անցնելն էր, այն միջոցին սառերու կտորներ անոր վրայ զիջուէր էին:

«Բայց, բռաւ թղթակիցն իրաւամբ, այդ սառոյցն կտորները շին կարող հաստատուն կամուրջի մը տեղը բռնել»:

Այսպէս հաստատուն կամուրջ մը շինելու խնդիրն ալ ապագայ շինութեանց կարգն անցաւ:

Առաջին անգամն էր որ դաղթականները Մէրսիի աջ ափին վրայ ոտք կ'իջուէին, և կ'մաննէին այն մեծ ու փառաւոր կոնստանդէր տունկերուն մէջ, որ այն ատեն ձիւնով ծածկուած էին:

Բայց հազու թէ կէս մըն ճամբայ տներ էին, որ՝ թանձր անտարէ մը չորքտանիներու ընտանիք մը խոյս կ'տար, որ նոյն վայրը կ'ընակէին, և Թօփի հաջումները լսելով խոյս կ'տային:

«Ա՛հ, կարծեա թէ աղուէներ են» գոչեց Հարպէրդ, երբոր այդ կենդանեաց դասակը տեսաւ որ շուտով կ'խուսէր իր որջէն:

Արդարեւ՝ անոնք աղուէներ էին, բայց շատ մեծահասակ աղուէներ, որ տեսակ մ'ունալ ունէին: Նոյն ինք Թօփ շատ զարմացաւ, վասն զի վաղելու միջոցին կանկ առաւ, և այս արագաշարժ կենդանիներուն խոյս տալու ժամանակ սուտաւ:

Շունն իրաւունք ունէր զարմանալու, վասն զի բնական պատմութիւն չզիտէր: Բայց՝ այս աղուէներն իրենց սունալու կերպէն՝ իրենց ծագումը յայտներ էին և կարմրորակ գորշադոյն մորթի, ճերմակ փունջով վերջացած սև պոչեր ունէին:

Աստի՛ Հարպէրդ՝ առանց վարանելու կալքէան (culpeux) անգնը սուտա անոնց: Այս կենդանիներն սակայ Քիլիի և Մանուելեան կղզիներուն մէջ կ'դասուին, նոյնպէս ամերիկեան այն ամեն ծովկորեայ տեղումնէն, որ երեմներորդ և քառաներորդ դուրս հասեալանին վրայ կ'երևին: Հարպէրդ շատ ցուեցաւ որ Թօփ չկրցէր էր այս մտակեր կենդանիներէն հատ մը բռնելու:

«Միթէ այս կենդանին կ'ուտուի՞, հարցոյց Բէնքրօֆ, որ կղզին կենդանիներուն գասը մասնաւոր տեսակետով մը կ'զատէր:

— Ա՛հ, պատասխանեց Հարպէրդ, բայց կենդանաբանները դեռ հասկըցան թէ արդեօք այս աղուէներուն բիրը օրային է թէ

ուչ գիշերային, և անյարմար է բուն շուներու կարգին մէջ դասել»:

Ախրոս Սմիթ չկրցաւ իր ժպտը բռնել պատանիին այս խորհրդածութիւնը լսելով՝ որ լուրջ միտք մը կ'այսնէր: Իսկ նաւորդին փոյթը չէր բնա՛ւ քանի որ այս աղուէներն ուտելի կենդանիներու դասն չէին: Սակայն՝ երբոր Քարեայ-պալատին մէջ հանոց մը հաստատէին, ինչպէս որ դիտել տուաւ Բէնքրօֆ, խոհեմութիւնը կ'պահանջէր այս քառաթաթ աւարտ ուներու դէմ քանի մը զգուշութիւններ ընել: Այս գիտողութիւնն ամենքն օրինաւոր գտան:

Աճակին ծայրէն դառնալէն ետեւ՝ դաղթականներն երկար եղբք մը դտան ուր ծովուն ջրերը կ'հասնէին: Այն միջոցին առտուան ժամն ութ էր: Երկինք շատ յստակ կ'երևէր, ինչպէս որ կ'պատահի երկար ցուրտ օրերուն պատճառաւ, բայց Ախրոս Սմիթ և իր բնակիչներն իրենց արշաւանքէն տարնալով՝ մթնոլորտին կծու իր բնակիչներն իրենց զգար: Ասկէ դատ՝ հով չկար, և այս պարագայ մ'է որով առելի դիւրաւ կ'տանի մարդ ցրտին սաստիկութիւնը: Փայլուն՝ այլ անջերմ՝ արև մը, նոյն միջոցին Ռիկիանէն գուրս կ'երևէր, և իր ահագին սկուտաակը հորիզոնին վրայ կ'տատանէր:

Ծովը հանդարտ և կապոյտ սաւանի պէս կ'տարածուէր, ինչպէս Միջերկրականի ծովածոցի մը մէջ, երբոր երկին յստակ է: Ճիրտի-Գլուխը՝ գառչոյի ձևով ծուռած՝ յստակ կ'արանար դէպ 'ի հարաւ-արեւելք չորս մղոնի չափ: Չափ կողմն՝ ճահիճին եզրը յանկարծ կ'կարուէր պղտիկ հրուանդանով մ'որ նոյն միջոցին արեւուն ճատաղայթները կ'կարէին կրակի պէս:

Իրախ՝ Միութեան-Նորջին այս կողմն՝ զոր ծով չէր ծածկեր, և ոչ իսկ ապղի կոյտ մը, նաեւորը ապուէն մը չպիտի դանէին, եթէ հովերէն այն կողմը մղուէին: Ծովուն հանգարտութենէ, որու ջրերն որ և է խոթէ չէին վրգուկեր, իր միօրիակի գոյնն, որ կեղծորակ երանդէ մը բոլորովին անարատ կ'մնար, վերջապէս որ և է մոյսի պակասութենէ՝ դիւրին էր տեսնել որ այս ծով

եղրը սեպանն էր, և թէ այն կողմերը խորունկ անդունդներ կը պահէր Ովկիանոսը :

Եսին՝ արևմտեան կողմը՝ չորս մղոնի չափ հեռուն կ'ըծա- գրուէին հեռահեռէ խոր-Արևմուտքին անտառային ծառերուն ա- ուաջին դծերը : Կարծես թէ մարդ կերպով մը՝ հակարջային եր- կիրներու մէկ կողմին կ'գանուի, որ սառոյցներով ծածկուած լի- նի : Կղեցեք նոյն անղը դադար առին նախաճաշիկ ընելու հա- մար : Չոր խոխներէ ու լոտերէ կրակ մը վառեցին, և Նապ պաղ- մսէ նախաճաշը պատրաստեց, և ասոր քանի մը թաս Օսվէկոյի թէյ միացուց :

Կերակուր ուտելու ատեն՝ չորս դին կ'նայէին : Լինթօլն կղզիին այս մասն իրա ի անբերրի էր և արևմտեան մասին հետ հակա- պատկեր մը կ'ընծայէր : Այս տեսարանին վրայ թղթակիցը սա խորհրդածութիւնն ըրաւ, և թէ դիպուածն այս ավերուն վրայ նե- աէր նաւաբեկները, շատ տխուր դաղափար մը պիտի ստանային իրենց ազգայ բնակութեան վրայ :

Ես կարծեմ իսկ որ այս կղզին չափի համէինք, պատաս- խանեց չափազէտը, վասն զի ծովը խորունկ է, և ժայռ մը չափ- տի ներկայանար մեզ իբրև ապաստան : Գոնէ՛ Բարեայ - պալատին առջև՝ վէմեր կային, և կղզեակ մը, որ աղատու մի յոյս կ'տային : Իսկ այս անղ միայն անդունդ կ'տեսնուի :

— Շատ զարմանալի է, դիտեց Գեգէոն Սբիլէդ, որ այս կղզին, թէև համեմատաբար պղտիկ, այլազան հող մ'ունի : Այս այլազանութիւնը ճշդիւ ընդարձակ ցամաքներու միայն յատուկ է : Երախ՝ մարդ պիտի կարծէր թէ Լինթօլն կղզիին արևմտեան կող- մը, որ այնքան հարուստ ու բարեբեր է, Մէքսիքօի ծովածոցին տաք ջրերէն կ'ոռոգուի, և թէ իր հիւսիսային և հարաւ-արև- ելեան եզերքը տեսալի մը բեռնային ծովու վրայ կ'տարածուին :

— Իրաւունք ունիս, սիրելի իմ Սբիլէդ, պատասխանեց Կի- րոս Սմիթ, ես ալ այդ դիտողութիւնն ըրի : Այս կղզին թէ ձևին և թէ բնութեան կողմէ՝ տարօրինակ կ'դանեմ : Կարծես թէ ցա- մաք երկրի մ'ունեցած ամեն տեսարաններուն բոլանդակութիւնն

է, և չափի զարմանամ եթէ երբեմն ցամաք երկիր եղած է :

— Ի՛նչ. ցամաք երկիր մը՝ Խաղաղականին մէջ տեղը, գոչեց Բէնքրօֆ :

— Ինչո՞ւ կ'զարմանաս, պատասխանեց Կիրոս Սմիթ : Ի՛նչ է Աւստրալիա, Նոր-Չեւանտա, բոլոր այն կղզիներն զոր Անկլիա- ցիք Աւստրալիա կ'անուանեն, որ Խաղաղականին արշեպելա- ցոսին միացած են, ինչո՞ւ համար այս բոլոր երկիրներն աշխար- հիս մէկ վեցերորդ մասը չափի կազմէին, Եւրոպայի կամ Ասիայի չափ կարեոր, Ափրիկէի կամ երկու Ամերիկայի պէս : Իմ մտքս կրնայ շուտով ըմբռնել թէ՛ այս ընդարձակ Ովկիանու մէջ ըն- կղմած կղզիներն այժմ՝ խորասոյղ ցամաք աշխարհի մը զազաթ- ներն են, սակայն նախնական ժամանակները ծովերու վրայ կը նայէին :

— Ինչպէս որ երբեմն կ'նայէր Ատլանտիքը, պատասխանեց շարպէրդ :

— Այո՛, որդեակ իմ, եթէ երբեմն գոյութիւն ունեցած է :

— Եւ միթէ կարծէք թէ Լինթօլն կղզին այն ցամաքին մէկ մասը կ'կազմէր, հարցուց Բէնքրօֆ :

— Հասնական է, պատասխանեց Կիրոս Սմիթ, և այս պա- րագան կրնար բացատրել թէ ինչո՞ւ համար այսքան այլազան բերքեր կան անոր երեսը :

— Եւ անհամար կենդանիներն՝ որ դեռ այս կղզիին մէջ կ'ընա- կին, յարեց շարպէրդ :

— Այո՛, որդեակ իմ, պատասխանեց չափազէտը, և իմ ա- ուաջողութեանս ՚ի նպատակ նոր փաստ մը կ'ըբերես ինձ : Մեր տեսածին վրայ դատելով՝ ստոյգ է որ այս կղզին շատ են կեն- դանիները, և որ աւելի այլանդակն է, տեսակները յետին ծայր այլազան են : Ասոր համար պատճառ մը կայ, և իմ կարծեօք՝ Լինթօլն կղզին երբեմն ընդարձակ երկրի մը մասն եղած լինի, որ քիչ քիչ Խաղաղականն վար իջած է :

— Ուրեմն՝ ալ ուր որ մը, պատասխանեց Բէնքրօֆ, որ այն- քան լաւ համոզուած չ'ըր երեւեր, այս հին ցամաք երկրին միա-

ցածն ալ կրնայ աներևոյթ լինիլ, և այն ատեն Ամերիկայի և Ասիայի մէջ բան մը չէր մնար :

— Պիտի մնայ, պատասխանեց Կիւրոս Սմիթ, նոր ցամաք երկիրներ պիտի լինին, վասն զի տասն անգամ բիւր ու բիւր մանր կենդանիներ զանոնք շինելու կ'պարագին այս միջոցին :

— Եւ որո՞նք են այդ որմնալիւնները, հարցուց Բէնքրօֆ :

— Բուստի ջրաճճիւնները ((infusoire), պատասխանեց Կիւրոս Սմիթ : Անոնք՝ անընդհատ աշխատութեամբ շինեցին՝ Բլէրման-Գոնէր կղզին, կղզեխմբերն (atolles) և ուրիշ շատ մը բուստե կղզեկներ որ Խաղաղական Ովկիանու մէջ կ'երևին : Այս ջրաճճիւներէն քառասունը եօթ միլիոն պէտք է ցորենի հաս մը կշուելու համար, և սակայն իրենց ծծած ծովային աղերով, իրենց իւրացուցած ջրին պինդ տարրներով՝ այս ճճիւնները հրաքար կ'արտադրեն, և այս հրաքարը ներքնածովային ահաղին շինութիւններ կ'յօրինէ, որու կարծրութիւնն ու պնդութիւնը հաստաքարին կ'հասասարին : Ատեն մը՝ արարչութեան առաջին շրջանները՝ բնութիւնն կրակը գործածելով՝ երկիրներն արապրեց բարձրացնելով, բայց հիմակ այս մանրադիտական կենդանիները կ'գործածէ այն օժանդակին տեղ՝ որու շարժիչ զօրութիւնն երկրագնտին խորը նուաղած է անտարակոյս, — ինչպէս որ երկրիս երեսը մարած հրաբուխներուն թիւը կ'հաստատէ : Եւ ես կարծեմ թէ՝ դարերը դարերու յաջորդելով՝ այս Խաղաղականն օր մը ընդարձակ ցամաք երկիր մը կրնայ գառնալ, և նոր սերունդներն այն տեղ բնակելով ըստ կարգի պիտի մշակեն ու զարգացնեն :

— Այդ շատ երկար գործ պիտի լինի, ըսաւ Բէնքրօֆ :

— Բնութիւնն իրեն համար ժամանակն ունի, պատասխանեց չափազէտը :

— Բայց ի՞նչ պէտք են նոր ցամաք երկիրներ, հարցուց Հարպէրդ : Կենդանի ինչ որ այս բնակելի երկիրներուն արգի տարածութիւնը բաւական է մարդկութեան համար : Արդ՝ բնութիւնն անօրուս բան մը չընեն :

— Երախ՝ անօրուս բան մը չընեն, բայց հիմակ ձեզի բնոյցա-

տրեմ՝ նոր ցամաք երկիրներու հարին ապագային մէջ, և յատկապէս այս արեւադարձային դօտիին վրայ՝ բուստածին (coralligène) կղզիներէ բռնուած : Գէթ՝ այս բացատրութիւնն ինչ բանաւոր կ'երևի :

— Ձեզի մտիկ կ'ընենք, Պարոն Կիւրոս, պատասխանեց Հարպէրդ :

— Աւասիկ իմ գաղափարս. առ հասարակ գիտունները կ'ընդունին որ օրին մէկը մեր երկրագունտը պիտի լմնայ, կամ լաւ ևս ըսեմ, կենդանական ու բուսական կեանքը պիտի մարի, անոր կրելիք սաստիկ ցրտումն : Բան մը կայ միայն որու վրայ համաձայն չեն, այսինքն այս ցրտման պատճառին վրայ : Ոմանք կարծեն թէ՛ երկիրս պիտի ցրտի՝ վասն զի արեւուն տաքութիւնը պիտի նուազի միլիոն տարիներ անցնելէն ետև. այլք՝ կարծեն թէ՛ այս բանս պիտի պատահի, վասն զի երկրագնտիս ներքին կրակները հետզհետէ պիտի սպառին, և այս կրակներն անոր վրայ սովորաբար կարծուածէն աւելի ներգործութիւն ունին : Ես այս վերջին ենթադրութեան կ'միտիմ, այս իրողութեան վրայ կ'ընտելով թէ՛ լուսինն իրօք պաղած աստղ մ'է, որ այսուհետև անբնակելի է, թէ՛ և արեւն անոր մակերևոյթին վրայ նոյն քանակութեամբ ջերմութիւն կ'թափէ միշտ : Արդ՝ եթէ լուսինը ցրտած է, պատճառն այս է որ իր ներքին կրակներն՝ որոց պարտաւոր է իր ծագումն, ինչպէս ամեն աստղային մարմիններ, բոլորովին մարած են : Աերջպպէս՝ ինչ որ լինի պատճառը, մեր երկրագունտն օրին մէկը պիտի սառի, բայց այս ցրտումը քիչ քիչ պիտի կատարուի : Այն ատեն ի՞նչ պիտի պատահի. բարեխառն գօսիւնքը՝ քիչ շատ հեռաւոր ժամանակներու մէջ՝ անբնակելի պիտի մնան, ինչպէս որ անբնակելի են հիմակ բեռալային գառանները : Ուրեմն՝ մարդկային խումբեր, ինչպէս կենդանեաց դասակներ՝ պիտի սկսին դիմել այն լայնութեան կողմերն որ աւելի ենթակայ կը դառնան արեւուն ներգործութեան : Ահաղին տեղափոխութիւն մը տեղի պիտի ունենայ : Եւրոպա, կեդրոնական Ասիա, հիւսիսային Ամերիկա՝ քիչ քիչ երեսի վրայ պիտի ձգուին, ինչպէս Աւստրա-

լազիա, կամ հարաւային Ամերիկայի ստորին մասերը : Բոյսերն ինչպէս նաև կենդանիները դէպ 'ի հասարակած պիտի դիմեն : Հարաւային Ամերիկայի կեղրոնական կողմերը գլխաւորապէս բնակելի կամ ցամաք երկիրներ պիտի դառնան : Լաբոնացիք և Սամոյեաններն բեւոյային կլիմային պայմանները Միջերկրականի եզերքը պիտի գտնեն : Ո՛վ կրնայ հաստատել որ այն ատեն՝ հասարակածին գաւառները շատ նեղ չպիտի գային երկրային մարդկութիւնը պարունակելու և մուցանելու :

Արդ՝ ինչո՞ւ համար՝ հեռաւե սնութիւնն՝ այժմէն՝ հասարակածին տակ՝ նոր ցամաքի մը հիմունքը չպիտի դնէր, և այդ պաշտօնը ջրածճիներուն չըպիտի յանձնէր, որպէս զի ամեն բուսական և կենդանական անդափոխութիւնը պատասպարէ : Շատ անգամ մտածեր եմ այս բաներուս վրայ՝ բարեկամներ, և ստուգիւ կարծեմ թէ մեր երկրագունտին տեսքն օրին մէկը բոլորովին պիտի փոխուի, թէ՛ նոր ցամաքներու բարձրանալովն, ծովերը պիտի ծածկեն հիները, և թէ՛ ապագայ դարերու մէջ Կոլումբոսներ պիտի երթան Չիմպորասօի, Հիմալայի կամ Մօն-Պլանի կղզիները գտնելու, ընկղմած Ամերիկայի մը, Ասիայի մը և Եւրոպայի մը մնացորդները : Աերջապէս՝ այս նոր ցամաքները՝ ըստ կարգի՝ անբնակելի պիտի դառնան. ջերմութիւնը պիտի մարի, ինչպէս կը մարի մարմնոյ մը ջերմութիւնը երբոր հոգին կ'մեկնի, և կեանքը պիտի անհետ լինի, եթէ ոչ բոլորովին երկրագնաէն, գոնէ առ ժամայ կերպով : Կարելի է՝ այն ատեն՝ մեր երկրագունտը պիտի հանդիսի, մահտան մէջ պիտի նորոգուի՝ օրին մէկն աւելի բարձր պայմաններով վերածնելու համար : Բայց՝ բարեկամներ, այս ամենը Արարչին գաղտնիքն է, և ջրածճիներուն գործողութեան մասին թերևս քիչ մը սահմանէն անցայ ապագային գաղտնիքը պնտելու համար :

— Սիրելիք իմ Կիրոս, պատասխանեց Գեղեճն Սբիլէդ, այս տեսութիւններն ինձի համար մարդարէութիւններ են, և օր մը պիտի կատարուին :

— Աստուծոյ գաղտնիքն է այդ, ըսաւ չափազէտը :

— Այդ ամենը շատ աղւոր բաներ են, ըսաւ այն ատեն Բէնքրօֆ, որ ուշադիր մտիկ ըրեր էր, բայց պիտի հասկցընես ինձ, Պարոն Կիրոս, թէ Լինքօլն կղզին քու ջրածճիներո՞ւ միջոցաւ շինուած է :

— Ո՛չ, պատասխանեց Կիրոս Սմիթ, պարզապէս հրաբխային ծագում մ'ունի :

— Ուրեմն, օրին մէկը պիտի անհետի :

— Հաւանական է :

— Յուսամ որ մենք անոր վրայ չպիտի գտնուինք :

— Ո՛չ, անհոգ եղիր, Բէնքրօֆ, մենք այս տեղ չպիտի լինինք, քանի որ փափաք չունինք այս տեղ մտնելու և կարելի է յաջողինք ասկից մեկնելու :

— Առ այժմ, պատասխանեց Գեղեճն Սբիլէդ, այնպէս մը հաստատուինք այս տեղ որպէս թէ յախտեան պիտի մնանք : Պէտք չէ բնաւ կիսկատար ընել բան մը » :

Այս տեղ լմնցաւ խօսակցութիւնը : Նախաձաշին աւարտեր էր : Երկրագնութիւնը նորէն սկսան կղզեցիք, և հասան այն սահմանն ուր կ'սկսի ճախճախօտ դաւառը :

Իրաւի ճահիճ մ'էր այն, որու տարածութիւնը՝ մինչև այն կլորցած եզերքն՝ որով կղզին հարաւ-արեւելեան կողմէն կ'լմննայ, կրնար քսան քառակուսի մղոն ունենալ : Հողը կոպճուտ բրտի կաւէ շինուած էր և բուսային բեկորներով խառնուած : Լօտեր, պրտուներ, բոտոսներ (carex), կնիւն (scirpe), աղիս անդին քանի մը խոտի խաւեր, խոշոր գանդուր ոստայի չափ թանձր՝ զայն կ'ծածկէին : Քանի մը սառած ջրկայք շատ տեղ կ'շողային արեւուն ճառագայթներուն ներքև : Ոչ անձրևներն, ոչ գետակ մը՝ յանկարծ յորդելով՝ այս ջրշեղջները չէին յօրինած : Բնապէս պէտք էր հետեցընել որ այս ճահիճը հողին ծակերէն ելած ջրէն կ'ձևանար, և իրօք այսպէս էր : Մինչև անգամ վախ կար որ օդը չապակաւնէր՝ սաստիկ տաքերուն ժամանակ՝ այն նեխութիւններէն, որմէ մօրուտ (paludéen) տեսիլքեր կ'ծնին :

Ջրային խոտերուն վրայ, մնայուն ջրերու երեսը՝ անթիւ թրոյ

չունենր կ'թռին : Ճահճի որսորդներ աչքերնին դոյ կրնային որսալ և հրացանի հարուած մը չկորուսել : Վայրի բազեր , բաղիկներ (pilet) , մրտիմներ , ջրակոչարներ (becassine) երամավին այն տեղ կ'ապրէին , և այս անվախ թռչունները կ'թողուն որ իրենց մօտենան :

Կապարէ գնդակներով հրացան մը բաւական էր որ այս թռչուններէն տասն երկու հատ մէկէն վար նետէ , սյնքան խիտ ու շատուր էին : Կղզեցիք ստիպուեցան նետերով որսալ : Որան այնքան առատ չեղաւ . բայց նետն այս առաւելութիւնն ունէր որ լռիկ կ'երթար կ'զարնէր և չէր ահաբեկեր այս հաւերն , որ հրացանի պայթիւնէն անշուշտ ճահճին չորս կողմը պիտի ցրուէին :

Ուստի որսորդները տասն երկու հատ վայրի բաղ որսալով դոճ եղան այս անգամ . այս բաղերը սպիտակ փետուր ունէին , կինամանի դոյն գօտի , կանաչ դլուխ , սև , ճերմակ և շէկ թևեր , տափակ կտուց : Թօփ այս հաւերը բռնելու համար օդնեց ճարպիկութեամբ , և իր անուշով սկսան անուանել կղզիին այս մօրուտ կողմը :

Ուրեմն կղզեցիք ջրային երէի առատ պաշար մ'ունէին այս կողմը : Երբ յարմար ժամանակը հասնէր , միայն լաւ մը քննել պէտք էր այս ճահճի , և կարելի էր այս թռչուններէն այլ և այլ սեսակներ՝ լճակին շրջակաները փոխադրել , եթէ ոչ բոլորովին ընտելացրնել դէթ բնակչելու համար , և այս կերպով կղզեցիք աւելի դիւրութիւն պիտի ունենային որսալու :

Երեկոյեան ժամը հինգին մօտ՝ Կիւրոս Սմիթ և իր ընկերներն իրենց բնակարանին ճամբան բռնեցին՝ Տատորնի (Բաղերու) ճահճին մէջէն դարնելով և Մէրսիէն անցան նորէն սառոյցէ կամուրջին վրայէն :

Երեկոյեան ժամն ու թին ամենքը Քարեայ-պալատը մտեր էին :



ՊԼՈՒՆ ԻՔ.

Օտարներ — Աղուներ — Պիկարներ — Հովն հիւսիս-արևմտ-
 դարձալը — Ձիւնէ փոխրիկ — Կողմաբորձներ — Ձերբասն փոսքեր հու-
 վերը — Հոյիէ շտաբէն բերեղանալը — Խորհրդաւոր ջրհորը — Առա-
 ջարբուած երկրազնութիւնը — Կապարէ հարիկ .

Օտանը ցրտերը մինչև օգոստոս 13 տևեցին , թէև չանցան արդէն նշանակուած Ֆարէնհայտի ջերմաչափին վերնագոյն աստիճանէն : Երբոր մթնոլորտը հանգարտ էր , այս ցուրտ օդը առանց նեղութեան կարելի էր տանիլ , բայց երբ հովը կ'փչէր , շատ ծանր կ'երեւէր թեթև հագուած մարդերու համար : Բէնքրօֆ սկսաւ ցաւիլ որ Ախրօն կղզին քանի մ'արջերու որջեր չունէր , և միայն աղուէսներ ու փոկեր կ'գտնուէին , որոց մտշաակն ընտիր չէր :

Քլուգ հանրապէս լաւ հաղուած են արջերը , կ'ըսէր նա , և կը փափաքէի որ ձմերուան համար իրենց մարմնոյն աաքուի տառա-տոկն անոնցմէ փսխ առնէի :

— Բայց , պատասխանեց Նապ ծիծաղելով , կարելի է որ այդ արջերը չպիտի հաճէին , Բէնքրօֆ , իրենց վերարկուն քեզի տալու : Այդ անասունները Սէն-Մարգէն շին :

— Պիտի ստիպելէք , Նապ , պիտի օտ'պ'կնք որ տանս կ'պատասխանէր Բէնքրօֆ բոլորովին հրամայական կերպով մը :

Բայց այս ահարկու մտակերները կղզիին մէջ չկային , կամ թէ մինչև այն ատեն դեռ երևան ելած չէին :

Մակայն՝ Հարպէրը , Բէնքրօֆ և թղթակիցը Մեծ-Տեսքին սառահարթին վրայ և անտառին ծայրերը ծուղակներ դրին : Նաւորդին կարծիքն այս էր որ , ամեն կենդանի , ինչ որ լինի , միշտ լաւ որս մ'էր , խոտակեր կամ մսակեր՝ եթէ անգամ ծուղակը իյնային՝ սիրով պիտի ընդունուէին Քարեայ-պալատին մէջ :

Բայց այս ծուղակները շատ պարզ էին . հողին մէջ փոսեր բացին , վրան առաստաղի պէս ոստեր ու խոտեր փռեցին , որով ծուղակներուն բերանը կ'ծածկուէր , յատակը քիչ մը խայծ , որու հոտը կրնար անասունները հրապուրել , ահա այս էր բոլոր ծուղակներուն շէնքը :

Ղէտը է նաև ըսել որ այդ ծուղակներն ուր որ պատահեցաւ չփորեցին , այլ այնպիսի տեղեր ուր աւելի շատ հետքեր կային և ցոյց կ'տային որ չորքոտանիներն աւելի անց ու դարձ ունէին այն կողմերը : Ամեն օր կղզեցիք կ'երթային ծուղակները նայելու , և այս առաջին օրերն՝ երեք անգամ դտան քանի մ'աղուէսներ որ արդէն Մէրսիի աջ կողմի փփերուն վրայ սեսնուեր էին :

Եւ , ուրեմն միայն աղուէսներ կան այս կղզին , պոռայ Բէնքրօֆ , երբ երրորդ անգամ այս կենդանիներէն հատ մը հանեց փոսէն՝ որու մէջ խեղճ ու կրակ կ'կենար : Օգուտ մը չունին այս անասունները :

— Ինչո՞ւ չէ , ըսաւ Գեղէոն Սբիլէդ : Արնան բանի մը ծառայել :

— Ի՞նչ բանի ուրեմն :

— Խայծեր շինելու , որ ուրիշ կենդանիներ որսանք :

Թղթակիցն իրաւունք ունէր , ոտսի այնուհետև աղուէսներու զիակէն խայծեր դրին փոսերուն մէջ :

Նաւորդը ցանցեր ալ շիներ էր պրտուէ թելերով , և այս ցանցերն աւելի օգտակար եղան քան թէ ծուղակները : Շատ քիչ անգամ կ'պատահէր որ ճագար մը չզանուէր նոյն ցանցին մէջ : Ճագարէն ուրիշ բան չկար , բայց նապ ճագարէ տեսակ տեսակ կերակուրներ շինել զիտէր , և սեղանակիցները բնաւ դանդաղեցան փափաք մը չունէին :

Սակայն՝ մէկ երկու անգամ՝ օգոստոսի երկրորդ շաբթուն մէջ՝ ծուղակներն աղուէսներն տարբեր և աւելի օգտակար կենդանիներ բռնեցին : Քանի մը վարաղներ էին որ լճակին հիւսիսային կողմին արդէն տեսնուեր էին : Բէնքրօֆ պէտք չունեցաւ հարցնելու թէ արդեօք այս կենդանիները կ'ուտուին թէ ոչ : Ինք-

նին յայտնի էր որ ուտելի էին , քանի որ Ամբրիկայի կամ Եւրոպայի խողին կ'անանէին :

«Բայց ասոնք բնաւ խող չեն , ըսաւ Հարպէրդ , ահա քեզի կանխաւ կ'յայտնեմ , Բէնքրօֆ :

— Տղան , պատասխանեց նաւորդը , ծուղակին վրայ ծուրով և կենդանիին պոչէն քաշելով դէպ 'ի վեր , ներէ՛ ինձ հաւատալու որ ասոնք խող են :

— Եւ ինչո՞ւ համար :

— Վասն զի այդ հաճոյք կ'պատճառէ ինձ :

— Ուրեմն , Բէնքրօֆ , դու շատ կ'սիրես խող :

— Շատ կսիրեմ խող , պատասխանեց նաւորդը , մանաւանդ իր ոտքերուն համար , և եթէ ութ հատ ոտք ունենար չորսի տեղ՝ կրկնապատիկ պիտի սիրէի զայն՝ :

Իսկ խօսքն այս կենդանիներուն դարձրելով պէտք է դիտարկ որ պէկարիներ (հարաւային Ամբրիկայի խող) էին , որսնասու ըստած տեսակէն , որ իրենց մութ գոյնէն կ'ձանջցուին , և զուրկ են այն երկար ակռաներէն , որ իրենց համասեռներուն բերանը կ'զինեն : Սովորաբար այս պէկարիները խուժք խուժք կ'ապրին , և հաւանական էր որ կղզիին անտառուտ կողմին առատօրէն կ'ըլտնուէին : Ինչ և է , զլսէն մինչև ստք ուտելի էին , և Բէնքրօֆին ուզածն ալ այս էր :

Օգոստոս ամսուն Աձին միջոցները՝ յանկարծ միճորտիս վիճակը փոխուեցաւ՝ հսկի հիւսիս-արեւմուտ դանձալով : Յուրաչ քանի մ'աստիճան սաստկանալով , օդին մէջ դիզուած շողիները քիչ ատենէն ձիւնի փոխուեցան : Սպիտակ խաւ մը բոլոր կղզին ծածկեց այնպէս որ բնակիչներուն աչքին նոր տեսքով մ'երեցաւ : Այս ձիւնը շատ օրեր առատօրէն վնդելով , քիչ ատենէն իր թանձրութիւնը մինչև երկու ոտք հասաւ :

Հովը յետին ծայր ուժգնութեամբ սաստկացաւ , և՛ Քարեայ-պալատին բարձունքէն՝ կ'լսուէր ծովուն օրոտումն որ ժայռերուն դէմ կ'բախէր : Քանի մ'անկիւնաւոր տեղեր օդը պայտսներ կ'ընէր , և ձիւնն՝ չըջուն բարձր սիւներ ձեւայրնելով հոսուն քա-

Թառներուն, կ'նմանէր, որ իր հիման վրայ կ'ըջըջէր և զոր նա-
ւերը թնդանոթով կ'վանեն:

Սակայն ուրականն՝ հիւսիս-արեւմուտքէն գալով՝ կղզիին ետեւն
կ'զարնէր և Քարեայ-պալատին դիրքն ուղղակի յարձակումէ
մը զայն կ'պահպանէր: Բայց այս ձիւնային մրրկին ժամանակ՝ որ
այնպէս սոսկալի էր որպէս թէ բեւեռային երկրի մը վրայ կ'պա-
տահէր, ոչ Կիւրոս Սմիթ, ոչ իր ընկերները չկրցան դուրս ել-
նելու յանդգնել, թէև կ'փափաքէին, և հինգ օր փակուած մնա-
ցին, այս է՝ օդոստոսի ԱՅԷն մինչև 20: Փոթորկին մենչիւնը՝
Յակամարի անտառին մէջ լսելի կ'լինէր: Անտառակոյտ շատ մը
ծառեր արմատէն պիտի քակուէին, բայց Բէնքրօֆի կ'մթիվարուէր
մտածելով որ զանոնք կտրելու նեղութիւնը չպիտի ունենար:

«Է՛տ վե փայտահատի պաշտօն կ'վարէ, թե՛ղ իր դործը շարու-
նակէ՛՞ կ'կրկնէր նա:

Եւ սակայն զայն արդիւլելու հնարը չկար:

Այն ատեն Քարեայ-պալատին բնիկները որչափ շնորհակալ
եղան Աստուծոյ որ իրենց այս ամուր ու անսասանելի պատուպա-
րանը շնորհէր էր: Կիւրոս Սմիթ իրստամբ այս շնորհակալեաց
մէկ մասին իրաւունք ունէր, բայց վերջապէս բնութիւնն էր որ
այս ընդարձակ քարայրը փորեր էր, և իրենք միայն դատր էին
զայն: Այն տեղ ամեն բան ապահով վիճակի մէջ էր, և փո-
թորկին հարուածները չէին կրնար իրենց հասնել: Եթէ Մեծ-
Տեպքին սարահարթին վրայ աղիսէ ու փայտէ՝ տուն մը շինէին,
անտարակոյտ ուրականին բուռն և կատաղի հովին չպիտի դիմա-
նային. իսկ Կարկաններն՝ բոլորովին անքնակելի գարձած պիտի
լինէին, ինչպէս որ գիւրին էր երեակայել՝ լսելով դուրսը ալեաց
սոսկալի դոշումը. վառն զի ծովը կղզեկին վրայէն անցնելով՝ ան-
շուշտ զայրադին կ'բախէր Կարկաններուն: Բայց այս տեղ, Քա-
րեայ-պալատին մէջ՝ այս վիճակոր քարայրը, որու գէ՛մ անզօր
էին թէ՛ ջուրը և թէ՛ հողը, վախնալու բան մը չկար:

Այսպէս քանի մ'օր բանտարկուած մնացին գաղթականները,
բայց պարզապէս չկեցան: Փայտ, որ տախտակ եղեր էր, մինչքա-

նոցին մէջ շատ կար, և քիչ քիչ կահ կարասին լմնցուցին, ու-
րիշ սեղաններ, աթոռներ ըրին, որ ստուդիւ ամուր էին, վառն
զի նիւթը շոյլըրէն գործածեցին: Այս շարժական կարասին,
քիչ մը ծանր էր, և իր անուան չէր պատասխաներ, իրաւ, քա-
նի որ իր էական պայմաններէն մին շարժուութիւնը պիտի լինէր,
բայց դարձեալ՝ Նապի ու Բէնքրօֆի պանծալի ձեռագործներն էին,
զոր Պուլը կարասիներուն հետ չպիտի փոխէին:

Յետոյ հիւսները կողովագործ եղան, և այս նոր արուեստին մէջ
ալ բաւական յաջողեցան: Լճակին դէպ 'ի հիւսիս ձգած ծայրը՝
արդիւնաւոր ուղիք գտեր էին կղզեցիք, ուր ծիրանի ուռիներ կը
բուսնէին առատութեամբ: Անձրևոտ եղանակէն առաջ՝ Բէնքրօֆ
ու Հարպէրդ այս օգտաւէտ ծառատունիները հնձեր էին, և ի-
րենց ոստերը, այն ատեն լաւ մը պատրաստուած լինելով՝ կրնային
շատ արդիւնաւոր կերպով գործածուիլ: Առաջին փորձերը տձև
եղան, բայց բանտրներուն ճարպիկութեան և ուշիմութեան շնոր-
հիւ, որ իրարու խորհուրդ կ'հարցընէին, արդէն իրենց տեսած
օրինակները կ'իյնէին, և իրարմէ լաւ շինելու կ'մրցէին, այլ և
այլ մեծութեամբ սապատներ ու կողովներ շինուեցան և գաղթա-
կանութեան համբարն ստեղցուցին: Նապ յատուկ կողովներու մէջ
գրաւ շօժի հունդեր, վիշապաւորներու արմատներ և մթերանոցը
տեղաւորեց:

Այս օդոստոս ամառն վերջին շարժը օրը նորէն փոխուեցաւ:
Յուրան աւելի ընկաւ և փոթորիկը դաղրեցաւ: Կղզեցիք դուրս ե-
լան: Ստուդիւ աւաղափին վրայ երկու օտք ձիւն կար, բայց կա-
րելի էր առանց նեղութեան քալել այս կարճբացած ձիւնին վրայ:
Կիւրոս Սմիթ ու իր ընկերները Մեծ-Տեպքին սարահարթին վրայ
ելան:

Ի՛նչ փոփոխութիւն: Այն անտառներն զոր դալարազեղ ձգեր
էին, մանաւանդ կոնոնաբեր տունկերը գտնուած մասը, նոյն մի-
ջոցին միօրինակ դոյնի մը ներքև անհետ եղեր էին: Ամեն առար-
կայ ձերմակ էր, Ֆրանքլէնի լեռին սարէն մինչև ծովի սահմանն,
պուրակ, մարդ, լճակ, գետակ, ծովափն: Մէրսիի ջուրը սառէ

կամարի մը տակէն կ'հոսէր, որու ալիքն ամեն անգամ որ կ'ա-
ճէին ու կ'նուազէին, սառոյցը կ'խորտակէին ճայթիւնով: Լճա-
կին ամուր մակերևոյթին վրայ բազեր, շոակայաքներ, պլէկներ*
(pilet) և Բուսաներ** (guillemot) կ'թռչաւին:

Բիրաւոր էին այդ թռչունները: Ժայռերն որոց մէջէն կ'հո-
սէր սարահարթին ծայրը դանուող քարավաղը՝ սառոյցներով ցցուած
էին: Կարծես թէ ջուրն ասային խողովակի մը բերնէն կ'երնէր՝
խողովակ մը զոր Աերաշինութեան ժամանակի արհեստագործներէն
մին պիղած լինէր: Սակայն դեռ կարելի չէր ուրակահին հասու-
ցած փնտններն հաշուել, և պէտք էր սպասել որ ձիւնէ լայն
սաւանը բոլորովին հալի:

Գնդէան Սրիւէդ, Բէնքրոֆ և Հարպէրդ չհոռոցան այս առթիւ
իրենց ծուղակներն երբևէ տեսնելու: Գիրաւ չգտան զանոնք,
քանի որ ձիւնին տակ ծածկուած էին: Մանաւանդ զգուշացան
որ իրենք չիյնան փոսին մէջ, և այս ոչ միայն վտանգաւոր այլ
և նուաճատցուցիչ պիտի լինէր, վասն զի իրենց զրած որոգայ-
թին մէջ ընկած պիտի համարուէին: Բայց վերջապէս այս ան-
ախորժ գէպը չպատահեցաւ և իրենց ծուղակները բոլորովին ան-
փնտս գտան: Կենդանի մ'ընկած չէր անոնց մէջ, և սակայն՝ բո-
լորովին շատ ոտքի հետքեր կային, և մանաւանդ խիստ որոշ
ձիւնի նշաններ:

Հարպէրդ աներկմիտ հաստատեց որ կատուի (felin) սեռին պատ-
կանող մակեր կենդանիներէն անկից անցած պիտի լինէին, և ա-
տով չափադէտին կարծիքը թէ՛ վայրի վտանգաւոր անասուններ
պիտի գտնուէին Լինքոլն կղզին՝ հաստատութիւն կ'առնուր: Ան-
տարակոյս այս վայրագ անասունները սովորաբար Խոր-Արևմուտ-
քի թանձր անտառները կ'ընակէին, բայց անթափանչ ստիպուած՝
մինչև Մեծ-Տեսքին սարահարթն եկած պիտի լինէին: Կարելի
է նաև որ Քարեայ-պալատին ընկններուն հոտն առեր էին:

* Բազի տեսակ հուր:

** Բոլորը մարտանքու քնտնիքէն թռչուններ:

Վերջապէս ինչ էն այդ կատուի տեսակ անասունները, հար-
ցուց Բէնքրոֆ:

— Վարդեր են, պատասխանեց Հարպէրդ:

— Ես կարծէի թէ այդ անասունները միայն տաք կլիմաներու
տակ կ'գտնուէին:

— Նոր աշխարհին մէջ, պատասխանեց պատանին, Մէքսի-
քոյէն մինչև Պուէնոս-Սյրէսի Պանպասները կ'գտնուին: Արդ՝
քանի որ Լինքոլն կղզին Լա Բլատայի գաւառներուն լայնութեան
աստիճանն է, զարմանք չեն որ այս տեղ ալ վայրեր յաճախեն:

— Լաւ, սէտք է զգոյշ լինիլ՝ պատասխանեց Բէնքրոֆ:

Սակայն քիչ քիչ օդը մեղմանալով ձիւնն սկսաւ ցրուիլ, և
անձրև ալ դալով իր լուծիչ զօրութեամբը, զայն բոլորովին ջն-
ջից: Թէև օդը պէշ էր, կղզեցիք իրենց այլ և այլ ուտելիքը
նորէն համբարեցին, բուսային ուտելիքի մասին, նոճի հունդեր,
արմատներ, բլրաներ, հացիի հեղուկ հաւաքեցին, իսկ մսի վե-
րաբերեալ բաներն էին, ճագար, ախորժ, ազեվազ: Ասոր հա-
մար հարկ եղաւ անասուն մէջ քանի մ'անգամ արշաւել և տես-
նուեցաւ որ վերջին ուրականն խել մը ծառեր գետին տապալէր
էր: Նաւորդն ու Նապ սայլակով մինչև ամխարովը դացին, որ-
պէս զի՛ քանի մը բեռ քարածուխ բերեն: Անցնելու ատեն տե-
սան որ բուռին ծխանն հովէն փնտուեր և վեց ոտքի չափ փլեր
էր:

Ինչպէս քարածուխ, նոյնպէս փայտի պաշար տարին Քարեայ-
պալատը, և Մէրսի դետակին յորձանքէն օդուտ քաղելով բա-
ւաղան լատտ փայտ փոխադրեցին: Կարելի էր որ դեռ լմացած
չէր սաստիկ ձմերուան եղանակը:

Նոյնպէս կարկառները դացին նայելու, և գաղթականները շատ
ուրախ եղան որ փոթորկին ժամանակ այն բնակարանին մէջ չզրու-
նուեր էին: Ծովը բաւական աւերմունք ըրեր էր նոյն տեղը: Հո-
վին յարուցած ալէքը՝ կղզեկին վրայէն անցնելով՝ կարկառներուն
բոլոր զարափոսները մտեր էր, որ կէս մ'աւաղով ծածկուած
էին, և ժայռերուն վրայ թանձր մամուռներ ընկեր էին: Երբոր

Նսպ, Հարպէրդ և Բէնքրօֆ կ'որսային կամ այրելիք կ'կրէին, Վիւրոս Սմիթ և Գեղէոն Սրիլէզ Կարկառները մաքրելու զբաղեցան, և զարբնոցն ու հնոցները գրեթէ անվնաս դասն, առաջուց աւազել կոյտերէն պաշտպանուած լինելով:

Վղզեցիք անօդուտ տեղ փայտ ու այրելիք պատրաստելու չղճաղեցան, քանի որ դեռ ցուրտ օրեր պիտի ունենային: Յայտնի է որ՝ հիւսիսային կիսագնդին մէջ փետրվար ամսուն օրերը կ'սկսին ցրտիլ, նոյնը պիտի պատահէր և հարաւային կիսագնդին մէջ, և օդոստոս ամսուն վերջերը՝ որ հիւսիսային Ամերիկայի փետրվար ամիսն է, այս օդային փոփոխութիւնը տեսնուեցաւ:

Ամսուն 23ին միջոցները՝ ձիւն ու անձրև վաղելէն ետև՝ հովը հարաւ-արեւելեան կողմէն սկսաւ փչել և յանկարծ ցուրտը սաստկացաւ: Չափազէտին հաշտին նայելով Փարէնհայդի ջերմաչափին սնդկի սիւնակը դրօշէն վար ութ աստիճանէն քիչ չարտի նշանակէր (22⁰, 22 հարիւրմասեան, սառոյցէն վար) և ցրտին այս ծանրութիւնը, որ սուր քամիով մ'աւելել կ'ուզուէր, շատ օրեր շարունակեց: Վղզեցիք նորէն քարեայ-պալատը փակուելու ստիպուեցան, և որովհետև անոր ճակատին ամեն բայուածքն ամրապէս դրցել պէտք եղաւ, միայն օդին նորոգութեան համար անհրաժեշտ ծակ մը թողցով, մեծ քանակութեամբ մոմ սպառեցաւ: Որպէս զի շատ մոմ չսպառի, կղզեցիք շատ անդամ վաւարանին բոցովը կ'լուսաւորէին քարայրը, և փայտը չէին խնայեր: Շատ անգամ ոմանք աւազափն իջան, սառոյցներու մէջ որ մակընթացութեամբ ծովեզը կ'զիզուէին, բայց շուտով քարեայ-պալատը կ'երէնէին, և ելնարանին գաւազանները բռնելու ատեն սաստիկ ցաւ կ'զգային, վասն զի աստիճաններն այնքան սառէին որ իրենց մատերը կ'այրէին:

Ղերսային հարկ եղաւ այս բանտարդելութեան ժամերն օդտակար զնազմուածքով մ'անցընել: Այն ատեն Վիւրոս Սմիթ գործողութիւն մը սկսաւ որ կրնար չորս պատի մէջ կատարուիլ:

Արդէն դիտենք որ կղզեցիք ուրիշ շաքար չզուէին բայց միայն հեղուկը գոր հացի ծառէն կ'հանէին, խորունկ ծակեր բանալով:

Ուստի բաւական էր այդ հեղուկը մեծ ամաններու մէջ լեցընել, և այսպէս այլ և այլ ուտելիքի կ'ործածուէր, նա մանաւանդ երբ հեղուկը հիննար կ'սկսէր ճերմկնալ և շարաբուտի պէս սնդանալ:

Բայց աւելի լաւ բան մը կար ընելու, և օր մը Պ. Սմիթ իւմացուց իր ընկերներուն որ շաքարադործներ պիտի դառնան:

«Շաքարադործ, պատասխանեց Բէնքրօֆ: Այդ քիչ մը տաք դործ է, կարծեմ»:

— Շատ տաք, պատասխանեց չափազէտը:

— Ուրեմն, շատ յարմար է ժամանակնիս պատասխանեց նաւորդը:

Բայց ընթերցողը այս շաքարադործութեան բաւը լսելով՝ թող միտքը չրերէ գործարաններու կնճառոս դործիներն, ու տեսակ տեսակ բաւորներ: Ո՛չ, այս հեղուկը պաղել տալու համար, բաւական էր միայն դռել խիստ դիւրին միջոցաւ մը: Հողէ՛ մեծ ամաններու մէջ դրին հեղուկը կրակի վրայ, պարզապէս քիչ մը եփեցին և քիչ ատենէն իր երեսը փոփոք մ'եղաւ: Էրբ սկսաւ թանձրանալ, Նսպ փայտէ բահակով մը խառնեց — որով շողիացումը պիտի փութացընէր և պիտի չթողուր որ խանձրահոս համ մ'առնու:

Լաւ կրակի վրայ քանի մը ժամ ետալէն ետև՝ որ որչափ դործողին նոյնչափ գործելիին օդտակար էր, այս վերջինն, այսինքն հեղուկը թանձր օշարակ մը դարձաւ: Այս օշարակը կատէ կաղապարներու մէջ թափեցին, որոնք առաջուց այլ և այլ ձևերով շինուեր էին նոյն իսկ խոհանոցին փուսին մէջ, և հետեւեալ օրը՝ այդ օշարակը՝ պաղելով՝ տեսակ մը ձուլակերպ պաներ դարձեր էր: Շաքար էր, քիչ մը կարմրադոյն, բայց գրեթէ թափանցիկ ու համեղ:

Յուրաջ մինչև սեպտեմբերի ամսուն կէսը շարունակից և քարեայ-պալատին բանտարդները սկսան շատ երկար դանել իրենց դերութիւնը: Ամեն օր դուրս ելնելու փորձ մը կ'ընէին, բայց շուտով իրենց բնակարանը կ'դառնային: Աւստի քարայրին պատ-

կաս կարասին ամբողջացընելու կ'աշխատէին միայն : Պարտապէս
ատեն կ'աօսակցէին :

Կիրոս Սմիթ իր ընկերներն ամեն բանի մէջ կ'հրահրէր , և
գլխաւորապէս զիտութեան գործնական կիրաւութիւնները կ'բա-
ցատրէր : Կղզեցիք զբքատուն մը չունէին , բայց չափազէտը միշտ
պատրաստ ու բաց զիւրք մ'էր , որու մէջ ամեն մէկն իր ուզած
երեսը կ'կարգար , զիւրք մ'որ ամեն ինչիւնները կ'լուծէր և զոր
չատ անդամ կ'թղթատէին : Այսպէս կ'անցնէր ժամանակը , և այս
ազնիւ մարդիկ կարծես թէ բնաւ երկիւղ մը չունէին ապաղային
վրայ :

Սակայն ատենն էր որ այս բանտարկութիւնը վերջանար : Ա-
մենքը կ'փափաքէին տեսնել , եթէ ոչ զեղեցիկ օգեր , զանէ այս
անտանելի ցրտին վախճանը : Եթէ միայն հասարակութեանը ունե-
նային որ ցրտին զիմանալու կարող լինէին , քանի քանի անգամ
արշաւելու պիտի ելնէին թէ աւազաբլուրները , թէ Տաղորնի ճա-
հիճը : Երէն խոյս չսլիտի սար և անտարակոյտ որը շատ արդիւ-
նաւոր պիտի լինէր : Բայց Կիրոս Սմիթ կ'ուզէր որ իր ընկեր-
ներն առողջութիւնն չմտասն , վասն զի ամենուն բազում կենքն
իրեն պէտք էին և իր խորհուրդը մտիկ ըլին :

Բայց հարկ է ըսել որ այս բանտարկութեան ժամանակ ամե-
նէն անհամբերը՝ Բէնքրօֆէն ետք՝ Թօփն էր : Հաւատարիմ շունը
չատ նեղ կ'զանէր քարեայ-պալատը : Աննկէ սենեակ կ'մտնէր
կ'ենէր և իր կերպով կ'այտնէր որ սաստիկ կ'ձանձրանար :

Շատ անգամ Կիրոս Սմիթ զիտեց որ երբ այն վիժին ջրհորին
կ'մտնանար , որ ծովու հետ հաղորդակցութիւն ունէր , և որու
բերանն մթերանոցին խորը կ'բացուէր , Թօփ տարօրինակ զօղան-
ջիւններ կ'արձակէր : Թօփ այս ծակին բոլորալիք կ'դառնար , որ
փայտէ կափուլով մը ծածկուած էր : Երբեքն ալ իր թամբերը
սոյն կափուլին տակը մըլէ կ'ջանար , որպէս թէ վերցընել կ'ու-
զէր : Այն ատեն անսովոր կերպով մը կ'հաջէր , որով թէ բար-
կութիւն և թէ յուզմունք կ'այտնէր :

Չափազէտը քանի մ'անգամ զիտեց Թօփին այս ընթացքը :

Ուրեմն ի՞նչ կար այն անդունդին մէջ որ այս աստիճան ուշիմ
կենդանիին վրայ կ'ներգործէր : Զրհորը ծովը կ'յանդէր , և այս
արդէն ստոյգ էր : Արդեօք նեղ ջրմուղներու ձեով կղզիին տակը
կ'տարածուէր : Արդեօք ներքին փապարներու հետ հաղորդակցու-
թիւն մ'ունէր : Միթէ ատեն ատեն ծովու հրէշ մը կ'գար այս
ջրհորին յատակը օդ չնշելու համար : Չափազէտը չէր գիտեր
մտածելիքը և այլանդակ ու շփոթ գաղափարներ իր միտքը կ'պա-
շարէին : Գիտնական ճշմարտութեանց մէջ շատ հեռուն գնալու
սովորած լինելով չէր կրնար ներել ինքզինքին որ ամբողջն ու
գրեթէ գերբնային բաներու հաւատ ընծայէ ու մոլորի :

Բայց ինչպէս բացատրել պէտք էր Թօփին ընթացքն , ուշիմ
շուն մ'որ երբէք լուսին դէմ հաջելով ժամանակ չկորսնցընէր ,
երբոր այսպէս կ'յամարի հոտտելիքովն ու լսելիքով քննելու սոյն
անդունդը , եթէ իր անհանդուարութիւնը զրգուող բան մը չլինէր
անոր մէջ :

Թէև Թօփին այս ընթացքը կ'շփոթէր Կիրոս Սմիթին միտքը ,
սակայն անբանաւոր կ'երևէր իրեն այդ բանը խոստովանելու : Ուս-
տի չափազէտն իր սպաւորութիւնները Գեղէտն Սբիլէդի հաղոր-
դեց , անօրուտ սեպելով իր միւս ընկերներուն հաղորդել այն ա-
կամայ խորհրդածութիւններն զոր թերևս իր մտքին մէջ կ'զրգուէր
մի միայն Թօփին ցնորքը :

Աւերջապէս ցուրտերը զարդեցան : Անձրևներ , ձիւնախառն հո-
վեր , տարափներ , մրրիկներ տեղի ունեցան , բայց այս դէշ օ-
դերը չէին տներ . սառոյցը քակուեր էր , ձիւնը հալեր , աւազ-
ափը , սարահարթը , Մէրսիի քարափները , անտառն կարելի էր
դիւրաւ շրջել : Գարնան այս դարձն քարեայ-պալատին ընկիւն-
բուն սիրան ուրախութեամբ լցուց , և քիչ ատենէն՝ միայն քունք
և կերակուրի ժամքն այն քարայրը կ'անցընէին :

Սեպտեմբերի վերջերը շատ որսի ելան , և Բէնքրօֆ նորէն յար-
մար սեպեց հրաղէններ պահանջել , ինչպէս որ Կիրոս Սմիթ խոս-
տացեր էր : Չափազէտը քաջ զիտնալով որ առանց մասնաւոր
գործոյքի՝ զրեթէ անհար պիտի լինէր իրեն հրացան մը չիսնչ
31

գործածելի, միշտ կ'կասէր և այս գործը ետքի կ'ընդունար: Նաև կ'այայտէր թէ Հարպէրը ու Գեղէնն Սրիլէդ խիստ ճարտար աղերսաւորներ եղեր էին, և թէ ամեն տեսակ պատուական կենդանիներ, աղեկազ, ճաղար, կաքէլ, աղաւնի, կաքաւ, վայրի սաղ, ջրակտցար, մէկ խօսքով՝ փետրաւոր ու անփետուր երէններ՝ իրենց նետերուն որս կ'իյնային, հետեապէս՝ կարող էին դեռ ևս սպասել: Բայց յամառ նաւորդին ականջը չէին մտներ այս խօսքերը և մինչև որ չափադէտն իր փափաքը չկատարէր անոր հանդիստ չպիտի տար: Սակայն Գեղէնն Սրիլէդ Բէնքրօֆին ձայնակից էր:

«Եթէ այս կղզին, կ'ըսէր նա, վայրագ կենդանիներ կան, ինչպէս կարելի է կասկածիլ, պէտք է անոնց դէմ գնելու և ջնջելու միջոցը խորհիլ: Արնայ ժամ մը դալ որ այս լինի մեր ստաջին պարտաւորութիւնը»:

Բայց նոյն պահուն՝ Կիւրոս Սմիթին մտմտաքը հրազենի խնդիր չէր այլ հանդերձի: Կղզեցոց հազած զրեստները ձմեռին դիմացիներ էին, բայց մինչև յաջորդ ձմեռ չէին կրնար դիմանալ: Մտակեր կենդանիներու մորթը կամ որոնողներու բուրդը, ահա՛ որ և է կերպով՝ այս բաները պէտք էր ձեռք ձգել, և որովհետև պակաս չէին արտիկները, հարկ էր խումբ մը կազմելու միջոցները գտնել, որպէս զի գաղթականներուն պիտոյից համար պահուին: Ընտանի կենդանիներու համար արդեւոյ մը, հաւերու համար հաւնոց մը, մէկ խօսքով կղզիին մէկ կողմը տեսակ մը ազարակ հիւնելու գործը, արոնք էին գարնան մէջ կատարուելիք երկու կարևոր խորհուրդները:

Հետեապէս՝ այս շինութիւնները սկսելու նպատակաւ, անհրաժեշտ հարկ մ'էր Լինքօլն կղզիին անձանթ կողմերն ալ խուզարկել, այսինքն այն թանձր անտառներն որ Մէրսիի աջ կողմը կը տարածուէին, իր բերնէն սկսեալ մինչև Սէրրանդին (օձապտոյտ) հրուանդանին ծայրը, ինչէս նաև բոլոր արեւմտեան եզերքը: Բայց անդրդով օդ մը պէտք էր, և այս գործն օդատար կերպով սկսելու համար գոնէ ամիս մը սպասելու հարկ կար:

Ուստի անհամբեր կ'սպասէին երբ դիպուած մը պատահելով

կղզին բոլորովին զննելու համար՝ գաղթականներուն փափաքն աւելի ևս դրդեց:

Հոկտեմբեր ամսուն 24ն էր: Այն օրը՝ Բէնքրօֆ ծուղակները գացեր էր, որոց խայծը միշտ անպակաս կ'պահէր: Ծուղակներուն մէջ երեք կենդանի դտաւ որ շատ ընտիր կերակուր մը պիտի լինէին: Մատակ պէկարիտ մ'էր իր երկու կորիւններով:

Ուստի Բէնքրօֆ Գարեայ-պալատը դարձաւ՝ այդ որսին վրայ զմայլած՝ և՛ ամեն անդամուն պէս՝ նաւորդն իր որսորդութեան վրայ մեծ մեծ ջարդեց:

«Ճշմարիտը, լաւ ճաշ մը պիտի ընենք, Պարոն Կիւրոս, գոչեց նա: Գո՛ւ ալ, Պարոն Սրիլէդ, պիտի ուտես, անշուշտ»:

— Կ'ուզեմ ուտել, պատասխանեց Սրիլէդ, բայց ի՞նչ պիտի ուտեմ:

— Խոճկոր:

— Ա՛յլ, խոճկոր, Բէնքրօֆ: Մեծախօսութիւնդ լսելով՝ կարծէի թէ արջտակաւոր (truffe) կաքաւ մը կ'բերես մեզի:

— Ի՞նչպէս, պողաց Բէնքրօֆ: Միթէ բանի տեղ չե՞ս գներ խոճկորը, խնդրեմ ըսէ:

— Այո՛, պատասխանեց Գեղէնն Սրիլէդ, առանց եռանդ մը ցոյց տալու, միայն թէ չափէն աւելի ուտելու չէ . . . :

— Շատ լաւ, շատ լաւ, պարոն լրագրագետ, պատասխանեց նաւորդը՝ որ կ'դժարէր երբոր իր օրը կ'կտրէին, դժուարաւ բան կ'հաննիս: Եօթն ամիս առաջ՝ երբ այս կղզին ընկանք, շատ գոհ և ուրախ պիտի լինէիր եթէ այսպիսի որս մը գտնէիր . . . :

— Այո՛, այո՛, պատասխանեց թղթակիցը: Երբեք մա՛ր ոչ կատարեալ է և ոչ գոհ:

— Աերջապէս, վրայ բերաւ Բէնքրօֆ, յո՛ւսամ որ նապ իր բոլոր ճարպիկութիւնը պիտի թափէ: Նայէ՛, նայէ՛ անգամ մը, այս երկու պէկարիտները հաղիւ երեք ամիսուան են: Լորամարդիներուն պէս համադամ պիտի լինին: Օ՛ն, նապ, եկուր: Ես ինքս պիտի հսկեմ այդ խոճկորները խորովելու ատենդ»:

Եւ նաւորդը՝ նապին ետեէն գնալով՝ խոհանոցը մտաւ և իր

խոհարարական զբաղմունքով պաշարուեցաւ: Թոյլ տուին որ իր զիտցածին պէս ընէ:

Ուստի Նասպ և ինք փառաւոր սեղան մը պատրաստեցին, երկու խոճկոր, աղեվագի թան մը, ծխոտ երշիկ մը, նոճի հունդեր, վիշապաւորի ըմպելի, Օսվէկոյի թէյ — վերջապէս ինչ որ կար ընտիր, պատրաստ ըրին, բայց ամեն պնակներուն մէջ առաջին կարգը պիտի բռնէին համեղ պէկարէիներն, որ համեմներով խորովեր էին:

Ժամն հինգին՝ Քարեայ-պալատին սրահը սեղանը դրին, որովորայ կ'ծխար աղեվագի թանը: Զայն պատուական դտան:

Թանին յաջորդեցին խոճկորները. Բէնքրօֆ ուղեց որ ինք ջարդէ, և ամեն մէկ կոշնականին մէյմէկ ահագին կտորներ մեծարեց: Իրանի՝ ղմայլելի էին այս խոճկորները և Բէնքրօֆ իր բաժինը կ'ըլակէր սքանչելի եռանդով մը, երբ յանկարծ ճիչ մը և յիշոց մ'եղան բերնէն:

«Ի՞նչ կայ, հարցուց Կիւրոս Սփիթ:

— Այս կայ . . . կայ . . . աղոյսիս մէկը կտարեցաւ, պատասխանեց նա որդը:

— Ա՛յ, ուրեմն խոճկորներուդ մէջ կոսիճճներ կան, ըստ Գեդէոն Սթիլեր:

— Այնպէս պիտի լինի՞ տատասխանեց Բէնքրօֆ՝ բերնէն հանելով պատան որ իրեն մէկ աղան կտարեր էր . . . :

Բայց կոպիճ չէր այն . . . այլ կապարէ հատիկ մը:

ՎԵՐՋ

Կ.Ռ.Ա.Զ.Ի.Ն. Հ.Ա.ՏՈՐԷ

ՅԱՆԿ ԳԼԽ ՈՅ

ԳԼՈՒՍ

ԵՐԵՍ

- Ա. 1865: սահմանը — Օքէն ձեզ պապաբէր — Թախաբէ մը
ձեզ որսուած օրսպարիկ մը — Պարասուած պարսպ —
Միայն ծով կ'որսնան — Հինգ սողերներ — Նասալին
ձեզ անցածը — Հորեղանին վրայ եղբ մը — Տրամային վախ-
ճանը 3
- Բ. Աերեկէան պարերային ձեզ ձիւնարեպը — Կիւրոս Սփիթ լա-
խաբէպը — Գեդէոն Սթիլեր — Նասալ խափշիկը — Բէն-
քրօֆ նասապին — Նորստի Հարպերդ — Անախնանելի
ասալարիւնիան մը — Երեկոյեան ժամը որսանին ժամա-
որսութեան մը — Փոփոքիկ արեւ լա 11
- Գ. Երեկոյեան ժամը հինգ — Պախող սողերը — Նասալ յասա-
կապութեանը — Հիսախախտ խաղարկութեաններ —
Աղբեւի — Անյիւլի որսոր գիշեր մը — Ասասութեան
հաշտը — Նասալ ի լայ — Զբանցին անցը հոանին . . . 23
- Դ. Քարեայ սահմաններ — Գեդէոն իր բերնին կողմ — Կար-
կաններ — Խաղարկութեանց շարունակութեանը — Կա-
նալ ծառերու անտառը — Այրելեաց պաշարը — Տիւր-
որսութեան կ'սպասեն — Ծովեղբին վերին — Անտառ-
ներու շարը — Գեդէոն ի ծովան վերադարձ 32
- Ե. Պարխաներու անտառութեանը — Կրօնի կարևոր ինդիկը —
Վասիլներու աստիճանը — Ծովան վրայ խաղարկութեան
— Թախալոյն և Նասալ վերադարձը — Վասիլ մը միայն
— Բանկոյ վառարանը — Ասալին ընկերը — Յամայի վե-
րայ արտաքին գիշերը 43

ԳԼՈՒԽ

Զ. Կոտայեցիներուն կահուց ցոցայլը — Ուշիչ — Այրած ճեր-
 մակղէն — Արշաւ Բ'անդառնի ճիւղ — Կանաչ ծառերու
 նկարագրէրը — Փախապահան Յակոմար — Եղջերայնի կե-
 դանեաց կեդրը — Կոտայեցիներ — Տեղորոշներ — Տար-
 օրինակ որսորդութիւնի ճիւղերն է 53

Է. Կոտայեցիներու լրացում — Սքիւթի խորհրդածոսութիւնները —
 Ընթերթը — Գեղեցիներ ճիւղի պարտապիտակ — Փոխարինի ան-
 աւելի է — Գեղեցիայնի կ'օրինակ — Հովիտ ու անյրկնի դէմ
 պայտար — Առաջին իջնանիտ ուր ճիւղն կեդր 63

Ը. Կերբու Սօֆի կենդանի է — Կոտայեցի պատմութիւնը — Ոտի
 նշաններ — Անլուծանելի խնդիր ճիւղ — Կերբու Սօֆիին ա-
 սառնի խօսքերը — Կընդհանրական ճիւղորոշութիւնը — Արա-
 դարձ Կարկանդակները — Բեկորօճի շքեղանք 74

Թ. Կերբու անդր է — Բեկորօճի փոյնները — Շիրառած փայր —
 Կղզի թէ ոչ աշխարհ — Չափազանի խորհուրդները —
 Խաղաղական Ուղիներու ճիւղի կ'օրինակ — Գեղեցիներու շքե-
 լի — Բարեկէտ որսը — Բարեբաղնի ճիւղն է 85

Ժ. Չափազանի ճիւղ կ'օրինակ — Կերբու Սօֆիի ճիւղը զբողիցիներու
 խնդիրը — Չոս դեպի է լեռը — Անպատը — Հրաբխային
 հող — Տրաքադոն — Արտիկ — Առաջին արտահարիւրը —
 Օրինակ գեղեցիկներու համար — Կանին գագաթը 97

ԺԱ. Կանին գագաթը — Խառնարանին ներսնախորճը — Չորս դին
 ճիւղը — Յամադ էրկիր ճիւղը արտահարիւր — Ծովազանի պահ-
 ճանը դեպի սողիւր — Ծովազանի ճիւղն է Խառնարանի ճիւղն
 — Կղզին արտահարիւրն է — Խառնարանի ճիւղերուն, գլխու-
 ներսնային, գեղեցիկներուն է այն ճիւղը — Լեռնային
 կղզին 108

ԺԲ. Ծամացոյցները կ'լարուին — Բեկորօճի փոյն է — Կանաչ ճիւղ
 ճիւղն է — Գրիտ-Որոշի ճիւղը — Լեռնային կղզին
 Բառապարտութիւնը — Կենդանի ճիւղեր — Լեռնային
 փոխաններ — Արտահարիւրն որսը — Արտահարիւր —
 Արտահարիւր ճիւղը — Արտահարիւրի ճիւղն է Կարկանդակները 121

ԳԼՈՒԽ

ԺԳ. Թօփին ճիւղը արտահարիւր — Աղեղներ Լեռնային կ'լարուին —
 Թրձոց ճիւղ — Խեղեղէնի անոց — Խոհանոցի զանազան ա-
 ճիւղ — Առաջին արտահարիւր կերակուրը — Եղջին խոր —
 Հարսած Խաղը — Արտահարիւրներու կարևոր դերակրու-
 թիւնն է 133

ԺԴ. Հարսածի պարտի ճիւղը — Կանաչ անկաններու արտահարիւր-
 թիւնն է Կարճարտահարիւրները — Կղզային կայանութիւնը —
 Գեղեցիկ արտահարիւրն է — Ոտորիններու արտահարիւրն է
 — Արտահարիւր համար խորհուրդներ — Արտահարիւր ճիւղ-
 րեկաններ — Լեռնային կղզային արտահարիւրներու դերակրու-
 թիւնն է 146

ԺԵ. Բուրբուրի կ'օրինակ այն դեպ յիշեցի — Սեպտեմբերական
 խնդիրը — Փոխարինութիւն կղզին անկան — Կեղեցի-
 որսը — Ետիքն է կ'օրինակ — Բառապարտ — Կարտահարիւր
 եղանակ ըստառած կ'օրինակ — Երկայնի արտահարիւր — Ինչպէս
 կ'լարուին արտահարիւր 157

ԺԶ. Բնակարաններու խնդիրը արտահարիւր — Բեկորօճի ճիւղն
 արտահարիւրները — Երկայնի անկանն է ճիւղն դեպի է կի-
 օրային կոտը — Արտահարիւրն է Կերբուային կղզիները — Օյեր
 — Լեռնային ճիւղը — Թօփին անկանարտահարիւրները — Թօփ
 'ի կղզի — Զրեբոնի արտահարիւրն է — Տեղեկներ 167

ԺԷ. Այրեցիներու ճիւղն — Արտահարիւր յարցանքը — Կերբու Սօ-
 ֆի խորհուրդները — Տեղեկներու ճիւղը — Թերթարի
 արտահարիւրն է կերտարտահարիւրները — Ծծմբար էրկային — Լեռ-
 ցի կ'լարուին արտահարիւրները — Աճար — Բարսի — Ծծմբ-
 օցի թիւն — Աղտի թիւն — Կոր Լըվիտ ճիւղ 177

ԺԸ. Բեկորօճի արտահարիւրն է ճիւղն կոտային — Լեռնային կ'օրինակ
 ճիւղ — Արտահարիւրն է կ'օրինակ — Արտահարիւր ճիւղն է —
 Թօփ անկան կղզու — Կերտահարիւրն է արտահարիւր — Արտահարիւր
 Լըհոր — Գարունի — Բարտարիւրի արտահարիւրներ — Ար-
 արտահարիւր 189

ԺԹ. Կերբու Սօֆին արտահարիւր — Բարտարիւրն է արտահարիւր
 — Չոսանի խնդիր — Բեկորօճի կղզիները — Հարսած

ԳԼՈՒԽ

ԵՐԵՎ

որ խորքեր — Բնական հարթույց յը — Նոր բնակարանին
դիպրոյէց համար ջրերու խորորոս — Բարեայ-պալարին
պարու-հաններան դիմացի տետը 200

Ի. Անյբևոր եղանակ — Հագուստի ինքիբը — Փոփերու որսը —
Մոսի շինութեանը — Բարեայ-պալարին ձեջ ներքին գոր-
ծեր — Երկու համարը — Ոտորեկոյին այցելութեան ու
վերադարձ — Հարդերդին գործն իր բրդանին ձեջ . . . 210

ԻԱ. Ջրին տանի ծառայեան ժոր — Աղղին հարու-արեւելեան ճե-
րուոր ճափն երկրաշինութեանը — Աղու-եաներ — Ծովան
տետը — Խտակցութեան յը Խաղաղական Ովիանսին աղաս
հային շրայ — Ջրահաններու անդու-լաշխարանը — Եր-
կրահանարն Բն. դիրի լինի — Որսորդութեանը — Տարոր-
նի ճահիճները 220

ԻԲ. Ծողովներ — Աղու-եաներ — Պիկարեաներ — Հովին հիւ-
սե-արեւոսոր դարանալը — Չի-նի գիւրդի — Աղղա-
գործներ — Չերուան գիւրդի հովերը — Հայիկ շտարին
բի-բեւանալը — Խորհրդարար ջրհորը — Առանջարուսած
երկրաշինութեանը — Ապարի հարիկ 231



30 MAY 2013

Handwritten scribbles

Handwritten scribbles

ՀՀ Ազգային գրադարան



NL0568589

163391